Զանգվածարտ

ՍՈՒՐԵՆ ՍԻՔԱՅԵԼՅԱՆ

Երևան 2010



ՄՈՒՇԵՂ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏ

Երևան 2010

ԴՐՕՇԱԿ- ի մատենաշար

Բովանդակություն

Մեր Մուշեղը 4
ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1991 6
ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1992 53
ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1993 127
ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1994 241

Մեր Մուշեղը

Թերությո՞ւն է հռետոր չլինելը՝ չգիտեմ, բայց ամբիոնից խուսափելը, երբ հռետոր չլինելու գիտակցությունն ունես, համոզված եմ, առաքինություն է: Առաքինություն է նաև հակառակը՝ սեփական ուժի ու կարողության գիտակցումը: Մուշեղը ամբիոնին երբեք չմոտեցավ, բայց հրապարակախոսի նրա սուր գրիչը և դաշնակցականի հստակ աշխարհընկալումը ուղղորդեցին նրան լրագրողական ասպարեզ, որտեղ նոր-նոր էր ծիլ տալիս ազատ խոսքի բանտված սերմը: Լրագիրը, այն էլ քաղաքական-հասարակականը, այն էլ պաշտոնականը նույնպես ամբիոն է՝ տեսակի պարտադրանքով, թեև ավելի լուրջ ու ծանրակշիռ, քան միտինգայինը, հռետորայինը: Բայց Մուշեղն իր անուն-ազգանունով այս ամբիոնին էլ չմոտեցավ: Նա պարզապես ձուլվեց այդ ամբիոնին և ինքը վերածվեց ամբիոնի: Թերթեք 1991 թվականի մարտի ութից մինչև Դաշնակցության կասեցումը «Ազատամարտ» պաշտոնաթերթի համարները, կարդացեք հատկապես քաղաքական քրոնիկոն հանդիսացող խմբագրականները և դուք կհաղորդակցվեք տարրալուծում կոչվող զարմանալի այն երևույթին, ինչը բնության մեջ, թերևս, ամենուր է, սակայն մարդկային հարաբերություններում՝ հազվադեպ: Թերթեք արդեն պատմություն դարձած այդ համարները, կարդացեք այդ համարների պարունակությունը և կտեսնեք, որ Մուշեղը դրանց մեջ թե՛ կա և թե՛ չկա: Չկա՛ նրա անուն-ազգանունը, ստորագրությունը և ոչ մի խմբագրականի, հոդվածի տակ: Բայց նա կա թե՛ խմբագրականներում, թե՛ հոդվածներում, թե՛ տեղեկատու տողերում, թե՛ ձևավորման հաստ ու բարակ գծերում: Նրան ճանաչողը, հիշողը կզգա այն շունչն ու հանգը, այն համն ու հոտը, այն սրամտությունն ու սարկազմը, հարցականներով՝ պատասխաններ հուշող ոճը, որ միայն Մուշեղինն էր՝ Միքայելյան Մուշեղինը:

Հնարավոր է, որ ոչ բոլոր խմբագրականներն է գրել Մուշեղ Միքայելյանը և եթե կան այդպիսիք, ապա դրանց մեջ էլ է Մու-

շեղը այնքան ներկա որքան իր հեղինակածներում: Նա տարրալուծված էր «Ազատամարտի» մեջ: Նա «Ազատամարտի» աղն էր: Եվ ոչ միայն «Ազատամարտի»:

Եվ թող նա մեզ ների, որ սերունդների համար, իր հիշատակը չկորցնելու համար՝ փորձել ենք տարրալուծված այդ լուծույթից բյուրեղ-բյուրեղ անջատել ու այս գրքի կազմին դրոշմել իր անունը կազմող հայերեն տառերը՝ Մուշեղ Միքայելյան…

Ռուբեն Հովսեփյան

ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1991

ԱԶԱՏԱՄԱՐՏԻՑ ԱԶԱՏԱՄԱՐՏ

1990 թ. օգոստոսին Հայ Հեղափոխական Դաշնակցությունը բացահայտեց իր կազմակերպական ներկայությունը Հայաստանում:

1990 թ. նոյեմբերին գումարվեց Հ. Յ. Դաշնակցության Հայաստանի կազմակերպության անդրանիկ Շրջանային ժողովը:

1990 թ. դեկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Հ.Յ.Դաշնակցության 100-ամյակի հանդիսությունը:

Պատմական այս իրադարձություններով նոր մի էջ բացվեց Դաշնակցության պայքարով առլեցուն տարեգրության մեջ՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի կերտման պայքարի մի նոր հանգրվան: Տասնամյակների վտարանդի կյանքից հետո Դաշնակցությունը կրկին կազմակերպական ներկայություն դարձավ Հայաստանում՝ վերագտնելով հայրենի հողից ուժ ու զորություն առնելու Անթեյան իր շնորհն ու գաղափարի հաղթանակի իր դափնեպսակը, որը հայ ժողովուրդը սրբությամբ պահպանել էր՝ մի օր զարդարելու իր նվիրյալների ու զինվորյալների լուսապայծառ ճակատը:

Եվ ահա այսօր՝ 1991 թ. մարտի 8-ին Հայաստանում Հ.Յ.Դաշնակցության հրատարակությամբ լույս տեսավ «Ազատամարտ»-ը: Եվս պատմական մի իրադարձություն, առաջընթաց մի քայլ հայրենի հողի վրա, ուր, հանձին «Ազատամարտ»-ի, իր ներկայությունն է վերահաստատում նաև դաշնակցական մամուլը:

Դաշնակցությունը հայրենիքում կազմակերպական վերընձյուղումով այսօր մեզ է փոխանցում նաև իր հարյուրամյա կյանքի իմաստությամբ, փորձառությամբ, վերելքներով ու վայրէջքներով, հայակերտման անզիջում պայքարով սրբագործված դաշնակցական մամուլի ավանդույթները՝ իր ժողովրդին վերադարձնելու Հայ-

կական Ազատամարտի դրոշը, ազգային պատկանելության զգացման հպարտությունը, բոլշևիկյան յոթանասունամյա մրից մաքրելու նրա բարոյական ու քաղաքական նկարագիրը: Դաշնակցական մամուլի ընտանիքում ծնվեց մի նոր թերթ, որը պատիվն ու պատասխանատվությունն ունի կրելու Հայկական Ազատամարտի անունը: Եվ ինչպես իր նախորդները, մեր ժողովրդի ու հայրենիքի համար դժվարին մի հանգրվանում, երբ անկախացման ուղի ելած հանրապետությունում իրավիճակը թելադրում է ազգային քաղաքական բոլոր ուժերի կարելիությունների համախմբում՝ հաղթահարելու ամբողջատիրության ուղղակի և անուղղակի ճնշումները, հանրապետությունում առաջացած քաղաքական, տնտեսական ու ընկերային դժվարությունները, լուծելու աղետի գոտու, փախստականների հետ կապված խնդիրները, վճռականորեն շարունակելու և հաղթական ավարտի հասցնելու Արցախի ազատագրական պայքարը:

Դաշնակցությունը, ինչպես ասվել է բազմիցս, իր բոլոր կարելիություններով, ուղեկից կազմակերպություններով ու շարքերով պատրաստ է աջակցել Հանրապետության ամրապնդմանն ու զորացմանը, տնտեսական, ընկերային ու մշակութային վերելքին, ինքնապաշտպանությանը: Եվ «Ազատամարտ»-ը, որ կոչված է հանրության սեփականությունը դարձնել Դաշնակցության Ծրագիրը, արտացոլել նրա գաղափարներն ու տեսակետները, Հայրենիքում և Հայրենիքից ներգործել ի խնդիր ազատագրական պայքարի միասնության և միասնական ուժի ամբողջության, ինչպես իր նախորդները, հայ ժողովրդին ծառայելուց բացի, այլ նպատակ չունի:

«Ազատամարտ»-ի էջերում մշտապես կարծարծվեն հանրապետության ներկա քաղաքական, ընկերային, տնտեսական կյանքի վերաբերյալ հարցերը, որովհետև քաղաքական, ընկերային և տնտեսական ազդակները միմյանցից կախված, միմյանց լրացնող դրույթներ են, որոնց փոխներգործությունից առաջացած համակարգերի արդյունքից են կախված ժողովրդավարության, անկախության ու ազատության տրամադրությունները:

Յոթանասուն տարի իր քաղաքական, տնտեսական ու ռազմական անկախությունը կորցրած հանրապետությունում, ուր նվազագույն իսկ ինքնուրույնություն չուներ պետական վարչամեքենան, չէր կարող չստրկացվել և հասարակությունը, անհատը: Չէր կարող չնահանջել ժողովրդի բարոյականությունը: Ուրեմն՝ նաև ազատամարտ այլասերումից, ստրկամտությունից, շահամոլությունից, օտարամոլությունից մաքրագործելու հայ մարդուն: Ազատամարտ՝ բռնի այլասերման ու ապազգայնացման դեմ: Ազատամարտ՝ մոռացությունից փրկելու անցյալի ու ներկայի մեր արժեքները, հայ ժողովրդի մտքի ու բազկի, նրա ստեղծագործ ոգու արգասիքները:

«Ազատամարտ»-ը իր էջերը սիրով կտրամադրի բոլոր նրանց, ովքեր տոգորված են հայ ժողովրդի հավաքական գոյության ու առաջընթացի մտահոգություններով և նպատակ ունեն ազնվորեն ծառայելու հայ մշակույթի ու պատմության դատին: Մեր թերթը պետք է դառնա մտքի ու խոսքի խորհրդարան, ուր կարծարծվեն հայ ժողովրդի համար բախտորոշ հարցերը՝ ճիշտ վճիռ կայացնելու, չշեղվելու պայքարի մեր վախճանական նպատակից: Մեր ուշադրության կենտրոնում պիտի լինեն նաև քաղաքացիական ազատության և մարդկային իրավունքների, ընկերային արդարության հարցերը: Եվ վերջապես, անվերապահ նվիրում Հայ Դատի պաշտպանությանը, հետախուզում և ուսումնասիրություն հայ մշակույթի, հոգածություն հայոց լեզվին և այն ամենին, ինչը հայերեն է և հայեցի: Բազմեռանդ ճիգ ու ջանք՝ կերտելու հայ ազատ մարդը՝ ընդունակ նյութական ու բարոյական շինարար աշխատանքի, ընդունակ պաշտպանելու իր պատիվը, իր տունն ու հայրենիքը: Ահա այս ծիրի մեջ պիտի տեսնել «Ազատամարտ»-ի առաջնորդ ուղեգծերը: Այսօր՝ անկախության գործընթացի, վաղը՝ Ազատ, Անկախ Հայաստանը պահպանելու և պայքարելու հանգրվանում:

Ահա այսպես է «Ազատամարտ»-ը ասպարեզ իջնում՝ ականջալուր հարազատ ժողովրդի ձայնին, հավատարիմ իր գաղափարի գործին, անսասան իր հավատի մեջ:

Թիվ 1, մարտ

ՓԱՍՏԵԼ ՆՎԻՐՈՒՄԸ ՀԱՅ ԴԱՏԻՆ

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի ավարտին փորձ արվեց քննարկման առարկա դարձնել 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները ապօրինի ճանաչելու հարցը, սակայն այն վարպետորեն շրջանցվեց, թեև կար ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախորդ նստաշրջանի որոշումը և նախապատրաստված էին նախագծեր Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերաբերյալ:

Նման վերաբերմունքը ժողովրդի քվեով իշխանության գլուխ անցած Հայաստանի նոր ղեկավարության կողմից Հայ դատի անտեսման, նրանից խուսափելու հետևողական գծի դրսևորումն էր: Դրա դեմ ըմբոստացավ ժողովրդական պատգամավորների մի զգալի մասը, պահանջելով արտահերթ նստաշրջան: Դա արտահայտում է Հայ դատը հետապնդելու մեր ժողովրդի անսասան կեցվածքը, Թուրքիայի կողմից հայության քաղաքական պայմանները անտեսելու փաստի դիմաց՝ հայ-թուրքական գործակցության անվերապահ մերժումը: Պատգամավորների այդ վճռական քայլը կարող է մեկնարկային լինել համահայկական խնդիրներ արծարծելու ճանապարհին, երբ իրականություն է դառնում արտերկրի պահանջատիրական պայքարին հայրենի հայության միանալը:

Ռուս-թուրքական պայմանագրի 70-ամյակը յուրովի է նշվում Օզալի այցելությամբ Մոսկվա: Գորբաչով-Օզալ քաղաքական զույգը հարազատ մնաց խորհրդա-թուրքական հարաբերություններում սահմանների անձեռնմխելիության սկզբունքին:

Այժմ ավելի քան անհրաժեշտ է, որ մեր քաղաքական կազմակերպություններից յուրաքանչյուրը փաստի իր նվիրվածությունը Հայ դատին, որը յոթանասուն տարի շարունակ և այսօր էլ անտեսվում է խորհրդա-թուրքական առնչություններում: Դրա նոր հաստատումն է Օզալի հետ հանդիպումից հետո, մարտի 14-ին Գորբաչովի հայտարարությունը Արցախը Ադրբեջանի կազմում պահելու մասին:

Անկասկած է, որ այսօր Հայաստանում սկսվում է Հայ դատի պաշտպանության մի նոր փուլ, որն անշուշտ թափ կհաղորդի Արցախի համար պայքարին:

Հայոց ազատամարտը անկասելի է:

Թիվ 2, մարտ

ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Մեր թերթի նախորդ համարում տպագրվեց ժողովրդական այն պատգամավորների անվանացանկը, որոնք Գերագույն խորհրդի նախագահությունից պահանջում էին հրավիրել արտահերթ նստաշրջան՝ քննարկելու 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածների ապօրինի ճանաչման հարցը:

Թերթի լույսընծայման հաջորդ օրը նստաշրջան պահանջող պատգամավորների թիվը հասավ 112-ի: ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրելու հորդորով դիմեցին հանրապետության և արտերկրի բազմաթիվ կազմակերպություններ, միություններ, հաստատություններ, անհատներ: Հայտնի դարձավ նաև, որ մի շարք պատգամավորներ հրաժարվել են իրենց դիմումներից: Գերագույն խորհրդի նախագահությունը, ինչպես սպասվում էր, մերժեց արտահերթ նստաշրջան հրավիրել: Թե ինչու և ինչ պայմաններում են պատգամավորները հրաժարվել իրենց դիմումներից, միայն պարտքի և պատասխանատվության հարց չէ, անշուշտ: Թող դատեն ընթերցողները, ովքեր լավ գիտեին, թե ինչ էր սպասվում Օզալ-Գորբաչով հանդիպումից և չէին կասկածում իրենց ընտրողներին տված խոստումներին: Նախագահի «մեկ առ մեկ» համոզելու կարողությանը ոչ ոք չէր կասկածում: Հայտնի էր նաև Գերագույն խորհրդի կեցվածքը: Բայց և այնպես, հարկ էր հիշեցնել հայոց կառավարության պարտականությունը:

Հ.Յ.Դաշնակցության «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության կողմից սկսված նստացույցը ավարտվեց: Այո, Հայաս-

տանի Հանրապետության իշխանությունները ուժ չգտան վարելու ինքնուրույն ազգային քաղաքականություն:

Համենայն դեպս, ՀՀ Գերագույն խորհուրդը արտահերթ նստաշրջան հրավիրեց: Բայց այլ օրակարգով՝ քննարկելու «Ազգային ինքնորոշում» միավորման գործունեության հետ կապված հանրապետությունում ստեղծված լարված իրավիճակի հարցը: Եվ նախանձելի փութաջանությամբ որոշում կայացրեց: Մեր նպատակը չէ այստեղ արծարծել քննված հարցը: Միայն նկատել տանք, թե որպիսի կիրք ու վճռականություն հանդես բերեցին մեր պատգամավորները, ինչպիսի ըմբռնումով ու հեռատեսությամբ մոտեցան հարցին: Եվ չմոռանանք ասել, որ այդքան ջանասիրությամբ նախապատրաստված քննարկումը կպատշաճեր համազգային կարևորության մեկ ուրիշ հիմնահարցի, թեև զինակոչի հետ կապված իրադրությունը, իրոք, անհանգստացնող է և դժվար է չկիսել նախագահի մտահոգությունը: Բայց ոչ երբեք այն կարծիքը, որ այսօր, այս աշխարհաքաղաքական իրավիճակում Հայ դատի հարցի հապճեպ բարձրացումը քաղաքական շահարկում և արկածախնդրություն է:

Թիվ 3, մարտ

ՈՒՆԵՆԱԼ ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր քաղաքականություն պիտի ունենա իր վախճանական նպատակը և դրան հասնելու հստակ ծրագիրը: Եվ այդ ծրագիրը իրականացնելու վճռականություն ու հետևողականություն: Հակառակ դեպքում, որքան էլ առաջադիմական լինի այն, որքան էլ մարդասիրական գաղափարներ հետապնդի, կորցնում է գործունեության նպատակասլացությունը, տուրք է տալիս պատեհապաշտության և հեռանում գլխավոր նպատակից:

Այդ է հաստատում վերակառուցման և հրապարակայնության քաղաքականության ճգնաժամը, քաղաքականություն, որի հետ մեծ հույսեր էին կապում և՛ ներսում, և՛ դրսում: Քաղաքականու-

թյուն, որի ջերմ պաշտպաններից ու հովանավորներից էր նաև մեր ժողովուրդը՝ ակնկալելով Հայ դատի արդարացի լուծում: Սակայն անցյալի սխալների քննադատումից ու մերկացումից ավելին չկարողացան անել նոր քաղաքականության ճարտարապետները և իրենց սպառեցին թերությունների ու սխալների քննադատմամբ միայն, հանդես չբերելով կամք ու հետևողականություն՝ մինչև վերջ հասցնելու սկսածը, չբավարարվելու միայն սխալների բացահայտմամբ, այլև սրբագրելու դրանք և հիմքեր ստեղծելու ժողովրդավարության ու հրապարակայնության հաստատման համար:

Քաղաքական անսկզբունքայնություն դրսևորվեց, հատկապես, ժողովուրդների ու ազգերի ազատ ինքնորոշման և, ընդհանրապես, ազգային հիմնահարցերում: Կուտակված խնդիրների լուծման փոխարեն, փաստորեն, էլ ավելի սրվեցին դրանք՝ առաջ բերելով ազգային բախումներ, որոնք ունեցան ողբերգական հետևանքներ: Դրա հաստատումը Արցախի ներկա իրավիճակն է, որտեղ շարունակվում են ոտնահարվել արցախցու ազգային և մարդկային իրավունքները, իշխանությունների անօրինական գործողությունների զոհ են դառնում անմեղ մարդիկ:

Այո՛, Խորհրդային Միության կենտրոնական իշխանությունները Միությունը պահպանելու մտահոգությամբ հակված են նույնիսկ խստությունների դիմելու հանրապետությունների ամբողջական ինքնավարության ուղղությամբ ամեն կարգի բարեփոխությունների դեմ: Հանրապետությունների բնականոն ձգտումը՝ ազատվելու ամբողջատիրության շղթաներից, հաստատելու լիակատար ինքնիշխանություն, մեռցվում է կենտրոնի կողմից գործադրված տնտեսական ճնշումով և Խորհրդային Միության նախորդ իշխանությունների փորձված եղանակներով:

Այսօր, երբ վերջնականապես ի դերև են լինում վերակառուցման հետ կապված հույսերը, առավել քան երբևէ, կարևորվում է սեփական քաղաքականություն ունենալու և դրան ապավինելու անհրաժեշտությունը:

Թիվ 4, մարտ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Գլխավորը՝ խնդիրների թնջուկում ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ նպատակը պետական քաղաքականության գետնի վրա հետապնդելու մեջ է:

Սակայն Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությանը ուղղություն տվող ուժերը վերջերս չեն դադարում կրկնելուց, որ իրենք իշխանության են գնացել «այլ կոնցեպցիայով»: Վերջինս, ինչպես պարզվում է, ուղղակիորեն հակադրվում է Հայոց պահանջատիրությանն ու Հայ դատին: Իրենց ծրագրում չունենալով պահանջատիրության խնդիրը մի՞թե ընտրությունների շրջանում պատգամավորները խոստացել էին, թե պայքարելու են Հայ դատի դեմ...

Ինչևէ, քաղաքական դիրքորոշումները հստակվում են: Տվյալ դեպքում խթանիչ դեր է կատարում 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը, երևի թե նաև Ապրիլի 24-ի նկատմամբ եղած վերաբերմունքը: Եվ այս պայմաններում երևույթ էր Հայաստանի Գերագույն խորհրդում Հ.Յ.Դաշնակցության պատգամավորական խմբի չորս անդամների բացահայտումը:

Եվ նորից պատմական օրինաչափությամբ է, որ հայ ժողովրդի ապրած դժվարին կացության պահին ասպարեզվում է Հ.Յ.Դաշնակցությունը:

Ուշագրավ երևույթ էր նաև Արցախյան հիմնահարցի, այնտեղ անցկացվելիք հանրաքվեի նկատմամբ ՀՀՇ-ի, հանրապետության կառավարության հետ համակարծիք, խուսանավող վերաբերմունքի բացահայտումը, որի նկատմամբ ՀՀՇ-ի ներկա կեցվածքը հանգեցրեց Հայաստանի անկախացումից հետո ՄԻԱՅՆ նրան օժանդակելու պաշտոնական տեսակետին: Յուրատեսակ minimum ծրագիր, որից անցումը maximum-ի՝ թաղվում է գալիքի մշուշում...

Այդ դեպքում, ո՞ւր է մնում Արցախում այսօր հնարավոր լիակատար «ինքնիշխանության» համար պետական պայքարը: Եվ

ինչպե՞ս կարելի է այն իրականացնել արդեն «արտասահմանյան Հայաստանից»:

Թիվ 5, ապրիլ

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՆ ՀԵՏԱՊՆԴՎՈՒՄ

Վերջին շրջանում Հայաստանի ազդեցիկ քաղաքական ուժերի և որոշ մտավորականների համատեղ ջանքերով «քաղաքակիրթ ու անշահախնդիր» Թուրքիայի արարչագործման ճանապարհով «հայտնագործվեց» անկախության գործընթացի առաջին հանգրվանը՝ Թուրքիան:

Ռուս-թուրքական քաղաքական խաղերի մութ ծալքերում ծնված գործարքի անդրանիկ քայլը եղավ Թուրքիայի դեսպանի խորհրդավոր այցը Ապրիլյան Երևան և նրա երևի թե ջերմ ընդունելությունը հանրապետության վարիչների կողմից: Իսկ Վուրալը չմոռացավ հիշեցնել՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, որն առաջնորդվում է Աթաթուրքի սկզբունքներով, «մեծ փոփոխություններ չկան»:

Անշուշտ, նոր Թուրքիայի հին կեցվածքը զգաստ մտածողության պահանջ է դնում. ո՞ւր է տանում այս թրքամետ քաղաքականությունը հայ ժողովրդին, ինչպիսի՞ն է լինելու հայկական հարցի ճակատագիրն այսուհետ, արդյո՞ք մենք չենք կանգնած Հայ դատի լուծման ռուս-թուրքական հերթական որոգայթին դեմ հանդիման:

Ժամանակն, անշուշտ, կպատասխանի այս կնճռոտ հարցերին, բայց ժամանակը կկարողանա՞ ուղղել ճակատագրական սխալը...

Դժվար է լավատես լինելը:

Թիվ 6, ապրիլ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՀԸ

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին տասնամյակում իր գոյության և ազատագրության համար հայ ժողովրդի պայքարը թևակոխեց վճռական փուլ: Հայ հեղափոխությունը փրկության ելք էր որոնում: Եվ մաքառում...

Օսմանյան կայսրության մի շարք պարտությունները եվրոպական մայրցամաքում, համիսլամության ու համաթուրանականության գաղափարների որդեգրումը որպես պետական քաղաքականության ուղեգիծ Թուրքիայում, վերջինիս ձգտումը դեպի թուրանական արևելք, հայության ֆիզիկական գոյությունը Երկրում դրեցին հարցականի տակ:

Խոշոր տերությունների կայսերական շահերը, նրանց մրցակցությունը Հայկական հարցի «լուծման» գործում և Առաջին աշխարհամարտը թույլ տվեցին պանիսլամիստ սուլթան Համիդ Երկրորդին փոխարինած պանթուրքիստ երիտթուրքերի կառավարությանը կազմակերպելու և իրականացնելու դարի ոճրագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը: Անմասն չմնաց նաև քեմալական Թուրքիան: Հայության ֆիզիկական գոյությունը և ազգային արժանապատվությունը ապահովվեց այնտեղ միայն, որտեղ նա կարողացավ կազմակերպել զինված ապստամբություն: Հերոսական կռիվները հայոց ապրելու, դիմակայելու և գոյատևելու անկոտրում կամքի առհավատչյան են, հայոց հարատև կռվի իրական ուղին: Այդ են ապացուցում նաև Գետաշենը, Բերդաձորը, մեր օրերի Վանը՝ Հայոց Արցախը:

Վերածնվող Հայաստանը և հայության եզակի երևույթը՝ արտերկիրը, նույն կամքի արտահայտությունն են, Ցեղասպանության պատմական ժառանգը: Թեկուզև ցայսօր չի պատժված դարի ոճրագործը՝ Թուրքիան, և չի փոխհատուցված հայ ժողովուրդը կրած անլուր զրկանքների համար, այնուհանդերձ Ցեղասպանության հուշը, Հայկական հարցը չմնացին պատմության փակ էջերում, ինչպես ակնկալվում էր... Հայոց ցեղասպանությունը ոչ միայն հայ

ժողովրդին հուզող հարց է, այլև այն քննվում է միջազգային տարբեր բեմերում՝ թևակոխելով պայքարի նոր հանգրվան:

Սակայն վերջին մի քանի ամիսների հայ-թուրքական հարաբերությունների սերտաճումը և հայ ժողովրդի պահանջներից խուսափելը դարձել է պետական քաղաքականություն: Դրա ապացույցն է Հայոց ցեղասպանության վերաբերյալ նոր փաստաթուղթ ընդունելու առաջարկի մերժումը ՀՀ ԳԽ-ի կողմից, Հայաստանի իշխանությունների ներկա դիրքորոշումը, որը կարող է վնասել հայության շահերին:

Եկել է Հայ դատի հետապնդման արտերկրի հայության տասնամյակների դժվարին պայքարի և մայր հայրենիքի ջանքերի պետականորեն միավորման պատմական պահը և Հայաստանի ժողովրդավար իշխանությունները պարտավոր են անսալ ժողովրդի ձայնին, լինել ժողովրդի կամքի արտահայտիչը:

Թիվ 7-8, ապրիլ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿՆՎՈՒՄ Է. ՄԵՂԱՎՈՐԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԷ

Եթե այսպիսին է Խորհրդային Միությունից դուրս գալու սահմանադրական ուղին, որով ընթանում է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հաստատում են նրա վարիչները, ապա ինչպիսին կլիներ ոչ սահմանադրականը: Ուրեմն՝ այն, ինչ կատարվեց անցած և նախանցած շաբաթներին սահմանամերձ շրջաններում, Գետաշենում ու Մարտունաշենում, Արցախում և շարունակվում է տակավին, կատարվեց սահմանադրորեն: Ուրեմն, իրո՛ք սխալ քաղաքականության պտուղներն ենք մենք վայելում:

Եթե այդ ամենը իրո՛ք Հայաստանի ժողովրդավար իշխանությունների դեմ էր և միայն դաս տալու, սարսուռ տարածելու նպատակ էր հետապնդում, ուրեմն կարելի էր ավելի դյուրամարս խորտիկներ հրամցնել անդաստիարակներին, առանց արյան և աղմուկի: Մի Գետաշեն ու Մարտունաշեն դատարկելը մեծ խնդիր չէր,

թեկուզ՝ Ազատ և Կամո գյուղերի օրինակով: Ուրեմն, ո՞ւմ է ձեռնտու այս արյունահեղությունն ու գրեթե միջազգային աղմուկը, ի՞նչ է թաքնված դրա հետևում: Ինչո՞ւ է այսքան հաճախ կրկնվում պատմությունը:

Եթե արցախյան պահանջատիրական շարժման դեմ էր այս ամենը և իսկապես հայաստանցի «մորուքավոր ահաբեկիչներից» Ադրբեջանի անմեղ բնակչությանը պաշտպանելու նպատակով էր արվում, ապա ի՞նչ կապ ունեն պահանջատիրության և մանավանդ «մորուքավոր ահաբեկիչների» հետ Հայաստանի իշխանությունները: Եվ ո՞ւր են այդ ահաբեկիչները: Դարձյալ «ահաբեկիչներ»: Դարձյալ պետական ահաբեկչություն, արյունահեղություն, ինչպես 1990-ի մայիսի 27-ին: Արդեն մեկ տարի է անցել, բայց դեռ ոչինչ չեն ասել քննչական մարմինները: Անհետևանք կմնա նաև մայիսյան այս սպանդը: Պատմությունը կրկնվում է: Բայց պատմությո՞ւնն է արդյոք մեղավոր:

Ժամանակին նկատել տրվեց, որ քանի դեռ կենտրոնից բռնամիջոցների քաղաքականություն չի կիրարկվի անկախության մեր գործընթացի դեմ՝ իրատեսությունը թելադրում է խուսափել ծայրահեղ քայլերից ու ավելորդ առճակատումներից և կայսրության դեմ մարտարշավում չստանձնել դրոշակակրի դերը, այլ այդ ջանքերն ու ճիգերը գործադրել այլ նպատակներով: Անտարակույս, անկախացման իրավունք ունենք, բայց դրան պետք է նախապատրաստվել և պատրաստ լինել դիմագրավելու հավանական ճնշումները, որն ավելի դյուրին է, քան հրասայլերի դեմն առնելը: Այո՛, անկախություն: Բայց ինչպե՞ս:

Մինչև վերջերս Դաշնակցությանը անկախությանը ընդդիմադրողների շարքին էին դասում: Դաշնակցությունը դե՞մ անկախությանը: Դե՛մ ավելորդ փութկոտությանը, դե՛մ կայսրությունը ուռռայո՛վ կործանելու դոնքիշոտությանը, դե՛մ արկածախնդրությանը:

Թիվ 11, մայիս

ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

ՀՀ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանն իր աշխատանքը վերսկսեց վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի նախագծի քննարկմամբ: Այն դեպքում, երբ հանրապետությունն ապրում է տագնապալից օրեր՝ քաղաքական, տնտեսական ծանր կացություն, ընկերային, իրավական անապահովվածություն, կենտրոնական իշխանությունների բացահայտ ճնշումներ, արցախահայության բռնի տեղահանումներ, նոր հարձակումներ սահմանամերձ գյուղերի վրա և այլն:

Ստեղծված իրավիճակը հղի է անսրբագրելի հետևանքներով և կարող է ճակատագրական դառնալ ոչ միայն անկախության գործընթացի, այլև մեր ժողովրդի համար ընդհանրապես, որի գլխին կախված վտանգը հեռացնելու փոխարեն, ընդհակառակը, փորձեր են արվում չնկատելու տալ այն, վարագուրել արտաքին քաղաքականության պատրանքներով: Ո՞րն է այդ քաղաքականությունը և ի՞նչ արդյունք է տվել ցայսօր: Եթե Ֆրանսիայի պրեզիդենտի հետ հանդիպման փաստն ինքնին արդյունք համարվի, ապա այդպիսի քաղաքականությամբ հեռուն չես գնա, մանավանդ, երբ Մոսկվան չի թաքցնում, որ Հայաստանի հարցերը մեկ այլ տեղ, բացի Մոսկվայից, վճռվել չեն կարող:

Իսկ հանրապետության պրեզիդենտի ընտրությունը կամ նախագահին պրեզիդենտական լիազորություններով օժտելը ոչինչ չի կարող փոխել և, ըստ էության, այլ նպատակ չի հետապնդում, քան սոսկ ժամանակի շահում՝ վերջնականապես չհիասթափեցնելու դեռևս հույսերով օրորվող մարկանց, նոր խոստումներով զբաղեցնելու քաղաքական միտքը: Մինչդեռ եղած բոլոր ուժերն ու կարողությունները մեր ժողովրդին սպառնացող վտանգը վերացնելուն, հանրապետության ներքին հարցերը լուծելուն, կենտրոնի հետ հարաբերությունները կարգավորելուն նպատակաուղղելու փոխարեն,

փաստորեն, ծառայեցվում է հանրապետությունում իշխանության համակենտրոնացմանը:

Թիվ 14, հունիս

ԺՈՂՈՎՐԴԻՆ ՉԵՍ ԽԱԲԻ

Պաշտոնաթերթերում ու հրապարակներում գրեթե դադարել են ճառերը: Ժողովրդական հռետորները հիմա շահավետ գործ են անում: Մյուսները, որոնք ավելի շատ բառերին էին տիրապետում, քան գաղափարներին, այժմ փոքր ձեռնարկատերեր են կամ մեծ միջնորդներ: Ոմանք էլ ուղղակի հրապարակից փութացին սուրալ գյուղ՝ հողի տեր դառնալու: Ոմանք էլ փոխշահավետ առևտուր են սկսել, բայց չգիտես ինչ են առնում ու տալիս: Մի խոսքով՝ մնաց ժողովուրդը... Մնաց վերջին հրաժեշտը տալու Արցախում զոհված իր որդիներին: «Պայքար, պայքար մինչև վերջ»: Այլևս չհասկանալով, այլևս չընդունելով թանկագին այդ զոհերը: Ում և ինչի համար: Ո՞ւր են երեկվա ճառասացները: Ո՞ւմ են խաբում: Ի՞նչ է թաքնված այս ամենի ետևում:

Չտեսնելու տալ ժողովրդի հիասթափությունն ու հուսալքումը, նրա անվստահությունը վաղվա նկատմամբ, նշանակում է խաբել ոչ միայն ժողովրդին: Այո՛, ճառեր քիչ են ասվում արդեն, որովհետև կարծես թե այլևս ասելու բան չկա: Ամեն ինչ ասված է: Եվ անկեղծորեն, և կեղծաբար: Արդեն դադարել են չարաշահել նաև ժողովրդի սուրբ ու նվիրական զգացումները: Արդեն չես խաբի: Արդեն ոչ թե պայքար մինչև վերջ, պայքար գաղափարի համար, պայքար Արցախի համար, այլ պայքար ժամանակ շահելու. անգաղափար, անծրագիր, աննպատակ: Ինչ է լինելու վաղը, երբ վերջնականապես ժողովուրդը երես կթեքի իրեն ժողովրդավար համարող սեփական իշխանություններից և ոչ մի հրաժարական այլևս չի փրկի դրությունը: Այլևս ուշ կլինի: Ուրեմն ո՞րն է ճշմարտությունը և ինչո՞ւ է այն թաքցվում ժողովրդից՝ տանելով նրան մի նոր փորձութ-

յան: Մի՞թե բավական չէր այն, ինչ տեսավ նա վերջին մի քանի տարում:

Ինչու չենք ուզում իրատես լինել: Գեներալ Մաքն էլ առանձնասենյակում, իր խորհրդականների հետ հիմնովին ջախջախեց Նապոլեոնին... բայց ստիպված եղավ ամբողջ բանակով անձնատուր լինել:

Ինչու չենք ուզում հասկանալ, թե ինչ կարող ենք անել և ինչ չենք կարող: Եվ ինչը ինչպես պետք է անենք: Եվ ինչը, որ չենք կարող, ինչպես չպետք է անենք: Համենայն դեպս ժողովրդին չես խաբի:

Թիվ 15, հունիս

ՄԵՐԺՎՈՒՄ Է՝ ՈՐՊԵՍ Ի՞ՆՉ

Հունիսի 18-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը խորհրդարանում ի լուր ամենքի հայտարարեց. «Ես լիովին մերժում եմ Դաշնակցության գաղափարախոսությունն ու գործելակերպը»: Այն, որ նա, որպես քաղաքականության մեջ մտած մարդ, բայց ոչ Գերագույն խորհրդի նախագահ, իրավունք ունի բացասաբար անդրադառնալու Հ.Յ.Դաշնակցության գործելակերպին, թերևս ըմբռնելի է: Չէ՞ որ Դաշնակցությունը, ի տարբերություն որոշ քաղաքական ուժերի որդեգրած ջատագովության դիրքորոշման, առաջինը և հիմնավորապես մատնանշեց մեր ժողովրդի համար նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության վտանգների մասին: Ընդ որում, նույն հստակությամբ առաջադրեց նաև առկա ճգնաժամից (որի գոյությունը անհիմն վիճարկվում է) դուրս գալու իրական ուղիները: Այդ ուղիները նախապես չտեսնելու տալով, վերջին հաշվով նախընտրվում են Դաշնակցության նորագույն քննադատների կողմից (ինչպես օրինակ՝ հանգրվանային անկախության դիմաց անկախության գործընթացը և կենտրոնի հետ առճակատման փոխարեն համադաշնակցային պետության ուղիով գնալը): Միայն թե ամեն մի ուշացման կամ

հապաղման համար թանկ է վճարում մեր ժողովուրդը թե Հայաստանում, թե Արցախում, թե Արտերկրում: Մնում է անհասկանալի Հ.Յ.Դաշնակցության գաղափարախոսության լիովին մերժման հարցը: Նույնիսկ մեր ազգի ոխերիմ թշնամիները գտնում են, որ Դաշնակցության գաղափարախոսությունը ամենաազգայինն է հայոց մեջ: Մասնավորապես բոլշևիկները (որոնց քաղաքական ժառանգներին նա շատ է ցանկանում նույնացնել դաշնակցականների հետ) Դաշնակցությանը քննադատում էին որպես նացիոնալիստական գաղափարախոսության կրողի: Եվ եթե մեր նախագահը եռանդագին մերժում է մի ամբողջ ազգային գաղափարախոսություն, որը անցել է հարյուր տարվա քաղաքական պայքարի բովով, ապա մնում է խորհել, թե ինքը ինչ դավանանքի է հետևում:

Թիվ 16, հունիս

ՉԿԱՆԳՆԵՆՔ ԿՈՏՐՎԱԾ ՏԱՇՏԱԿԻ ԱՌՋԵՎ

Այս քանի օրը չես կարող չմտաբերել Պուշկինի հայտնի հեքիաթի տողերը, անշուշտ Թումանյանի թարգմանությամբ.

«Չեմ ուզում լինել ազատ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի...»

Դժվար է ասել, պուշկինյան օրե՞րն էին մեղավոր, թե՞ մեր խորհրդարանը: Բայց ավելի լավ է առաջ անցնենք, քանի դեռ չեն մեղադրել ռուսական կողմնորոշման մեջ, Թումանյանին էլ հետներս:

Այո, ժողովուրդը համբերատար է: Ժողովուրդը ներողամիտ է ու մեծահոգի: Բայց որքան կարելի է չարաշահել նրա համբերությունը, ներողամտությունն ու մեծահոգությունը:

Այն, ինչ տեղի ունեցավ խորհրդարանում վերջին երկու շաբաթում և շարունակվում է այսօր, ուրիշ բան չէ, քան դրա հաստատումը: Ժողովուրդն իր իշխանություններից սպասում է ստեղծված իրավիճակից դուրս գալու, ճգնաժամը հաղթահարելու գործնական քայլեր: Այլևս անհանդուրժելի են քաղաքական ու տնտեսական

այս դեգերումները, ներքին թե արտաքին, անպտուղ ու անարդյունք այս քննարկումներն ու քվեարկումները: Նախագահության լիազորություններն ընդլայնելու առաջարկը մերժվեց, բայց ընդունվեց պրեզիդենտական իշխանություն սահմանելու «այնքան բաղձալի» որոշումը (հուսանք ուրիշների փոխարեն այս անգամ կոճակներ չեն սեղմել): Թե որքան ջանքեր պահանջվեցին նախագահողներից և անձամբ ԳԽ նախագահից շահելու անհրաժեշտ ձայներ, դժվար չէր նկատել անգամ պարզ աչքով: Բայց դժվար էր հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ հունիսի 24-ի առավոտյան նիստում: Ի՞նչ նպատակ էր հետապնդում և ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ օրենսդիր և գործադիր իշխանությունների կամ, որ նույնն է՝ ԳԽ նախագահի և վարչապետի բացահայտ առճակատումը: Եվ ինչպե՞ս բացատրել ՀՀՇ-ի կողմից անհարկի կենտրոնացված իշխանության ստեղծման անքաքույց պաշտպանությունը: Շարժում, որ իր էությամբ և նպատակներով պիտի հարազատ մնար ժողովրդավարությանը: Իսկ Գերագույն խորհրդի դաշնակցական ֆրակցիան առաջարկեց պրեզիդենտական պաշտոն ստեղծելու հարցը քննարկել միայն Հայաստանի Սահմանադիր ժողովից հետո:

Այնուամենայնիվ, խորհրդարանը հունիսի 25-ին 154 ձայնով քվեարկեց Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոն ստեղծելու օգտին: Բայց արդյո՞ք խորհրդարանում լիովին համոզվեցին, որ նոր լիազորություններով օժտված բարձրագույն պետական պաշտոնի հաստատումը, երբ չկան հակակշռող լծակներ, նպաստավոր կլինի ժողովրդի համար, և այդպիսի խորհրդարանում կհղացնե՞ն արդյոք անաչառ օրենքներ: Թե՞ կրկին պայմաններ կստեղծվեն այնքան մերժելի մենիշխանության վերստեղծման համար: Եվ չլինի, որ կրկին կանգնենք կոտրված տաշտակի առջև:

Թիվ 17, հունիս

Հ. Յ. Դ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հ. Յ. Դաշնակցությունը վերջապես պաշտոնական գրանցում ստացավ Հայաստանում: Վերջապես, որովհետև ինչ-ինչ պատճառներով գրանցումն այդ ձգձգվում էր՝ առիթ տալով անհիմն կասկածների ու չարախոսությունների, լրագրային «բացահայտված» գլուխգործոցների ու կոլտնտեսային խմբագրականների:

Շատերի համար առնվազն տարօրինակ ու զարմանալի էր Դաշնակցության առջև իրավունքների վերականգնման խնդիր դնելն անգամ, էլ չասած՝ գրանցման... Սակայն Դաշնակցությունը դրան կարևորություն չտվեց և ի հեճուկս ոմանց, չընդունեց նեղացածի կեցվածք: Կարևորն, անշուշտ, այդ չէր, այլ այն, ինչ տեղի էր ունենում հանրապետությունում ու Արցախում, և այն, ինչ կարող էր անել ինքը, ինչին կոչված էր և ինչը պահանջում էր իրենից հայ ժողովուրդը: Գրանցման թերթի՞կ, վկայակա՞ն, թե՞ գործ:

Գետաշենի, Մարտունաշենի ու Բերդաձորի որդիները պիտի սպասեի՞ն, թե երբ կբարեհաճեն գրանցել Դաշնակցությանը, որպեսզի որպես դաշնակցականներ կանգնեին թշնամու դեմ՝ պաշտպանելու հողն հայրենի: Կամ աղետյալներին, բռնագաղթվածներին օգնելու, իր կարելիությունները հայրենի իշխանություններին տրամադրելու, տնտեսական ճգնաժամի հաղթահարման ծրագիր առաջարկելու համար Դաշնակցությունը իր գրանցման հա՞ղցը պիտի սակարկեր առաջնահերթության կամ մեկ այլ պայմանով, մանավանդ այնպիսի իրավիճակում, երբ մեր ժողովրդի ողջ ուժն ու եռանդը պետք էր կենտրոնացնել սպասվող նոր վտանգները կանխելու, մեր ժողովրդին դժվար այդ կացությունից դուրս բերելու, անկախության ճանապարհ ելած հանրապետությանը, նրա իշխանություններին սատար կանգնելու: Հ.Յ.Դաշնակցությունը նախքան իր կազմակերպական ներկայությունը բացահայտելը և հայրենի իշխանություններին սատար կանգնելու պատրաստակամություն հայտնելը, արդեն իսկ իր տարագիր և հայրենաբնակ բոլոր ուժերով ու կարելիություններով դրան էր լծված: Իսկ սատար

կանգնել՝ չի նշանակում անպայման հաստատել իշխանությունների ընթացքը, անառարկելիորեն ընդունել ամեն ինչ: Սատար կանգնել, ընդհակառակը, նշանակում է ազնիվ կեցվածք ցուցաբերել որդեգրված քաղաքականության, ընդունված որոշումների նկատմամբ, նշանակում է առաջնորդվել ժողովրդի շահերով, ականջալուր լինել ժողովրդի ձայնին, գործել հանուն ժողովրդի՝ շարունակելով այն պայքարը, որ տանելու է Հայաստանը ամբողջական անկախության:

Եվ անկախ նրանից, թե ուրիշ ինչ գրանցումներ կանի Արդարադատության նախարարության կոլեգիան, ի՞նչ կարգով և ինչպե՞ս, համաձայն ԳԽ «Կուսակցությունների գրանցման կարգի մասին» որոշմա՞ն, թե՞ հաշվի չառնելով այն, Հ.Յ.Դաշնակցությունը 100-ամյա ազատագրական պայքարի ազգային-քաղաքական իր հանգանակով զինված՝ մինչև վերջին շունչը քայլելու է հայ ժողովրդի շահերի պաշտպանության ճանապարհով:

Թիվ 18, հուլիս

ԱՐԴՅՈ՞Ք ՇՐՋԱԴԱՐՁ

1991 թ. հուլիսի 6-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ժողովրդի համար բոլորովին անսպասելի հրավիրեց խորհրդարանի արտահերթ նստաշրջան, որի օրակարգում դրված էր Արցախում և Շահումյանի շրջանում Կենտրոնի և Ադրբեջանի միացյալ հերթական ռազմա-քաղաքական սադրանքի հարցը: Հետաքրքրականը (նաև տարօրինակն) այն է, որ ազգային խորհրդարանը կրկին արտահերթ նստաշրջան է հրավիրում այն ժամանակ, երբ ընդհանուր իրադրությունը շեշտակի սրվում է կամ Արցախում, կամ էլ նրա հարակից հայկական բնակավայրերում:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության և խորհրդարանի նման քաղաքական «անմեկնելի» վարքագիծը արդյո՞ք պատահականություն է... Նման գործելակերպը այնպիսի տպավորություն է թողնում, որ եթե իշխանություններն

ամեն անգամ չեն անդրադառնում «սթափեցնող» այդ իրադարձություններին, ապա այնտեղ կյանքը ընթանում է «բնականոն» հունով...

Չմոռանանք, որ իշխանությունները բազմիցս կրկնել են, թե՝ «Արցախի պրոբլեմը ինքնորոշման պրոբլեմ է»: Ասել է թե՝ «արցախցիներն իրենք պետք է զբաղվեն իրենց հարցերով», իսկ Մայր Հայաստանը (իմա՝ իշխանությունները) «միայն սատար կկանգնի» նրանց այս կամ այն ձեռնարկումներին: Մինչդեռ արցախցիների պայքարին բարոյապես «սատար» կարող են կանգնել նաև... Մալայզիան, Լյուքսեմբուրգը և մյուսները:

Դարձյա՞լ պատահականության վրա «բարդենք» արցախյան շարժմանը «ազգային-ազատագրական պայքարի» կարգավիճակ տալու առաջարկի մերժումը: Կամ, փոխանակ պետականորեն Արցախի, Շահումյանի պաշտպանության միջոցառումների անմիջական ծրագիր մշակվի, անվերջ զբաղվում են Կենտրոնի որոշ ուժերի հասցեագրված սպառնական տոնով և գործնականությունից հեռու հայտարարություններ, որոշումներ ընդունելով:

Գուցե, Արցախի, Շահումյանի քաղաքական կացության շուրջ շահարկումները պրեզիդենտական նախընտրական քարոզարշավի «հաջող» սկի՞զբն են... Համենայն դեպս փորձը վաղուց ապացուցել է, որ անվերջ կրկնվող պատահականությունները վկայում են գործող օրինաչափության մասին:

Թիվ 19, հուլիս

ԼԵՌԸ ԵՐԿՆԵՑ՝ ՄՈՒԿ ԾՆԵՑ

ՀՀ Գերագույն խորհուրդը, հավանաբար, շատ շուտով ստիպված կլինի նորից քննարկման դնել Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության պայքարը ազգային-ազատագրական շարժում ճանաչելու առաջարկը, որովհետև ընդունված որոշումը, ինչպես էլ որ այն ձևակերպվեր՝ հայտարարություն, նամակ, ուղերձ թե թախանձագիր, Արցախում որևէ բան փոխել չի կարող: ԳԽ նախա-

գահը Արցախի մասին խոսում էր երրորդ դեմքով: «Արցախի հարցը իրենք՝ արցախցիները պետք է լուծեն»: Խորհրդարանը զբաղված էր նախագահին լիազորություններ տալու խնդրով ու ինչ-որ երկրորդական հարցերի քննարկմամբ... Եվ հանկարծ հրապարակում կրկին բորբոքված կրքերը տեղափոխվեցին խորհրդարան: Արցախը Հայաստանի օգնությանն է սպասում: Արցախը հայաթափվում է: Սրտառուչ ելույթներ ազգային-ազատագրական պայքարի, հայ ժողովրդի արժանապատվության, միասնության մասին, առաջարկություններ՝ ոտքի հանելու ողջ հայ ժողովրդին, ստեղծելու ազգային բանակ, կազմակերպված ինքնապաշտպանություն և այլն: Իսկ արդյունքը՝ խղճուկ մի հայտարարություն: Այստեղ են ասում՝ լեռը երկնեց՝ մուկ ծնեց...

Հայաստանի Հանրապետության ԳԽ հայտարարությունը նույնպես կմնա անարձագանք, ինչպես ԼՂԻՄ-ի աշխատավորության լիազոր ներկայացուցիչների ժողովի հայտարարությունը, որը, դժվար չէ ենթադրել, արված էր հանձնարարությամբ, որպեսզի հիմք ստեղծվի ԳԽ հայտարարության: Ակնհայտ է, որ դա ուղղակի հրաժարում է արցախյան շարժումից, Արցախի վերաբերյալ ընդունված որոշումներից և այլ բան չէ, եթե ոչ անձնատվություն (կապիտուլյացիա): Ի՞նչ նպատակով դա արվեց, ո՞ւմ էր դա ձեռնտու: Որպեսզի Արցախի հայությանը այսուհետև որևէ կերպ նեցուկ լինելու, նրանց վերջնական ստրկացումը կանխելու ոչ մի հնարավորություն, ոչ մի իրավունք ու հիմք չունենանք այլևս ու խիղճներս հանգիստ անկախություն գոռանք, ապավինելով սոսկ սահմանադրական կարգի վերահաստատման չեղած ծրագրերի: Որպեսզի փոխըմբռնում, թե փոխզիջում ակնկալենք մի իշխանությունից, որի նպատակը Արցախը մինչև վերջ հայաթափելն է:

Ո՞ւմ հայտնի չէ, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների և Մոսկվայի միջև հակամարտության հայելին Արցախն է, ուր շարունակվում են զինված հարձակումները հայկական գյուղերի վրա, սպանությունները, բռնությունները, կողոպուտ-

ներն ու հրկիզումները, այլ խոսքով՝ հայերի բռնի տեղահանությունը, Արցախի ադրբեջանացումը:

Կանխել այդ ամենը, նշանակում է լեզու գտնել Մոսկվայի հետ: Թե ինչ է ուզում Ադրբեջանը, մենք գիտենք: Հայտնի չէ, թե ինչ է ուզում Մոսկվան: Մենք դա կարող ենք և չիմանալ, բայց ԳԽ նախագահը պարտավոր է իմանալ: Հակառակ դեպքում Գերագույն խորհուրդը իր նախագահին պիտի «թույլ տա» առանց լիազորությունների ապավինման եզրակացություններ անել:

Թիվ 20, հուլիս

ՍՏԵՂԾՎԱԾ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԱՊԱՀՈՎ ԽԱՐԻՍԽՆԵՐ

Շուկայական ազատ հարաբերություններ կոչվածը, ըստ երևույթին, ոմանք շատ առարկայորեն են հասկացել, այն մոլլայի պես, որ կտրել ու կերել է Ղուրանը, կարծելով, թե այդպես են յուրացնում Մահմեդի ոգին: Այսինքն, եթե ազատ շուկա է, ուրեմն ազատորեն ամեն ինչ կարելի է առնել ու ծախել, արտասահմանյան թե հայրենական, ռուբլով թե դոլարով, փոխանցումով թե կանխիկ, միայն թե ինչ-որ բան շահեն: Բացարձակորեն ամեն ինչ՝ ավտոմեքենա, վերնաշապիկ, խիղճ, ծխախոտ, ալյուր, «Նապոլեոն» կոնյակ, ոտնաման, համոզմունք, դավանանք...

Կարելի է և փոխանակել. օրինակ, երկու տուփ գարեջուրը՝ պատգամավորական շահավետ մի պինդ հարցադրման, կամ մի պարկ շաքարը՝ ընտրողների ապառիկ հինգ ձայնի հետ: Կարելի է և սեփականաշնորհել: Բազմաթիվ ձևեր կան: Մի խոսքով, ազատ շուկա, ազատ հարաբերություններ, ազատ... բարքեր:

Անշուշտ, ոչ ոք դեմ չէ ազատության, ազատ հարաբերությունների, եթե դրանք նպատակ ունեն հանրապետությունը դուրս բերել տնտեսական ճգնաժամից, հնարավորություն ընձեռել կացությունը բարվոքող արդյունավետ նախաձեռնությունների: Ոչ ոք դեմ չէ շուկայական ազատ հարաբերություններին, եթե ստեղծված են ապա-

հով խարիսխներ՝ չշրջանցելու ազգային շահերը: Սակայն շուկայական ազատ հարաբերություններն ունեն իրենց օրենքները, որոնց անտեսումը կամ զանցառումը կարող է հանգեցնել տխուր հետևանքների, ընդհուպ ազգային դիմագծի խաթարման:

Ազատություն չի նշանակում ամենաթողություն ու անիշխանություն: Առանց համապատասխան օրենսդրական, կազմակերպչական, տնտեսական և սոցիալ-քաղաքական նախապայմանների ազատ շուկայական հարաբերությունները կարող են անգամ հակառակ՝ կազմալուծիչ դեր խաղալ՝ առաջ բերելով սոցիալական անարդարության նոր բռնկումներ, գործազրկության աճ, տնտեսական շերտավորման խորացում, բարոյական չափանիշների խախտում: Շուկայական տնտեսության արդյունավետությունը, հատկապես սկզբնավորման շրջանում, գործուն պետական տնտեսական քաղաքականությամբ է պայմանավորված և ճիշտ չէ ստեղծված իրավիճակը բացատրել միայն ինչ-ինչ առանձնահատկություններով, որը փաստորեն արդեն իսկ առկա հոռի երևույթների պատճառա-հետևանքային կապերը գլխիվայր ներկայացնել է նշանակում: Կարևորը շուկայական հարաբերությունների իրագործման ձևերն ու պայմաններն են, որոնք թելադրվում են վարվող պետական տնտեսական քաղաքականությամբ:

Թիվ 21, հուլիս

ԱՆՀԵՌԱՆԿԱՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Վաղուց արդեն ՀՀ ԳԽ նախագահը չի թաքցնում իր զգացմունքները Հ.Յ.Դաշնակցության նկատմամբ: Գնալով ավելի ու ավելի է խորանում նրա հակադաշնակցական բարդույթը, որը անարձագանք չի մնում: Նախագահի կարծիքը վարակիչ է դառնում, որովհետև հանրապետությունում ամենաբարձր պաշտոնյայի կարծիքն է: Այն կրկնվում ու տարածվում է թե Գերագույն խորհրդում, թե կուսակցական շրջանակներում և թե մամուլի որոշ օրգաններում: Այս դեպքում թերևս չեն զանազանվում նախագահի և ՀՀՇ

վարչության կարծիքները: Ու թերևս դժվար է ասել՝ նախագահի՞ կարծիքն է կազմակերպության կարծիքը, թե՞ հակառակը:

Ինչևէ, այն այսպիսին է՝ որ դաշնակցականները փորձում են վիժեցնել Հայաստանի բոլոր արտաքին տնտեսական կապերը, որ դուրս է ամեն մի պատկերացումից, մասնավորապես Իրանի հետ, որ դաշնակցականները և համայնավարները համաձայնության են եկել Հայաստանի անկախությունը տապալելու համար, որ սպասելի է «Ազգային փրկության կոմիտե»-ի ստեղծման ինչ-որ «խաղաքարտ»՝ եռյակ համագործակցությամբ՝ Դաշնակցություն-Համայնավարություն-ՊԱԿ:

Ինչպիսի ծանոթ ձեռագիր, ինչպիսի ծանոթ ձևակերպումներ: Այսպիսի ենթադրյալ մեղադրանքներով, սուտ ու մտացածին արտահայտություններով փորձ է արվում ժողովրդին հրամցնել Դաշնակցության նախագահական պատկերացումները և ահազանգ հնչեցնել ինչ-որ քաղաքացիական հնարավոր պատերազմի, ինչ-որ քաղաքական հողի վրա հնարավոր սպանությունների: Ո՞վ, ո՞ւմ, ինչպե՞ս, ինչո՞ւ...

Այդ ամենը հիվանդ երևակայության արգասի՞ք է արդյոք: Բնավ ոչ: Միայն վերջին մի քանի ամիսների խորհրդարանական աշխատանքներին նախագահի միջամտությունը արդեն իսկ խոսում է այն գաղափարա-քաղաքական շարժառիթների մասին, որոնցով առաջնորդվում է նա: Այն դեպքում, երբ որդեգրված է մի դիրքորոշում, որի հիմքում ընկած է առկա իշխանության պահպանումն ու ամրապնդումը, երբ իրապաշտության քողի տակ վերադարձ է կատարվում արդեն իսկ գծված շրջանակները, Հ.Յ.Դաշնակցությունն է, որ մշտապես հառնում է որպես ազգայինի պաշտպան: Այստեղ արդեն պարտադիր չէ **Դաշնակցություն** բառը. **ազգայինն** անգամ բավարար է նախագահին հանելու հավասարակշռությունից:

Թիվ 22, օգոստոս

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ, ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Ավելորդ ենք նկատում կրկին նշել հանրապետության առկա կացությունը ընկերային-տնտեսական, քաղաքական բնագավառներում: Կրկնողությունից չէ, որ այդ կացությունը բարեփոխվում է, այլ կոնկրետ գործերով, քաղաքական հստակ գործունեությամբ, պահի գիտակցման պատասխանատվության իրական քայլերով:

Կացությունն այդ ունի ապագային միտված երեք խարիսխներ կամ հենասյուներ, որոնք վերջնականապես պետք է հստակեցնեն մեր հանրապետության քաղաքական ապագան:

Որո՞նք են դրանք. անկախության հանրաքվեն, նախագահական ընտրությունները և միութենական նոր դաշնագրի ստորագրումը: Դժվար չպետք է լինի հասկանալ, որ այս թվարկման մեջ, ուզենք թե չուզենք, առաջնությունը նախագահական ընտրություններինն է, որոնք ինքնաբերաբար ներազդելու են քաղաքական գործընթացների բովանդակության և ուղղվածության վրա:

Ուստի, հարկ է ընդգծել, որ հանձին նախագահական ընտրությունների մեզ տրված է գուցեն ամենաիրական հնարավորությունը՝ հայկական քաղաքական գնացքը սեփական գծի վրա պահելու համար:

Չենք կասկածում ամբողջության մեջ մեր ժողովրդի կողմից այդ հնարավորության օգտագործման գիտակցմանը: Խնդրի կարևորությունը գիտակցվում է նաև քաղաքական ուժերի ու ձևավորվող խմբավորումների կողմից: Նախագահական պոստի դերն ու նշանակությունը խորապես ըմբռնվում է նաև հանրապետությունից դուրս:

Կա մի գործուն չափանիշ՝ բարդ ու պատասխանատու փուլում ճիշտ կողմնորոշվելու համար: Դա ժողովրդի շահն է, նրա անվտանգությունն ու գործելու ազատության ապահովումը: Ուստի, միայն ժողովրդի հետ, միայն նրա համար:

Մինչդեռ ձևավորվում ու զարգացում է ապրում մենիշխանության հաստատման մի անընդունելի միտում: Մեր ժողովուրդը հա-

մայնավարական ամբողջատիրությունը չմերժեց որևէ այլ կարգի բռնատիրություն ընդունելու համար: Այս իմաստով առաջիկա նախագահական ընտրությունները մի վճռական քայլ են քաղաքական ազատությունների պահպանման կամ կորստյան համար: Հետևաբար, ոչ մի կերպ չի կարելի թույլ տալ հնի կրկնողությունը ամեն կարգի նոր անվանումների քողի տակ:

Թիվ 23, օգոստոս

ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավելի քան մեկ ամիս առաջ «Ազատամարտ»-ը գրել էր, որ բավարար քարոզչություն չի տարվում սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի օգտին: Անցած ժամանակամիջոցը եղավ խորհրդանշական: Հատկապես հեռուստատեսությունը մի շարք հաղորդումներ տվեց, որոնց քաղաքական իմաստն էր մարդկանց նպատակամղել դեպի հանրաքվեն: Եվ քանի մոտենում ենք իններորդ ամսվա 21-ին, այնքան քարոզչական մեքենան ավելի մեծ թափ է ստանում: Ինչո՞ւ, մի՞թե այստեղ այլ շարժառիթներ չկան և ամեն ինչ ներկայանում է պարզ լույսով: Քաղաքականության մեջ միանշանակությունը պարզունակության վկայություն է:

Քարոզչական մեքենայի հուժկու աշխատանքն ունի հեռանկարային ուղենիշ. հանրաքվեում բարձր տոկոսի ապահովումն ուղղակիորեն ծառայեցնել նախագահական ընտրությունների հաղթարշավին: Պատահական չէ, որ ընտրարշավն սկսվում է սեպտեմբերի 22-ին (և ոչ թե անկախության առաջին օրը, ինչպես կարող են միամտաբար հավատալ): Ոչ մի կերպ չի կարելի թույլ տալ հնարավոր դրական արդյունքների ուժեղ տպավորության կորուստ, այլ անհրաժեշտ է հանրաքվեով ծնված քաղաքական էներգիան նպատակամղել նախագահի ընտրությանը: Ա՛յս է իշխանության ռազմավարությունը:

Սա չի նշանակում, թե ընդդիմադիր քաղաքական ուժերը, այդ հանգամանքը նկատի առնելով, պետք է հակադրվեն հանրաքվեին:

Ճիշտ հակառակը. անհրաժեշտ է և՛ այսօր, և՛ հանրաքվեից հետո սկսվող ընտրական պայքարում քննադատել նրանց, ովքեր հանրաքվեի ու նրա արդյունքների նկատմամբ կցուցաբերեն շահադիտական մոտեցումներ: Հանրաքվեի արդյունքները ժողովրդինն են և ոչ ոք իրավունք չպետք է ունենա դրանք յուրացնել, համարել որպես իր քաղաքական գծի հաղթանակի հաստատում: Հանրաքվեն քաղաքական ոստնակ չպիտի դառնա հոկտեմբերի 16-ին հաղթանակ կորզելու համար:

Մենք ունենք քաղաքական ու ընկերային-տնտեսական բազմաթիվ հիմնահարցեր, որոնց հաղթահարման ուղիների առանձնացումը պիտի դառնա նախընտրական պայքարի առանցքը: Ոչ մի ամբոխավարություն, ոչ մի խոստում պիտի դեր չունենա: Դեր պետք է ունենան ժողովրդի ազգային ու ընկերային կենսական շահերի պաշտպանության հստակ ծրագրերի իրականացման հարցերը:

Դա է իրատես քաղաքականության պահանջը:

Թիվ 24, օգոստոս

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՈՒԺ Է

Մենիշխանության հաստատման ակտիվիստների ու կողմնակիցների համառ ջանքերով այն հասարակական կարծիքն էին փորձում ստեղծել, որ դեմոկրատիան ուժ չունի, որ դեմոկրատիայի համար մենք պատրաստ չենք, որ մեզ պարզապես պետք է ուժեղ կենտրոնացված պետություն: Ոչ ոք չի ցանկանա իր երկրում տեսնել թույլ իշխանություն, երբ մութ ուժերը կստանան գործունեության ազատություն:

Բայց մի՞թե դեմոկրատիան թուլություն է. այդպես են մտածում միայն նրանք, ովքեր դեմոկրատիան նույնացնում են պառլամենտական շաղակրատանքի հետ, այն պառլամենտի, որը ոչ թե ժողովրդի շահերն է պաշտպանում, այլ իրեն է հաստատում: Մինչդեռ, չմոռանանք, որ դեմոկրատիա նշանակում է ժողովրդի իշխանու-

թյուն: Այսինքն, կարո՞ղ է լինել մի այլ իշխանություն, որը կայուն ու հզոր լիներ, քան այն, որը հենց ժողովրդինն է: Սա նշանակում է, որ թույլ ու անկայուն է միայն ու միայն հակաժողովրդական, խունտայական իշխանությունը, որը մի նպատակ կարող է ունենալ՝ զավթել ու պահպանել ժողովրդի վրա ունեցած իշխանությունը: Դեմոկրատիան չի ընդունում միայն նա, ով չի հավատում ու չի վստահում իր ժողովրդին:

Դեմոկրատիայի ուժի մասին հարցադրումը ակադեմիական հետաքրքրությունը բավարարող հարցադրում չէ: Այսօր մենք կանգնած ենք Հայաստանի նախագահի ընտրության շեմին: Ռուսաստանում նոր բռնատիրության հաստատման փորձի ձախողումից հետո, մի նոր հայացքով պետք է նայել մեր սեփական իրադարձություններին:

Ո՞վ պետք է լինի մեր նախագահը. մարդ, որը երազում է իշխել ժողովրդի վրա՞, թե՞ մարդ, որը կոչված է ծառայելու իր ժողովրդին: Մեկը մեզ տանում է դիկտատուրայի հաստատման, իսկ մյուսը դեմոկրատիայի հաղթանակի:

Այս օրերին ինչ-որ չեն լսվում այն խանդավառ պատգամավորների ու ոչ պատգամավորների խրոխտ ձայները, թե մեզ ուժեղ իշխանություն է պետք: Շատ լավ հասկանալով, որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մեկի իշխանությունը: Այսօր այդ մարդիկ լռում են... որ իշխանության գան, բայց մենիշխանության հաճույքը վայելածները դժվար թե հրաժարվեն իրենց նոր սովորույթից: Իսկ նրանք, ովքեր միշտ էլ եղել են դեմոկրատական ուժեղ իշխանության պաշտպաններ, պիտի զլանա՞ն իրենց քաղաքացիական պարտքը կատարել: Ո՛չ, նրանք կոչված են կասեցնելու մենիշխանության սիրահարների վերջին ցատկը՝ տիրելու իշխանության բարձունքներին:

Թիվ 26, օգոստոս-սեպտեմբեր

ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ

Անշուշտ, կարևորագույն, պատմական իրադարձություններ են տեղի ունենում աշխարհի մեկ վեցերորդ մասում, որն արդեն չի կարելի անվանել միասնական, ամբողջատիրական Խորհրդային Միություն: Պետական հեղաշրջման փորձի, որը նպատակ ուներ սանձելու հասարակական կյանքի հետագա դեմոկրատացումը և կանխելու հանրապետությունների նոր կարգավիճակին անցումը, ձախողումից հետո կտրուկ արագացվեց հասունացած հարցերի լուծումը:

Բալթյան հանրապետությունները, հետևողականության և անկախությանը անմնացորդ նվիրվածության շնորհիվ ու բարենպաստ արտաքին քաղաքական պայմանների առաջացմամբ, կարողացան հասնել իրենց նպատակին՝ սեփական պետականության վերականգնմանը: Իսկ մյուսները՝ նոր տերմինաբանության տարազով ձգտում են ճշգրտել իրենց կարգավիճակը: Ակնհայտ է. նոր պետական կազմավորման կողմնակիցները ընդգծում են միևնույն ռազմա-ստրատեգիական ու տնտեսական տարածքի պահպանման անհրաժեշտությունը: Բոլոր դեպքերում քաղաքական հանգուցալուծումը բնութագրվելու է կենտրոնի դերի սահմանափակմամբ և հանրապետությունների՝ պետության կարգավիճակի ձեռք բերմամբ:

Եվ մի՞թե իզուր չէին մեր որոշ քաղաքական ղեկավարների ջանքերը չտեսնելու փոփոխությունների մայրուղին՝ ցցելով մասնավորը և անտեսելով գլխավորը: Իզուր էին նաև Հ.Յ. Դաշնակցության դեմ քննադատական պոռթկումները, քաղաքական մի ուժի, որը ժամանակին կանխանշեց փոփոխությունների ընթացքը: Անընդունելի է, երբ քաղաքական ընդդիմախոսին քննադատելով իրագործում ես նրա գիծը: Մերժելի է նաև քաղաքական հավակնություններով առաջնորդվելը, երբ անհարկի անտեսվում են փորձն ու իմաստությունը միայն այն հիման վրա, որ դրանք սեփա-

կան շրջապատինը չեն: Եվ մի՞թե դրա համար պետք է մշտապես տուժի մեր ժողովուրդը: Անշուշտ, ո՛չ:

Այսօր, երբ կանգնած ենք նախագահական ընտրությունների նախաշեմին, ազգովին պարտավոր ենք ընտրելու նրան, ով կգործի հեռատեսորեն, առանց «էֆեկտիվ» քայլերի ցուցադրման: Անհրաժեշտ է մի ղեկավար, որը մեզ հեռու կպահի քաղաքական անհարկի տատանումներից:

Թիվ 27, սեպտեմբեր

ԱՌՋԵՎՈՒՄ ՀԱՆՐԱՔՎԵՆ Է

1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն հայ ժողովրդի համար բացառիկ հնարավորություն է հրապարակավ և պետականորեն արտահայտելու իր անհողդողդ կամքը՝ ապրել ազատ ու անկախ: Նրա պատմական կարևորությունը առավել է շեշտվում այն բանից հետո, երբ ՀՀ ԳԽ նախագահը՝ առանց սպասելու, դրսևորելով անհերելի շտապողականություն, ստորագրեց ինքնիշխան հանրապետությունների միության դաշնագրի նախապատրաստմանը մասնակցելու իր պատրաստակամությունը հավաստող փաստաթուղթը՝ «11»-ի հայտարարությունը:

Ուստի, սեպտեմբերի 21-ին հանրաքվեի հարցմանը «Այո» պատասխանելով, մեր ժողովուրդը նախ և առաջ կմերժի այն գործիչների քաղաքականությունը, որոնք բոլշևիկյան ավանդույթով սեփական դիրքորոշումը փորձում են ներկայացնել որպես ժողովրդի դիրքորոշում:

«Այո» պատասխանելով մենք ազգովին պատրաստակամություն ենք ստանձնում գնալու այն ուղիով (իսկ դա գլխավորն է), որը մեզ կհասցնի իրական անկախության, այսինքն՝ այն անկախության, որը նպատակ է և ոչ թե միջոց քաղաքական անազնիվ խաղերում: Խաղեր, որտեղ գլխավորը մեկի կամ մի քանիսի իշխանության հաստատումն է:

1991 թ. սեպտեմբերի 21-ը ոչ միայն և ոչ այնքան բարոյական, որքան քաղաքական քայլ է՝ մեր ապագան կերտելու ուղղությամբ: Եվ սա բոլոր դեպքերում. որքան էլ լինեն դրան խանգարող ներքին ու արտաքին ուժեր, որքան էլ սերտ լինի նրանց համագործակցությունը մեր ազգային իդեալների կենսագործման դեմ:

Ժողովրդի կամքը վճռորոշն է պատմության ընթացքում: Վճռականորեն արտահայտելով մեր ազգային կամքը, մենք որպես ժողովուրդ ոչ մեկին թույլ չենք տա (ինչպիսի ԳԽ և նախագահ էլ լինի) շեղվելու անկախության քաղաքականությունից: Դա լինելու է այն մայրուղին, որից հեռացողները պետք է որ հեռանան նաև քաղաքական ասպարեզից: Մեր ժողովուրդն այս պայքարը չի մղել, որպեսզի ամեն ինչ ավարտվի նորացված միության բարձրագույն մարմիններում ոմանց համար աթոռներ զբաղեցնելով:

Ժողովրդի պայքարի արդյունքները ժողովրդինն են:

Թիվ 28, սեպտեմբեր

ԵՏ ՆԱՅԻՐ ՔՈ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Նախագահության թեկնածուները ընտրողներին են ներկայացնում իրենց նախընտրական ծրագրերը, խոստումներ տալիս, հավաստիացումներ... Հանդիպումներ են տեղի ունենում նաև նրանց վստահված անձերի, կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Ընտրապայքարը մնում է ընտրապայքար, որտեղ և ինչ պայմաններում էլ այն ընթանա:

Առայժմ նման հանդիպումներից խուսափում է միայն Գերագույն խորհրդի նախագահը, հավանաբար խուսափելով հարցերից, որոնց պատասխանելը հօգուտ նախագահի չի լինի...

Ինչևէ, ամեն մեկը իր ձևով է տանում ընտրապայքարը: Եվ մթնոլորտը, ինչպես ասում են, գնալով շիկանում է:

Չեն բացառվում միջադեպեր, որոնք կարող են լուրջ հետևանքներ ունենալ, եթե դրանք չկանխվեն, ինչպիսին տեղի ունեցավ Տավուշի շրջանում օրերս: Չեն բացառվում նաև «թիկնազորային» բա-

խումները, ցեխարձակումները, բամբասանքներն ու ասեկոսեները: Չեն բացառվում նաև «փոքր» ցնցումները: Ամեն ինչ հնարավոր է, ամեն ինչ կարող է պատահել: Եվ դա չի լինի անձի դեմ: Չառաջնորդվենք միայն կուսակցական թե խմբակցական պատվախընդրությամբ: Չշլանանք պսպղուն բաներով, ամեն փայլուն բան ոսկի չէ: Չստեղծենք մեզ համար սուտ աստվածներ: Եվ չտանենք մեր ժողովրդին ի փորձություն:

Այո, մեր դիմաց հայ ժողովուրդն է, որին մեր ճշմարտությունն ասել պարտավոր ենք, բայց մեր ճշմարտությունը պարտադրել՝ երբե՛ք: Եթե անգամ շատերը մոլորության մեջ են, եթե անգամ խաբված են ու հիպնոսացված... Հուսանք, որ դա երկար չի տևի:

Վերջիվերջո մենք նախագահ ենք ընտրում ժողովրդի համար: Հանուն ընտրության չխոցենք մարդկանց, չցավեցնենք նրանց դեռ չսպիացած վերքերը: Ոչինչ անհետևանք չի մնում: Իսկ նրանց, ովքեր խաբված են, ովքեր մոռացել են հանուն Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի, հանուն Արցախի վերամիացման մինչև վերջ պայքարելու իրենց երդումը, ովքեր չեն ուզում տեսնել իրենց իսկ սպասվող վտանգը և օրըստօրե ավելի ու ավելի են հեռանում ազգից ու ազգային նպատակներից, ասում ենք՝ ետ նայիր քո պատմությանը, սիրելիս, ետ նայիր քո բզկտված հայրենիքին, քո տանը և ապա վճռիր ում տալ քո ձայնը:

Թիվ 31, հոկտեմբեր

ԻՆՉՈ՞Ւ ՉԱՐՄԱՆԱԼ

Ավարտվեց նախագահների թեկնածուների ընտրարշավը, որը մեր կյանքի բոլոր շերտերում քաղաքական ու հասարակական տարաբնույթ տրամադրություններ է բորբոքել: Շատ շուտով մենք կշնորհավորենք ու հաջողություններ կմաղթենք մեր նորընտիր նախագահին, ով էլ որ նա լինի, քանզի նրան ենք վստահում հայոց պետականության ամրապնդման պատասխանատվությունը:

Մեր ժողովուրդը առաջին անգամ իրավունք ստացավ ընտրել իր առաջնորդին: Վերջապես կյանքի կոչվեց ժողովրդավարության գլխավոր օրենքը, ըստ որի իրավունքն է ծնում պատասխանատվություն: Բայց արդյո՞ք այդպես եղավ, արդյո՞ք նման իրավիճակում հնարավոր էր ընտրել ամենաարժանավորին, որին վստահվելու է վճռել հանրապետության քաղաքական ճակատագիրը, և արդյո՞ք ընտրապայքարի այս կարճ ընթացքում հնարավորություն ընձեռվեց ընտրողներին ճանաչելու բոլոր թեկնածուներին, ծանոթանալու նրանց նախընտրական ծրագրերին: Եվ արդյո՞ք մարդիկ ընտրությունների գնացին դրա կարևորության խորը գիտակցմամբ, ազատագրված բարդույթներից ու կաղապարված պատկերացումներից, որոնց նա վարժվել էր իր այս երկարատև հիվանդության ընթացքում:

Դժբախտաբար, մարդկային հիշողությունը հետևողական չէ: Շատերը դեռևս դիկտատոր մեկի մտրակի սարսափով են պատկերացնում կարգուկանոնի հաստատումը և այդ պատճառով էլ ընտրեցին ոչ թե գաղափարն ու ծրագիրը, այլ՝ անձը, հաշվի չառնելով, անգամ անընդունելի նկատելով անձի թիկունքում կանգնած համախոհներին ու համակիրներին, որոնք իրենց գաղափարախոսությունը, քաղաքական ու տնտեսական ծրագրերն ունեն և կարելիություններ ու փորձ դրանք իրականացնելու, որոնց անմիջական աջակցությամբ միայն կարող է նախագահը կառավարել պետության նավը:

Շատերն էլ ջանք չթափեցին զանազանելու, ինչպես ժողովուրդն է ասում, թացը՝ չորից, այդպես էլ գլուխները դուրս չհանելով իրենց կրպակներից, ուր առուծախի են դրված խիղճ ու հոգի:

Շատերն էլ իրենց անտարբերությունն ու անհոգությունը քողարկեցին անգիտակից մի կողմնապահությամբ, որի պտուղները հետո են ճաշակելու:

Այսպես, անորոշ կարգավիճակով, առանց սահմանադրության շտապեցինք նախագահության ընտրության, պատրաստ չլինելով դրան, չունենալով քաղաքական հասունության անհրաժեշտ մա-

կարդակ: Ինչ խոսք, նման պայմաններում ընտրությունները չեն կարող ընթանալ առանց խախտումների (եղան բազմաթիվ ահազանգեր, որոնց կանդրադառնանք մեր հաջորդ համարում):

Ինչո՞ւ զարմանալ, որ Կրասնոսելսկում հրապարակավ պատառոտել ու այրել են «Ազատամարտ»-ի վերջին համարները: Դժվար չէ ենթադրել, թե ովքեր են այդ արել... Ովքեր աղմկում էին հանդիպումների ժամանակ, ովքեր «հերթապահում» էին ընտրական տեղամասերի մուտքերի մոտ, ովքեր այդպես էլ չուզեցին հասկանալ՝ ինչ ասել է ազգային արժանապատվություն:

Ինչևէ: Ի պատասխան կատարված մեծ ու փոքր օրինախախտումների ու անարդարության, ազգային ժողովրդավար միտքը արթուն է և վաղը, մյուս օրը կարթնացնի բոլորին:

Թիվ 33, հոկտեմբեր

Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԹՎԵՐԸ

Ավարտվեցին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահական ընտրությունները: Հանդարտվեցին բնականաբար լարված կրքերը: Սինչդեռ յուրաքանչյուրը, ում հուզում է մեր ժողովրդի քաղաքական ճակատագիրը, չի կարող անտարբերություն ցուցաբերել հրապարակված պաշտոնական թվերի նկատմամբ:

Հանրապետությունում ընտրություններին մասնակցել է 1 միլիոն 519 հազար 878-ը, որը կազմում է ընտրողների թվի 70,4 տոկոսը: Հաղթողի՝ ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկել է ընտրություններին մասնակցածների 83,028 տոկոսը, որը կազմում է բոլոր ընտրողների 58,47 տոկոսը:

Դժվար է ասել, թե վերջին թվերը անսպասելի էին. հատկապես անցած 7-8 ամսվա ընթացքում ՀՀ ԳԽ նախագահի քաղաքական կերպարը համառորեն նույնացնում էին այն գործչի կերպարին, որը անկոտրում կամքով մեր ժողովրդին առաջնորդում է դեպի պետական անկախություն: Սրան էր նպատակամղված նաև սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, որի ընթացքում ընտրություններին մաս-

նակցածների ավելի քան 99 տոկոսը քվեարկեցին ԽՍՀՄ կազմից դուրս անկախ Հայաստան ստեղծելու օգտին:

Բայց քաղաքական դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ Հայաստանի ներկա ղեկավարությունը յուրովի է ըմբռնում ժողովրդի միահամուռ քվեն. այսինքն՝ ազատորեն վարել այն քաղաքական կուրսը, որը կանխորոշված էր մինչև հանրապետական հանրաքվեն:

Վստահ կարելի է ասել, որ 25 օրում (սեպտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 16-ը) ընտրողների ճնշող մեծամասնությունը չկարողացավ տեսնել և չէր էլ կարող տեսնել, թե ո՞ւր է գնում Հայաստանը՝ անկախությա՞ն, թե՞ անանուն պետական կազմավորման մեջ ներառնվելու ուղիով:

Ժողովրդի դիրքորոշման պարզ իներցիան (չկար այն 7-8 ամիսը, որ թույլ տար վստահաբար կողմնորոշվել քաղաքական բարդ հարցերում) և հին պետական մեքենային բնորոշ պրակտիկայի կիրառումը կանխորոշեցին ՀՀ ԳԽ նախագահի հաղթանակը նախագահական ընտրություններում:

Այդ հաղթանակը, սակայն, առարկայորեն բազմում է անցյալի քաղաքական կապիտալի վրա: Իսկ թե ինչպիսին կլինի նախագահի վարած քաղաքականության նոր գնահատականը, կհաստատի անկաշառ դատավորը՝ ժամանակը:

Թիվ 34, հոկտեմբեր

Ո՞ՐՆ Է ԽՆԴԻՐԸ

Թվում է, թե Հայաստանի Հանրապետության քաղաքական ու տնտեսական մոտալուտ ապագան ինչ-որ չափով հստականում է: Դա կարելի է կռահել այն կապերից, որ հաստատվում են նախկին Խորհրդային Միության անդամ հանրապետությունների հետ, ինչպես նաև օտար պետությունների հետ հարաբերություններ հաստատելու ընձեռված հնարավորությունից: Հայաստանի խնդիրն է ընդհանրապես բոլոր հին ու նոր առնչությունները նպատակամղել

մեր ազգային-պետական ինքնիշխանության ամրապնդմանը, Արցախի դատի պաշտպանությանը: Միաժամանակ մեր կյանքը հարկ է հեռու պահել գաղափարական և մշակութային վնասակար ազդեցություններից:

Անհետաձգելի խնդիրներ կան լուծելու նաև մեր հանրապետության ներքին կյանքում: Հասարակությունը սպասում է կադրային լուրջ փոփոխությունների, երբ վերջապես բարձր կգնահատեն պաշտոնյաների մասնագիտական ու բարոյական արժանիքները:

Պակասության պայմաններում լայն զանգվածները մտահոգված են բաշխման համակարգում առկա խափանարարությամբ: Դժվար է հաշտվել այն իրողության հետ, երբ նյութական շատ բարիքներ, առաջին անհրաժեշտության ապրանքներ, վառելանյութի պաշարներ սպառողներին են հասցվում մասնավոր մարդկանց միջոցով, շրջանցելով պետական օղակներն ու պետականորեն ճշտված գները: Ազգային ու սոցիալական կյանքի այս լարված ժամանակներում շահամոլ մարդիկ հնարավորություն չպետք է ունենան հարստանալու ժողովրդի հաշվին: Կաշառակերությունը, սպեկուլյացիան, դրամաշորթությունը, թվում էր, թե բնորոշ էին մոտ անցյալին: Դրանք կան նաև այսօր: Ուստի բացասական երևույթների վերացման խնդիրը եղել և մնում է անհետաձգելի գործերից մեկը:

Շուրջ քառամյա սոցիալ-քաղաքական ծանրագույն ցնցումներ ապրած ժողովուրդ ունեցող իշխանությունը կոչված է պաշտպանելու նրա կենսական շահերը: Եթե չենք ցանկանում, որ ժողովուրդը անհաղորդ մնա մեծ խնդիրների նկատմամբ:

Առանց ժողովրդի ցանկություններին ականջալուր լինելու և նրա գործուն մասնակցությունը ապահովելու՝ չի լուծվի ու չի կարող լուծվել և ոչ մի լուրջ խնդիր: Իշխանության ու ժողովրդի միջև հնարավոր խզումը վտանգավոր կլինի մեր ապագայի կերտման տեսանկյունից:

Թիվ 35, հոկտեմբեր-նոյեմբեր

ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է, ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Տարօրինակ ոչինչ չկա. քաղաքական որոշ ուժեր կամ խմբավորումներ ավարտում են իրենց պայքարը, իսկ մյուսները՝ շարունակում: Հարցը, սակայն, այն է, թե ինչո՞վ է ավարտվում կռիվը և թե հանուն ինչի՞ է շարունակվում մղվել այն: Բնական է կարծել, թե իշխանությունն ու հայրենիքը նույնը չեն: Եղել է ժամանակ, երբ սեփական իշխանություն չենք ունեցել, բայց հայրենիք՝ միշտ ունեցել ենք: Այսօրվա դրությամբ ժողովրդի միահամուռ ջանքերով քաղաքական ասպարեզից վտարված համայնավարությանը փոխարինել են նոր ուժեր, որոնք նպատակ ունեն. ա) ամրապնդել սեփական իշխանությունը, բ) բանակցություններով, Ադրբեջանի ինքնիշխանության սահմաններում, հասնել Արցախում իրավիճակի համեմատական կայունությանը (այն դեպքում, երբ ԼՂ Հանրապետությունը ձգտում է դառնալ ԽՍՀՄ տնտեսական և քաղաքական ընդհանուր տարածքի առանձին լիիրավ անդամ), գ) համադրվելով նոր հանրապետությունների համակարգում ձևավորվող տնտեսական ու քաղաքական իրողություններին, անցնել վերահսկող կառավարման:

Անշուշտ, սա՛ էլ է քաղաքականություն, սա՛ էլ է ռազմավարություն, որի հիմքում ընկած է իշխանության համակարգին տիրելու համար մղվող կարճաժամկետ պայքարը: Բայց արդյոք այն համադրվո՞ւմ է պատմությանը, համադրվո՞ւմ է արդիականությանը, երբ օրվա հրամայականն է՝ դառնալ ազատ ու անկախ: Այս գծում պայքարը, թերևս, վերջանում է և սկսվում է իշխելը:

Մինչդեռ եղել է և կա պայքարի մի այլ ուղի՝ բոլոր նրանց համար, ովքեր փորձում են շտկել պատմության «սխալը», փորձում են իրականացնել մի այլ քաղաքականություն, որը չի կանխորոշվում և չի թելադրվում: Սա մի վճռական խնդիր է, երբ անկոտրում ձգտում կա դուրս գալ օտարի ձեռքով գծված շրջանակից և ստեղծել սե-

փական, այլընտրանքային ուղի: Ինչպես, օրինակ, կապեր հաստատել ոչ միայն Հյուսիսի, այլև Հարավի հետ:

Այստեղ չի կարող հաջողություն լինել առանց պայքարի: Հարատև կռիվը, որ մղվում է մեր ազգի համար, չի կարող դադար առնել: Արցախում դա թույլ չի տա ոչ այլ ոք, քան հակառակորդ կողմը: Մենք վերջապես վստահ պետք է լինենք, որ ժողովրդավարությունն անդարձ է հաստատվում և կապ չի ունենալու այս կամ այն քաղաքական գործչի անձի հետ: 70-ամյա կոմունիստական բռնակալությունը մի՞թե բավական չէ: Դժվար է, բայց հարկ է ըմբռնել, որ ազգի ողնաշարը ժողովուրդն է, այլ ոչ թե սեփական բարեկեցիկության ձգտող մի խոշոր կազմակերպված խումբ: Հայրենիքի պաշտպանները նախ և առաջ երիտասարդ, ազնիվ, գաղափարի տեր հայորդիներ են:

Արդ, պայքարը շարունակվում է:

Թիվ 36, նոյեմբեր

ՁՄԵՌՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Ձմեռելու խնդիրն ընդհանրապես նորություն չէ: Որպես կոմունիստական անճարակ կառավարման հաստատում, ձմեռման հարցն ի հայտ եկավ գյուղատնտեսության և, հատկապես, անասնապահության մարզում: Սակայն շուտով պարզ դարձավ, որ «փոքր եղբայրների» վրա կատարված «փորձարկումները» հեռուն գնացող նպաստավոր հետևանքներ են ունենում, երբ անցնում ենք մարդկային հասարակությանը:

Մինչև արցախյան շարժումն էլ ձմռան ամիսներին եղան գազամատակարարման խափանումներ: Ժամանակին դա լուրջ չընդունվեց, իսկ թշնամին արդեն հեռահար նպատակներով փորձարկում էր իր «ձմեռային ռումբը», այսինքն՝ ձմեռման հետ կապված արհեստական խոչընդոտների ստեղծման արդյունավետությունը:

Վերջին 4 տարում ձմեռումը, իրոք, դարձավ քաղաքական կարևոր գործոն: Արցախյան պայքարն առաջ տանելու համար

հարկ էր անվնաս, անկորուստ ձմեռել: Այս տարին դրա հաստատումն է: Նոյեմբերի 4-ին գազը կտրելով, Ադրբեջանը այն բացելու դիմաց արդեն նոյեմբերի 8-ին պահանջեց, որ Հայաստանը համաձայնվի երկու կողմից 5 կմ լայնությամբ անվտանգության գոտի ստեղծելուն:

Մեր հարևանը թևակոխում է առճակատման վճռական փուլը, և մենք չենք կարող նրան միայն զիջումներով կասեցնել: Ո՛չ Ժելեզնովոդսկը և ոչ էլ երկկողմ հանդիպումները արդյունք չտվեցին:

Պետական անվտանգության երաշխիքները ոչ թե պետք է փնտրել դրսում, այլ ստեղծել սեփական տանը: Իշխանության անցած 14 ամիսները բավարար ժամանակ էին այլընտրանքային լուծումներ գտնելու համար: Մինչդեռ նոր իշխանությունն էլ կոմունիստների պես կախված մնաց թե՛ Ադրբեջանից և թե՛ Մոսկվայից (այս դեպքում անգամ տեղ գտավ անհեռանկար առճակատումը հյուսիսային մայրաքաղաքի հետ):

Իսկ ժողովո՞ւրդը: Չի կարելի պահպանել ևս մեկ կոմունիստական դոգմա, այսինքն՝ հրապարակավ նրան հավաստիացնել, որ ոչ մի լուրջ վտանգ, գերխնդիր չկա: Այս դեպքում ժողովուրդն առկա դժվարությունները կարող է դիտել որպես իշխանության, բայց ոչ նաև իր սեփական դժվարություններ: Իշխանությունն ու ժողովուրդը մի գերխնդիր ունեն՝ համատեղ գոյատևել և համատեղ պայքարել:

Թիվ 37, նոյեմբեր

ԻՐԱՏԵՍ ԼԻՆԵՆՔ

Եթե ուզում ենք իրատես լինել, ապա պետք է նկատի ունենանք, որ մեծ քաղաքականության մեջ պատահականություններ չեն լինում: Դրանում համոզվելու համար բավարար է համադրել երեք իրադարձություններ: Հայաստանի նախագահն ինչ-որ կողմնակի հիմնավորմամբ իր պարտականություններն արդեն ստանձնելով նոյեմբերի 11-ին, նույն օրն իսկ մեկնում է ԱՄՆ ու Կանադա՝ նա-

խագահ Ջորջ Բուշի (նոյեմբերի 14-ին) և Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիի հետ (նոյեմբերի 15-ին) հանդիպելու համար: Եվ վերջապես Նովո-Օգարևոյում նոր հանդիպում է սկսվում նոյեմբերի 14-ին, որին բնական է, չի կարող մասնակցել Հայաստանի նախագահը, հանդիպում, որին, նրա բառերով իսկ ասած, հրավիրված էր նաև ինքը:

Երևան-Վաշինգտոն-Մոսկվա համեմատաբար այս նոր «եռանկյունին» ի՞նչ կարող է նշանակել: Դատելով ամերիկյան հանդիպումների արդյունքներից, կարելի է ասել, որ Միացյալ Նահանգները չի շտապում ճանաչել Հայաստանի պետական անկախությունը, իսկ տնտեսական օգնությունը «հավասարակշռելու է կենտրոնի և հանրապետությունների հետ»: Ստացվում է այն, որ Հայաստանի նախագահը Ամերիկայում լսում է ընդհանուր բնույթի հավաստիացումներ, իսկ ահա Մոսկվայից 12 կմ հեռավորության վրա մշակվում են անունը կորցրած պետական միավորման վերահաստատմանն ուղղված որոշումներ: Ըստ Միխայիլ Գորբաչովի՝ մինչև տարեվերջ կստորագրվի Ինքնիշխան Պետությունների Միությունը (ԻՊՄ) հռչակող քաղաքական դաշնագիրը:

Լինենք իրատես. Հայաստանը տնտեսական և քաղաքական առումով սերտորեն կապված է Մոսկվայի, Ռուսաստանի հետ: Հարաբերություններն ավելի կամրապնդվեն կովկասյան վերջին իրադարձությունների խորապատկերի վրա: Հետևաբար այն պահին, երբ ռազմավարական նշանակության հարցերը Մոսկվայում են քննարկվում, ապա այնտեղ մեր բացակայությունը հիմնավոր չի թվում: Իսկ հանդիպումներն աշխարհի մյուս մասում, որտեղ որոշումներ չեն կայացվում, ստանում են բարոյա-ծանոթագրական և, ընդհանրապես, քարոզչական բնույթ:

Չի՞ ստացվում այն, որ երբ Մոսկվայում իրական որոշումներ են հասունանում, Ամերիկայում Հայաստանի ներկայացուցիչները խոսում են անկախության հիմնավորվածության մասին: Արդյոք մենք վերստին մտահոգված չե՞նք պետական գործչի կերպարի ա-

նաղարտության պահպանմամբ, քան թե իրական հարցերի լուծման ճակատագրով:

Վերստեղծվող հայկական դիվանագիտությունը կոչված է ազատվելու վիպապաշտական բովանդակությունից և իր ջանքերը նպատակամղելու նախ և առաջ այնտեղ, որտեղ որոշումներ են ընդունվում և էապես շոշափվում են մեր գոյության հիմնահարցերը:

Թիվ 38, նոյեմբեր

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾ

Առիթների դերը մեծ քաղաքականության մեջ հայտնի է վաղուց: Եվ այս անգամ էլ հստակ օրինաչափությամբ Ադրբեջանի հանրապետության որոշ ուժեր չեն թաքցնում իրենց մտադրությունը «Մի-8» ուղղաթիռի աղետի ենթարկվելն առիթ ծառայեցնելու հակահայկական մոլուցք սանձազերծելու համար: Նրանց նմանօրինակ մոտեցումը, անշուշտ, մեզ համար անսպասելի չէր, և մենք հարցի կարևորության խոր գիտակցությամբ կոչված ենք վճռականորեն կանգնելու հանրապետության ու ժողովրդի անվտանգության ապահովման դիրքերում: Հայրենիքի պաշտպանությունը պետական գործ է եղել և շարունակում է մնալ: Չէ՞ որ միայն պետական մակարդակում կարելի է ոչ միայն համադրել բոլոր ուժերն ու կարողությունները, այլև անհրաժեշտ բանակցություններ վարել առճակատման հետ առնչություններ ունեցող մյուս բոլոր կողմերի հետ:

Իսկ քաղաքական և հասարակական կազմակերպություններն էլ կոչված են զորավիգ կանգնելու պետությանը, որպեսզի ոչ ոք դուրս չմնա անվտանգության ապահովման պատասխանատու գործից, և նաև, որ այդ գործը հանկարծ չդառնա անհատների ու խմբավորումների ժամանակավոր խնդիր:

Ժողովրդի կողքին, ազգային բանակի կազմում և նույնիսկ նրա առաջին շարքերում ազգի ու հայրենիքի պաշտպանությանը մաս-

նակցելու իր պատրաստակամությունը մշտապես հաստատել է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որի համար չկա ավելի սրբազան գործ, քան ազգի ու հայրենիքի պաշտպանության համար մաքառելը:

Իսկ ժողովո՞ւրդը. ժողովուրդն էլ կոչված է խորապես գիտակցելու, որ ազգային անվտանգությանը չպետք է զինվորագրվել միայն ինչ-ինչ լարվածությունների դեպքում: Ազգի ու հայրենիքի պաշտպանությունը բոլորիս սրբազան գործն ու մշտական պարտքն է: Հայրենիքն ու ազգը կան, եթե կան նրանց անմնացորդ նվիրյալները:

Ժամն է վերահաստատելու, որ մեր գոյությունը նվիրաբերում չէ, այլ՝ պայքարի արդյունք:

Թիվ 39, նոյեմբեր-դեկտեմբեր

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

Ռազմա-քաղաքական չթուլացող առճակատման հաղթահարման համար անհրաժեշտ են նաև բանակցություններ շահագրգիռ բոլոր կողմերի միջև: Եվ ահա նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ այդպիսի հանդիպում-բանակցություն Անդրկովկասում իր դերակատարությունը պահպանող ուժի՝ ռուսական կողմի գլխավորությամբ: ԽՍՀՄ Պետխորհրդի նիստին հրավիրված էին Հայաստանի և Ադրբեջանի նախագահները:

Մութ ծալքերին տեղյակ չլինելով հանդերձ, մի բան, թերևս, ակնհայտ է: Մարտական խոշոր բախում նախ Արցախի բազմաչարչար հողում, ապա հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով տեղի չունեցավ: Ինչպես ասում են, սա է գլխավորը: Բայց դրանից հիմնահարցը չլուծվեց:

Այստեղ են բախվում երեք ազգային-ռազմավարական շահեր: Արցախն այլևս չի կարող վերադառնալ իր նախկին վիճակին. դա ընդունելի չէ ո՛չ իր՝ Արցախի, ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Ռուսաստանի համար: Ադրբեջանի ընդհանուր դիրքորոշման շրջադարձը որոշա-

կի հայտնի ուղղությամբ օրինաչափ հակազդեցություններ է ծնում նաև Մոսկվա-Երևան գծի կողմից: Քաղաքական բևեռների հստակեցում տեղի է ունենում նաև խորհրդային սահմանից այն կողմ. Իրանն ու Թուրքիան չեն կարող նույն դիրքորոշումն ունենալ: Արցախի խնդիրը իրեն վերջապես զգացնել տվեց ամերիկա-թուրքական հարաբերություններում: Ինչի՞ կհանգի դա, հավանաբար ցույց կտան առաջիկա օրերը: Հուսանք, որ դա թռուցիկ բնույթ չի կրում:

Բայց և այնպես, ինչպես արդեն շեշտել ենք, ազգային անվտանգությունը չպետք է կառուցվի ու իրավունք չունի կառուցվելու միայն դիվանագիտական կապերի հիման վրա, դրանք եղել և մնում են արտաքին անհրաժեշտ նախապայմաններ:

Մշտական գործոն է ազգի ներպետական այնպիսի կառույցի ստեղծումը, որը նախատեսված է հնարավոր աննպաստ և նպաստավոր զարգացումների համար: Այստեղ հաշվարկների առանցքը մարտական ու քաղաքական մեր պատրաստակամությունն է՝ մաքառել մինչև վերջ, որովհետև եթե ոչ մենք ինքներս, ապա էլ ո՞վ:

Թիվ 40, դեկտեմբեր

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Մի ժողովրդին մի համազգային խնդիրն էլ է բավական: Բայց մենք ունենք չթուլացող նշանակության այդպիսի երեք խնդիր՝ Արցախը, փախստականները և աղետի գոտին: Դեկտեմբերի 7-ին լուռ, առանց հաշվետվությունների և մաղթանքների նշեցինք բարբարոսական աղետի երրորդ տարելիցը: Հեռատես հյուսիսային քաղաքական գործիչները՝ մեծ արհավիրքից հետո նախաձեռնությունը ձեռքից բաց չթողնելով, հռչակեցին՝ աղետի գոտին կվերականգնվի երկու տարում, որի համար կհատկացվի (արժեքն անընդհատ կորցնող) 10 միլիարդ ռուբլի: Այսօր ոչ ոք չի կարող ասել, թե ի՞նչ եղավ այդ գումարը, ինչի՞ վրա ծախսվեց և ինչքա՞ն մնաց: Աղետի գոտու շինարարությունն ուղեկցվեց շրջափակումներով և

տարբեր հանրապետություններից օգնության եկածների աստիճանական հեռացումով:

Հայաստանի կոմունիստական ղեկավարությունն էլ աղետի գոտու մեջ տեսնելով իր քաղաքական փրկությունը, այն ջանասիրաբար հակադրեց Արցախի խնդրին՝ որպես մեր ժողովրդի առջև ծառացած թիվ մեկ հարցի: Խնդիրն այդպես դրեցին նաև նրանք, ովքեր այսօր կրկին հրամանատարական կամրջակի վրա են:

Բուն շինարարության մեջ, չգիտես ինչու, գլխավորը համարվեց օտարազգի շինարարների մասնակցությունը: Իսկ հայ մարդկանց մի մասը սկսեց զբաղվել արտագնա աշխատանքով, այն դեպքում, երբ իրենց երկրի մի զգալի հատվածը ավեր վիճակում էր: Չլսված ու չտեսնված մի երևույթ, բայց և դառը իրողություն:

Նոր իշխանությունների օրոք էլ, ընդհանրապես, աղետի գոտու մասին գերադասում են չխոսել (ի միջի այլոց նաև Արցախի մասին), եթե հաշվի չառնենք երբեմն-երբեմն մամուլով ու հեռուստատեսությամբ տրվող հաղորդումներն այս կամ այն շենքի հանձնման կամ չհանձնման կապակցությամբ:

Համապատասխան ծրագրեր չկա՞ն, թե՞ չեն իրագործվում: Ծրագիրը ծրագիր է, եթե իրականանալի է, եթե ստեղծված են պայմանները և ապահովված մարդկային գործոնը: Բայց արդյո՞ք մենք ազգովին ու պետականորեն ամեն ինչ արեցինք մեր բոլոր կարողություններով աղետի գոտին շուտափույթ վերականգնելու համար: Կարծում ենք, որ՝ ոչ, և սա է մտահոգիչն ու անհետաձգելի խնդիրը:

Թիվ 41, դեկտեմբեր

ԱԶԳ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական նոր պայմաններում, երբ այլևս չկա Խորհրդային Միությունը որպես միասնական պետություն և ԽՄԿԿ-ն որպես այդ պետության քաղաքական առանցք, ազգային հարցը, որպես մի կուսակցության ծրագրային խնդիրներից մեկը, դադարում է գո-

յություն ունենալուց: Այժմ խնդրո առարկա են դառնում ազգի՝ որպես հավաքական ամբողջության, գոյության, պայքարի, սոցիալական կազմակերպվածության և տնտեսական գործունեության հիմնահարցերը: Առավել ևս մեր ժողովրդի համար, որը, իրոք, ապրում է իր պատմության մի պատասխանատու շրջանը, երբ գոյության ու գոյապայքարի խնդիրները նորից առաջին գիծ են մղվել՝ համատեղվելով ազգի սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մշակութային հարցերի հետ:

Այս ամենը՝ գոյության ներքին ու արտաքին նպաստավոր պայմանների ստեղծումը, դառնում է քաղաքականության առանցքային բովանդակությունը, բավարար հիմք՝ ազգ-քաղաքականության նորագույն ըմբռնման համար:

Ազգն, առարկայորեն, որպես մի ամբողջություն, դառնում է քաղաքականության վճռական գործոն: Այլ կերպ ասած, ոչ թե ազգային քաղաքականություն կոմունիստական հին ըմբռնմամբ, այսինքն՝ ազգի նկատմամբ վարվող քաղաքականություն, այլ՝ իր իսկ ազգի վարած քաղաքականություն: Այստեղ առկա է փոխադարձ ազդեցության սկզբունքը. ա) ազգի պարտադրանքի քաղաքականությունը և բ) քաղաքականության հակազդեցությունը ազգի կենսագործունեության վրա:

Առաջինը արտահայտվում է ազգային կամ պետական անվտանգության համակարգի ստեղծմամբ, ժողովրդավարական կառավարման հաստատմամբ, սոցիալական արդարության ապահովմամբ և հավասարակշռված արտաքին քաղաքականության իրագործմամբ:

Երկրորդ. հակազդեցության դեպքում քաղաքականությունը կարող է ինչպես ապաքաղաքականացնել ազգին, նպատակ ունենալով ապահովելու իշխանության անխռով տիրապետությունը, այնպես էլ մեծացնել ազգի կազմակերպական կարողությունը՝ լուծելու համար թե՛ ներքին և թե՛ արտաքին պետական խնդիրները:

Ազգ-պետության ստեղծմամբ (ինչպես այսօր Հայաստանն է) քաղաքականության գլխավոր հոգսը դառնում է ազգի անվտան-

գության համակողմանի ապահովումը և առաջադիմության համար նպաստավոր սոցիալ-տնտեսական, ճարտարագիտա-բնապահպանական պայմանների ստեղծումը: Իսկ քաղաքական ուժերի պայքարը գնում է ոչ թե միմյանց դեմ՝ որպես ինքնանպատակ մի բախում, այլ հանուն ազգի ու հայրենիքի արմատական շահերի բացահայտման ու պաշտպանության:

Հ.Յ.Դաշնակցությունն իր գործնական քաղաքականության մեջ անշեղորեն հետևում է ազգի գոյության ու զարգացման տեսական պատկերացումներին, որոնք նա ստեղծել է իր հարյուրամյա պատմության ընթացքում: Նորերն են, որ կարող են խարխափել...

Թիվ 42, դեկտեմբեր

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԽՈՍՎՈՒՄ ԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՉԻ ԽՈՍՎՈՒՄ

Անթաքույց մի օրինաչափությամբ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը խուսափում է ազգի առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնահարցերին անդրադառնալուց:

Դատեցեք ինքներդ. նշանակումներ Հայաստանի կառավարության նոր կազմում, արձագանքներ արևելասլավոնական ընկերակցությանը միանալու վերաբերյալ, հրամանագրեր՝ հանրապետության հարավային դարպաս Մեղրիում արտակարգ դրություն մտցնելու, անվտանգության ազգային խորհուրդ ստեղծելու մասին և այլն:

Ոչ մի խոսք գների, սղաճի, կյանքի, ապրուստի թանկացման մասին: Սա հին ավանդույթ է. երկիրը ծայրահեղ քայքայված վիճակում է և հանրապետության առաջին դեմքը այդ կապակցությամբ պետք է ոչ թե բազմանշանակ լռի, այլ ասելիք ունենա և տեղեկացնի ժողովրդին: Չէ՞ որ ժողովուրդն է նրան ընտրել, և նա էլ ե՞րբ, եթե ոչ հիմա, պետք է հաշվետու լինի իր ընտրողների ու ժողովրդի առջև:

Դժվար է մոռանալ, որ նման խուսափողական փորձված եղանակով նա նրբորեն մասնակցեց նախագահական ընտրությունների մրցապայքարին և նույնիսկ հայտարարեց. «Ես ոչ մի խոստում չեմ տալիս»: Այս արտահայտությունը, այժմ արդեն հիմնավորապես պարզ է, ոչ թե ինչ-որ գերիրապաշտության հաստատում էր, այլ պարզապես վկայություն, որ նա չի ցանկանում որևէ լուրջ առնչություն ունենալ ժողովրդի լարված կյանքի ու քայքայված կենցաղի հարցերի հետ: Չափազանց մեծ գլխացավանք է անլուծելի թվացող հարցերով հագեցած ժամանակներում ստանձնել ազգի գոյապայքարի (անշուշտ, ոչ նրան իշխելու) դրոշակակրի պատասխանատու դերը:

Մինչդեռ եղել, կա ու կլինի առավել փորձված եղանակը. ասել ու խոսել «մեծ» քաղաքականության, միջպետական հանդիպումների, հնարավոր ու անհնարին կապերի մասին: Ոչ թե սա է սխալ, այլ ամեն ինչ սրան հանգեցնելը: Բոլոր դեպքերում դիրքորոշման հիմքում ընկած է այն մտահոգությունը, որ հանկարծ հետադարձ կապ չառաջանա ժողովրդի ու նախագահի միջև: Տնտեսական հարցե՞ր եք ուզում լուծել՝ գնացեք կառավարություն, բողոքնե՞ր ունեք՝ դիմեք Գերագույն խորհրդին և այլն:

Մի հարցադրում, այնուամենայնիվ, դժվար է չանել. ի՞նչ են մտածում այս ամենի մասին բոլոր նրանք, ովքեր այնքան բացահայտ ջերմեռանդությամբ քվեարկում էին նախագահի օգտին: Գուցե ընտրողնե՞րն էլ են մոռացել իրենց պարտականությունների մասին (բան էր՝ արեցինք, անցավ) և հոժարակամ լծվել են կյանքի ծանր սայլին...

Թիվ 43, դեկտեմբեր

ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1992

ՀԱՅՈՑ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵՏԸ

1991 թ. ավարտը նշանավորվեց պատմական ու քաղաքական մի կարևորագույն երևույթով՝ պետությունների ու միջազգային հանրության կողմից Հայաստանի դիվանագիտական ճանաչմամբ: Նոր, փառավոր էջ է բացվում մեր հայրենիքի ու ժողովրդի համար. դարեր շարունակ հայազգի խելամիտ դիվանագետները ծառայության անցնելով Ասիո ու Եվրոպայի արքունիքներում հսկայական նպաստ են բերել այլևայլ պետությունների: Ժամն է մեր ազգի անուրանալի դիվանագիտական կարողությունները ի սպաս դնելու սեփական հայրենիքին:

Առավել ևս, որ պատմական հանգամանքների բերումով այսօր հողագնդի 62 երկրներում ապրում են մեր ազնիվ, հայրենաբաղձ հայրենակիցները, որոնք պատրաստ են նպաստելու իրենց վերածնված երկրի բարգավաճմանը: Լավագույն հնարավորություններ են ստեղծվում, իրոք, ի մի հավաքելու համաշխարհային տարածում ունեցող մեր ազգի, առանց բացառության, բոլոր-բոլոր ուժերն ու կարողությունները: Հայոց դիվանագիտության նշանակետն է արտերկրի հայության համախմբումը մայր հայրենիքի շուրջը: Ժամանակակից աշխարհի պայմաններում Արգենտինայից մինչև Ավստրալիա, Հեռավոր Արևելքից մինչև Եվրոպա ու Ամերիկա, Մերձավոր ու Միջին Արևելքից մինչև Հյուսիսային Եվրոպա կարելի է ընդգրկել հայոց շահերի ապահովության հարցը:

Հայտնի է, որ դիվանագիտությունը երկրի վարած քաղաքականության բաղկացուցիչ մասն ու շարունակությունն է՝ այլ եղանակով: Ուստի, վստահ կարելի է ասել, որ ինչպիսին Հայաստանի պաշտոնական քաղաքականությունն է, այնպիսին էլ կլինի դիվանագիտական ծառայությունը: Իսկ ռազմավարական ուղիները առնվազն երկուսն են. ա) Հայաստանը պատասխանատու է միայն

իր ներկայի քաղաքացիների համար և ազգային շահը տեսնում է ներփակված հանրապետության սահմաններում, բ) Հայաստանը ձգտում է դառնալ բովանդակ հայության հայրենիքը, համախմբել բոլորին իր շուրջը՝ լուծելու համահայկական խնդիրներ:

Դիվանագիտական ծառայությունը այն միջոցը կդառնա, որով կհամոզվենք, թե որ ուղղությունն է գործնականում նախընտրվում: Բայց որպես պետություն մենք ուղղակի պարտավոր ենք օգտվելու այն հարստությունից, որը կոչվում է Արտերկիր ու Արտերկրի հայություն:

Թիվ 1, հունվար

ՄԱՔԱՌՄԱՆ ՆՈՐ ՀԱՆԳՐՎԱՆ

Իրոք, պատմական օր է 1992 թ. հունվարի 8-ը: Այդ օրը նորագույն շրջանի հայոց պատմության մեջ կնշվի որպես Արցախի հայության աննահանջ պայքարի նոր հանգրվանի սկիզբը, երբ ԼՂ Հանրապետության Գերագույն խորհուրդը ընտրեց իր անդրանիկ նախագահին՝ 33-ամյա ազգային քաղաքական գործիչ Արթուր Մկրտչյանին: Կասկածից վեր է, որ նորաստեղծ հանրապետության բարձրագույն մարմինների ստեղծումը և ղեկավարության ժողովրդավարական եղանակով ընտրությունը ներկայացնում է արցախահայության, ողջ հայության քառամյա պայքարի ոսկե պսակը: Ուստի, բովանդակ հայ ժողովուրդը՝ թե՛ Հայաստանում և թե՛ Արտերկրում, կոչված է պաշտպանելու և հզորացնելու նորաստեղծ հայկական հանրապետությունը:

Սա առավել էականն է, եթե նկատի ունենանք, որ նրա հարևաններից Ադրբեջանը ամեն ինչ, բացարձակապես ամեն ինչ անում է արցախահայության՝ տառապանքներով ձեռք բերված քաղաքական նվաճումները ի չիք դարձնելու համար:

Սակայն, քաղաքականության մեջ գործում է ոչ միայն թշնամանքի գործոնը, այլև շահերի համընկնման զսպանակը: Անկախ Պետությունների Համագործակցության հռչակումը նշանակում է,

որ Խ. Միության իրավահաջորդ հռչակված Դաշնակցային Ռուսաստանը ժառանգում է նաև նրա ռազմավարական նշանակետերը: Ռուսաստանը չի դառնում տեղական պետություն, որը կցանկանային միջազգային որոշ հայտնի ուժեր: Առավել ևս, որ նախկին միության անդամ առանձին հանրապետություններ այսօր իրենց հայացքը հաճույքով շրջում են դեպի Հարավ և Արևմուտք:

Այս պայմաններում ռազմավարական հավասարակշռության ամեն մի հենակետ ձեռք է բերում, իրոք, անանց նշանակություն: Անկասկած է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այդպիսի հենակետերից մեկն է և նրա նկատմամբ նոր Ռուսաստանի ռազմավարական հետաքրքրությունը բնական է ու գործնական:

Բայց և այնպես, նման նկատելի շահագրգռվածությունը չպետք է ինչ-որ անհոգության զգացում ծնի: Մեզանից յուրաքանչյուրը՝ լինի անհատ քաղաքացի, թե պետական պաշտոնյա, քաղաքական կազմակերպության անդամ, թե ազատ մտավորական, կոչված է խորապես գիտակցելու ԼՂ Հանրապետության իրողությունը, լիովին օգտագործելու պատմական պահի ընձեռած հնարավորությունները:

Հ.Յ.Դաշնակցությունը զորավիգ լինելով ամեն հայկականի հաղթանակի, լիովին պաշտպանում է ԼՂ Հանրապետության ծնունդը, աջակցում նրա իշխանության բարձրագույն մարմիններին և ԳԽ նորընտիր նախագահին:

Թիվ 2, հունվար

ՏՆՏԵՍԱԿԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐ

1992 թվականը սկսվեց գների ազատ արձակման պաշտոնական շքերթով: Սակայն այդ քաղաքականության հայրերը և նրանց տեղական համախոհները չկարողացան կատարել առաջին գլխավոր պայմանը՝ բարձր գները չդարձնել անկառավարելի և հետամուտ լինել ապրանքային արտադրության ավելացմանը: Տեղի ունեցավ անսպասելին՝ անկառավարելի բարձր գները պատնեշ

հանդիսացան արտադրության համար և ապրանքները ավելացնելու փոխարեն, սկսեցին պակասել: Սրա փոխարեն և հետևանքով անշեղորեն աճում է ժողովրդի արդարացի դժգոհությունը ոչ միայն մարդկային, այլև պետական կարգապահության բացակայությունից, մանր ու մեծ չինովնիկների հնարամիտ չարաշահումներից: Այլ կերպ ասած, տնտեսական նորագույն խնդիրները, սոցիալական լարվածության մեծացման ճանապարհով, ձեռք են բերում քաղաքական կարևորագույն նշանակություն:

Այդ մասշտաբային, իրոք, միլիոնների ճակատագրին առնչվող խնդիրներից խուսափել չեն կարող ո՛չ պետական իշխանությունները և ո՛չ էլ ընդդիմադիր քաղաքական ուժերը: Իշխանություններն այսօր իսկ առկա դժվարությունների մեծացմանը զուգընթաց ապավինելու են ժողովրդի... հայրենասիրական զգացմունքներին՝ ելք փնտրելու համար: Այդ քայլերն արդեն հիմա են արվում (վստահություն չկա գործի հաջողության մեջ) և ավելի մասշտաբային կդառնան, երբ անհաջողության ուրվականը նշմարվի հասարակական կյանքի հորիզոնում: Ասել է, ոչ թե 5-6 կամ 8-10 ամիս հետո, այլ առաջիկա մի քանի շաբաթներին:

Ընդդիմադիր ուժերը ակամա դրվում են երկընտրանքի առջև՝ կա՛մ չվախենալ քավության նոխազի դերում հայտնվելուց և այսօր իսկ հանդես գալ ժողովրդի շահերի հստակ պաշտպանությամբ, կա՛մ տեղի տալ իշխանությունների քաղաքականությանը համակարծիք լինելու գայթակղությանը և կորցնել ժողովրդի քաղաքական վստահությունը: Սակայն քաղաքական լուրջ ուժը ոչ մի իրավունք չունի կորցնելու ժողովրդի աջակցությունը, որից հետո նա կդատապարտվի դառնալ խռովարարների ու կարիերիստների մի խմբակցություն:

ՀՅԴ-ն լինելով ընկերվարական կուսակցություն, կոչված է ուշադրության կենտրոնում պահելու սոցիալական և տնտեսական խնդիրները, ժամանակին տալով դրանց քաղաքական գնահատականը, իսկ ամենակարևորը՝ թիկունք դառնալու հարազատ ժողովրդին: Եվ բոլոր նրանք, ովքեր պարզամտորեն ոգևորված շուկա-

յական կյանքի գալիք բարիքներով, փորձում էին նսեմացնել սոցիալական արդարության պահպանման կարևորությունը, այսօր դառնորեն ու սեփական փորձով համոզվում են, որ կապիտալիստական դրախտը նույնքան հեռու է, որքան որ էր կոմունիստական ապագան:

Թիվ 3, հունվար

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Հ. Յ. Դաշնակցության Հայաստանի կազմակերպության Բ. Շրջանային ժողովը փաստեց, որ կուսակցությունը վերագտնելով պայքարի իր բնական հողն ու գաղափարական հարազատ հունը, ինքնավստահությամբ ընթանում է դեպի նպատակ՝ արձանագրելով հանգրվանային նվաճումներ:

Քանի որ Հայաստանը և Արցախը գտնվում են քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակում, բնականաբար, Շրջանային ժողովը չէր կարող իր վերաբերմունքը չարտահայտել տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Արտաքին քաղաքականության առնչությամբ շեշտվեց այն միտքը, որ Հայաստանի և Արցախի առջև ծառացած բարդ խնդիրների լուծումը հնարավոր է միայն համաշխարհային քաղաքականության մեջ, մասնավորապես տարածաշրջանում ընթացող իրադարձությունների շրջագծում, անվրեպ քաղաքական հաշվարկներ ունենալու դեպքում: Այստեղ է, որ ներկա իշխանությունները իրենց վարած քաղաքականությունը պետք է կառուցեն դեպքերի հնարավոր զարգացման օրինաչափ ընթացքը հաշվի առնելով, և ոչ թե հիմնվեն պատահականությունների խաղի վրա:

Ներքին քաղաքականության մեջ պետք է որդեգրվի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երևույթների նկատմամբ համալիր մոտեցման սկզբունքը: Այսինքն, իրականության մեջ առկա բազմաթիվ ու բազմաբարդ խնդիրների (սեփականաշնորհումը օրինական հիմքերի վրա դնելու, ընկերային արդարության, մշակու-

թային և այլն) զուգահեռաբար լուծումները միայն կարող են շոշափելի արդյունքներ տալ: Հակառակ պարագայում մի խնդիր մեկ այլ խնդրի հաշվին լուծելու ներկայումս պետության կողմից ընդունված մարտավարությունը ոչ թե թեթևացնում է ժողովրդի բազում հոգսերը, այլ էլ ավելի է խորացնում հասարակական-քաղաքական և տնտեսական ճգնաժամը:

Հ.Յ.Դաշնակցությունը այսուհետ ևս կշարունակի քայլ առ քայլ իրականացնել իր պատմական առաքելությունը՝ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ և ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ստեղծումը:

Նկատի ունենալով, որ Հայաստանում ստեղծված տնտեսական ծանր ճգնաժամը և արտաքին ու ներքին զանազան ազդակները երկիրը կարող են մատնել անիշխանության ու քաոսի, Հ.Յ.Դաշնակցությունը պատրաստ է անել հնարավորը՝ նպաստելու Հայաստանում կայունության ամրապնդմանը:

Թիվ 4, հունվար

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԹԱԿԱՐԴՈՒՄ

Գների ազատականացման հետևանքով ահագնացող ապրանքային սովը և հումքա-էներգետիկ ճգնաժամի պայմաններում հանրապետության արտադրա-տնտեսական գործունեության կազմալուծումը ներկայացնում են երկրի ընկերային-տնտեսական կյանքի եթե ոչ խտացված, ապա իրական ու ամբողջական պատկերը: Այս պայմաններում, եթե շուտափույթ բարելավման ակնկալիքները առարկայորեն անիրական են, ապա կառավարական մակարդակով իրավիճակից դուրս գալու և վաղվա ծրագրային հիմնահարցերի բացակայությունը՝ առնվազն անթույլատրելի: Ինչքան որ ժամանակին հանրապետական իշխանությունների՝ կենտրոնին հակադրվելու պահվածքն էր աններելի, նույնքան էլ անհամոզիչ է հնչում այսօր գների ազատականացումը բացատրել միայն Ռուսաստանին հետևելու հարկադրանքով: Առավել ևս, որ տեղյակ էինք ու առնվազն 1-2 ամիս ժամանակ ունեինք նախապատրաստ-

վելու Ռուսաստանում գների ազատականացմանը, եթե ոչ դիմակայելու, ապա գոնե մեղմացնելու «շոկը»: Իսկ այսօր, ինչպես ասում են, «շոկը» առկա է, իսկ «թերապիայի» հետքերն էլ չեն երևում: Այս տեսանկյունից վերջերս (հունվարի 27-29) կազմակերպված «Տնտեսական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական խորհրդակցությունը կարծես թե ավելի շուտ հասարակական կարծիքի ստեղծման տպավորություն թողնելու նպատակ էր հետապնդում, քան երկրի մտավոր կարողությունները ի մի բերելու: Իսկ հասարակական կարծիքը իմանալ դժվար չէ, ելնելով կեցության և գիտակցության փոխկապակցվածության չհնացող օրինաչափությունից: Կարևորը ստեղծված իրավիճակի հաղթահարումն է, որին հնարավոր է հասնել միմիայն մեր բոլոր մտավոր ու կազմակերպական կարողությունների համադրմամբ, և ամենակարևորը՝ պետական կառավարման մակարդակում չափանիշ ունենալով միայն ու միայն մասնագիտական մոտեցումը:

Թիվ 5, փետրվար

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

«Բարեկեցիկ» կյանքի խոստումներով փոր չես կշտացնի, մանավանդ էս ձյուն-ձմռանը: «Խաղաղը» չասվեց, որովհետև առանձին խոսակցության նյութ է:

Ուրեմն, առնվազն պետք է ինչ-որ բան անել, և անշուշտ, այդ ինչ-որ բանի ծրագիրն ունենալ: Սեփականը: Որպեսզի անկախությամբ, մեր հնարավորություններով ու միջոցներով, մեր նվիրվածությամբ ու պատասխանատվությամբ կարողանայինք մեր այս դժվար կյանքը մի քիչ թեթևացնել, այն չափով, որ կախված չէր լինի մեծ, շատ մեծ քաղաքականությունից: Որպեսզի ձեռքերս ծալած չնստեինք ու սպասեինք լավ կյանքի: Որպեսզի ստիպված չլինեինք էլի հույսներս դնել մեր ժողովրդի գիտակցության, հայրենասիրության, դիմացկունության վրա: Այո, ժողովուրդը կհասկանա,

կիամբերի, կդիմանա, կների հանուն հայրենիքի, անկախության, ե-ռագույնի... Բայց պետք է նաև ժողովրդին հասկանալ, ժողովրդի զոհողությունները հասկանալ ու փոխհատուցել ոչ թե պետական խոստումներով, այլ պետական հոգածությամբ, երբեք չմոռանա-լով, որ ժողովուրդը ոչ միայն ոգի է ու առասպել, այլև միս ու արյուն, բերան ու ատամ:

Տա Աստված, որ բանը չհասնի ատամին: Եվ տա Աստված, որ դա պետությունից ավելի լավ հասկացողները չկարողանան օգտա-գործել այդ կորցրածը ետ բերելու կամ ուղղակի վրեժխնդրության նպատակներով հրահրելով ներազգային բախումներ:

Պատահական չէ, որ այս օրերին ավելի հաճախ և ավելի բարձ-րաձայն են հնչում Դաշնակցությանն ուղղված ժողովրդին տեր կանգնելու, ժողովրդին պայքարի առաջնորդելու կոչեր. «Ինչո՞ւ եք լռել», «Ինչո՞ւ եք ուշացնում», «Ինչո՞ւ ճնշում չեք բանեցնում», «Դուք եք ժողովրդի միակ հույսը» և այս կարգի այլ շաղակրա-տանքներ: Առայժմ՝ Դաշնակցությունը, իսկ վա՞ղը...

Չէ՞ որ կարող են անսացողներ լինել, անգամ Հայաստանի ու մեր ժողովրդի ապագայով իրոք մտահոգ ուժեր, որոնց այս պայ-մաններում դժվար չէ հավասարակշռությունից հանել:

Ուրեմն, ի՞նչ է անում և ի՞նչ պետք է անի պետությունը:

Թիվ 6, փետրվար

ԲՈԼՈՐԻՍ ԱՐՑԱԽԸ

Դժվար է հասկանալ, թե ինչ նպատակներ են հետապնդում Ար-ցախի հիմնահարցի լուծման չարչրկված տարբերակների մասին կրկին ծավալված խոսակցությունները: Արցախը սահմանադրո-րեն, հանրաքվեի միջոցով հռչակել է իր անկախությունը և այն ամ-րապնդելու առաջին քայլերն է անում: Ի՞նչ տարբերակների մասին այլևս կարող է խոսք լինել, եթե անգամ դրանք հանգեցնեն ժամա-նակավոր հաշտեցման, որը ձեռնտու կարող է լինել միայն հակա-ռակորդ կողմին, ժամանակ ու քաղաքական վարկ շահելու իմաս-

տով: Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առջև դրված է ոչ թե հաշտության տարբերակներ գտնելու, այլ անկախությունը ամրապնդելու և առաջընթացը ապահովելու խնդիր:

Մի՞թե պիտի բավարարվենք միայն նրանով, որ Արցախի հարցը միջազգայնանում է, «ինչը ընդունելի, քաջալերելի երևույթ է», ինչպես մի հարցազրույցում նկատել է Հայաստանի Հանրապետության նախագահը (կարող էր և չլինե՞լ):

Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ Արցախի հիմնահարցը միայն Արցախին ու Հ.Յ.Դաշնակցությանն է վերաբերում, որի համար պատասխանատու են միայն արցախահայերը ու դաշնակցականները: Այսինքն պահանջում են միայն նրանցից, ում տեսնում են պայքարի դիրքերում... Անշուշտ, խոսքն այն մասին չէ, թե ով ինչպես և ինչու է օգնում պատերազմող Արցախին, ովքեր են այնտեղ կռվում և այլն: Ոչ էլ մյուսների հայրենասիրության մասին է, որին ոչ ոք չի կասկածում:

Բոլորն էլ գիտեն, բոլորին էլ հայտնի է, թե ինչպես է Արցախը դիմադրում թշնամու հարձակումներին և արժանի հակահարված տալիս: Եվ դրանում ով ինչ դերակատարություն ունի: Այո՛, Արցախում կռվում են հայ ժողովրդի զավակները: Ընդունենք, որ ազատամարտիկների կուսակցական պատկանելությունը չէ կարևորը: Բայց ընդունենք նաև, որ հաճախ դա ասում են նրանք, ովքեր ուզում են դրանով կարկատել իրենց քաղաքական տարազների պատռվածքները, որոնք ժողովրդից թաքցնելու համար երկար ժամանակ թիկունքով էին կանգնել դեպի ժողովուրդը:

Բայց ժողովրդի աչքից ոչինչ չես թաքցնի՝ ոչ պատռվածքները, ոչ էլ կարկատանները: Ցավն այն է, որ հանկարծ չվարժվենք դրան և չհաշտվենք դրա խեղճության հետ, ինչը կարող է բնավորություն դառնալ և բթացնել աշխարհընկալման մեր բնազդները:

Թիվ 7, փետրվար

ՓԵՏՐՎԱՐ 18-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ

Լրացավ փետրվարի 18-ի ժողովրդական ապստամբության 71-րդ տարին: Այդ ապստամբությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրության հերոսական շղթայի ոսկե օղակն է կազմում:

Հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով ստեղծված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (1918-1920 թթ.) անկումից հետո 1921-ի փետրվարին նորից փաստեց ԱԶԱՏ ԵՎ ԱՆԿԱԽ պետականություն ունենալու իր անհերեր կամքը: Դա հայ ժողովրդի ոգու խոյանքն էր բոլշևիկյան բռնապետության դեմ: Մեր ժողովուրդը նորից 40 օր ապրեց իր ազգային պետականության հովանու ներքո:

Ժամանակի միջազգային բարդ իրադրության պայմաններում հայության սակավ ուժերի առկայությամբ ապստամբությունը հաջողությամբ չպսակվեց: Թեկուզև Հայ Հեղափոխական Դաշնակցությունը չէր կազմակերպողը այդ համաժողովրդական ապստամբությունը, այդուհանդերձ նրա ղեկավարությունը նորից ընդգծեց ժողովրդին իր նվիրվածությունը, ապացուցեց ծանր ոսպեներին նրան տեր կանգնելու իր վճռականությունը: Հայրենիքի Փրկության կոմիտեն ամեն ինչ արեց ազատագրված Հայաստանի անկախությունը պահպանելու համար: Հայոց Ազատամարտի այդ հերոսական էջը փակվեց 1921-ի ապրիլի 2-ին:

Սակայն ապստամբությունը անհետևանք չանցավ հայ ժողովրդի համար: Առաջին հերթին «մեղմացավ» բոլշևիկյան բռնապետությունը: Երևանի բանտերից և հետագա հետապնդումներից ազատվեց հայ մտավորականության, սպաների և դաշնակցական գործիչների մի ստվար խումբ:

Ճիշտ է, 1921-ի փետրվարյան ապստամբությունը չհաղթանակեց, բայց նա դարձավ ՀԱՅՈՑ ՓԵՏՐՎԱՐ, որի ոգին ապրեց ու փոխանցվեց նախ Լեռնահայաստան, իսկ այնուհետև՝ միս ու ոսկոր ստացավ 1988-ի փետրվարին հայոց արծվաբերդում՝ Արցախում:

Եվ այսօր, «փետրվարյան սերնդի» գործը շարունակում են ազատամարտիկները, որոնք իրենց անմնացորդ նվիրել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կերտմանն ու ամրապնդմանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցությունը հավատարիմ իր ավանդույթներին, Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան կերտելու իր առաքելությանը, ամբողջությամբ ու ողջ կարելիություններով պիտի շարունակի իր պայքարը Հայաստանի անկախության ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության համար:

Թիվ 8, փետրվար

ՉԸՆԴԴԻՄԱՆԱԼՈՒ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության իշխանությունները տեսնում են այն բոլոր դժվարությունները, որ կրում է հայ ժողովուրդը, և գլուխ են խոնարհում նրա զոհողությունների ու համբերության առջև: Բայց առայժմ միայն այդքանը: Ու թերևս այն մխիթարությունը, որ մեր վիճակը ավելի լավ է, քան մեր պապերինը, որոնք 18-ին ստեղծում էին մեր անկախությունը: Ուրեմն, գոհանանք դրանով և փառք տանք ՀՀՇ-ին ու Աստծուն, որ դեռ կանք, ապրում ենք և իրավունք ունենք մի քիչ դժգոհելու իշխանություններից ու նույնիսկ մի քիչ ընդդիմանալու:

Ճիշտ է, ընդդիմությունը ունի իր օրենքները և շարժվում է իր օրենքներով և դժվար է այն չափերի մեջ պահել: Ճիշտ է, մենք իրավական պետություն ենք ստեղծում և չենք կարող չհաշտվել քաղաքացիական հասարակության բոլոր երևույթների հետ, բայց և այնպես ընդդիմանալ դեռ չի նշանակում անխնա քննադատել իշխանություններին, հանրահավաքներ ու ցույցեր կազմակերպել ՀՀՇ-ի տիրույթներում: Դրա համար նախ պետք է երաշխիքներ տալ, որ վաղը բանը չի հասնի իշխանությունների նկատմամբ անվստահության, որը չի տանի «պառակտման», չի ստեղծի «պատերազմի վտանգ», չի խանգարի հանրապետության նախագահին, որ նա իր

ընկերների հետ և անշուշտ նաև ժողովրդի հետ ստեղծի մի այնպիսի պետություն, ուր մարդիկ երջանկությունից ուղղակի կխենթանան, «ի հեճուկս մեր նախորդների և մեր բոլոր հակառակորդների»:

Մի խոսքով, թույլատրվում է ընդդիմադիր ուժ լինել, ավելին, նույնիսկ դա անհրաժեշտ է ժողովրդավար իշխանություններին, բայց պետք է հավատարմագրվել...

Այսինքն, ընդդիմություն առանց ընդդիմության: Այլ դեպքում մեղքը ընդդիմությանն է, եթե անգամ դա Հայ Հեղափոխական Դաշնակցությունն է: Պարտադիր չէ, որ անունը տրվի, կասվի՝ քաղաքական հակառակորդներ, ինչ-որ ուժեր, գրգռիչներ, կամ ուղղակի՝ նրանք: Եվ վերջ: Վկա Արցախյան չորրորդ տարեդարձի առթիվ ՀՀԾ-ի կազմակերպած հանրահավաքի ելույթները, հանրահավաքն ինքը, որը ըստ էության ոչ թե առթիվ էր, այլ առիթով, ինչպես ասում են, տեղը դնելու ընդդիմությանը և բոլոր նրանց, ովքեր կհանդգնեն իրենց թանին թթու ասել: Ընդդիմությո՞ւն, խնդրեմ, բայց բարի եղեք նախ հավատարմագրվել, հետո կտեսնենք:

Թիվ 9, փետրվար

ՄԱՄՆԱՎՈՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՄԱՍ Է

Հանրապետության տնտեսության ծանր կացությունն այսօր զուտ քաղաքական վերլուծության կարիք չունի: Ամեն ինչ ակնհայտ է: Այստեղ է, որ անհրաժեշտ է մասնագիտական մոտեցում և գիտական լուրջ հետազոտություններ: Համալիր-հիմնադրույթային մոտեցման փոխարեն, որում իրենց հիմնավորված ու փոխկապակցված տեղը կունենային առանձին նպատակային ծրագրերն ու միջոցառումները, առանձին գործընթացներ իշխանությունների կողմից ներկայացվեցին որպես մեր բոլոր ընկերային-տնտեսական խնդիրների լուծման ամբողջական միջոց: Սկզբում դա Արտերկրի տնտեսական օգնությունն էր և արտասահմանյան դրամագլխի ներգրավման չափազանցեցված հեռանկարները, այնու-

հետև հողի սեփականաշնորհումը, իսկ այսօր էլ տնտեսության բոլոր ոլորտների համատարած սեփականաշնորհման ուրվականն է շրջում հանրապետությունում: Հարցը ոչ միայն այն է, որ վերը նշված գործընթացներից յուրաքանչյուրը, իր բոլոր դրական արդյունքներով հանդերձ, առանձին-առանձին չէին կարող լուծել երկրի տնտեսական ներկա վիճակից դուրս գալու և հետագա զարգացումը ապահովելու հիմնախնդիրները: Մտահոգիչ է նաև, որ այդ ոլորտներում էլ գործը մինչև վերջ չհասցվեց: Օրինակ, արտասահմանյան դրամագլուխը երկիր ներգրավելու համար անհրաժեշտ օրենքներն ու օրենսդրական ակտերը, չնայած խոստացված լինելուն, այդպես էլ չամբողջացան: Հուսանք, որ արդյունաբերական ոլորտի սեփականաշնորհման գործընթացը նույն ճակատագիրը չի ունենա: Այնուհանդերձ, կարևորը այդ բոլոր խնդիրները «ընդհանուր հայտարարի» բերելն է՝ հանրապետության տնտեսության զարգացման համալիր ծրագրի տեսքով: Մարտի 1-ին, հեռուստատեսային հայտարարությամբ, հանրապետության փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանն ասաց, որ արդեն մշակված են այդ ծրագրի հիմնադրույթները:

Կարող ենք ասել՝ վերջապե՜ս: Բայց չշտապենք:

Թիվ 10, մարտ

Ո՞ՒՐ Է ՏԱՆՈՒՄ ԱՅՍ ԱՄԵՆԸ

Այսօր էլ, երբ չափազանց սպառնալից իրավիճակ է ստեղծվել Հայաստանի և Ադրբեջանի միջև, և շրջափակված Արցախը, որքան էլ անընկճելի, արյունաքամ է լինում ռմբակոծումներից ու հարձակումներից, ցավոք, դեռևս կան հիմնահարցի լուծման նեոսկաչկովական խրատներին անսացողներ: Գուցե, իրո՞ք, ոչինչ չի փոխվել: Գուցե, իրո՞ք, պատմությունը մեզ ոչինչ չի սովորեցրել:

Եթե այն ժամանակ Ռուսաստանը անգամ բոլշևիկյան իր Հայաստանի համար չէր ուզում Թուրքիային բռունցք ցույց տալ, որովհետև դա կնշանակեր ձախողել իմպերիալիզմի դեմ հեղափոխա-

կան պայքարը Արևելքում, ապա այսօր անկախացած Հայաստանի և ազգային-ազատագրական պայքար մղող Արցախի սիրույն առավել ևս չի ուզի նոր գլխացավանք ստեղծել (երբ անկարող է իր ներքին հարցերն իսկ լուծել): Այս անգամ էլ, հանուն ժողովրդավարական համերաշխության կամ միահավասարության, ինչ անուն ուզում եք տվեք, դրանից էությունը չի փոխվի: Այստեղ վճռորոշը պետական շահերն են: Իսկ Թուրքիան մնում է Թուրքիա: Եվ Ռուսաստանը, թե՞ ԱՊՀ-ն, փաստորեն հանդուրժում են Թուրքիայի սպառնալիքները Հայաստանին, այն Թուրքիայի, որը, ի տարբերություն մեզ, չի ասում, թե Ադրբեջանի և Հայաստանի միջև պատերազմ չկա, որ Ադրբեջանը պատերազմում է իր քաղաքացիների դեմ: Եվ Ռուսաստանը, թե՞ ԱՊՀ-ն, փաստորեն նույն դիրքորոշումն ունեն՝ հանդուրժելու Ադրբեջանի վայրագությունները Արցախում: Հանդուրժելու Ադրբեջանի այսօրինակ սպառազինումը: Ո՞ւր կտանի այս ամենը: Ի՞նչ ենք անում մենք՝ ժողովրդավարական համերաշխության հավատավորներս, միջազգային ատյանների խնդրարկուներս կամ աշխարհի արդարամետ շրջանակների հայցվորներս, արդարագույն մեր պայքարը առաջնորդելու հաղթական ավարտ: Հավատանք արդարությանը, բայց կարողանանք նաև հաստատել ու պահպանել այն: Իսկ դրա համար անհրաժեշտ է շուտափույթ լուծել ինքնապաշտպանության խնդիրը, որի հիմքը ազգային բանակն է:

Թիվ 11, մարտ

ԽՈՍՔԸ ԱՐՑԱԽԻՆՆ Է

«Կյանքում առաջին անգամն էր, որ տեսնում էի մի խորհրդարանի շենք, որտեղ բոլոր պատուհանները ջարդվել էին, բացի նախագահի սենյակից», մեր թղթակցին ասել էր դանիացի լրագրող Կնուտ Լաբոն Արցախից վերադառնալիս: Դա մեկ շաբաթ առաջ էր: Երեկ, ի միջի այլոց, իմացանք, որ նախագահի առանձնասենյակի պատուհաններն էլ են ջարդվել: Ի միջի այլոց, որովհետև

խոսքը նախագահի մասին չէր, այլ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ պատվիրակի, որին սպասում էին ռմբակոծվող Ստեփանակերտում: Դառնանք ջարդված ապակիներին, որպեսզի ասենք՝ այլևս զարմանալու բան չմնաց Արցախում (խե՜ղճ լրագրողներ):

Անշուշտ, այս խմբագրականի սկիզբը չէր: Պետք էր սկսել ոչ թե ապակիներից, թեկուզև նախագահի սենյակի, այլ հենց ՄԱԿ-ի ներկայացուցչի այցելությունից, որը այնքան կարևոր է նկատում քաղաքական աշխարհը: Քիչ է մնում հավատանք:

Արցախում Եվրոպական խորհրդի և ՄԱԿ-ի ուժերի տեղակայմամբ կապահովվի կոնֆլիկտի կարգավորումը: Ենթադրե՛նք: Բայց արդյո՞ք դա ցանկալի է ԱՊՀ-ին և Ռուսաստանին: Ի՞նչ ցույց տվեցին անցած շաբաթվա իրադարձությունները: Կամ ի՞նչ էր նշանակում Ադրբեջանի առաջարկը՝ Կիևում կայանալիք ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդակցությունից առաջ քննել Արցախի հարցը: Կամ Ուկրաինայի նախագահի առաջարկը:

Դժվար չէ հասկանալ, թե ինչի հետևանք է այդ անսպասելի իրարանցումը: ԱՊՀ-ին ոչ միայն ցանկալի չէ ՄԱԿ-ի ուժերի ներկայությունը Արցախում, այլև անթույլատրելի է, որովհետև դրանով հարցականի տակ է դրվում Արցախի գործոնը: Եվ խորհրդակցությունում հարցի քննարկումը (որը լավագույն դեպքում կհանգեցնի կոնֆլիկտի կարգավորման հերթական մի տարբերակի չարչրկման) կարող է հետաձգել ՄԱԿ-ի ուժերի տեղակայումը, մինչև Ռուսաստանի զինված ուժերի խաղաղարարական առաքելությունը՝ խաղաղարարական նոր կարգավիճակով: Եվ հակամարտ կողմերի զինաթափման պարտադի՛ր պայմանով: Եվ ԼՂՀ-ն Ադրբեջանի կազմում թողնելու որոշմամբ, որի հետ, ինչպես երևում է, համաձայն են նաև Հայաստանի իշխանությունները:

Բայց երեկ ջարդվել են ոչ թե Հայաստանի Հանրապետության նախագահի, այլ ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի նախագահի աշխատասենյակի ապակիները՝ խորհրդարանի շենքի վերջին ապակիները... Գուցեև Արցախի վերջին ապակիները: Ուրեմն խոսքը Ար-

ցախինն է: Ուրեմն Արցախն ինքն է վճռելու իր ճակատագիրը, ազատագրվո՛ղ Արցախը:

Թիվ 12, մարտ

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1992 թ. մարտի 25-ը դարձավ պատմական օր: Հայաստանի խորհրդարանը երկար քվեարկություններից հետո, 133 ձայնով վերջապես ընդունեց պետական զինանշանը: Այն 1918-1920 թթ. Առաջին Հանրապետության զինանշանն է, որը ցավալիորեն մոռացության էր մատնվել հայրենիքում:

1990 թվականի օգոստոսի 4-ից, երբ մեր երկրում իշխանությունից հեռացվեց կոմունիստական վարչակարգը, պետության զինանշանի խնդիրը դարձավ առաջնահերթ: Եթե դրոշը և օրհներգը համեմատաբար դյուրին ընդունվեցին, ապա զինանշանի ընդունման համար պահանջվեց շուրջ 20 ամիս: Եվ դա հասկանալի է: Զինանշանի ընդունումը քաղաքական լուրջ հարց է. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը ում ավանդույթներն է ժառանգելու՝ Առաջին Հանրապետությա՞ն, թե՞ Խորհրդային Հայաստանի:

Անցած ամիսները եղան ազգային պետականության ակունքներին վերադառնալու դժվարին մի շրջան: Խորհրդարանում դեռևս ազդեցիկ էին կոմունիստական լծակները:

Բայց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, Արցախում ազգային գաղափարների հաղթանակը ուղղակի և անուղղակի ներազդեցին նաև խորհրդարանի վրա:

Եվ որոշումը կայացվեց. խորհրդարանը քվեարկեց մեր ամբողջ պատմության ժառանգը լինելու օգտին:

Հատկանշական էր ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի վճռականությունն ու շահագրգռվածությունը անփոփոխ ընդունելու Առաջին Հանրապետության զինանշանը և կտրականապես մերժելու սարյանական տարբերակը՝ որպես խորհրդային, կոմունիստա-

կան, ամբողջատիրական խորհրդանիշի: Բնորոշ էր նաև այն, որ մի խումբ պատգամավորներ, հատկապես կոմունիստների թվից, համառորեն դեմ էին անկախ Հայաստանի զինանշանի վերականգնմանը, իսկ ոմանք էլ պարզունակորեն խորամանկում էին՝ առաջարկելով ընդունել կա՛մ ժամանակավոր զինանշան, կա՛մ էլ պարզապես հետաձգել նրա ընդունումը:

Այսօր, երբ վերընդունված են ազգային պետության դրոշը, օրհներգը և զինանշանը, մեր խնդիրն է հարազատ մնալով նրանց խորհրդանշած գաղափարներին, նվիրվել նրանց իրագործմանը:

Թիվ 13, մարտ

ԹՈՂ ԹՇՆԱՄՈՒԴ ԼԱՑԻ ՁԱՅՆԻՑ ՏԵՂԴ ՈՒ ՑԱՎԴ ԻՄԱՆԱՆ

Ռուսաստանը փորձում է այնպիսի տպավորություն թողնել, որ եթե ոչ այլևս, ապա գոնե առայժմ Արցախի իրավիճակը իրեն չի հուզում: Ձորքերը դուրս են բերված տարածաշրջանից, պատերազմող կողմերի ուժերը մոտավորապես հավասար են, վաղ թե ուշ որոշ փոխզիջումներով կոնֆլիկտը կկարգավորվի... Իսկ թե ինչպե՞ս, ինչպիսի՞ փոխզիջումներով, այդ արդեն Հայաստանն ու Ադրբեջանը թող որոշեն կամ նրանք, ում իրենք կվստահեն՝ ՄԱԿ-ը, ԵԱՀԽ-ը, ԱՄՆ-ը, Իրանը, թե Թուրքիան: Բոլոր դեպքերում, ըստ Ռուսաստանի, պատերազմը ընթանում է ոչ թե Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև, այլ Ադրբեջանի և Հայաստանի:

Սակայն ում հայտնի չէ, որ Ռուսաստանը չի կարող առանց միջամտության սպասել կոնֆլիկտի կարգավորմանը, ոչինչ չթելադրել ու չպարտադրել կողմերին: Այլ բան է, որ առայժմ դրա ժամանակը չէ: Առայժմ կարելի է բավարարվել քարոզչությամբ, ինչը հրաշալի անում է «Նորություններ» հեռուստատեսային ծրագիրը իր պրիդնեստրովյան զուգահեռներով... Միևնույն է, հիմնահարցի լուծման բանալին իր ձեռքում է, և այն պահելու համար առայժմ ուժ գործադրելու անհրաժեշտություն չկա: Միևնույն է, Ադրբեջանի և Հա-

յաստանի միջև ցանկացած բանակցություն, ցանկացած միջնորդություն, եթե դրան չի մասնակցում ԼՂՀ-ն, դատապարտված է ձախողման: Ո՛չ ՄԱԿ-ը, ո՛չ ԵԱՀԽ-ը, ո՛չ Ամերիկան ու Թուրքիան և ո՛չ էլ Իրանը առանց Ռուսաստանի թողտվության չեն կարող տարածաշրջանում խաղաղություն հաստատել, և ոչինչ չարժեն կոնֆլիկտի խաղաղ կարգավորման համար առավելագույն ջանքեր գործադրելու կոչերն ու հայտարարությունները, բանակցություններ սկսելու միջնորդություններն ու հորդորները, ինչը ապացուցեց Ադըրբեջանը՝ խախտելով Իրանի միջնորդությամբ ձեռք բերված զինադադարի պայմանավորվածությունը: Ինչը ապացուցեց ապրիլի 1-ին Հայաստանի և Ադրբեջանի սահմանագլխին տեղի ունեցած հանդիպումը, որին մասնակցում էին ով ասես, բացի ԼՂՀ-ի իշխանության ընդհանուր մարմինների ներկայացուցիչներից:

Այո, առաջին քայլը երկկողմ կրակի դադարեցումն ու դրա վերահսկումն է: Բայց կրակում են արցախցու վրա, ռմբակոծում են Ստեփանակերտը, Մարտակերտը, Հադրութը... Բանակցությունները պետք է տեղի ունենան ԼՂՀ-ի հետ: Եվ ոչ մի բանակցության ու նույնիսկ զինադադարի մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ երկաթուղու շրջափակումը չի հանված, քանի դեռ էլեկտրաէներգիայի մատակարարումը չի վերականգնված, քանի դեռ...

Ստացվում է մի տեսակ սատանայական օղակ, որը ոչ սկիզբ ունի, ոչ վերջ, և որը պտտվում է Ռուսաստանի մատի վրա: Իսկ ե՞լքը: Պետք է կտրել օղակը: Կտրել խփելով, ցավեցնելով: Թո՛ղ անհանգստանան թշնամուդ լացի ձայնից: Թող թշնամուդ լացի ձայնից տեղդ ու ցավդ իմանան:

Թիվ 14, ապրիլ

ԲԱԼԱՀՈՎՏԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ ԿԱՄ ԷԼԻ ՄԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

Դեռ պիտի հետաքննվի: Դեռ պիտի ուսումնասիրվի: Դեռ պիտի պարզեն պատճառները: Չշտապենք ենթադրություններ անել, առավել ևս՝ դատել:

Կառավարական հատուկ հաղորդագրություններից միայն գուշակություն կարելի է անել: Բայց և այնպես, հանուն ճշմարտության ասենք, որ թեկուզ ուշացումով, բայց կազմվել է հանձնաժողով, մշակվել գործողությունների ծրագիր ու կայացվել կարևոր որոշում (գրեթե աննախադեպ թե՛ նախկին և թե՛ ներկայիս իշխանությունների համար՝ չտեսնելով կամ չկարևորելով վարկի ու հեղինակության խնդիրը)՝ ժողովրդին ասել ճշմարտությունը, չթաքցնել սպասվող վտանգը, ձեռնարկել նախազգուշական միջոցներ, ընդհուպ մինչև բնակչության մասնակի տեղափոխություն, չսպասելով դեպքերի զարգացմանը: Այլ խնդիր է, թե ինչպես դա ստացվեց, ինչպես իրականացվեց մշակված ծրագիրը:

Դժվար չէր կանխատեսել, թե ինչ կարող էր տեղի ունենալ, ինչպիսի արհավիրք կարող էր գալ մեր ժողովրդի գլխին, դատելով զինապահեստների հայտնի ու անհայտ պարունակությունից: Կարո՞ղ էր: Վաղը կպարզվի, թե ինչու, ինչ պատճառով ու նպատակով: Վաղվա հարց է, թե ինչ էին մտածում մինչև հիմա մեր իշխանությունները: Ում մեղքով կամ ում ձեռքով (իմա՝ անփութությամբ) էր դա արված: Մի՞թե Արթիկի դեպքը մեզ ոչինչ չսովորեցրեց: Մի՞թե դա սպասելի չէր և հետևաբար վերահսկելի: Այո՛, չշտապենք...

Բայց շտապենք ձեռք մեկնել մարդկանց, օգնենք դուրս գալու ստեղծված վիճակից և վերադառնալու իրենց բան ու գործին, որպեսզի չխաթարվի հանրապետության առանց այն էլ բարդ ու լարված կյանքը: Շտապենք նեցուկ ու հենարան լինել միմյանց, խուճապի չմատնվենք, փարատենք մեր կասկածները և հավատանք նախ ինքներս մեզ: Համարենք, որ մի փորձության ևս ենթարկվեց հայ ժողովուրդը, որից պետք է դասեր քաղել ու դասեր տալ: Ինչ ա-

ռած, ճակատագիրը մեզ սովորեցրել է դրան: Եղել է և ավելի սարսափելին (ինը բալանոց ախտահարույցներ են մեզ վրա փորձարկել), բայց դիմացել ենք: Մենք անվարակելի ենք այլևս, և դա պետք է քաջ հայտնի լինի «մեր» հեռու ու մոտիկ մանրէաբաններին: Բարեբախտաբար տեղի չունեցավ այն, ինչը կարող էր տեղի ունենալ: Սակայն, ո՞վ կարող է երաշխավորել ժողովրդի հետագա անվտանգությունը:

Մեր անվարակելիությանն ու դիմացկունությանը հավատալով հանդերձ զգուշանանք նաև, միաձույլ ու միակամ դիմակայենք այս փորձարկմանը ևս:

Թիվ 15, ապրիլ

ՉԵՆ ԽԱՐԽԼՎԻ ԱՐՑԱԽԻ ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Իր ազատության ու անկախության, ապրելու և գոյատևելու համար պայքարող ժողովուրդը պատրաստ պետք է լինի ամեն մի փորձության: Շրջափակումներով, ռմբակոծումներով ու հրետանակոծումներով չէ, որ սասանվում է կենաց ու մահու կռվի ելած հերոսական ժողովրդի ոգին ու կամքը: Ամրակուռ Արցախը երբեք էլ պատերազմով չի նվաճվել թշնամու կողմից, այլ դավադրությամբ, ուխտադրժությամբ ու խարդախությամբ... Իր անառիկ լեռների, ամրոցների ու բերդերի պես հաստատ է արցախցին, եթե նենգորեն չեն սողոսկում նրա հոգու պարիսպներից ներս՝ թունավորելու էությունը իր արյունակցի նկատմամբ կասկածամտությամբ, նախանձով ու ատելությամբ: Եվ դա լավ գիտի թշնամին, գիտի նաև ինչպես այդ անել: Այդպես է նվաճվել Արցախ ամուր աշխարհը անցյալում: Դրան է ձգտում այսօր թշնամին, սպասելով հարմար պահի ու առիթի:

Սակայն ամեն տեսակ ցավ ու տառապանք, ամեն տեսակ կորուստներ տեսած Արցախը կդիմանա նաև այս մեկին, որքան էլ

այն դառնակսկիծ ու անփոխարինելի է, այդ պահն ու առիթը չի տա թշնամուն:

Դժբախտ պատահարի հետևանքով զոհված Արցախի հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանի՝ Արցախի ազատության և անկախության գաղափարի նվիրյալի, Արցախի ազատամարտիկի մահը է՛լ ավելի պիտի համախմբի Արցախի ժողովրդին՝ հանուն իր արդար պայքարի հաղթանակի:

Կասկած չկա, որ շփոթ ու լարվածություն ստեղծելու, պառակտում ու ներքին թշնամանք առաջացնելու ամեն մի փորձ, ինչն արդեն իսկ անում է թշնամին և նրանք, ում քաղաքական նպատակներով ձեռնտու է այդ, դատապարտված է ձախողման: Ոչ ոքի չի հաջողվի Արցախի հերոսական ժողովրդին շեղելու իր ազատագրական պայքարի միասնականության ուղուց, խարխլելու անկախության նրա անառիկ ամրոցները:

Թիվ 16, ապրիլ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՀԱՐԱՏԵՎ ԿՌՎԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի արյունալի պատմության երկարաձիգ շղթայի մեջ ամենաողբերգականը, անշուշտ, 1915-ի ապրիլյան գողգոթան է, երբ աշխարհի հետամնաց ու դաժան պետություններից մեկը՝ Թուրքիան, հավատարիմ իր ցեղային բնազդին՝ փորձեց յուրովի «լուծել» Հայկական հարցը: Դա փաստորեն նրա վեցդարյա քաղաքականության տրամաբանական ու պատմական արդյունքն է: Օգտվելով Առաջին աշխարհամարտի տված հնարավորությունից, ինչպես նաև Հայկական հարցի շուրջ ստեղծված վիճակից, ծրագրված կերպով ոչնչացրեց մեկ ու կես միլիոն հայ: Պատմական Հայաստանի մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը դատարկվեց իր բնիկ ժողովրդից:

Ավերվեցին ու քանդվեցին հազարավոր գյուղեր ու քաղաքներ, ոչնչացվեցին ճարտարապետության և ազգային մշակույթի գլուխ-

գործոններ: Փաստորեն, իրականացվում էր համաթուրանականության իդեալը՝ իրար միացնել թուրք ցեղի արևելյան ու արևմտյան հատվածները, հարթել թուրքերի ճանապարհը: Ճիշտ է, հայ ժողովրդի գերմարդկային ճիգերի շնորհիվ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը, հայ ժողովուրդը ապրելու իր իրավունքը փաստեց Արևելյան Հայաստանի ռազմի դաշտերում, սակայն թուրանականության մահաբեր շունչը հետագայում չվերացավ: Նախ, ռուս-թուրքական գործարքին զոհ գնաց Անկախ Հայաստանը, իսկ հետագայում՝ Նախիջևանը: Վերջնական կորստի վտանգի առաջ հայտնվեց հայոց Արցախը:

Այնուհանդերձ, հայ ժողովուրդը ստեղծված ծանր պայմաններում ևս չհամակերպվեց իր վիճակի հետ: Սփյուռքի ծանրագույն պայմաններում ոտքի կանգնելով, շարունակեց հետապնդել Հայ դատը, արթուն պահեց պահանջատիրության ձգտումը, նրա ճանապարհին արձանագրելով կարևոր ձեռքբերումներ: Մասնավորապես, Եվրոխորհրդարանին ընդունել տվեց հայտնի բանաձևը: Իսկ հայրենի հայությունը վերազարթոնք ապրեց 1965-ի ապրիլին, մի անգամ ևս ընդգծելով, որ մտադիր չէ մոռանալ հայոց ցեղասպանության հայտնի իրողությունը:

Արցախահայությունն իր հերթին երբեք չհամակերպվեց հայրենի հողը թողնելու, մայր հայրենիքից առանձին ապրելու փաստի հետ: Եվ երբ ստեղծվեց ազգային-ազատագրական պայքարը նոր մակարդակով շարունակելու հնարավորություն, չվարանեց՝ նետվելու մարտի մեջ և վիժեցնելու թուրանականության նոր դավերը:

Վերջին տարիներին Արցախում և Հայաստանի Հանրապետությունում ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ չի փոխվել ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Թուրքիայի քաղաքական իդեալը: Սին պատրանք էր նաև թուրքերի հետ մերձեցման անհիմն քաղաքական գիծը: Հայոց հարատև կռվի տրամաբանությունը հուշում է մեր անելիքը՝ հասնել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացմանը, Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդմանը:

Միաժամանակ, վառ պահելով Հայոց Մեծ եղեռնի բյուրավոր զոհերի չխամրող հուշը... Պատմությունը հայ ժողովրդին դաժան փորձությունների առաջ ընկրկելու իրավունքը չի վերապահել:

Թիվ 17, ապրիլ

ՊԵՏՔ Է ԿԱՉՄԱԿԵՐՊՎԵԼ

Մայիսի 1-ն է՝ աշխատավոր զանգվածների և ազատագրված աշխատանքի համաշխարհային տոնը:

Դժբախտաբար, 70 տարի շարունակ այդ նվիրական օրվա բովանդակությունը ձևախեղվեց՝ արտացոլվելով բոլշևիկյան ծուռ հայելու մեջ: Աշխատավորության ազատագրության այդ օրը միջազգայնականության թյուր մեկնաբանությամբ վերածվեց բանվորների ու գյուղացիների ստրկության շղթաները կռող ազդակի:

Հիմա, երբ չքացել է բոլշևիկյան շորշոփը, անհրաժեշտ է ճիշտ տեսանկյունից դիտել այդ երևույթը և նորովի վերագնահատել աշխատավորության այդ նվիրական օրվա բուն իմաստը՝ այն վերածելով արդարության պաշտպանության և մարդու աշխատանքը չարաշահող տարրերի, հասարակության տականքների դեմ պայքարի օրվա:

Մեր ժողովրդի մի ստվար հատվածն այսօր, ինչպես միշտ, աշխատավորությունն է, որ իր արդար աշխատանքով, իր ճակատի քրտինքով վաստակում է իր և իր ընտանիքի հացը: Ինչ խոսք, որ այս տարրը մեր հասարակության ամենախեղճ, ճնշված ու շահագործված տարրն է, որ մի կերպ քարշ է տալիս իր կյանքը՝ գների կտրուկ բարձրացման, ինֆլյացիայի հարաճուն աճի պայմաններում: Պայմաններ, որոնց մասին, դժբախտաբար, չեն մտածում նրանք, ովքեր կոչված են ազգի բեռը թեթևացնելու, ազգի բոլոր խավերի, ի մասնավորի՝ խեղճ ու ընչազուրկ տարրերի իրավունքները պաշտպանելու գործին: Նրանց մասին չեն մտածում իշխանությունները, չի մտածում իշխող կուսակցությունը և նրա գերակշիռ ազդեցության տակ գտնվող խորհրդարանը:

Իշխանությունները ոչ միայն չեն մտածում այդ ուղղությամբ, այլև իրենց սխալ քաղաքականությամբ, այսպես կոչված և սխալ մեկնաբանված «ազատ շուկայական հարաբերություններին» զարկ տալու միջոցով, նորաբույս քաղքենի դասակարգ առաջացնելու մտասևեռումով նպաստում են մեր հասարակության շերտավորմանը և կամա-ակամա խորացնում են զանազան խավերի միջև առկա անջրպետը՝ ավելի տնանկության մղելով աշխատավորությանը:

Հայաստանի աշխատավորությունն այսօր, ավելի քան երբեք, անկազմակերպ է: Հակառակ մեծամասնություն լինելուն ի վիճակի չէ իր իրավունքները պաշտպանել և մերժել իրեն մատուցված ստրկացման շղթաները: Նա կազմակերպված չէ, չունի իսկական արհմիություններ, ուստիև ի վիճակի չէ ներկայություն դառնալ Հայաստանի քաղաքական կյանքում:

Հայաստանի աշխատավորության անհետաձգելի ու առաջնահերթ պարտականությունն է կազմակերպվել: Կազմակերպվել այնպես, որ ի վիճակի լինի հավասարակշռել անիշխանական եղանակով իր թավալգլոր ընթացքը առած Հայաստանի տնտեսությունը: Թող Մայիսի 1-ը դառնա մեր աշխատավորության կազմակերպ կյանքի անկյունաքարը:

Թիվ 18, մայիս

ԻՆՉՊԵՍ ՇԱՏ ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՎԵՍԻ ԱՌԱԿՈՒՄ

Արդյո՞ք ընդլայնվում կամ ընդարձակվում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության շրջագիծը: Թերևս: Բարեկամների ու թշնամիների արանքով համարյա չհոսող Արաքսը այլևս հանդուրժող է այնքան, որ թվում է՝ կարելի է մտածել արդեն երկարությամբ կամուրջ գցելու մասին... Եվ դա Արևմուտքում կգնահատվի արևելյան իմաստությամբ: Ուստի չափազանց «նուրբ» քաղաքականությունը մեռնում է հենց «նրբությունից»: Ուղ-

ղակի չի դիմանում: Ի դեպ, շատ խորամանկ աղվեսի առակը արևելյան չէ: Ջանալ չափից ավելի խելոք երևալը այլ բան է, իսկ իրականում խելոք լինելը՝ այլ: Թեև դա էլ բավական չէ տուն պահելու համար... Վերջին հաշվով որոշիչը ուժն է: Եթե հույսներս դրել ենք քաղաքակիրթ աշխարհի վրա, չպիտի մոռանանք, որ նա հաշվի է նստում միայն կատարված փաստի հետ: Արցախի հարցի միջազգայնացման իրողությունը հենց դրա հաստատումն է: Հակառակորդի հաշիվները կարելի է խառնել միայն համարձակ ու վճռական գործողություններով: Արցախի Հանրապետությունը չծնվեց նրբին դիվանագիտությամբ, և նրբին դիվանագիտությամբ չէ, որ պիտի ճանաչվի, թեկուզ առկա է միջազգային բոլոր նորմերին համապատասխան նրա ազգային, քաղաքական ու բարոյական կարգավիճակը: Միջազգային կանոնակարգված արժեքների կարծեցյալ պահապանի կեցվածքով հեռուն չես գնա: Համամարդկային արժեքներն ու միջազգային նորմերը ածանցյալ են այս աշխարհի հզորների շահերին և գործում են այնտեղ, ուր չեն սպառնում նրանց ազդեցության ոլորտներին:

Արցախի Հանրապետության ճանաչումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից այս շրջագծից դուրս է: Ուրեմն, ո՞ւմ ենք փորձում խաբել կամ հիմարացնել մեր «քաղաքական դիրքորոշմամբ», եթե ոչ՝ հենց Արցախին ու ինքներս մեզ: Սիևնույն է, Արաքսի երկարությամբ կամուրջ չի գցվի և, մանավանդ, Արցախի հետ:

Թիվ 19, մայիս

ՍԱ ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԿՌԻՎԸ ՉԷ

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ ազատ ապրելու իրավունքը նվաճվում է միայն մի եղանակով՝ սեփական վճռական կամքի պարտադրանքի ցուցաբերումով: Այսինքն, միայն բարոյականությունը, արդարությունը, միամիտ մոլորությունը չեն կարող գո-

յատնման պայման լինել: Ազգերին աշխարհը հարգում է միայն այն ժամանակ, երբ նրանք առաջնորդվում են «ուժն է ծնում իրավունք» հայտնի քաղաքական բանաձևով: Իսկ սա ճիշտ է, թե սխալ, բոլորովին այլ հարց է: Ուստի, պատահական չէ, երբ Արցախում իշխանության գլուխ կանգնեցին այդ համոզման մարդիկ, արցախյան ազգային-ազատագրական պայքարում բոլորի աչքի առջև տեղի ունեցավ ՇՐՋԱԴԱՐՁ՝ հօգուտ հայկական գործոնի: Եվ այդ շրջադարձը տեղի ունեցավ նաև այն պատճառով, որ մինչև ատամները զինված թշնամին հարկադրեց արցախցիներին գործադրել պայքարի նոր եղանակ:

Արցախի ազգային ազատագրության նվիրյալները գիտակցեցին ու համոզվեցին, որ առանց զենքի չկա արցախահային փրկություն:

Արցախում պատմական հայկական բնակավայրերը թուրք ասկյարների մնացորդներից ազատագրելու ընթացքում հայ ազատամարտիկը նժդեհյան «վճռական մենակի» կենսափիլիսոփայության ոգով զինված՝ արագորեն վերագտավ իր մեջ այն ուժը, որով և վստահորեն այսուհետ կպաշտպանի արյամբ սրբագործված Հայրենիքը:

Սակայն Արցախի ինքնապաշտպանական ուժերի աննկուն ոգու, անհողդողդ կամքի և հայկական զենքի մի փառավոր հաղթահանդես էր մոտ երկու դար թշնամու կողմից գերված Շուշիի ազատագրումը:

Շուշին հայի համար, մասնավորապես՝ արցախահայի համար, սոսկ քաղաք չէ, այլ պատմական Արցախ աշխարհի գոյատևման առհավատչյան: Հիշենք մեծն Դրոյի ասած խոսքերը Շուշիի մասին. «Ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին»:

Շուշիի առումը, առանց չափազանցության, կարելի է ասել, որ արցախյան չորսամյա ազգային-ազատագրական պայքարի մեծագույն քաղաքական ու ռազմական նվաճումն է:

Այս օրերին Սուրբ Ղազանչեցոց եկեղեցում հայ ազատամարտիկի կողմից կատարվող մոմավառությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ

Հայ դատի, պահանջատիրության գաղափարի հաղթանակի հրավառություն...

Ըստ էության Շուշիի ազատագրումը անկասկած բեկում է մտցնելու ազգային-ազատագրական հետագա պայքարի մեջ: Անշուշտ, հայ ազատամարտիկների կատարած հիրավի պատմական սխրանքը իրականություն է, իրողություն:

Եվ այն սուրբ զոհերի գնով և անասելի դժվարությունների հաղթահարումով Շուշի քաղաքի նվաճումը տարածաշրջանում թերևս կարող է ստեղծել նոր ռազմա-քաղաքական իրավիճակ: Շուշիի առումը, մեր կարծիքով, որոշ իմաստով խախտեց հայ-թուրքական ուժերի հավասարակշռությունը հօգուտ հայերի: Այս հանգամանքը մեզնից ոչ պակաս գիտակցում է նաև թշնամին: Ուստի և Շուշիի ազատագրումը նոր խմբագրումներ է մտցնելու տարածաշրջանի ռազմա-քաղաքական հաշվարկներում, հանգամանք, որը կարելի է ոչ անտեսել և ոչ էլ, առավել ևս՝ թերագնահատել:

Որ Շուշիի կորստի հետ չեն կարող հաշտվել ո՛չ Ադրբեջանը և ո՛չ էլ նրա «ավագ եղբայրը»՝ Թուրքիան, կասկածից վեր է: Իսկ Ադրբեջանը Շուշիի կորստից հետո տեսնում է ինչպես իր կողմից բռնազավթած «հալվող» տարածքների, այնպես էլ լեզգիների, թալիշների, քրդերի ազգային ազատագրական հնարավոր առճակատումների փուլի սկիզբը, որը և կարող է քայքայել, մասնատել բոլշևիկների կողմից հորինված կայսրությունը: Իսկ Թուրքիայի քաղաքական շրջանների համար Շուշիի կորուստը ուրվագծում է Հայ դատի, պահանջատիրության գաղափարի վերակենդանացման ակնհայտ դրսևորման հնարավորությունը, որը և չի կարող չանհանգստացնել նրան: Հավանաբար, պահանջատիրության ուրվականը արդեն իսկ թափառում է Օզալի և Դեմիրելի առանձնասենյակներում...

Ինչևիցե: Մեր կարծիքով, որքան դժվար էր Շուշիի առումը, գուցե է՛լ ավելի դժվար է ոչ միայն նրա պաշտպանումը, այլև այդ հաղթանակի հետևանքով ադրբեջանական ռազմական հարձակումների դիմագրավումը: Սա մենք ազգովին ու միանշանակ պետք է գի-

տակցենք և շատ լրջորեն վերաբերվենք այս հարցին: Հայաստանի իշխանությունները, հուսով ենք, որ հասկանում են Շուշիի գրավման և՛ պատմական նշանակությունը, և՛ դրան հաջորդող հետևանքների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի ճակատագրական պատասխանատվությունը: Միաժամանակ, կարծում ենք, որ ՀՀ նախագահը ԵԱՀԽ-ի և այլ միջազգային կազմակերպություններում Արցախին վերաբերող փաստաթղթերում Շուշիի գրավումից հետո ԼՂՀ-ն Ադրբեջանի տարածք չի համարի... և չի ստորագրի նման փաստաթղթերի տակ...

Այժմ հարկավոր է, որ պետությունը և բոլոր քաղաքական ուժերը իրենց բոլոր միջոցներով ոչ թե «սատար» կանգնեն, այլ մայրական բնազդով ու նվիրվածությամբ տեր կանգնեն ժամանակին «բալիկ» կնքած Արցախին...

...Շուշին արդեն մերն է, ուրեմն Մայր Հայաստանը տիրել է Արցախին: Ուրեմն, եկեք ոչ թե խոսքով, այլ հանուն համահայկական շահերի պաշտպանության ՏԵՐ կանգնենք Արցախին, որպեսզի տեր մնանք և՛ Հայաստանին, և՛ Հայ դատին...

Կրկին հիշեցնենք, որ ռազմական հաղթանակները «օրինականացվում», վավերացվում են դիվանագիտական փաստաթղթերով: Սակայն մենք դառը փորձ ունենք, որ եղել են դեպքեր, երբ մեծաթիվ զոհերով հաղթել ենք ռազմաճակատում, սակայն պարտվել ենք դիվանագիտական ճակատում... Թույլ չտանք վատ նախադեպի կրկնություն, գոնե այս անգամ փորձենք երկու ճակատներում էլ հաղթանակ ապահովել: Հակառակ պարագայում նահատակները մեզ չեն ների...

Թիվ 20, մայիս

ՀԱՎԱՏՆԵՐՍ ԳՈՐԾ ԴԱՐՁՆԵՆՔ

Ադրբեջանի լրատվական միջոցները համառորեն լռում են Լաչինի ազատագրման և Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի բացման մասին: Կարելի է հասկանալ հակառակորդի հոգեվիճակը: Շուշիից հետո երկրորդ խոշոր անհաջողությունը կարող է խուճա-

պի մատնել ժողովրդին, որն առանց այդ էլ բարոյալքված է և հուսահատված ու այլևս վստահություն չի տածում ո՛չ իշխանությունների և ո՛չ էլ, մանավանդ, բանակի նկատմամբ, որը, ինչպես ցույց տվեց Շուշիի խայտառակ պարտությունը, պարզապես վարձկանների ախտածին մի խառնամբոխ է: Սակայն դժվար է միանշանակ ասել, որ ադրբեջանցիները վերջապես հասկացան, որ պատերազմը Արցախի հետ տանուլ է տրված, որ այլևս անկասելի է արցախցի ազատամարտիկների հաղթարշավը:

Ուզում ենք հավատալ, որ վերջիվերջո գալու է օրը, և այն հեռու չէ, երբ ադրբեջանցիներն իրենք կստիպեն իրենց իշխանություններին վերջ տալու ազգայնամոլական և ծավալապաշտական նկրտումներին ու հոգ տանելու ժողովրդի մասին: Այո, ուզում ենք հավատալ, որ վերջիվերջո հաղթելու է առողջ բանականությունն ու արդարությունը: Իսկ մինչ այդ, հավատանք ինքներս մեզ ու մեր հավատը դարձնենք գործ՝ հօգուտ ազատագրված Արցախի:

Գորիս-Լաչին-Ստեփանակերտ մայրուղով Արցախ հասավ նաև ՀՕԽ-ի ավտոշարասյունը արցախցիներին օգնելու առաջնությունը այս անգամ սիրով զիջելով մյուս բարեգործականներին: Կարևորն այդ չէ, իհարկե: Կարևորը կյանքի ճանապարհն է, որ վերջապես բացվեց դեպի Արցախ: Կարևորն այն է, որ այսօր այդ ճանապարհով արդեն բոլորն են ուզում գնալ Արցախ... Կարևոր է, որ այսօր բոլորն են հասկացել, թե ինչ է Արցախը Հայաստանի և հայ ժողովրդի համար: Որ ազգային-ազատագրական պայքարը հաջողությամբ կարող է պսակվել միայն միասնական ուժերով, ինչի վկայությունն է մարտնչող արցախցիների, անկախ քաղաքական համոզումներից ու կուսակցական պատկանելությունից, միասնությունն ու համախմբվածությունը, հայավարի ու հայավայել ապրելու կամքն ու վճռականությունը:

Եվ, վերջապես, կարևորն այն է, որ Արցախի անկախությունն այլևս ոչ մեկի համար տարտամ իղձ չէ կամ դաշնակցական զառանցանք, ինչպես ոմանք էին ասում դեռևս մեկ տարի առաջ:

Թիվ 21, մայիս

ՄԱՅԻՍ 28՝ ՄԵՐ ԱՐԾՎԱՌՅՈՒԾ ԻՇԽԱՆ ՈՒ ԹՈՐԳՈՄԱՏՈՒՆ

Մայիս 28՝ ազատ ու անկախ ապրելու, ինքնահաստատման ու ինքնակերտման, վերապրելու և հարատևելու համազգային կամքի նվիրականացման խարիսխ: Եվ հավերժորեն սրբազան խորհրդանիշ ազգային միասնական, համաժողովրդական պայքարով նվաճված ազատության ու անկախ պետականության:

Եվ փարոս մոլորված մեր քարավանների, որ թխակոհակ հոսում էր դեպի փրկության լույսը, դեպի լյառն Մասիս:

Մայիս 28՝ հպարտություն հայկական: Եվ մեր սրտերի խորքից ճառագող լույս: Մեր մարտիկների սրերի շառաչ և վահանների կոփյուն:

Մայիս 28՝ մեր արծվառյուծ իշխան ու թորգոմատուն: Դառնանք փառաբանենք անունդ, գործդ, զոհաբերումդ ու պատգամդ: Բայց դառնանք հիշեցնենք նաև 1920-ի ապրիլի 15-ի համաձայնագիրը, որն այս օրերի համար պետք է, որ մի խորհուրդ ունենա: Եվ թե ինչ էր ասում այդ համաձայնագրի տակ ստորագրած Կարաբեքիր փաշան. «Ադրբեջանի զորքերը առիթ պետք է ստեղծեն ընդհարվելու հայկական զորքերի հետ, ապա թուրքական զորքերի հետ պատերազմական գործողություններ պետք է սկսեն Հայաստանի Հանրապետության դեմ»:

Հիշեցնենք, քանի որ պատմությունը հակված է կրկնվելու, և մարդկությունը, ավա՜ղ, վատ հիշողություն ունի: Հիշեցնենք նաև ստեղծված իրավիճակի ճիշտ գնահատման, ճիշտ կողմնորոշվելու, քաղաքական ճիշտ հաշվարկներ անելու, մեր նոր հանրապետության վերաշինության առաքելությունը իր վախճանական նպատակին հասցնելու համար: Վասնզի կարաբեքիրյան «առիթներ» ստեղծելը դժվար չէ թշնամու համար: Վասնզի հայոց նոր անկախությունը, ինչպես երևում է, լավ չի յուրացրել 1918-1920-ի անողոք դասերը, ինչը Հ.Յ.Դաշնակցությունն ունի իբրև դասագիրք, ինչը, աչք մտցնելու պես մեզ ցույց տվեց Արցախի ազատագրական քա-

ռամյա մեր պայքարը՝ իր նահանջներով ու հաղթանակներով, կորուստներով ու նվաճումներով: Դառնանք հիշենք նաև փոքր ու մեծ այն սխալները, որոնք եթե ներելի են ցանկացած մի կուսակցության, ապա երբեք ոչ Հայաստանի Հանրապետությանը՝ Անկախության ու իր մեծ Հայրենիքի կերտման ճանապարհին:

Հավատանք ու զորավիգ լինենք մեկմեկու այս բախտորոշ օրերին, երբ մեր առաջ ունենք լուրջ խնդիրներ, սահմանների վնասազերծումից մինչև Արցախի հետ կյանքի ճանապարհի ամրապընդում, մինչև Արցախի ինքնուրույնության հաստատում:

Ուրեմն, փառաբանելով ու հիշեցնելով, աներկյուղ ու անսայթաք անցնենք ինքնակերտման ու ինքնահաստատման մեր դժվար ճանապարհը՝ դեպի միացյալ, ազատ ու անկախ մեր նավակայանը՝ լուսավորված Մայիս 28-ի արևով:

Թիվ 22, մայիս-հունիս

ՀԱՐՑԵՐ ԵՆ ԱՆԹԻՎ, ԱՆՀԱՍԱՐ...

Ազատ գների և սակագների համակարգին անցնելու հանրապետության նախագահի հրամանագիրը տրամաբանական շարունակությունն էր վարվող տնտեսական քաղաքականության, եթե դա իրոք քաղաքականություն է, և պետք է, որ անակնկալ չլիներ ժողովրդի համար: Բայց, ըստ էության, ըմբռնման պաշարները սպառվել են կամ սպառվելու վրա են: Փաստարկները, հիմնավորումները, բացատրությունները նույնն են, միայն թե այս անգամ՝ հակառակ ծայրից: Հիմնահարցերի անվերջանալի ցուցակում ավելացել են նորերը, բայց ոչ վերջում, ինչը արդեն տրամաբանական չէ, և անկասկած խախտելու է անհրաժեշտ քայլերի հերթականությունը: Դրան հակառակ, փոքրացել է ըմբռնման շառավիղը: Ով չհասկացավ, ով չի հասկանում, թե ինչ ասել է պատերազմական իրավիճակ, շրջափակում, սահմանային բնակավայրերի անվտանգության ապահովում, չհասկացավ ու չի հասկանալու ինչ ասել է ներքին քաղաքականություն... Թեև չհասկացողը չգիտի էլ ու չի էլ ուզենա իմանալ, որ գների ու սակագների մասին հրամանա-

գիր է եղել՝ իր արդեն առկա և սպասվելիք վտանգավոր հետևանքներով:

Բայց հասկանալն ու ըմբռնելը հարցի միայն բարոյական կողմն են, և բարոյականությունն էլ իր օրենքներն ունի: «Անհրաժեշտը» միայն հասկացողների ու ըմբռնողների համար չէ, որոնք առանց այդ էլ հասկանալով ու ըմբռնելով՝ իրական անկախություն ու ազատություն են նվաճում, պետություն են կերտում, արյուն ու կյանք են տալիս: Իսկ փոխարե՞նը: Չէ՞ որ մի օր նրանք հարցնելու են՝ էս ի՞նչ եք անում: Ինչո՞վ է զբաղված Գերագույն խորհուրդը: Օրենքների ընդունման ձգձգումը արդյո՞ք որևէ նպատակ չի հետապնդում: Ո՞ւր է տնտեսական վերափոխման ձեր ծրագիրը: Ինչո՞ւ չունեք ոչ տնտեսական և ոչ էլ կառավարման որևէ համակարգ: Եվ ահա եկել է այդ օրը, ու մարդիկ ոչ միայն հարցնում են, այլև պահանջում: Հանրապետության նախագահից, կառավարությունից, Գերագույն խորհրդից:

Մի բան հաստատ է, որ նախագահն այլևս ստեղծված վիճակը հասկանալու, հարցերին ըմբռնումով մոտենալու կոչ չի անելու: Հաստատ է նաև, որ ոչ կառավարությունից, ոչ Գերագույն խորհրդից մարդիկ այլևս ակնկալիքներ չունեն: Այո, անհրաժեշտ են կառուցվածքային փոփոխություններ, անհրաժեշտ է սահմանադրային դատարան, անհրաժեշտ է... (գուցե Կարմիր բանա՞կ): Այո, հարցեր են անթիվ, անհամար...

Բայց ո՞ւմ ենք խաբում: Երեկ ոչ միայն անթիվ ու անհամար հարցերից, այլև իշխանությունների անտարբերությունից ու արհամարհանքից ալեկոծված Գյումրին հանրապետության նախագահի ու կառավարության առջև շատ կտրուկ հարց դրեց. «Կամ՝ կամ»: Երեկ հուզումներ եղան նաև Կիրովականում, Չարենցավանում, Աշտարակում: Իսկ վա՞ղը:

Աստված չարասցե, որ այս իրոք ճակատագրական օրերին «նաև հացիվը» մոռացնել տա մեր գերագույն խնդիրն ու ցավը, որը պետք է լինի մեր բոլորի միաբանության առանցքն ու նպատակը:

Թիվ 23, հունիս

ՉԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՐԵՆՑԸ ՉԷ ԿԱՄ ԳԱՂՏՆԻ ՍԻՐՈ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հայաստանի Հանրապետության իշխանություններին հաջողվեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունները հետաձգել: Ինչպես ասում են, դա Երևանից Արցախ մեկնած թիմի նվազագույն առաջադրանքն էր: Դեռ մեծ ջանքեր կպահանջվեն Արցախում ստեղծելու Երևանին կամակատար իշխանություն, և դա լավ գիտեն այդ «առաքելությունը» ստանձնած տղերքը, ուստի նպատակին հասնելու համար խտրություն չեն դնելու միջոցների մեջ, ինչն արդեն իսկ անում են՝ հնչեցնելով Գերագույն խորհուրդը ցրելու և զինվորական իշխանություն հաստատելու կոչեր:

Դժվար չէ հասկանալ, թե դա ինչ իշխանություն է լինելու, եթե հիարկե, դա նրանց հաջողվի: Բայց սկզբի համար կարելի է բավարարվել ստեղծված անառողջ մթնոլորտով և ձեռնամուխ լինել հաջորդ քայլերին, որոնք հղի են Արցախի ազատագրական բանակի պառակտման, ազատագրական պայքարը փակուղի մտցնելու հետևանքներով:

Եվ տարօրինակ չէ, որ դրան կամավոր լծվեցին նաև քաղաքական այլ ուժեր ու խմբակցություններ, որոնք փորձում են ազգային միասնության կեղծ կոչերով սքողել իրենց բուն նպատակը, որը վերջին հաշվով նույնն է, ինչ ՀՀ իշխանություններինը: Այս ենթատեքստում պիտի տեղավորել Հ.Յ. Դաշնակցության հասցեին, Արցախում միայն կուսակցական պայքար մղելու, մեղադրանքը:

Որ ԼՂՀ քաղաքական իշխանությունները ՀՀ իշխանությունների սրտով չեն, նորություն չէ: Բայց որ այդ իշխանությունները «ստանձնել են ազգը պառակտելու ֆունկցիա», Վ. Շիրխանյանի բառերով ասած, այդ արդեն նորություն է և, կարծում ենք, լրջորեն նախապատրաստված...

Այնպես որ, «եթե Ստեփանակերտում քաղաքական իշխանությունը չփոխվի, ապա Արցախը պետք է հույսը կտրի Երևանի օգ-

նությունից» սպառնալիքը արդեն դադարում է միայն սպառնալիք լինելուց:

Ինչպես ցույց տվեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի «չընտրությունները», Արցախի անկախության ամրապնդմանն ու Արցախի քաղաքական իշխանությունների անկախության ապահովմանը Հայաստանի Հանրապետության իշխանությունները կձգտեն ամեն կերպ խանգարել՝ արտաքուստ «մեծ խաղի կանոնները չխախտելու» պատճառաբանությամբ: Փաստորեն, ԼՂՀ ճանաչման խնդիրը նույնպես կապ ունի Ստեփանակերտի ներկա քաղաքական իշխանությունների հետ: Այսինքն, եթե այդ իշխանությունները վաղը նրանց հաջողվի փոխել, անմիջապես կհետևի ճանաչումը, բացատրություններով հանդերձ...

Իսկ թե ի՞նչ է այժմ տեղի ունենում Արցախում ու Հայաստանի սահմանամերձ շրջաններում, ինչո՞վ է հղի ստեղծված իրավիճակը, ո՞ւմ վրա է պատրաստվում Ադրբեջանը մեծ հարձակման, ինչո՞ւ է ԼՂՀ-ի և Հայաստանի սահմանամերձ գոտիներում իրականացվում համընդհանուր զորահավաք, Հայաստանի իշխանություններին, ինչպես երևում է, չի հուզում: Կամ գուցե, իրոք, մի մեծ եղբայր էլ է հայտնվել, որի մասին ոչ ոք չգիտի՝ խոստանալով սիրո հմայքներ, բայց թողնելու միայն մահ ու կսկիծ...

Թիվ 24, հունիս

ԱԳՐԵՍԻԱ... ԲՈԼՈՐ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԼՂ Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիան նախապատրաստվում էր վաղուց և, ինչպես Էլչիբեյի իշխանության ամրապնդման Արևմուտքի ու Ռուսաստանի համաձայնությունը, պետք է որ անսպասելի չլիներ:

Եվ մենք կասկածելով ժողովրդավարական Ադրբեջանի «անկեղծությանը», ԼՂՀ-ի դեմ նրա ռազմաժողովրդավարական «անմեղ» գործողությունները համարում ենք Մինսկում հրավիրվելիք

խորհրդաժողովը վիժեցնելու կանխամտածված փորձ: Ավելին, մեղադրում ենք ԼՂՀ իշխանություններին, որ իրենց երկրի հողերը չեն ուզում Ադրբեջանին տալ, խախտելով ՀՀՇ-ի և Հայաստանի Հանրապետության անդորրը, ապակայունացնելով Հայաստանի ներքին կացությունը, որը, ըստ ՀՀՇ-ի, «այս պահին հանրապետության համար ամենակարևորն է»: Ոչ մի ցավ կորցրած հողերի, բարբարոսության զոհ գնացած հայրենակիցների, հազարավոր մարդկանց բռնի տեղահանման համար: Որովհետև կարևորը ՀՀՇ-ի իշխանությունը պահելն է, և ոչ թե Արցախը:

Կարևորը ժողովրդի աչքին թոզ փչելն է, թե տեսեք ինչի հասցրեց Արցախը պահելու դաշնակցական մոլեռանդությունը, ինչ հետևանք ունեցավ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար դաշնակցական Գ. Պետրոսյանի համաձայնության չգալը Մինսկի խորհրդաժողովի նախագահ Ռաֆայելիի հետ, թե Ադրբեջանի ներխուժման ծավալներն ու պատճառած վնասները միմիայն Հռոմի բանակցություններին Դաշնակցության դրդմամբ ԼՂՀ-ի պատվիրակության չմասնակցելու հետևանք են: Ահա ինչպես կարելի է նախահարձակ լինել և սեփական մեղքերը ուրիշների վրա բարդել: Բայց այդ չէ խնդիրը: Ժողովուրդը, որի անունից այնպես սիրում են խոսել հանրապետության ղեկավարները, գիտի ավելին, քան տեղեկացնում են հեռուստատեսությամբ և մամուլով: Գիտի ճշմարտությունը, գիտի, որ «թագավորը մերկ է» և այդ մերկությունը այլևս անհնար է ծածկել: Եվ չի հանդուրժի այլևս երկարապոչ այս ստերն ու կեղծիքները:

Այո, ոչ ոք էլ անակնկալի չեկավ. Ադրբեջանի ներխուժումը վաղօրոք ծրագրված ու մանրամասնորեն մշակված գործողություն էր, ոչ թե Մինսկի խորհրդաժողովը վիժեցնելու, այլ ընդհակառակը՝ այդ խորհրդաժողովին ԼՂՀ-ի անկարգավիճակ մասնակցությունը պարտադրելու և «փոխզիջումային տարածքներ» ապահովելու նպատակով: Եվ դա տեղի ունեցավ ոչ միայն բոլոր կողմերի համագործակցությամբ, այլև մասնակցությամբ: Մեկը մեծաքանակ զրահատեխնիկայով ու ռազմական ավիացիայով, իրենց անձնակազ-

մերով հանդերձ, մյուսը՝ հակամարտության խաղաղ կարգավորման սեփական մեթոդներով, երրորդը՝ իր ծրագիր-առաջարկություններով, թե ծրագիր-կարգադրություններով, չորրորդը՝ «ականազերծման» իր նոր սերտած վարարկներով, կամակատարությամբ ու հնազանդությամբ...

Ինչո՞ւ ուրեմն չմտածել, որ Մինսկի խորհրդաժողովի նախապատրաստությունը ոչ թե Հռոմում է տեղի ունենում, այլ օկուպացվող Արցախում և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, նաև՝ ԼՂՀ-ի: Այսպիսի բաներ, հայ ժողովուրդ: Հիմա խոսքը քոնն է. «Զա՛րկ, վասնզի ամեն Ազատություն և ամեն Արև քո հարվածիդ կայծերեն պիտի ծնանին...»:

Թիվ 25, հունիս

Ո՞ՐՆ Է ՁԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

«Մի թողեք, որ աշխարհը կառավարի ձեզ, այլ ինքներդ կառավարեք ձեզ»,- Շահումյանի շրջանի դեպքերից մի քանի օր առաջ ՀՀ նախագահին խորհուրդ տվեց Դեմիրելը:

Վատ խորհուրդ չէ, եթե չհաշվենք, թե ով է խորհրդատուն և ինչ նկատի ունի «աշխարհ» ասելով, որն այս դեպքում պահանջատեր հայ ժողովուրդն է անշուշտ, որը խանգարում է իր նախագահին գրկախառնվելու Թուրքիայի իշխանությունների հետ: Ուրեմն, խնդիրը նախագահը չէ: Խնդիրը նրան չխանգարելն է, ավելի ճիշտ՝ թույլ չտալը, որ չխանգարեն իր ուզածով կառավարելու:

Թե ինչ էր նախապատրաստվում ԼՂՀ դեմ, քաջ հայտնի էր և՛ Թուրքիայի, և՛ ՀՀ, և՛ Ռուսաստանի իշխանություններին: Մնում է միայն մտածել, որ դա արվում էր բոլոր կողմերի համաձայնությամբ և նույնիսկ բացահայտ, որովհետև օրեր անց Ալիևը չպիտի զգուշանար հայտարարելու, որ «հայերը ջախջախվելու են Թուրքիայի օգնությամբ, դրանում ոչ ոք կասկած չունի»: Այսինքն, թող բոլորն իմանան, որ Ադրբեջանը մենակ չէ, որ Ադրբեջանի թիկունքին կա կանգնած հզոր Թուրքիա:

Բայց եղան նաև այլ կարգի «խորհուրդներ», որոնց ՀՀ նախագահը չանսաց, դրանք համարելով ընդդիմության բամբասանքներ, և շարունակեց այն նույն քաղաքականությունը, ինչի հետևանքն է հանրապետությունում և ԼՂՀ-ում ստեղծված կացությունը: Այդ նույն քաղաքականությունը, որի ակունքները մի փնտրեք հայոց հողի վրա: Այն քաղաքականությունը, որը իրականացվում է գրեթե անսայթաք, և չզարմանանք, եթե վաղը հայտնվենք շատ ավելի ողբերգական վիճակում:

ՀՀ Գերագույն խորհրդի արտահերթ նիստում՝ նվիրված ԼՂ Հանրապետությունում տիրող իրավիճակի քննարկմանը, ՀՀ նախագահի ծրագրային ելույթը այլ բան չէր, եթե ոչ դրա հաստատումը, այս անգամ արդեն շատ բաներ այնքան ուղղակի ասված, որ ընդդիմությանը գրեթե ոչինչ չէր մնում ավելացնել...

Այո, ճիշտ էր նախագահը, որևէ նորություն, իրոք, չասվեց նրա ելույթում, բացի թերևս «ազատամարտիկներ» բառից, իսկ թե ինչ բովանդակությամբ, երևի թե պետք է հարցնել պաշտպանության նախարարին: Գուցե «ազատամարտիկ»-ի նոր հասկացություն է գործածության մեջ դրվում: Համենայն դեպս, մեր իմացած ազատամարտիկը թշնամուն հող չի նվիրում:

Բայց ավելի ճիշտ կլինի նախարարին այլ հարց տալ, չնայած մեր պաշտպանության նախարարը պաշտպանվելու «ազատ» հնարքների է տիրապետում, և իրեն գոնե կարողանում է պաշտպանել, բայց և այնպես՝ պարոն նախարար, ո՞րն է ձեր հայրենիքը:

Թիվ 26, հունիս

ՀՅԴ 25-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1992 թվականի հունիսի 22-ի ուշ գիշերին նախատեսված ժամկետից շուտ, Երևանում բացվեց Հ.Յ.Դաշնակցության 25-րդ Ընդհանուր ժողովը: Հայաստանի Հանրապետության նախագահի Հ.Յ.Դաշնակցության դեմ շղթայազերծած խաչակրաց արշավանքի ստեղծած մթնոլորտում, մթնոլորտ, որ թեև անծանոթ չէ

Հ.Յ.Դաշնակցությանը, որը թեև Դաշնակցության կողմից ընդունվեց սառնասրտորեն, սակայն ստեղծողի և իշխանության ճակատը զարդարեց խարանով:

Դաշնակցության ընդհանուր ժողովների դեմ հալածանքը նորություն չէ: Հ.Յ.Դաշնակցության հիմնադրության վաղորդայնին 1-ին և 2-րդ ընդհանուր ժողովները գումարվեցին ցարական ոստիկանության հետապնդումների պայմաններում: 1972-ից հետո համարյա բոլոր ընդհանուր ժողովները գումարվեցին թաքուն՝ Դաշնակցությանը հալածող ամեն կարգի ուժերի մեքենայություններից զերծ մնալու համար:

Հիմա հալածողը Հայաստանի անկախ հանրապետության իշխանություններն են՝ հանձին Լևոն Տեր-Պետրոսյանի: Անսպասելի չէր, բայց դժբախտաբար, այսօր իրողություն է: Պարոն նախագահը պատմության դասերը լավ չի սերտել, հակառակ պարագայի նման անհեթեթ քայլի չէր դիմի՝ աղճատելով դեմոկրատ ղեկավարի իր դիմագիծը հաչս միջազգային հասարակության: Թող լավ իմանա նախագահը, որ որքան հալածված լինի Դաշնակցությունը, նա ավելի կհզորանա, նրա շարքերը կդառնան ավելի ամրակուռ, նրա կամքը ավելի կպողպատանա և ավելի մարտունակ ու պայքարունակ կդառնա:

Բյուրոյի ներկայացուցչի արտաքսումը, որ, ի դեպ, պատռեց հաչս արտասահմանյան հասարակական կարծիքի Լ. Տեր-Պետրոսյանի դեմոկրատական դիմակը, չէր կարող և չկարողացավ սեպ խրել Դաշնակցության շարքերի և ղեկավարության միջև: Ընդհակառակը, ամրապնդեց նրանց միասնականությունը և ավելի ջրդեղեց պայքարի միասնական կամքը:

Ցավալի է միայն, որ հայրենի իշխանություններն են այժմ, որ հալածում են հայ ժողովրդի ազգային շահերին անմնացորդ նվիրված ազգային կուսակցությանը: Ի՞նչը կարող է ավելի թանկ արժել, քան ազգային շահը: Մեզ համար ավելի թանկ բան չկա: Իսկ մեզ հալածողների՞ համար...

Չպատասխանենք այս հարցումին, քանի որ վարդանների ու վասակների օրինաչափ հակադրության ծալքերը կպարզի պատմությունը:

Մի բան պարզ է, որ 25-րդ Ընդհանուր ժողովը սկսվեց Դաշնակցության համար բնականոն պայմաններում, պիտի շարունակվի և իր ավարտին հասցվի: Նա անկասկած անկյունադարձային կլինի:

Թիվ 27, հուլիս

ՇՐՋԱԴԱՐՁ «ԵԹԵ»-ՆԵՐՈՎ

Ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ վատթարացումը ԼՂՀ-ում, քաղաքական իրադարձությունների ընթացքը ՀՀ-ում շիկացրին հանրապետության ներքաղաքական կյանքը, խորացնելով առանց այդ էլ անհաղթահարելի թվացող ճգնաժամը: Զոհվեցին հայորդիներ, կորսվեց հողատարածք:

Քաղաքականությունից հեռու մարդկանց անգամ պարզ դարձավ ՀՀ քաղաքական ղեկավարության, ՀՀ նախագահի քաղաքական կուրսի փոփոխության անհրաժեշտությունը. վերջապես ճանաչել ԼՂՀ անկախությունը, դուրս բերել ՀՀ-ն ներքին զարգացման փակուղուց, ճշտել ՀՀ արտաքին քաղաքականության կողմնորոշումները:

Անհրաժեշտաբար սկսվեց քաղաքական պայքարի նոր փուլ:

Ընդդիմության համախմբումը ազգային խնդիրների շուրջ զրկեց ՀՀ ղեկավարությանը նախկին ինքնավստահությունից, նրան ստիպելով դիմել պառլամենտական պայքարի խորամանկությունների, իսկ նախագահին՝ ընդհուպ զրպարտանքների: Նույնիսկ հուլիսի 8-ի ԳԽ արտահերթ նստաշրջանում ակնհայտ դարձավ, որ խաղացվում է նոր ֆարս՝ քննադատության կրակը ՀՀ նախագահից տեղափոխվում է ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի վրա, հետին թվով, հնարավորության դեպքում ԼՂՀ ճանաչման խնդիրը նորից «լուծել» պառլամենտական շրջապտույտում: Սակայն, այս անգամ անհաջող: ՀՀ Գերագույն խորհրդի վրա դրված

էր պատմական պատասխանատվության «բեռ»-ը: ՀՀ ԳԽ-ն ինքը ևս պետք է հաղթահարեր իր ճգնաժամը: Եվ նա ելքը գտավ ոչ թե ճանաչման, այլ նվազագույն պահանջի՝ «ՀՀ համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական որևէ փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն նշված կլինի Ադրբեջանի կազմում» շրջանակներում... շնորհիվ ԳԽ նախագահի, ՀՀՇ պատգամավորական ֆրակցիայի ճարպկության, և նաև ԳԽ շենքը դրսից ու ներսից շրջապատած զինված ոստիկանության:

Այնուհանդերձ, հայոց ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին երերուն քայլը կատարվեց: Իսկ նոր քաղաքականության որդեգրման գործը մնաց: Կարո՞ղ են այդ ճանապարհով առաջ ընթանալ հանրապետությունը փակուղի մտցրած ՀՀ նախագահը և նրա կողմնակիցները: Ժամանակը ցույց կտա:

Իսկ ընդդիմության խնդիրն է չդավաճանել որդեգրած դիրքորոշմանը:

Թիվ 28, հուլիս

ՀԱԿԱԴՐՎԵԼՈՎ ԻՇԽՈՂՆԵՐԻՆ

Ոչինչ չի կատարվում առանց օրինաչափության. առավել ևս քաղաքականության մեջ: Հրաժարվելով հանուն Արցախի մարտական և քաղաքական ասպարեզներում պայքարից, Հայաստանի ներկա իշխողները կատարում են իրենց համար հերթական օրինաչափ քայլը՝ սկսում են մի ծանր, ազգավնաս գործընթաց՝ լռեցնելու ամեն մեկին ու ամեն մի հասարակական-քաղաքական կազմակերպության, սեփական իշխանության պահպանման և Արցախի դատը տանուլ տալու նպատակով:

Սակայն ազգային նպատակների շուրջ համախմբված ներկա քաղաքական դաշինքը փորձում է կատարել իրենից կախված ամեն ինչ իշխանությունների ձեռնարկած գործընթացը կանխելու համար: Ստեղծվել է մի տեսակ «քաղաքական հավասարակշռության» վիճակ, բայց դա երկար տևել չի կարող: Ազգային բանակ

չունեցող ժողովրդի համար, որի քաղաքական նորահաս գործիչները հեռուստատեսային ապահով էկրանից, առանց լուրջ հիմնավորման խոսում են խաղաղության մասին և ապակողմնորոշում հայ ժողովրդին, բոլորովին չեն նպաստում մեր առջև ծառացած խնդիրների լուծմանը: Ուստի, հայ ժողովրդին մնում է կատարել իր ընտրությունը. կա՛մ կրավորական կեցվածք ընդունելով հետևել դեպքերի տարերային ընթացքին, կա՛մ էլ համախմբվել պայքարող, ընդ որում՝ հենց նույն ժողովրդի ընկերային և ազգային շահերի համար պայքարող ուժերի շուրջ և վերջնականապես խախտել նշված հավասարակշռությունը իր օգտին:

Մինչդեռ կան ու դեռևս մնում են այսպես կոչված մտավորականներ, որոնք գերազանցապես հարց են տալիս. «Ի՞նչ է լինելու»: Նրանք չեն փորձում ասել. «Ի՞նչ ենք անելու»:

Բայց սարսափելին դա չէ: Սարսափելին այն է, երբ մի ողջ ժողովուրդ կարող է նշված առաջին հարցը տալ ու հեռանալ քաղաքական ասպարեզից՝ իշխող ուժերին հնարավորություն տալով ավարտելու իրենց ազգավնաս գործը: Իսկ դա անթույլատրելի է:

Թիվ 29, հուլիս

ԿՐԿԻՆ ԲԱԼԱՀՈՎԻՏԸ

Զորամասերում արդեն ստացել են ԱՊՀ զինված ուժերի 7-րդ բանակը Հայաստանի Հանրապետությունից դուրս բերելու մասին հրամանը: Իսկ նախապատրաստական աշխատանքները վաղուց էին սկսվել: Վաղուց էր սկսվել նաև քարոզչությունը՝ նախապատրաստելու հասարակական կարծիքը, անշուշտ, մեզ ծանոթ, բազմիցս փորձված ձևերով ու մեթոդներով:

Ընդամենը մի քանի ամիս է անցել Բալահովիտի մոտակայքում գտնվող զինապահեստների պայթեցումից, որի պատճառների «բացահայտումը» մնաց քարոզչության ստեղծած կարծիքի շրջագծում և հանրությունը այդպես էլ չիմացավ ճշմարտությունը: Հիշենք դրան նախորդած Արթիկի, ավելի ուշ՝ Վանաձորի, բոլորո-

վին վերջերս Գյումրիի, էլ չասած «Զվարթնոց» օդակայանի և երկաթուղային կայարանի դեպքերը:

Եվ, վերջապես, հուլիսի 20-ին նույն այդ Բալահովիտի ցնցումը՝ այս անգամ արդեն հարձակում ոչ թե պայթեցնելու ու ոչնչացնելու նպատակով, այլ՝ զենք ու զինամթերք գրավելու, ինչպես շտապեց առաջինը տեղեկացնել ռուսական հեռուստատեսությունը:

Ի՞նչ է սպասվում վաղը: Ովքե՞ր են լինելու հաջորդ զոհերը: Վերջ կունենա՞ն արդյոք մեր իսկ հողի վրա, մեր իսկ տանը մեր դեմ օտարի սարքած դավերն ու խարդավանքները, որոնց զոհ են գնում անմեղ մարդիկ: Մինչև ե՞րբ մենք մեզ այսպես անպաշտպան ու անապահով պետք է զգանք «պատահական» այդ հրաձգություններից, պայթյուններից ու հրկիզումներից, եթե պետություն ենք և ունենք պետական իշխանություններ:

Չմանրամասնելով Բալահովիտում տեղի ունեցածը՝ ասենք, որ ԱՊՀ-ի 7-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ֆյոդոր Ռեուտի գնահատմամբ, Ադրբեջանում գործող 4-րդ բանակի հարաբերությունները ադրբեջանցիների հետ ավելի քան բարեկամական են, ինչը չի կարելի ասել իր հրամանատարության ներքո գտնվող 7-րդ բանակի մասին... Համեմատությունը պատահական չէ: Եվ առհասարակ պատահական ոչինչ չի ասվում ու արվում: Քարոզչական մեքենան ընթանում է նույն ուղղությամբ՝ երբեմն-երբեմն անհրաժեշտաբար փոխելով արագությունը: Եվ կարևոր չէ՝ պայթյուններն ու ցնցումները նախորդո՞ւմ են, թե՞ հետևում նրանց, կարևորը նույն ուղղությամբ ընթանալն է:

Մի՞թե այսքանից հետո էլ պարզ չեղավ, որ Հայաստանում գործում են դիվերսիոն խմբեր:

Եթե կա մի բան, որ առայժմ անհասկանալի է, ապա՝ ոչ մեր իշխանությունների համար. արդյոք այս ամենը չի՞ արվում իրենց իսկ թողտվությամբ... Հակառակ դեպքում բացատրությունը ստիպված ենք փնտրել առաջին հերթին նրանց քաղաքական անզորության մեջ, լինի ներքին թե արտաքին, որը պակաս վտանգավոր ու նսե-

մացուցիչ չէ, քան առաջինը: Այսպես թե այնպես՝ Բալահովիտը Հայաստանի Հանրապետությունում է:

Թիվ 30, հուլիս

ՊԱՏՐԱՆՔ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը: Մինչ օրենքի վերջնական քվեարկությունը և ընդունումը ՀՅԴ խորհրդարանական խմբակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով առաջարկում էր հետաձգել սեփականաշնորհման գործընթացը և դրա մասին օրենքների ընդունումը: Պարզ է, որ հետաձգումը ամենևին էլ գործընթացին ընդհանրապես դեմ լինել չի նշանակում: Պարզապես հապճեպ և համատարած սեփականաշնորհումը դառնում է ինքնանպատակ և անիրագործելի: Վկա է նախկին համայնավարական երկրների փորձը: Ի վերջո, սեփականաշնորհումը ոչ թե նպատակ է, այլ միջոց՝ աշխուժացնելու տնտեսական կյանքը, այն ավելի արդյունավետ դարձնելու: Իսկ ի՞նչ երաշխիքներ կան, որ սեփականաշնորհումով կսկսի գործել մեր երկրի կաթվածահար տնտեսությունը: Ոչ մի: Պարզապես տնտեսությունն աշխատեցնելու պատասխանատվությունը պետությունից կփոխանցվի ապագա սեփականատերերին:

Պետական համապարփակ տնտեսական զարգացման ծրագրի բացակայության պայմաններում և այսօրվա սեփականաշնորհման արդյունքում կգործեն միայն «ցեխերը», առանձին փոքրածավալ տնտեսական միավորները, իսկ խոշոր արտադրությունը կմնա ներկայիս անդամալույծ վիճակում: Այո, մենք կունենանք արտադրություն, բայց «մանուֆակտուրային» տիպի, այլ ոչ թե արդիական արտադրություն:

Ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, համատարած սեփականաշնորհման գործընթացը անիրագործելի է շուկայական

ենթակառուցվածքների թերզարգացածության և դրամական, ֆինանսա-վարկային թույլ, կիսակախյալ համակարգերի առկայության պայմաններում: Իսկ դա այսօրվա մեր իրականությունն է: Նույնիսկ տնտեսապես զարգացած երկրներում (օրինակ՝ Ֆրանսիայում), ուր չկա բնակչության գնողունակության խնդիրը, սեփականաշնորհման ժամանակ մտածում են, թե ի վերջո ում ձեռքը կանցնի այդ սեփականությունը, արդյո՞ք այն երկրից դուրս չի գա կամ ուրիշներինը չի դառնա: Իսկ մենք այսօր այնպիսի անպատասխանատու և անտարբեր կեցվածք ենք ընդունել, կարծես այդ գերխնդիրը մեզանում չկա կամ վաղը չի կարող ծագել:

Այո, մենք պետք է ստեղծենք զարգացած, «ձնով շուկայական» տնտեսություն: Բայց ոչ համաշխարհային կապիտալի կցորդ հանդիսացող, այլ էությամբ ազգային տնտեսություն, որտեղ տնօրինողը կլինենք մենք, և ոչ թե ուրիշները:

Թիվ 31, օգոստոս

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստիճանաբար անցնում է այն էյֆորիան, որը կապված էր Հայաստանի պետական անկախության հռչակման հետ: Այո, հռչակման, որովհետև այդ արարողության և իրական անկախության միջև մեծ տարբերություն կա: Ավելի քան 70 տարի Հայաստանի արտաքին սահմանները նույնացել են ԽՍՀՄ հզոր պետության սահմանների հետ:

Բայց անկախության հռչակմամբ մեզ՝ որպես պետական միավորի համար, ըստ էության, թիվ մեկ հարցը դառնում է արտաքին սահմանների անվտանգության ապահովումը:

Այստեղ ունենք չորս տիպի սահմաններ: Նախ, հայ-թուրքական, որի երկայնքով կանգնած է ԱՊՀ-ի զորքը, ապա՝ հայ-ադրբեջանական, որը պատերազմական սահման է:

Առավել հուսալի են հայ-վրացական և հայ-իրանական սահմանները: Անվիճելի է, որ աշխարհ դուրս գալու համար (անգամ օդային ճանապարհով) առավել «աշխատող» են հարավային և հյուսիսային դարպասները: Այդ երկու ելքերից այսօր վտանգի տակ է հարավայինը՝ Մեղրու շրջանը: Միջազգային որոշ շրջանակներ, պարզվում է, փորձում են հավասարության նշան դնել Լաչինի և... Մեղրու հնարավոր միջանցքների միջև: Սա մեզ համար կենաց և մահու խնդիր է: Եվ միայն զարմանալ կարելի է, որ ՀՀ նախագահը, վերջապես որոշելով անձամբ լինել սահմանամերձ գոտիներում, շրջանցում է Մեղրին: Մինչդեռ, ազգային անվտանգության այդ վճռական հատվածը չպետք է անտարբերության մատնվի:

Ոչ միայն այդ. ինչպե՞ս կարելի է արտաքին քաղաքական ուղղվածություն վերցնել դեպի Արևմուտք, երբ քաղաքական աշխարհի այդ մասում են հասունանում հոբյան ազգակործան ծրագրերը: Փոխանակ ամրապնդելու շահագրգիռ երկրների հետ կապերը, իշխանությունները հաճախ տարվում են արտաքին քաղաքական կյանքի փայլով: Այսինքն, առանձնապես մատնանշում են տարբեր մակարդակի հանդիպումները, հաճախ արձանագրային նշանակության, հեղինակավոր թվացող ելույթները միջազգային այս կամ այն ամբիոնից: Նման կեցվածքը մեզ չի օգնի:

Արտաքին քաղաքականությունը պետք է ծառայի արտաքին սահմանների անվտանգությանը:

Թիվ 32, օգոստոս

ՀԱՅՐԵՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ

Դեռ մեկ տարի առաջ, երբ աղրբեջանցիները Արծվաշենը շրջանցող ճանապարհը կառուցելուց հետո սկսեցին աստիճանաբար, բայց հետևողականորեն սեղմել օղակը, միանգամայն տրամաբանական պիտի լիներ զգաստանալը, պաշտպանության մասին մտածելը: Բայց չեղավ, որովհետև զգաստանալը գործողու-

թյան ազնիվ տեսակ է ու ենթակա չէ կեղծիքի: Փոխարենը ներքին պետքերի համար գործածության մեջ դրվեցին ամպագոռգոռ ու փուչ հայտարարություններ, հող հայրենիից մի բուռ անգամ թշնամուն չզիջելու հավաստիացումներ... մտքում պահելով դիմացինի պարտադրած տարածքային փոխանակումների «համոզիչ ու ոչ այլընտրանքային» կատարումը: Իզուր չէ, որ արածը մարսելու ակնկալիքով թշնամին ակամա բացբերանություն է անում՝ ի հակակշիռ Արծվաշենի դնելով Քյարքին ու Ջաֆարլին: Թերևս նույն մշակված պլանով էր նաև ՀՀ պաշտպանության նախարարի «հրաժեշտի այցը» հանձնման նախօրեին:

Ուրեմն ի՞նչ, այսպես մեր սահմանները հարթեցնելով ու կլորացնելով իրո՞ք մեզ միայն մեր գերեզմանատեղիները պիտի մնան: Արդյոք սա չէ՞ բարեկեցիկ կյանքի ու հարատև խաղաղության այն գինը, որի մասին անընդհատ հիշում ու հիշեցնում էր հանրապետության նախագահը: Իսկ թե այսպես մաս-մաս, ամեն անգամ մի ուրույն սցենարով, հայրենիքից մի պատառ թշնամու երախը նետելով, նա ինչ է «սեփականաշնորհում» անձամբ իր ու իր շրջապատի համար՝ թերևս միայն հենց նույն «ընտրյալներին» է հայտնի, բայց անժխտելի է, որ այս պարագայում նախագահի հաշվարկներն ու ազգի շահերը չեն համընկնում: Եվ ահա, որպեսզի բոլոր շեշտերն իրենց տեղը դրվեն, Լ. Տեր-Պետրոսյանն անհապաղ պիտի նեղություն քաշի ժողովրդին ներկայացնել Հայաստանի Հանրապետության սահմանների վերաձևման «տեր-պետրոսյանական» տարբերակը, այսինքն՝ գծի այն տարածքը, որը նա որոշել է «թողնել» իր ժողովրդին ու հաճում է պաշտպանել պետականորեն:

Այս առումով, հարցի մի կողմն է մեր անկախ հանրապետության առաջին գյուղի, առաջին քառակուսի կիլոմետրի կորուստը: Ահավորն այն է, որ շարունակվում է հայրենիքի ծվատման «գործընթացը»: Հետևաբար, եթե Արծվաշենին չփրկեց անգամ «ամուր ու հուսալիորեն պաշտպանված» լինելը, շրջանում նախապես արտակարգ դրություն մտցնելը, ուրեմն բավ է, վերջապես խոստովա-

նել է պետք, որ տնաբույս քաղաքագետներով ու ռազմագետներով անհնար է երկիր ապրեցնել ու պաշտպանել:

Եթե Արծվաշենը տանդ նախամուտքն էր, ու դռանդ բանալին հանձնվեց թշնամուն, ուրեմն բավ է՝ գիտակցել է պետք, որ Հայաստանը մեկ-երկու անհատի կամ խմբակցության տիրույթ չէ, ու թույլ չտալ, որ հետն ինչպես կամենան՝ վարվեն:

Եթե Արծվաշենում հայոց զենքի պարտություն չեղավ, այլ միայն նենգ ու դավադիր ձևով անմեղ ու անփորձ տղերք մատաղ արվեցին, ուրեմն բավ է՝ պաշտպանության նախարարը պետք է պատասխան տա:

Եթե Արծվաշենի անկման համար արդարանալով փորձում են մեղադրել հենց արծվաշենցուն, որ կնշանակի ամեն շրջան, ամեն գյուղ, ամեն անհատ ինքը պետք է պաշտպանի իրեն՝ պետությունը գործ չունի, ուրեմն, հայ մարդ, ժամանակը չէ՞, որ միլիոնով կանգնես նույն Ազատության հրապարակում ու գոչես՝ Լևոն, դու չես էն անհատը, որը պիտի մեզ առաջնորդի...

Թիվ 33, օգոստոս

Ո՞Վ Է ՓՈՐՁՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ

Մեր քաղաքական բառապաշարը արագորեն հարստանում է նոր ձևակերպումներով: Երկար ժամանակ իշխանությունները խոսում էին Հայաստանում քաղաքացիական պատերազմի հավանականության, վրացական տարբերակի գործադրման մասին: Իսկ ահա օգոստոսի 17-ին լայն շրջանառության մեջ դրվեց «պետական հեղաշրջման փորձ» արտահայտությունը: Սրանով ձգտում էին վարկաբեկել «Ազգային դաշինքի» վարած քաղաքական կուրսը՝ հանրապետության նախագահի հրաժարականի պահանջը: Բայց մի՞թե քաղաքական հեղաշրջման փորձ է, երբ ընդդիմադիր ուժերը փորձում են խորհրդարանում քննարկել խնդրո առարկա հարցը և համապատասխան օրենսդրական որոշում կայացնել:

Սակայն պետական հեղաշրջման վտանգը, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, գալիս է այլ կողմից: Չէ՞ որ հեղաշրջումները լինում են տարբեր կարգի: Եվ ինչպես վկայում է 1991 թ. օգոստոսի 19-21-ը Ռուսաստանում տեղի ունեցած պետական հեղաշրջման իրական փորձը, այն ձեռնարկվեց ոչ թե ընդդիմության, այլ իր իսկ՝ իշխանության կողմից: Եվ դա այն պարզ պատճառով, որ տվյալ պահին Ռուսաստանի իշխող վերնախավը այլևս անկարող էր կառավարել երկիրը. մտածում էր միայն բռնապետության հաստատմամբ կասեցնել իշխանության քաղաքական հողմահարումը:

Բանն այն է, որ եթե Հայաստանում որևէ կերպ հնարավոր լինի լուծարել խորհրդարանը և քաղաքական կյանքից հեռացնել նախագահի իշխանությանը հակակշռող այդ միակ ուժը, ապա այստեղ պարզապես մենատիրություն կհաստատվի: Որպես արդյունք՝ իրողություն կդառնա իշխանության կենտրոնացումը մի խմբի կամ մի մարդու ձեռքում, որը կնշանակի ժողովրդավարության վախճանը: Իսկ ժողովրդավարության մերժումը և մենիշխանության հաստատումը այլ բան չէ, քան պետական կառավարման եղանակի արմատական փոփոխություն, այսինքն՝ քաղաքական հեղաշրջում:

Ահա թե ինչպես կարող է իրականացվել «քաղաքական հեղաշրջման փորձը», որի նախապայմանը՝ Գերագույն խորհրդի լուծարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը կանխվեցին 1992 թ. օգոստոսի 17-ին:

Թիվ 34, օգոստոս

ԱՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԹԵՐԱՅԻՆ Է

Իշխանությունների կողմից մեր երկրի անվտանգության մասին հավաստիացումները, ինչպես ցույց է տալիս սահմանամերձ շրջաններում տիրող ողբերգական կացությունը, հայտարարություններից այն կողմ չեն անցնում: Տեսնելով, որ պետությունը հնարավոր բոլոր միջոցներով չի կարողանում իրենց անհրաժեշտ

մակարդակով պաշտպանել, այդ շրջանների բնակչության մի մասը սկսել է լքել իր պապենական բնակավայրերը և տեղափոխվել ավելի ապահով քաղաքներ ու գյուղեր: (Ի՞նչ իմանան լքյալները, որ եթե նախագահի ներկա քաղաքականությունը հետևողականորեն շարունակվի, ապա ոչ հեռու ապագայում ոչ միայն իրենց, այլև Հայաստանի ամբողջ բնակչության համար չի գտնվի ապահով որևէ անկյուն...):

Սակայն անկասկած է, որ իշխանություններն իրենց անելիքը գիտեն: Օրինակ, Թուրքիայի պաշտոնական պատվիրակության հետ «գաղտնի» բանակցությունների արդյունքները ժողովրդին դեռևս հայտնի չեն: Իհարկե, առայժմ նաև հայտնի չէ, թե թուրքական պատվիրակության մեկնումից հետո Հայաստանի «հուսալիորեն» պաշտպանված ո՞ր տարածքը կնվիրաբերվի թշնամուն...

Այստեղ զարմանալի ոչինչ չկա, քանզի ՀՀ նախագահի սկզբունքը հետևյալն է. «Հայաստանի գոյատևման անվտանգության ամենահուսալի երաշխիքը ոչ թե նրա տնտեսական կամ ռազմական հզորությունն է, այլ բոլոր հարևանների հետ նորմալ հարաբերություններ հաստատելը: Այս սկզբունքն էլ հենց ընկած է մեր արտաքին քաղաքականության դոկտրինայի հիմքում»: Հենց այսպես՝ ո՛չ ավել, ո՛չ պակաս: Այսինքն, «հանուն հարևանների հետ նորմալ հարաբերությունների հաստատման» քաղաքական նպատակի իրականացման, հարկավոր է Հայաստանի «ավելորդ» տարածքները (ինչպես Արծվաշենը) տուրքի ձևով տալ թշնամուն:

ՀՀ նախագահը ինչո՞ւ, ի՞նչ պատճառով չի կատարում նախագահական երդումի պահանջները, մասնավորապես՝ Հայաստանի տարածքային ամբողջականության անձեռնմխելիությանն ու քաղաքացիների անվտանգությանը վերաբերող համապատասխան պարտավորությունները: Թե՞ «հարևանների հետ նորմալ հարաբերությունների հաստատման» ՀՀԾ-ական դոկտրինայի առարկայացումը և նախագահական երդման պահանջները տրամագծորեն իրար բացառող խնդիրներ են:

Ներկա իշխանությունները մինչև ե՞րբ պիտի թաքնվեն հայ-ադրբեջանական պատերազմի թիկունքում և շահարկեն առարկայական դժվարությունները՝ ժողովրդին մատնելով թշվառության, իսկ վերջինիս բարոյալքված վիճակը հպարտորեն անվանեն «նվաճում»:

Եթերային է այդ քաղաքականությունը, պարոնա՛յք: Այդ քաղաքականությամբ հայրենիք չես պահի, սակայն աթոռներ ժամանակավորապես՝ հնարավոր է...

Թիվ 35, օգոստոս

ԼՂՀ-Ի ՄԱՔԱՌՄԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ

1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Անշուշտ, հայկական երկրորդ պետականության ծնունդը չի բխում մեր ազգի ռազմավարական շահերից: Սակայն դիվանագիտական-քաղաքական դավադիր խաղերով լի այս աշխարհում հաճախ ստիպված ես լինում ապացուցել նույնիսկ այն, ինչը ի վերուստ տրված է քեզ և ապացուցման ենթակա չէ: Այն, որ Արցախ աշխարհը պատկանում է միմիայն հայ ազգին, պատմությամբ է հաստատված: Սակայն վաղուց հայտնի է նաև, որ աշխարհում կան դավադիր ուժեր, որոնք նույնիսկ մերն են կասկածի տակ դնում ու վիճարկում անվիճարկելին: Ուստի, Արցախի առանձին պետության հռչակումը թերևս միակ ճիշտ քայլն է՝ հանգրվանային ճանապարհով մեր ազգային երազն իրականացնելու համար... Մինչ այդ ժամանակավորապես ընկավ Շահումյանը, Արցախի գրեթե 1/3-ը կոխկրտվում է ոսոխի ոտքերի տակ:

1992 թ. գարնանը հաջողությունները ուղեկցում էին հայ ազատամարտիկներին: Ազատագրվեց Շուշի քաղաքը, բացվեց Արցախը Հայաստանի հետ կապող Լաչինի միջանցքը: Բայց Հայաստանի իշխանությունների անհեռատես, քաղաքական պատվերների միջոցով իրականացվող կուրսի պատճառով մարտական գործո-

ղությունների նախաձեռնությունը կարծես անցավ թշնամուն: ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի եղերական մահից հետո սկսված անհաջողությունները իբր թե քիչ էին, ավելացվեց նաև ՀՀ իշխանությունների կողմից արհեստականորեն հրահրված ներքաղաքական պայքարը, որը շոշափելիորեն ազդեց արցախցիների դիմադրողականության վրա:

Այդուհանդերձ արցախահայը հպարտ է, որ իր իրականության մեջ արդեն կայացել է հայկական երկրորդ պետականությունը: Չնայած անհամար տառապանքներին, այսօր էլ արցախահայությունը լի է վճռականությամբ հաստատելու այն ճշմարտությունը, որ Արցախը եղել, կա և պիտի մնա Հայաստանի գոյության նախապայմանը: Եթե ներկա իշխանությունները համառորեն չեն ուզում ճանաչել արդեն մաքառող ԼՂՀ-ի իրավական գոյությունը՝ որպես անկախ պետություն, ապա նրանք պետք է հիշեն, որ ԼՂՀ-ի ճանաչումը ինքնանպատակ չէ, ինչպես իրենց ներկայությունը քաղաքական ասպարեզում...

Եթե Արցախը ինչպես Ադրբեջանին և աշխարհին իր աննկուն կամքով պարտադրեց հաշվի նստելու սեփական գոյության փաստի հետ, այնպես էլ կստիպի Հայաստանի ներկա իշխանություններին հասկանալու, որ նրանց կառավարման ղեկին մնալը ուղղակիորեն կախված է Արցախի գոյությունից:

Թիվ 36, սեպտեմբեր

ԾԱՌԱՆԱԼ, ՈՉ ԹԵ ԾԱՌԱՅԱՍԻՏ ԼԻՆԵԼ

Ինչպես միշտ, այս անգամ էլ Հայաստանի իշխանությունները գտնվեցին իրենց «բարձրության» վրա: Թուրքական օդահեն (դիպվածը այլ կերպ չես կարող բնութագրել) ռազմատրանսպորտային ինքնաթիռը ինքնավստահ ու ոչ պատահականորեն խախտեց ՍԱԿ-ի անդամ պետության՝ Հասաստանի Հանրապետության օդային սահմանը: Իհարկե, ոտնահարելով այդ բնագավառում միջազգայնորեն ընդունված բոլոր նորմերը: Միաժամանակ պետք է

«արժանին» մատուցել մեր «երիցս ժողովրդավար» իշխանություններին, որոնք «ըմբռնումով» գնահատեցին թուրքական օդահեններին չափազանց համարձակ գործողությունը:

Պետական այրերը ինչպե՞ս կհրամայեին հասկանալ այն «առեղծվածի» իմաստը, որ Հայաստանի վարչապետը 100 հազար տոննա հացահատիկ փոխարինաբար ստանալու խնդրանքով դիմում է հենց թուրքական իշխանություններին, իսկ վերջիններս կարծես թե որպես պատասխան այդ խնդրանքին՝ օդահենության եղանակով խախտում են անկախ պետության օդային տարածքը... Գուցե չարագուշակ դիվանագիտական միտքը կրկին ինչ-որ դավադիր բա՞ն է նյութում հայ ժողովրդի դեմ...

Շահումյանի, Մարտակերտի, Արծվաշենի առանց խոր տագնապների հանձնման և հարյուր հազար տոննա հացահատիկ Թուրքիայից ձեռք բերելու պաշտոնական խնդրանք-դիմումը նույն քաղաքական-դիվանագիտական «անհայտ» տեղերում մշակված սցենարի հերթական արարներից է, արարներ, որոնք հավանաբար գտնվում են անքակտելի միասնության մեջ:

Միտումը աստիճանաբար ուրվագծվում է: Իշխանությունների կողմից վերջին երկու տարիներին սանձազերծված հայ-թուրքական «սիրաբանություններ»-ի հետևանքներն իրենց արդեն զգացնել են տալիս: Ուստի, գիտակցո՞ւմ է արդյոք Հայաստանի ներկա պաշտոնական միտքը, որ ամենաակտիվ ձևերով ներգրավվելը թուրքական քաղաքականության ոլորտը մեր երկիրը կարող է դարձնել Թուրքիայի կցորդը:

Ավելի քան յոթ տասնամյակ առաջ հայ բոլշևիկները մեր երկրի մի մասը վաճառելուց հետո Հայաստանը վերածեցին Ռուսաստանի գաղութի, այսինքն՝ քանդեցին մեր հայրենիքի առանց այդ էլ խարխուլ պատերը: Ճակատագրի ինչպիսի ծաղր, բոլշևիկներին հաջորդողները՝ նեոբոլշևիկյան իշխանությունները, շարունակում են նույնպես քանդել այս արդեն ավերակված հայրենիքի կիսախարխուլ պատերի մնացորդները...

Ծառայամտությունը վտանգավոր կեցվածք է: Մինչդեռ հարկ է ծառանալ բոլոր այն անհայտ ու թաքուն գործարքների դեմ, որոնք ուղղված են մեր հայրենիքի անվտանգության խարխլմանը:

Թիվ 37, սեպտեմբեր

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ

Կայսրությունը փլուզվեց և միութենական նախկին հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, անկախություն ձեռք բերեցին:

Սակայն թվում էր, թե սեպտեմբերի 21-ի հանրաքվեի միջոցով նաև իրավականորեն անկախացած Հայաստանը աստիճանաբար պիտի կատարեր այդ կարգավիճակը ամրապնդող կոնկրետ քայլեր: Այսինքն, քաղաքական և տնտեսական անկախությունը հետզհետե պիտի ստանար իրական բովանդակություն:

Ժողովուրդն անկասկած սպասում էր, որ Հայաստանի իշխանությունները անկախության իրողության բոլոր հնարավորությունները կծառայեցնեին Արցախի հարցի այնպիսի եղանակով լուծմանը, ինչը կհամապատասխաներ մեր ազգի ռազմավարական շահերին:

Բայց այս համահայկական ակնկալիքը չարդարացավ: Ավելին, Հայաստանի անկախության մեկ տարվա ընթացքում ընկավ Շահումյանը, Մարտակերտի մի մասը, Արծվաշենը: Թերևս, «աչքի ընկնող» միակ բանը, որով «նշանավորվեց» Հայաստանի անկախության մեկ տարին, Արցախի և Հայաստանի տարածքային կորուստներն են:

Արտաքին քաղաքականության մեջ թմբկահարվող «մեծ նվաճումները» դեռևս ոչ մի լուրջ, շոշափելի փոփոխություններ չեն մտցրել Հայաստանի տնտեսական, իսկ Արցախի՝ քաղաքական կարգավիճակի մեջ:

Այլ կերպ, արտաքին քաղաքականություն է իրականացվում ի հաճույս դրսի ուժերի, որն էլ, բնականաբար, իր անդրադարձն է ունենում ներքին քաղաքականության վրա:

Անկախացած հանրապետություններից թերևս Հայաստանը առաջինը պիտի ձեռնամուխ լիներ ազգային բանակի ստեղծման կազմակերպական աշխատանքներին, սակայն մինչ այսօր կոնկրետ լուրջ տեղաշարժ չկա այդ կարևոր բնագավառում ևս:

Ընկերային-տնտեսական ոլորտներում քաոսն ու կամայականությունը հասել են այն աստիճանի, որ թվում է, թե Հայաստանում իշխում է «ինքնակառավարման կատարյալ» ինչ-որ մի մեխանիզմ: Դրության տերն են ոչ թե իշխանությունները, այլ մաֆիոզ խմբերը: Եվ այս «աննախադեպ նվաճումներին» մենք հասել ենք ընդամենը անկախության մեկ տարվա ընթացքում: Էլ չենք խոսում սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակի մասին, որտեղից շարունակվող գաղթականների հոսքը ալիքվելով խփվում է վերին օղակների անտարբերության պատին:

Ըստ էության, «մեր պաշտպանվածությունը անպաշտպանվածության մեջ է» իշխանությունների կառավարման կոնցեպցիայի աղետալից հետևանքները զգացվում են Հայաստանի ներքին կյանքի բոլոր ոլորտներում:

Այսպիսով, անկախության առաջին տարվա հետ բոլորեցին նաև մեր ժողովրդի տառապանքները: Իսկ ի՞նչ է սպասում մեր ժողովրդին վաղը...

Թիվ 38, սեպտեմբեր

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ՞Ն, ԹԵ՞ԱԶԳԻՆ

1992 թ. սեպտեմբերի 23-ին լրացավ Հայաստանի Հանրապետության հռչակած անկախության մեկ տարին: Քաղաքական առումով տարօրինակն այն է, որ «ազատ ու հպարտ» Հայաստանի կնքահայրը՝ հանրապետության նախագահը հանդիսությամբ չի

ներկայացնելու «բոլոր ուղղություններով գերազանց արդյունքներ»-ը: Հենց նույն օրը նա ելույթ ունեցավ ՄԱԿ-ի ամբիոնից:

Մենք հասկանալ կարող ենք բոլոր այն մարդկանց, որոնք պիտի առարկեն. իսկ ի՞նչ անընդունելի կամ պախարակելի բան կա այստեղ: Ոչ մի, եթե մինչ այդ կամ այդ օրը նա կամ նրա փոխանորդը հանդես գային հարազատ ժողովրդի առջև անցած մեկ տարվա քաղաքական հաշվետվությամբ և ապագայի նախագծումներով՝ գոտեպնդելով նրան այս ծանր, պատերազմական ժամանակներում:

Բայց քանի որ տոնական ուրախ առիթով լավ, անգամ բարոյական բան չկա ասելու, ապա անտեսվում է Երևանում հանդիսության կարևորությունը:

Իսկ Նյու Յորքում նրանից հաց չեն ուզում, ազգային բանակ չեն ուզում, մաֆիայի դեմ պայքար չեն ուզում:

Այնտեղ՝ Հայաստանում չապրողները, կամ Հայաստանից ճողոպրածները ցանկանում են բավարարել, հագուրդ տալ իրենց հայրենասիրական սիմվոլիկ զգացմունքներին՝ տեսնելու և հյուրանոցների շքեղ սրահներում պատվելու «ազատ ու հպարտ» Հայաստանի նախագահին: Առավել ևս, որ նախագահի մակարդակով Հայաստանն առաջին անգամ է ներկայացվում ՄԱԿ-ում: Իսկ նախագահին ի՞նչ է մնում. պատասխան տալու կամ պատասխանատվություն կրելու փոխարեն արժանանալ հարգանք-պատվի: Իսկ ի՞նչ վատ է, նույնիսկ լավ է, անգամ գերազանց...

Ելույթ ունենալով Նյու Յորքի օդանավակայանում (սեպտեմբերի 20-ին), պարոն նախագահը առանձնացրեց այն արժեքները, որոնք ներկայացվելու են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մասնակիցներին: Դրանք են՝ ժողովրդավարությունը, շուկայական տնտեսությունը և արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը: Իսկ ո՞ւր է մեր ազգային գլխավոր խնդիրը՝ Արցախի փրկությունը, ապա ագրեսորի դատապարտումը և, վերջապես, ազգային անվտանգության ապահովումը:

Ակամա մտածում ես. ո՞վ է հեղինակը՝ Արևմուտքի հայտարարած քաղաքական արժեքների քարոզիչ-պաշտպա՞նը, թե՞ մարտընչող ազգի ղեկավար-ներկայացուցիչը, որին հնարավորություն է ընձեռված պաշտպանելու իր ժողովրդի դատը...

Ինչևիցե, ՀՀ հռչակված անկախության առաջին տարին էլ նշեցինք առանց նախագահի. գուցե սա ավելի քան խորհրդանշական է երկրի ապագայի համար: Տա Աստված, որ գոնե չկրկնվի նույնը, ինչը եղավ նրա նախորդ բացակայության ընթացքում:

Թիվ 39, սեպտեմբեր

«ԱԶԱՏԱՄԱՐՏԸ» ԻՐ ԽՂՃԻ ԴԵՄ ՉԻ՛ ԳՆԱՑԵԼ, ՉԻ՛ ԳՆՈՒՄ ԵՎ ՉԻ՛ ԳՆԱ

Ի՞նչն ամենից շատ դուր չի գալիս մեր ընդդիմախոս հայրենակիցներին, որոնք երևի թե առանց հայացք ձգելու «Ազատամարտի» ասածներին և կամ չխորանալով դրանց էության մեջ, լուտանքներ են նետում թերթի հասցեին: Ի՞նչն է ավելի շատ վրդովեցնում նրանց Հայաստանի այսօրվա իրական վիճակը ներկայացնող հոդվածներում, որոնց կարծիքով բնորոշ են առողջ քննադատությունն ու տրամաբանորեն փաստարկվող առաջարկները: Վերլուծելով թերթի նկատմամբ դրսևորված չարության արմատները՝ գալիս ես այն եզրահանգման, որ պատճառը «Ազատամարտի» բարոյական դավանանքն է, ճերմակը՝ ճերմակ, սևը՝ սև տեսնելու և երևույթներն իրենց անուններով կոչելու հիմնադրման օրից որդեգրած սկզբունքայնությունը: Առաջին հերթին հենց ա՛յս պարագան է, որ մեր ընդդիմախոսներին հանում է հավասարակշռությունից և նետում անկառավարելի զայրույթի գիրկը:

Մեզ մեղադրում են՝ «Չկարողացաք խելամիտ մարդկանց համակրանքը շահել»: Այո՛, քանզի չմոռացանք ոմանց պես խիղճ կոչվածը գրասեղանի գզրոցում, չսիրաշահեցինք նորընծա պաշտոնյաներին, որպեսզի տաքուկ տեղավորվելով նրանց թևերի տակ, կործանվող Հայրենիքին նայել սկսենք ալպիական մանուշակի

թերթիկներում ճոճվող բզեզի աչքերով: Նման քաղցրմեղցր «պատիվը» և իշխանատենչությունը չեն, որ առաջնորդում են «Ազատամարտին», այլ հայ մարդու՝ դաշնակցականի խիղճը: Ա՛յս է ճշմարտությունը: Թերթեցեք «Ազատամարտի» էջերը և լույսն ու խավարը այնտեղ կտեսնեք այնչափ, որչափ դրանք կան մեր իրականության մեջ:

Զուր են ձեր ջանքերը: Օղակի մեջ առնելով «Ազատամարտին», չե՛ք կարող լռեցնել նրա ձայնը և կամ պարտադրել վարդագույն ակնոց: «Ազատամարտը» իր խղճին երբեք դեմ չի՛ գնացել, չի՛ գնում և չի՛ գնա:

Թիվ 40, հոկտեմբեր

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ

Գիտությունը և բիզնեսը ժամանակակից քաղաքական զարգացման գլխավոր լծակներն են: Եվ յուրաքանչյուր երկիր կամ պետություն ձգտում է հասնել դրանց ներքին համադրմանը, բայց ոչ երբեք հակադրությանը:

Իսկ ինչպիսին է իրավիճակը մեզ մոտ, Հայաստանում, որի համար գիտությունը և բիզնեսը ունեն կենսական նշանակություն: Պատկերը, մեղմ ասած, մխիթարական չէ: Քաղաքական նպատակներով հոգ տանելով բիզնեսի մասին (ժողովրդի ուշադրությունը շեղել քաղաքական կյանքից), ընդհուպ մինչև փողոցային սպեկուլյացիան, ներկա իշխանությունները աչքաթող արեցին գիտությունը:

Ճակատագրական սխալ է:

Այսօր ազգի հզորությունը պայմանավորված է ոչ թե առևտրական կամ վաշխառուական բիզնեսով, այլ՝ գիտությամբ: Որքան էլ պարադոքսալ թվա, բայց ամբողջատիրական Խորհրդային Միության կազմում գտնվող Հայաստանում ստեղծվել էր գիտական լուրջ կարողություն, որը, վերջին երկու տարում խելացի օգտագործելու դեպքում, կարող էր մեծ արդյունք տալ ազգային անվտան-

գության ասպարեզում: Սակայն դա տեղի չունեցավ, ինչպես տեղի չունեցավ ազգային բանակի ստեղծումը: Փոխարենը նվազագույնի հասցվեց գիտության ֆինանսավորումը, միաժամանակ պայմաններ ստեղծվեցին առևտրական ու վաշխառուական բիզնեսի արմատավորման համար: Մինչդեռ հարկավոր էր զարկ տալ հենց գիտությանը, դրա հիման վրա առաջին պլան մղել արտադրական բիզնեսը և հասնել դրական տեղաշարժերի:

Այսօր գիտությունը ստրկացած վիճակում է, ծաղկում է գիտության հետ կապ չունեցող բիզնեսը: Արդյունքում հարստանում են ազգի ոչ մտավորական խավերը, ոչ մի օգուտ չբերելով Հայոց պետականությանը: Անհատների կամ նորաթուխ ֆինանսական խմբավորումների հետագա հարստացումը դեռ պետության հզորացում չի նշանակում:

Գիտության կարևորության գիտակցումը դեռ կգա, բայց արդեն կորցրած կլինենք այն զարգացնելու իրական հնարավորությունները: Գիտության ապակազմակերպման հարցում ևս նոր իշխանությունները պատասխանատվություն են կրում ազգի առջև:

Թիվ 41, հոկտեմբեր

ԻՇԽԵ՞Լ, ԹԵ՞ ԿԱՌԱՎԱՐԵԼ

1991 թ. հոկտեմբերի 16-ին նկատելի ոգևորությամբ ընտրեցինք Հայաստանի Հանրապետության առաջին նախագահին, որը նոյեմբերի 11-ին երդվեց լինել «սահմանադրության (գոյություն չունեցող) և օրենքների պաշտպանության, անկախության ու ժողովրդավարության, քաղաքացիների ապահովության երաշխավոր»:

Գեղեցիկ խոսքեր, բայց անցած մեկ տարվա իրողությունը բոլորովին այլ բան է ասում: Չկա ոչ ընկերային և ոչ էլ ազգային պաշտպանվածություն: Հասարակության մութ ուժերը, օգտվելով գիտակցված թողտվությունից և տիրելով տնտեսական լծակներին, ճնշիչ մթնոլորտ են ստեղծել ազգի համար: Արտաքին թշնամին էլ

օգտվելով մեր ընդհանուր կրավորական դիրքորոշումից, առիթը բաց չէր թողնում մեզ մեր բնօրրանից հանելու համար:

Նախագահը չդարձավ ընկերային ու ազգային անվտանգության երաշխավոր և չէր էլ կարող դառնալ: Խնդիրը անձը չէ (չնայած անձն էլ երկրորդական չէ), այլ՝ նախագահական այն համակարգը, որը դրսից, այսինքն՝ արհեստականորեն ներդրվեց Հայաստանում: Ասել է՝ մի համակարգ, որը գիտակցաբար ոչ թե կառավարում է, այլ՝ իշխում: Մտածված ստեղծվեց մի իրավիճակ, երբ նախագահը և նրա ապարատը պատասխանատվություն չեն կրում գործերի իրական ընթացքի համար... Բայց չէ՞ որ այդպիսին էր նաև կոմունիստական իշխանությունը, երբ կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարը միայն որոշումներ էր կայացնում և երբեք չէր պատժվում դրանց ձախողման կամ տապալման համար:

Նախագահը պետք է ունենա ոչ միայն իշխելու իրավունք, այլև՝ հաշվետու լինելու պատասխանատվություն: Դա հնարավոր է, երբ պետական իշխանությունը սահմանադրորեն հակակշռվում է խորհրդարանի կողմից: Մինչդեռ այսօրվա նախագահական համակարգը կտրված է խորհրդարանից, վեր է կանգնած և զսպում է նրան: Իսկ նախագահն էլ բազմիցս հայտարարում է, որ ԳԽ-ն պետք է զբաղվի միայն ու միայն օրենքներ ընդունելով: Սա պարզապես նշանակում է, որ քաղաքական իշխանության մենաշնորհը մնում է նախագահին:

Կառավարման ոլորտից դուրս գտնվող և իշխելու ոլորտում մեկուսացած նախագահական այդ համակարգի գլխավոր հոգսը մնում է սեփական իշխանության ամրապնդումը: Այստեղից էլ ընդդիմության քարկոծումը և ոչ թե նրա հետ միասին Հայրենիք փրկելու ցանկությունը: Իշխանությո՞ւն, թե՞ Հայրենիք. այս է խնդիրը: Հայրենիքը խանգարում է «ազատ ու հպարտ» իշխելու համար: Բայց սա էլ է քաղաքականություն:

Ու, թերևս, ժամանակն է, որ մեր ժողովուրդն այս ամենը լավ ըմբռնի:

Թիվ 42, հոկտեմբեր

ՄԻԱՅՆ ԻՇԽԵԼԸ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ Է

Որպես չգրված օրենք, երբ հասարակական կյանքում տեղի է ունենում իշխանությունների փոփոխություն, անհրաժեշտաբար նոր ղեկավարությունը անպայման կատարում է այնպիսի քայլեր, որոնք էապես տարբերվում են նախորդների թե՛ գործելակերպից, թե՛ վարվելակերպից և թե՛ բարոյական վերաբերմունքից: Այսինքն, հասարակական բոլոր շահերի համար ակնհայտորեն տեսանելի է դառնում այն իրողությունը, որ նոր իշխանությունները պետք է իրականացնեն քաղաքական, տնտեսական իրավական միջոցառումների այնպիսի ծրագիր, որի շնորհիվ համակողմանիորեն կհիմնավորվի կառավարման համակարգի փոփոխության անհրաժեշտությունը:

Ճիշտ նման սպասում և կոնկրետ ակնկալիքներ ուներ ժողովուրդը համայնավարների տապալումից հետո իշխանության գլուխ եկած քաղաքական ուժից՝ ՀՀՇ-ից: Սակայն ժողովրդի հույսերը նոր իշխանությունները չարդարացրեցին: Իսկ թե ինչո՞ւ նրանք չարդարացրեցին իրենց բազում տառապանքներով փայփայած հույսերը, ժողովուրդն առայժմ այդ հարցին պատասխանում է հուսահատությամբ և ամեն ինչի նկատմամբ բացարձակ անտարբերությամբ:

Յոթ տասնամյակ շարունակ կոմունիստական վարչակարգը բառիս բուն իմաստով իշխում էր ժողովրդի վրա և ոչ թե ծառայում նրան: Հարցը հարկավոր է հստակ դնել՝ ներկա իշխանությունները ծառայո՞ւմ են ժողովրդին, թե՞ ժողովուրդն է ծառայում իշխանություններին: Կարծում ենք՝ երկմտելու կարիք ու առիթ չկա, քանի որ վերը նշված հարցի պատասխանը ավելի քան ակնհայտ է, այն է՝ ժողովուրդը ծառայում է իշխանություններին:

Բանն այն է, որ եթե ՀՀՇ-ն ժողովրդին տված իր բազմաթիվ խոստումներից գոնե մի քանիսն իրագործեր, ապա գուցե (հատկապես արմատական հարցերի առնչությամբ) որոշակի փոփոխու-

թյուն կնկատվեր ամենատարբեր խավերի կյանքում, մի բան, որն այդպես էլ տեղի չունեցավ:

Շարունակելով նախորդ վարչահրամայական համակարգի քաղաքական «պանծալի» ավանդույթները, ներկա իշխանությունները եկան այնպիսի եզրակացության, որ «ամենաարմատական փոփոխությունները»... ոչինչ չփոխելն է: Այլ կերպ, չկարողանալով շրջափակումների և ապաշնորհ կադրերի պատճառով կաթվածահար երկիրը կառավարել, որոշեցին իշխել և ոչ թե քաղաքակիրթ ձևերով կառավարել ժողովրդին:

Հույս ունենանք, որ իշխանությունները գոնե մոտ ժամանակներս խորությամբ կըմբռնեն իշխելու և կառավարելու էական տարբերությունները...

Թիվ 43, հոկտեմբեր

ԱՅՍՕՐ, ԻՍԿ ՎԱ՞ՂԸ

Այսօր հանրապետությունում տիրող իրավիճակը որպես ճգնաժամային բնութագրելը անիմաստ է հնչում: Մտահոգիչն այն է, որ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում խորացող փլուզման հետևում ամենևին նկատելի չեն պետական քաղաքականության նույնիսկ հետքերը: Պետական կառավարման մեքենան ղեկը կորցրածի պես տեղապտույտ է տալիս և միայն որպես դասական վարչահրամայական համակարգ՝ ինքնավերարտադրման փորձեր է կատարում, իրենից դուրս վանելով ինքնուրույն գործելու ընդունակ տարրերին և համալրվելով միակ հրամանին ենթարկվողներով: Ընդ որում, չի ապահովված պետականորեն իրականացվելիք և իրականացվող քայլերի նախօրոք մշակված ու ժողովրդին ներկայացված նույնիսկ ծրագրային (իմա՝ թղթային) կողմը: Ինքնիշխանության և ինքնավստահության ինչպիսի՜ օրինակ: Իսկ գուցե կառավարման «վահանակը» դո՞ւրս է մեր իշխանությունների ազդեցության ոլորտից:

Տնտեսական քաղաքականության ոլորտում «ազգային գործուն ու կրթված բուրժուազիայի» աճեցման փորձը ձախողվեց: Մասնավոր ձեռնարկատիրության ձևավորվող սաղմերը հոգեվարք են ապրում: Հանրապետությունը լքում են իրապես գործարար մարդիկ: Բացակայում է նրանց գործունեության համար անհրաժեշտ իրավական և օրենսդրական դաշտը, պետական օժանդակության փոխարեն ծաղկում են կաշառակերությունն ու բյուրոկրատական քաշքշուկը: Եթե արտադրական ձեռնարկությունների համար խոչընդոտը պարբերաբար կրկնվող շրջափակումներն էին, ապա առևտրային գործարքների հաջողության հիմնական խանգարիչը հանրապետության ներքին պայմաններն են, որոնցում տնօրինողները տեղական մաֆիոզ խմբավորումներն են: Բանկային-դրամական համակարգի ինքնուրույնությունն էլ խափանվում է Մոսկվայի կողմից թելադրվող քաղաքականությամբ: Արտաքին տնտեսական կապերում հաճախ կողմնորոշվելով կոպիտ քաղաքական հաշվարկներով, տնտեսական նպատակահարմարությունը փոխարինվում է անհեռատես քաղաքական զիջումներով: Օրինակ, Իրանից ապրանքափոխանակության ուղիներով հացահատիկի ձեռք բերման փոխշահավետ տարբերակը ստորադասվեց Թուրքիայից այն ստանալու գործարքով:

Եվ դեռևս հայտնի չէ, թե երբ այդ հացահատիկը Հայաստան կհասնի և ինչով է վճարվելու դրա դիմաց: Արտաքին վարկային քաղաքականության մեջ էլ ըստ երևույթին անիմաստ է մտածված տնտեսական հաշվարկներ փնտրելը: Վերջերս նման մի գործարքի մութ կողմերը նույնիսկ խորհրդարանական քննարկման նյութ դարձան: Միջազգային վարկային կազմակերպությունների խորհուրդներին լուռ ու մունջ հետևող մեր իշխանությունների մարտավարությունն էլ տնտեսության ոչ թե զարգացման, այլ կախվածության նշաններ է պարունակում:

Այս ամենը՝ այսօր: Իսկ վաղը մենք կարող ենք ունենալ ապազգային հոգեբանությամբ, համազգային գերխնդիրների գոյամարտում տանուլ տված մի ժողովուրդ, ազգային տնտեսության փոխա-

ռեն՝ արտաքին պարտքերով ծանրաբեռնված, կիսակախյալ մի պետություն:

Թիվ 44, նոյեմբեր

ԲՈԼՈՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՆ, ՉԻ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ՈՉ ՈՔ

Երկրի անկառավարելի «կառավարման» պատճառով խախտվել է նյութական և բարոյական արժեքների հարաբերակցությունը բոլոր ոլորտներում և ընկերային բոլոր մակարդակներում:

Բանը հասել է նրան, որ այնտեղ, ուր ավանդաբար իշխել են հիմնականում բարոյական արժեքները, այսօր նյութականի գերակշռող գործոնը ավերածություններ է գործում: Սեփականաշնորհման «պատմական գործընթացները» իրականացնող իշխանությունները աստիճանաբար ձևավորում և հիմքն են դնում մի քաղաքականության, որը «չի հանդուրժում» աշխատանքի բաժանման այն սկզբունքը, ըստ որի ամեն մեկը պետք է զբաղվի իր գործով: Որ մտավոր աշխատանքի բազմաթիվ մշակներ մի կերպ ֆիզիկական գոյությունը պահպանելու նպատակով և կյանքի պարտադրանքով «խլել» են կոշկակարի մասնագիտությունը, ինչպես երևում է, իշխանություններին այնքան էլ չի հուզում: Որ գյուղացին իրեն սեփականաշնորհված հողից ստացած բերք ու բարիքը ծառայեցնում է միայն այսօրվա կարիքները հոգալու համար և ֆերմեր դառնալու հեռավոր նպատակ իսկ չունի, նույնպես չի մտահոգում մեր կառավարողներին:

Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանզի նման քաղաքականություն իրականացնող «պրոֆեսիոնալ»-ներից շատ շատերը իրենց տեղում չեն, և գործում է հետևյալ սկզբունքը. «Բոլորը կառավարում են, չի կառավարվում ոչ ոք»: «Ինքն իրեն» կառավարող հասարակության մտահոգության հիմնական առարկան դարձել է մեկը՝ հանապազօրյա հացի հայթայթումը...

Այսքանից հետո, երբ ընչաքաղցության բացիլը օր-օրի իր համար նորանոր տարածքներ է նվաճում, երբ ազգի բարոյական արժեքները թափոնների նման դուրս են շպրտվում փողոց և կորստի ու ցավի նշույլ անգամ չկա դրանց նկատմամբ, այս պայմաններում հնարավոր չէ դեռևս բարուրի մեջ գտնվող ազգային անկախ պետության հիմքերն ամրապնդել:

Առանց ազգային արմատների կենսահյութով սնվելու հնարավորությունների ստեղծման ազգ չեն պահում: Առանց վաղվա հեռանկարի ու ապագայի համար հոգածության, միայն այսրոպեական խնդիրների լուծման փութկոտությամբ երկիր չեն պահում:

Թիվ 45, նոյեմբեր

ԱՆԳԱՂԱՓԱՐ ՈՒ ԱՆԾՐԱԳԻՐ

Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց տնտեսական ու հոգևոր ճգնաժամի մեջ, որն օրավուր ավելի է խորանում: Պատճառները բազմաթիվ են: Առանձնապես բացասական դեր խաղաց իշխանության հասածների գաղափարախոսական ձեռնածությունը, ինչը ժողովրդի մեջ փշրեց հավատը առաջադիմության և ազատության նկատմամբ և նրան մղեց նյութամոլության և ինքնապարփակման: Իշխանավորների հանդեպ ունեցած կույր հավատը այսօր վերափոխվել է կույր անհավատության: Հայաստանի ներկայիս վարիչները մնացել են անգաղափար և չունեն հեռանկարային զարգացման որևէ ծրագիր:

Ամեն մի բնականոն համակարգ կենդանություն է ստանում իր ներսում առկա հակասական ուժերի պայքարից: Եվ այս պայքարն է գոյավորում զարգացումն ու առաջադիմությունը: Սակայն չգիտես ինչու և ում մեղքով, Հայաստանում ներկայումս թյուր պատկերացում է առաջացել ազգային միասնության վերաբերյալ: Միասնությունն ըմբռնվում է վերացականորեն, որպես բոլորի անբովանդակ համաձայնությունը բոլորի հետ:

Հենց այս հիմքի վրա էլ ստեղծվել է ՀՀ նախագահի անփոխարինելիության և միակ արժանավորի առասպելը: Նորօրյա այս կռապաշտությունը սազական է տոհմատիրական հանրույթին:

Ինքը՝ նախագահը, եթե մտահոգված է երկրի բախտով, պետք է ոչ թե շարունակական խոցումներ անի ընդդիմությանը, այլ նպաստի վերջինիս ուժեղացմանը, որպեսզի ազնիվ մրցակցությունը ազգօգուտ պտուղներ տա: Այլապես, միասնության, միաբանության, խաղաղության աշուղական խաղերին կուրորեն հետևելը մեզ կտանի անխուսափելի կործանման, ինչի մեղավորը կլինենք բոլորս՝ յուրաքանչյուրս մեր դիրքի, պաշտոնի և գիտակցության չափով:

Թիվ 46, նոյեմբեր

Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

«Մեր ամենակարևոր ձեռքբերումը Հայաստանի ներքին կայունությունն է», վստահեցնում է հանրապետության նախագահը: Այսինքն, Հայաստանի ներքին ընկերային-քաղաքական իրավիճակի կայունությունը, համեմատած նախկին Խորհրդային Միության հանրապետությունների և, նամանավանդ, մեր երկու անմիջական հարևանների հետ:

Ճիշտ է, նախագահական մեկ տարվա ընթացքում Հայաստանում շատ խոր ներքին ցնցումներ չեն եղել, իշխանության համար մղվող պայքարի հետևանքով «հսկայական զոհեր, չափազանց մեծ հոգեբանական պարտություն և տարածքային կորուստներ», ինչպես Ադրբեջանում, չեն եղել, եթե, իհարկե, չհաշվենք Արծվաշենը, եթե մեր կորուստները մերը չհամարենք, եթե ԼՂՀ անկախության չճանաչելը և պատերազմի հիստերիայի կանխումը արժևորենք որպես կարևոր նվաճումներ:

Ճիշտ է, հանրապետության ներքին կյանքի կայունությունը ձեռք է բերվել առաջին հերթին ի պատիվ մեր ժողովրդի զգոնու-

թյան ու նաև ի պատիվ ընդդիմության, որը չի դիմել ծայրահեղ միջոցների, ինչպես արդարորեն նշում է նախագահը: Իսկ ի պատիվ իշխանությա՞ն: Ի՞նչ է արել իշխանությունը կամ ի՞նչ չի արել՝ հանուն ներքին կայունության ապահովման, հանուն բարոյական և հոգեբանական ցնցազերծման: Թույլ է տվել, որ ժողովուրդը չընդվզի՞, ըմբոնողությո՞ւն հանդես բերի, գլուխը քարին ու քարը գլխին չտա՞... Թույլ է տվել, որ ընդդիմությունը ծայրահեղ միջոցների չդիմի՞ (շնորհակալություն ՀՅԴ-ական կողմից): Ո՞րն է ուրեմն իշխանության «ի պատիվը»: Ի՞նչ է արել իշխանությունը նվաճելու այդ բաղձալի ներքին կայունությունը, որը չգիտես ում է պահում ու կերակրում և ինչի հաշվին:

Հանրապետության ընկերային-քաղաքական իրավիճակի կայունությունը, անշուշտ, նշանակում է նաև իրավիճակի կառավարելիություն, նշանակում է կառավարությունից գոնե մի քիչ գոհ ու շնորհակալ ենք: Այդպե՞ս է արդյոք: Ո՞րն է կառավարության «քրտնաջան, գիշեր-ցերեկվա աշխատանքի» արգասիքը: Լավ կլիներ այդ մասին իմանալ նաև ժողովրդի կարծիքը: Եվ ոչ միայն այդ մասին: Առհասարակ բոլոր ձեռքբերումների, բոլոր կարևոր ու շատ կարևոր նվաճումների ու արժեքների մասին:

Թիվ 47, նոյեմբեր

ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ՉԿԱ

Մտավորականության դերի ու կոչման վերաբերյալ ավելի հաճախական են դարձել զրույցները, բանավեճերը, հրապարակումները: Սա նշանակում է, որ ինչ-որ բան, մեղմ ասած, խաթարված է, հղի ցավագին հետևանքներով, որը մտահոգիչ ծանրությամբ կախվել է մեր ժողովրդի և առաջին հերթին բուն իր՝ մտավորականության խղճի վրա:

Եվ այս մտահոգությունը համակել է բոլոր խավերին ու կազմակերպություններին, բացի իշխանություններից ու կառավարությունից: Եվ դա հասկանալի է: Սակայն տարօրինակն ու ցավալին այն է, որ հենց ինքը՝ մտավորականությունը բավարար չափով ջանք ու

եռանդ չի գործադրում վերագտնելու իր դեմքը, ստանձնելու իր դերը, պաշտպանելու իր կոչումը:

Ստեղծված իրավիճակը բնականորեն, ինքնաբերաբար չի առաջացել, այն հետևանք է քաղաքական պայքարի, որը ունի որոշակի նպատակաուղղվածություն: Վերջին շրջանում մտավորականության ջանքերը՝ համախմբելու, միաբանելու և կազմակերպելու, անցան ապարդյուն: Մտավորականությունը մնում է նույն կրավորական վիճակում, այն դեպքում, երբ ինքը կոչված է լինելու հիմնական գործոն ուժն ու առաջնորդը ազգի քաղաքական, տնտեսական, հոգևոր ու պաշտպանական ասպարեզներում, ոգեշնչողն ու առաջամարտիկը հանուն առաջադիմության: Մտավորականության մասնակցությունը վերոնշյալ մարզերում աննշան է: Նույնիսկ հոգևոր մշակույթը, որը ստեղծվում է բացառապես մտավորականության ջանքերով, այսօր ավանդույթներին համապատասխան արժեքներ չի տալիս, չկան լուրջ տեղաշարժեր: Բանը հասել է այնտեղ, որ տաղանդավոր և մեծ հույսեր ներշնչող որոշ հայտնի մտավորականներ այսօր պալատական աշուղների նման դարձել են ապազգային իշխանությունների գովերգողն ու ջատագովը:

Էլ ո՞ւր մնաց Խորենացու, Վարդանի, Եղիշեի, մեր նահատակ մտավորականության կենդանարար ոգին: Մի՞թե մտավորական մարդը կարող է ապրել օգտատենչ խնդիրներով ու հոգսերով և իրեն շարունակ դիտել որպես այդպիսին: Փոքրաթիվ ժողովրդի համար չկան մեծ ու փոքր պատերազմներ: Ամեն մի պատերազմ կարող է վերջինը լինել, լինել ազգակործան, եթե չի գիտակցված հարատև պայքարի իրողությունը, եթե կորսված է զոհաբերության կամքը և համազգային անանց շահերի գիտակցումը: Մտավորականությունը, ինչքան էլ դժվար լինի, պետք է ցնցի իրեն, թափ տա իր վրայից նյութապաշտության ու փոքրոգության փոշին և նետվի դեպի կռիվ:

Դեպի հերոսացում:

Ազգային կյանքի այլ ճանապարհ չկա:

Թիվ 48, նոյեմբեր

Ո՞ՒՐ ԿՀԱՄՆԵՆՔ ՄԻԱՅՆ ՍԵՓԱԿԱՆ ՈՏՔԵՐԻՆ ԱՊԱՎԻՆԱԾ

Ժողովուրդն իզուր չի ասում՝ կարկուտը ծեծված տեղն է ծեծում: Կարծես թե այս ամենը քիչ էր, ձյունն էլ եկավ՝ պակաս տեղ չթողնելու: Սնունդ չկա, վառելիք չկա, էլեկտրաէներգիա չկա, փոխադրամիջոց չկա, աշխատանք չկա... Ավելի հեշտ կլինի ասել, թե ինչ կա: Սակայն դա էլ վիճելի կլինի, որովհետև առկան շատ հարաբերական է: Այսօրվա եղածը բոլորը չէ, որ ունեն, և վաղը կարող է բոլորովին չլինել: Թերևս մի բան անառարկելի է՝ անիշխանությունը, որ նույն է՝ անտերությունը, անօրինությունը, անբարոյականությունը...

Որքան էլ փորձենք հասկանալ, ըմբռնել, միևնույն է, ոչինչ չի փոխվի, որովհետև հասկացողությունն ու ըմբռնողությունը ավանակներ չեն, որ նստես ու քշես: Այս ի՞նչ է տեղի ունենում, ո՞ւր ենք գնում այսպես աննպատակ, անառագաստ ու անհույս:

Չի կարելի ասել, թե քաղխորհուրդը իր փառապանծ նախագահով չգիտեր, թե ինչ վիճակում է Երևանը, չգիտեր, թե ինչ կլինի, եթե անժամանակ ձյուն տեղա: Մարդիկ երեք թե նույնիսկ չորս անգամ ժողով էին արել, մեծ կրքոտությամբ խոսել էին ձմռանը նախապատրաստվելու մասին: Այդքանը հերիք չի՞: Ժողովրդին, բացառյալ իշխանությունների հայտնաբերած հայ «ազնվականությանը» և «ազնիվ ծագում» ու դեր ունեցող մյուսներին (սրանք, որ միշտ իրենց «մերսեդեսներով» և նման այլ մեքենաներով են, ով գիտի, միգուցե հայ ժողովրդի թվի ու կազմի մեջ չեն մտնում), մի ելք էր մնում՝ ապավինել սեփական ոտքերին... Եվ սկսվեց հայ ժողովրդի հետիոտն անվախճան երթը Երևանի բոլոր փողոցներով... Դա երթ չէր, դա հրեաների ելքն էր Եգիպտոսից... Մեր ու մանուկ, մեծ ու փոքր, ուսանող և դասախոս, հիվանդ ու առողջ խառնվել-հավասարվել էին իրար: Ժողովուրդը հոսում էր Նորքի զանգվածից, Հաղթանակի զբոսայգուց, Կոմիտաս-Բաղրամյան փողոցներից, բոլոր կողմերից դեպի կենտրոն: Թվում էր, վերադարձել էին այն երանե-

լի, համաժողովրդական հրճվանքի ժամանակները, երբ մարդիկ, ի նշան ըմբոստության, գերադասում էին ոտքով, քան փոխադրամիջոցներով հասնել քաղաքի կենտրոն, ցույցի դուրս գալ Ղարաբաղի ազատագրման, «Նաիրիտն» ու ատոմակայանը փակելու, գենոցիդը ճանաչել տալու համար, և «Ղարաբաղ» կոմիտեի հետ միաձայն ժամերով վանկարկելու՝ «Պայքար, պայքար մինչև վերջ»...

Բայց, ավա՜ղ, այլևս դա նույն ժողովուրդը չէ: Նրան այլևս չի հուզում պայքարն ու հաղթանակը: Նա պարզապես գոյություն է քարշ տալիս՝ ապավինած սեփական ոտքերին ու թերևս միայն ոտքերին... Այնպես որ, մի սպասեք, թե ահա կսեղմվեն բռունցքները... Ո՛չ, ներքին կայունության երաշխիքներ դեռ կան: Եվ դա երաշխավորում է նույնիսկ ինքը՝ ընդդիմությունը, ի դեպ, դարձյալ ըմբռնողությամբ:

Թիվ 49, դեկտեմբեր

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԸ

ՀՀԾ վարչությունը և ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորական խմբակցությունը օրերս հանդես եկան հայտարարությամբ, որին «անհամբեր» սպասում էր ողջ հայ ժողովուրդը, թե՛ հայրենաբնակ, թե՛ ի սփյուռս աշխարհի: Դժվար չէ պատկերացնել, թե այն ինչ զգացումներ է առաջացրել մեր անկախ ու հպարտ հոգիներում և հայրենաբաղձ սրտերում: Եվ սակայն, ՀՀԾ այդ հայտարարությանը չէ, որ սպասում էր հայ ժողովուրդը, այլ՝ լուծարման: Եվ դա քաջ գիտի նաև ինքը ՀՀԾ-ն և, ըստ էության, հենց այդ գիտակցմամբ էլ թելադրված է կանխարգելիչ թե ապահովական սույն հայտարարությունը, որի գլխավոր հաստատումը հանրապետության «ծանր ու ծայրահեղ լարված ընկերային-տնտեսական վիճակն է», բայց ո՛չ քաղաքական: Այդ արդեն խոստովանության սահմանագծի խախտում կլիներ և պատասխանատվության հանձնառում՝ ստեղծված իրավիճակի համար: Ու կարևոր չէ՝ հանրային գիտակցության մե՞ջ, թե՞ դատարանի առջև:

Կարելի է քննադատել իշխանությունների չհամագործակցված, անարդյունավետ գործունեությունը, Գերագույն խորհրդի անպտուղ ու անիմաստ դեգերումները, կառավարության՝ հացամատակարարման, նավթամթերքների, ուժանյութի հայթայթման ու բաշխման, փոխադրամիջոցների աշխատանքի կազմակերպման անճարակությունը, որն ակնհայտ է ու ակնբախ: (Իսկ եթե այդ ամենը քաղաքականությո՞ւն է, որի մասին լռում են հայտարարության հեղինակները): Այլ խոսքով, կարելի է քննադատել այն, ինչը անհնարին է թաքցնել, մանավանդ որ, նույնիսկ այդ դեպքում, կգտնվեր չքմեղանալու միջոց՝ «ՀՀԾ-ն չի ձգտել ազդելու գործադիր իշխանության ձևավորման վրա, որը կիրագործեր նրա ծրագրերը և իր հետ միասին կկիսեր պատասխանատվությունը ժողովրդի առջև»: ՀՀԾ-ն իր ճերմակ փետուրները չէր ուզենա մրոտել՝ ձգտելով ազդել իր իսկ իշխանության ձևավորման վրա: Հիմա պատկերացրեք, թե ինչ է հայտնելու նրա հաջորդ և, կարծում ենք, վերջին հայտարարությունը: Մի՛ սպասեք անկեղծ զղջման, այդ չի՛ լինի: Ընդհակառակը, կփորձեն մեղադրել ընդդիմությանը, որն իբրև թե, թույլ չի տվել հանրապետության կառավարությանն ու իշխանությանը ամրապնդելու հայոց պետականությունը...

Եվ, վերջապես, գլխավորը. ՀՀԾ-ն անհրաժեշտ լծակներ է հայցում հանրապետության նախագահից՝ ստանձնելու «հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտների կարգավորման խնդիրը»: Ո՛չ, ՀՀԾ-ն ուզում է ժամանակ շահել, մի փոքր էլ հետաձգել վերջին հայտարարությունը:

Ի՞նչ է մնում անել ստեղծված իրավիճակում: Ըստ հայտարարության՝ ...ակնկալել հանրապետության նախագահից: Ըստ մեզ՝ պահանջել հրաժարական:

Թիվ 50, դեկտեմբեր

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ՝ ՀԻՄԱ ԷԼ ԾՐԱԳԻՐ ՉՈՒՆԵՆՔ

Սկզբից ևեթ ասենք, որ ԳԽ այդ շաբաթվա եռօրյա նիստերում, հուրախություն լրագրողների, ծեծկռտուք չեղավ, նույնիսկ երբ խոսք գնաց ՆԳ նախարարության չարաբաստիկ 141 միլիոնի մասին: Վանո Սիրադեղյանը այս անգամ է՛լ ավելի ոճավորված մի ելույթ ունեցավ, որի գլխավոր ենթատեքստը «լավ եմ արել»-ն էր և որ «եթե հանրապետությունում լիներ այդ գործն անողը (իմա՝ դրամ հավաքողը), նախարարությունը այդ գործով չէր զբաղվի»:

ԱԺՄ-ին անվանելով «պուճուր, նենգ, լկստված» փոքր եղբայր, որին երբեմն-երբեմն օգտակար է դասեր տալը, նախարարը խոսեց ԱԺՄ-ի անդամներից մեկ-երկուսի կողմից ծավալված ինչ-որ դրամական գործարքների մասին (14 միլիոն): Նա խոստացավ, որ այդ հարցով իր նախարարության 6-րդ բաժինը կզբաղվի, ասել է թե՝ փոքր եղբոր ականջը չարաճճի արարքների համար արժե քաշել:

Ծավալված քննարկումը այս հարցում եղավ տևական, բայց ոչ արդյունավետ: Խորհրդարանական խմբակցությունները արտահայտեցին իրենց կարծիքները կատարվածի վերաբերյալ: Եվ, ինչպես միշտ, ՀՀՇ-ն կրծքով պաշտպանեց նախարարին:

ԱԺՄ-ն պնդեց իր կարծիքը անօրեն գործերով զբաղվող ՆԳ նախարար ունենալու աննպատակահարմարության մասին և պահանջեց, որ դատախազը վերջապես տա իր եզրակացությունը:

ՀՅԴ ֆրակցիան, հիմնովին մերժելով ՆԳ նախարարի ծավալած «գործունեությունը», առաջարկեց հետևյալը. քանի որ այս դեպքը մեկն է հանրապետությունում տիրող անօրինությունների շղթայում, ուստի պետք է հարցը քննել իր ճշգրիտ մասշտաբների մեջ՝ պատասխանատվության կանչելով ՀՀ նախագահին և կառավարությանը:

Եռօրյա նիստերի ամենաառանցքային իրադարձությունը ՀՀ նախագահի ելույթն էր և ելույթի շուրջ ծավալված քննարկումը: Մեր առաջիկա համարներում կփորձենք վերլուծել նախագահի

հաշվետվությունը, որը, չգիտես ինչու, անվանվեց հաղորդում, և ԳԽ նախագահի գործադրած ճիգերի շնորհիվ, մեր կարծիքով, արժանացավ բավականին զվարճալի, անհեթեթ վերաբերմունքի՝ ընդունվեց ի գիտություն...

Ինչևիցե, կարևորը, այնուամենայնիվ, այն էր, որ պատգամավորների ճնշող մեծամասնությունը մի քանի անորոշ, հավուր պատշաճի խոսքեր շռայլելով նախագահի ելույթին, խիստ քննադատության ենթարկեց և՛ նախագահական համակարգն ու նախագահին, և՛ նրա մեկամյա գործունեությունը:

ԱԺՄ խմբակցության անդամներից շատերին նախագահի վարած քաղաքականությունը անգամ մեկ տարի անց անհասկանալի է մնացել. ի վերջո, ինչպիսի՞ պետություն ենք ուզում ստեղծել, կամ՝ ո՞րն է մեր ռազմաքաղաքական դոկտրինան:

Մինչև օրս ընկերային քաղաքականությունը չի անջատվում ընկերային պաշտպանվածության քաղաքականությունից: Եվ, վերջապես, այս «ռեֆորմ» ասվածի մեջ, որն այդպես լիաբերան արտասանում է նախագահը, կա՞ արդյոք որևէ տրամաբանություն, շահագրգռված խավ, և այլն:

Ելույթների մեծ մասի մեջ կար մի կարևոր հարցադրում. ո՞րն է նախագահի հակաճգնաժամային ծրագիրը:

Բերվեցին աղաղակող փաստեր գների, սպառողական զամբյուղի և աշխատավարձի աղաղակող անհամապատասխանության վերաբերյալ: Մտահոգություն հայտնվեց այն մասին, որ կարծես շուկան ինքնանպատակ է, իսկ Արևմուտքի կողմից վալյուտային հատկացումներ անելու մասին խոստումները միանգամայն սին դուրս եկան:

Հարցադրումների մի զգալի մասը վերաբերում էին նախագահի վարած կադրային քաղաքականությանը: Առանձնապես տարակուսած էին Ագրարային-ժողովրդական կուսակցության անդամները, քանի որ գյուղատնտեսության բնագավառի ցուցանիշները, ինչպես նրանք նշեցին, նախագահի ելույթի մեջ կեղծված են: Մինչ-

դեռ ամենացածր ցուցանիշները գյուղմթերքների արտադրության բնագավառում ողջ ԱՊՀ տարածքում՝ Հայաստանում են:

Ուշադրության արժանացավ նախագահի ելույթում արված այն փորձը, որով նա գործադիր մարմնի պատասխանատվությունից խուսափելով, մի զգալի բաժին այսուհետև ուզում է դնել կառավարության ուսերին, այդ քայլով նախապատրաստելով նոր քավության նոխազին:

Արծարծվող հարցերի մի զգալի մասը, որ կետից էլ որ ելներ, հանգում էր գլխավորին՝ Սահմանադրություն ունենալուն: Վերջապես տիրապետող է դառնում այն միտքը, որ միայն Սահմանադրությամբ է, որ կարելի է կարգուկանոն մտցնել իշխանությունների իրավասությունների, լիազորությունների և պարտականությունների միջև: Սահմանադրության ստեղծումը բոլորն էին համարում անհետաձգելի, այլ հարց է, թե ինչպիսի կառավարման համակարգ կամրագրվի սահմանադրությամբ և, վերջապես, ինչ կերպ կընդունվի այն:

ՀՅԴ ֆրակցիան իր գնահատականի մեջ խորհրդարանի ուշադրությունը հրավիրեց, որ խորհրդարանի սահմանադրական հանձնաժողովի առաջարկած դրույթները «ձևվում են նախագահի չափսերով ու պատվերով», ուստի չի կարելի դրանք ընդունելի համարել: Սահմանադրության ընդունման ամենաժողովրդավարական ձևը Սահմանադիր ժողովն է: Իսկ մինչ այդ ՀՅԴ ֆրակցիան անբավարար գնահատելով ՀՀ նախագահի մեկամյա գործունեությունը առաջարկեց «ՀՀ նախագահի մասին» և «ՀՀ ԳԽ օրենքում» փոփոխությունների վերաբերյալ օրենքի նախագիծ: Գուցե հիմա մեկամյա ճգնաժամից հետո խորհրդարանը ուժ գտնի իր մեջ սահմանափակել նախագահի իրավունքները: Թերևս շատերն էին համաձայն, որ նախագահի ելույթը գրված էր կենտկոմական զեկույցների ոգով, որոնցում պարտադիր կարգով դուրս էին մնացել ազգի համար ցավոտ ու կենսական հարցերը:

Զեկուցումից դուրս մնացին այնպիսի ծանր հարցեր, ինչպիսիք են Արցախը, աղետի գոտին, հանրապետության տնտեսական վի-

ճակի ճիշտ գնահատականը և բարելավման ուղիները, արտաքին քաղաքականության մեջ կոնցեպցիայի ճշգրտումը, հանրապետության ներքին կյանքի բարոյահոգեբանական մթնոլորտը և այլն:

Եվ միայն ՀՀԾ խմբակցության անդամներն էին փորձում անորոշ ու մասնավոր հարցեր վկայակոչելով, ջղաձիգ ու անտակտ ֆրազներով փրկել կամ հակակշռել նախագահի բոլոր առումներով խոցելի ելույթը: Նախագահին փրկող ելույթների մեջ, այդուհանդերձ, ուշադրության էր արժանի ՀՀԾ խմբակցության հավաքական կարծիքը, որը ներկայացրեց վարչության նախագահ Տեր Հուսիկը: Այն հուսահատ ճիգն ու ակնարկները, որոնցով նա փորձեց մեղադրել ընդդիմությանը Հայաստանում ռուսական սցենար իրականացնելու մեջ, դատարկ էին ու անտրամաբանական: Իսկ առյուծի ցատկի ալեգորիան ծիծաղելի էր անչափ, որովհետև առյուծը ուժով ու կամքով է նվաճում իր արքայական կոչումը, ոչ թե փորձում է արքա ձևանալ «ի գիտությամբ»... Ցավալի է, որ հայոց պետականության կայացման գործը հետևողականորեն կացնահարող քաղաքական ուժը թրքամետ կեցվածքով և սնամեջ պատկերացումներով համառորեն չի ուզում տեսնել մեր ծանր իրականությունն ու այն ծնող պատճառները, չի գիտակցում, որ ազգային պետության ստեղծման տիտանական աշխատանքում չի կարելի տրվել իշխանատենչության կրքերին, զանազան ձևերով խաբել ժողովրդին և մեղքերը փնտրել այլոց մեջ:

Շատերի համար այդ ելույթից հետո պարզ դարձավ, որ ՀՀ նախագահը և նրան շրջապատող իշխող վերնախավը ծանրակշիռ արմատական քայլեր ձեռնարկելու կարողություններ չունենալով հանդերձ, փորձում են ժամանակ շահել, իսկ թե որն է այդ շահած ժամանակի գինը, լավագույնս իր մաշկի վրա զգում է մեր ժողովուրդը:

Թիվ 51, դեկտեմբեր

ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1993

ՄԵՐ ԴԺՎԱՐԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Անկախության մեր գնացքը... անցավ ևս մեկ կայարան: Թե ինչպիսին կլինի հետագա ընթացքը՝ կախված է մեզանից, մեր պայքարը հաղթանակի հասցնելու վճռականությունից ու արիությունից, Հայոց Հանրապետությունը ամրապնդելու ու զորացնելու մեր համազգային ջանքերից:

Միասնության, մեր ուժերը, մեր բոլոր հնարավորությունները մեկտեղելու և ստեղծված այս վիճակից մեր ժողովրդին դուրս բերելու կարգախոսներ ու կոչեր կարելի է լսել բոլոր կողմերից: Սակայն, ցավոք, դրանք չեն դառնում նախաձեռնություն ու գործ, և միշտ չէ, որ անկեղծ են ու սրտաբուխ: Ո՞րն է համաձայնության ու միաë-ÝáõÃÛան առանցքը: Ինչի՞ շուրջ, հանուն ո՞ր գաղափարի ու նպատակի կարող են միասնանալ ու միաձուլվել քաղաքական հակոտնյա ուժերը: Անշուշտ, կարելի է գտնել համագործակցության եզրեր, սակայն հնարավո՞ր է արդյոք Արցախը Ադրբեջանի անբաժանելի մաս համարող որևէ կուսակցության և ասենք՝ Դաշնակցության համախմբումը:

Կարող էր լինել ընկերային, տնտեսական խնդիրների շուրջ համաձայնություն և համատեղ ձեռնարկումներ, սակայն, ցավոք, դա նույնպես չեղավ, որովհետև կուսակցություններին չտրվեց տնտեսական լծակներ ունենալու իրավունք, ինչն այսօր կնպաստեր ստեղծված վիճակի հաղթահարմանը:

Նայենք մեր շուրջը... Այն, ինչ տեսնում ենք, այն, ինչ տեղի է ունենում հայոց կյանքում, չի հուսադրում և ոչ մեկին, թույլ չի տալիս չասելու՝ այս ինչ ենք անում, այս ուր ենք գնում: Արդեն վաղուց, ամեն անցնող տարվա հետ, մարում է հուսո մի կայծ, ամեն անցնող տարի իր հետ տանում է հույսի մի շող, մինչդեռ հակառակը պիտի լիներ:

Այն, ինչ տվեց 88-ը, աստիճանաբար մեռնում է մի կտոր հացի հերթերում, մեր ցուրտ ու անլույս բնակարաններում, «գաղթի» «անկախ ու հպարտ» մեր ճանապարհներին...

Նորից հեղաշրջվում է մեր արժեքների համակարգը: Արժանապատիվ, ազգային ու մարդկային իրավունքներին գիտակից, դրանց համար պայքարի ելած ազատատենչ հայ ժողովուրդը կրկին վեր է ածվում համակերպվող ու ճակատագրապաշտ ստրուկների, որոնց համար հայրենիքը վերստին ապակու տակ դրված քարտեզ ու մագաղաթյա ձեռագիր է դառնում: Այդ դեռ չարյաց փոքրագույնն է... Նայեք մյուսներին, ովքեր գազանացած իրար կոկորդ են կրծում, ովքեր չգիտեն և չեն ուզում իմանալ, թե ինչի է դա հասցնելու վաղը: Մի՞թե այս էր մեր ուզածը: Մի՞թե մեր ժողովուրդը իր մեջ ուժ չի գտնի ոչ միայն համարձակորեն նայելու ճշմարտության աչքերին, այլև նվաճելու իր ճշմարտությունը:

Նման ծանր վիճակներ շատ ենք ապրել: Հուսանք, որ այս արհավիրքից էլ կանցնենք, մանավանդ, եթե հաղթահարենք մեզ թուլացնող, մեր մեջ տարածված սին գաղափարներն ու եկամուտ ներշնչանքները, հարազատ մնանք մեր ազգային տեսլականին և աներկյուղ ու անվարան առաջանանք հարատև պայքարի մեր ճանապարհով:

Թիվ 1, 1-6 հունվար

ԴԱՆԴԱՂ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԹՈՒՅՆ

Տևականորեն զրկված լինելով անկախ պետականությունից, դժբախտաբար, կտրվել ենք մեր ազգային բարեկրթության աղբյուրներից և այսօր հայացքներս հառել ենք դեպի Արևմուտք և, շլացած եվրոպական ու հատկապես ամերիկյան ապրելակերպի շողացոլանքներով, Հայաստան ենք ներմուծում անխղճաբար այն ամենը, ինչի վրա դրոշմված են տարաշխարհիկ քաղաքակրթության տարբերանիշները. սկսած շոու սեքսից, վերջացրած շոու-աղանդներով...

Ազատ շուկայի ոլորտների են վերածվել ոչ միայն տնտեսությունն ու կենցաղը, այլև դրա սպառնալիքի տակ են բարոյականությունն ու ընտանիքը, գիտությունն ու արվեստը, դպրոցն ու կրթության համակարգը, այլև... քաղաքականությունը: Ռուսահայությունից դեպի ամերիկապաշտություն: Իսկ ո՞ւր մնացինք մենք:

Եթե խնդիրը սահմանափակվեր նմանակելու և նմանվելու ժամանակավոր հրապուրվածությամբ, անհանգստանալու առանձնապես պատճառ չէր լինի: Սակայն, երբ խորամուխ ենք լինում խնդրի էության մեջ և հասկանում, որ միսիոներներն ու աղանդները այստեղ արտահանված են բնավ ոչ մեր հոգիները փրկելու մտահոգությամբ, որ այդտեղ թաքնված են որոշակի քաղաքական նպատակներ, որ նախ այդ խորագետ հոգեբանները ներգործում են մեր ենթագիտակցության վրա, գրավում են մեր կենցաղն ու ապրելակերպը, փոխում բարքերը, որպեսզի հետո փոխեն մտածելակերպը, հոգեբանությունը և վաղը պարտադրեն իրենց որոշումները, իրենց քաղաքականությունը, չենք կարող չանհանգստանալ: Չենք կարող և իրավունք չունենք անտարբեր մնալ այդ ամենի նկատմամբ: Դժվար չէ հասկանալ, թե ում է ձեռնտու մեր անկախ պետականությունը և ում՝ ոչ:

Ինչո՞ւ և ովքե՞ր են այսօր ուղղորդում մեր տնտեսական զարգացումը, ինչո՞ւ և ովքե՞ր են ձգտում վերացնել մեր հոգևոր կառույցները, պառակտել մեր ազգային ուժերը, աղավաղել մեր ազգային նկարագիրը, մեկ խոսքով՝ ապազգայնացման այս շարժընթացը պետք է անհապաղ կասեցվի: Եվ դա պետք է անենք մենք բոլորս՝ միաբան ու միակամ, քանզի ոտնահարվում են մեր ամենակենսական իրավունքները, խարխլվում են հայոց տան հիմքերը:

Թիվ 2, 8-14 հունվար

ՏԱՐԵՐՔ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքակիրթ աշխարհի կերպարը սրբազան լուսապսակով է ներկայացվում ազգային-ազատագրական պայքար մղող ժողո-

վուրդներին ու ազգերին, որոնց ներքին մարդկային հարաբերությունների ոլորտում «սատանան» իր խրախճանքներն է անում. ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ բարոյականություն. բռնությունը՝ պռնկեպռունկ, և՝ անիշխանություն: Քաղաքակիրթ հորջորջված երկրները ձգտում են այս կամ այն պատճառով ետ մնացած ազգերին ու երկրներին ոչ թե հանել իրենց այդ վիճակից, այլ «քաղաքակիրթ» կերպով խփում են նրանց գլխներին, տարաբաժանում, տրոհում ու խեղդում ազգամիջյան հակասությունների մեջ, ձգտելով որքան կարելի է քաղաքական մեծ կապիտալ շահել նման վիճակներից:

Աշխարհի ազգաբնակչության մեծ տոկոսի թշվառությունը ի վերջո անդրադառնում է նաև ապահով վիճակում գտնվողների վրա, և համայն մարդկության գլխին ծանրանում է պատերազմի, միջուկային աղետի կամ բնապահպանական փլուզումների վտանգը: Այդ վտանգը սակայն ետ չի պահում քաղաքակիրթ աշխարհին վարելու իր առօրեական, առգո շահի քաղաքականությունը, քանզի այդ երկրների կառավարման կառուցակարգի հիմքում ընկած են գործոններ, որոնք չեն տեղավորվում խելամիտ վերահսկման սահմաններում: Բարեկրթության հունից դուրս եկած աշխարհում ի վերջո թագավորում է տարերքը, որը միշտ էլ նորանոր անակնկալներ է մատուցում: Մեր ազգային-ազատագրական պայքարի և անկախ պետականության հաստատման գործը այսպիսի բարդ պայմաններում կարող է հաջողվել, եթե մենք տարատեսակ արևելումներից անցնենք ինքնակառավարման, որդեգրելով ազգանպաստ արտաքին և ներքին քաղաքականություն: Այս ամենը լավ է հասկանում ժողովուրդը, հասարակ մարդիկ, որոնք մատակարարն են ազգային բանակի և ստեղծողը նյութական ու հոգևոր բարիքների: Մնում է, որ սա լավ հասկանան նաև քաղաքական այն կազմակերպություններն ու ուժերը, որոնք կամ իշխում են, կամ ձգտում են իշխանության:

Այսօր քննարկվում է նախկին ԽՍՀՄ հանրապետությունների փոխհարաբերության խնդիրը: Նրանք կարող են միավորվել Համադաշնակցության (կոնֆեդերացիա) ուխտով կամ Անկախ պե-

տությունների համագործակցությամբ: Համենայն դեպս, անհրաժեշտ է, որ մենք ազգային հավաքական մեր ներուժը բնականոն եղանակներով արտահայտելու եղանակներ գտնենք: Իսկ դա պահանջում է ամենաարագ կերպով հաղթահարել մեր ընթացքի տարերայնությունը և հասնել սահմանադրական պետության գոյավիճակին:

Թիվ 3, 15-21 հունվար

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԽՐՃԻԹՆԵՐԻՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՊԱԼԱՏՆԵՐԻՆ

Իշխանությունների կողմից իրականացվող անճարակ ու համատարած անորոշությամբ «հագեցած» ներքին քաղաքականությանը գումարվեց բնության ցրտաշունչ «քաղաքականությունը», որոնց ներդաշնակ համադրության հետևանքով հայ մարդը ստիպված է իր կենցաղով ու վարքագծով մի քանի հարյուրամյակ հետ գնալ և ապրել միջնադարյան կյանքով...

Մայրաքաղաքի և հանրապետության մյուս քաղաքների բազմահարկ և ոչ բազմահարկ շենքերի պատուհաններից ելնող ծուխը հիշեցնում է մեր ժողովրդի հովվերգական անցյալը: Հայ մարդը, որը առանձնակի հարգալից վերաբերմունք ունի իր հոր կամ պապի աշխատանքի արդյունքների նկատմամբ, ցրտից իր երեխաներին փրկելու նպատակով աննախադեպ դաժանությամբ կտրատում ու ցախի է վերածում քաղաքների պուրակների, բակերի ծառերը... Նույնիսկ ՀՀ նախագահի՝ ծառահատման «գործընթացը» կասեցնող հրամանագիրը ոչնչով չազդեց ծառառնչացման մոլուցքով բռնված մարդկանց վրա: Եվ ինչպես կարող էր ազդել, երբ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացին իր երեխային ցրտից պաշտպանելու այլընտրանք չունի: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ծառահատման «գործընթացները» ՀՀԾ-ական իշխանությունների անկախության մասին պատկերացումների ա-

ռարկայացված ու տրամաբանական հետևանքն են և ժողովրդին «յուրովի» կառավարելու մի ձև:

Առանց Սահմանադրության «կառավարվող» Հայաստանի Հանրապետության հանրային կյանքը ընդհուպ մոտեցել է այն սահմանին, որից այն կողմ գտնվում է անդունդը... Ամեն ինչի նկատմամբ հավատը կորցրած և պատերազմի մեջ հայտնված ժողովուրդը մշտապես իրեն հարց է տալիս. «Ի՞նչ է լինելու վաղը, մինչև ե՞րբ պիտի ապրենք այս նվաստացուցիչ պայմաններում...»: Կարծում ենք՝ նա այսպես էլ «կգոյատևի», քանի դեռ կրկին անգամ չի՛ սթափվել, չի՛ գիտակցել իր դերն ու նշանակությունը սեփական ճակատագիրը տնօրինելու հարցում:

Ինչ վերաբերում է իշխանություններին, ապա վերջիններս էլ ղեկավարվելով «համբերություն խրճիթներին, խաղաղություն պալատներին» ավանդական սկզբունքով, առայժմ ըմբոշխնում են քաջնազարյան բախտի տված բարիքները...

Թիվ 4, 22-28 հունվար

ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՉԷ

Իշխող վարչակազմի կամայամոլությունը և անտարբերությունը երկրի ու ժողովրդի ճակատագրի նկատմամբ այն աստիճանի է հասել, որ մարդկանց մի մասը այս կացությունից դուրս գալու այլ ելք չի տեսնում, բացի «ուժեղ ձեռք»-ի, այսինքն՝ բռնապետության հաստատումից: Եվ անցած բռնաշրջանը այլ գունավորումով է պատկերվում շատերի երևակայության մեջ, մանավանդ որ այդպիսի գունազարդ մտապատկերների ստեղծման գործում լուրջ դեր են խաղում հենց նրանք, ովքեր մոտ անցյալում փոքրիկ տիրակալներ էին: Այդ անցյալում էլ ի հայտ եկան կայսրության ու կացութաձևի հակասություններն ու ախտերը: Սակայն ի՞նչ կարող ես անել, եթե մարդկանց գիտակցության մեջ անցյալը վերապրում է կնճիռներից հարթված անսահման կապույտ երկնակամարի տեսքով:

Եվ արդ, երբ իշխող վարչակազմը սպառել է հին համակարգի «տապալում»-ից ապօրինաբար ստացված քաղաքական դրամագլուխը և ամբողջ սրությամբ ի հայտ է եկել այդ վարչակազմի բարոյական, քաղաքական, տնտեսական, ընկերային սնանկությունը, նա փորձում է դիմել վերջին միջոցին՝ մոլեգին բռնություններով իշխանությունը երկարաձգելու եղանակին, որի նախանշանները ի հայտ են եկել վարչակազմի գոյության առաջին օրերից: Հանրապետության նախագահը փորձում է արտակարգ դրություն մտցնել: Մնում է զարմանալ և կռահել, թե ում վրա է ուղղվելու այդ արտակարգ դրության սուր ծայրը:

«Արտակարգ իրավիճակ»-ը գուցե թե առաջին հերթին վերաբերում է իշխանությունների ցարդ չձեռնարկած, բայց այսօրվա իրավիճակով թելադրված նոր միջոցառումներին: Իսկ կա՞ն արդյոք դրանք: Բնակչության մեջ համառորեն շրջում է պարետային ժամ սահմանելու մասին լուրը, չնայած այդ մասին պաշտոնական հայտարարություն չի եղել, բայց նկատելի են քաղաքում ստուգումներ կատարող ՆԳ նախարարության և ավտոտեսչության ներկայացուցիչների կուտակումներ:

Թե ինչ ձեռնարկումներ են նախատեսել իշխանությունները, հայտնի չէ, սակայն ակնհայտ է, որ մտադիր են ինչ-որ բան անելու: Այն, որ հանրապետության բազմաթիվ գործընթացների կարգավորման լծակները դուրս են հանրապետության սահմաններից, շատ է խոսվել: Եվ այսօր խոսքը ոչ միայն այդ լծակների ազդեցությունից դուրս գալու, այլև ներքին քաոսի կարգավորման մեր իշխանությունների անկարողության մասին է: Բայց հայտնի է, որ բարդ իրավիճակները կարգավորելու կոչված համակարգը իր կարողությունների մակարդակով պետք է գերազանցի իրավիճակի բարդության աստիճանին: Դա օրենք է, իսկ «ուժեղ ձեռք»-ը ամենևին էլ չի կարելի նույնացնել մեծ կարողությունների հետ: Նշանակում է այսօրվա կուտակված հիմնահարցերի արհեստական պարզեցում և ոչ թե լուծում, և արդյունքում կարող ենք ունենալ ինքնանպատակ բռնապետություն, ո՛չ ավելին:

Եթե իշխանությունները լինեին ազատ ու անկախ, նրանց հպարտությունը կստիպեր, որպեսզի այսքան չարիքների ու դժբախտությունների պատճառ դառնալուց հետո անհապաղ հրաժարական տային:

Թիվ 5, 29 հունվար - 4 փետրվար

«...ՈՐՈԳԱՅԹԻ ՄԵՋ ՄԻ ՉԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ»

Որքա՞ն բան է փոխվել մեր կյանքում: Ընդամենը մեկ տասնամյակ առաջ հնարավո՞ր էր երևակայել այն, ինչ մենք այսօր անում ենք կամ չենք անում: Հատկապես այդ, որովհետև մնացածը դրա արդյունքն ու հետևանքն է: Հատկապես մեր ոչինչ չանելը՝ սկսած փողոցները մաքրողներից, վերջացրած վարչապետով: Եվ նամանավանդ մեր ինչ-որ բան անելը՝ սկսած նախագահից, վերջացրած նախագահով: Այլ խոսքով՝ գրեթե ոչինչ չենք անում, իսկ արածներս խամաճիկություն է: Կա և երրորդը՝ անել-չանելու արանքում, որը, թերևս, ավելի շատ անել է, որովհետև առնվազն պետք է ձեռքը երկարել ողորմությունը վերցնելու:

«Դարձյալ տեսա արեգակի տակին, որ ընթացքը վազողներինը չէ,- ասում է Աստվածաշունչը,- և ոչ էլ պատերազմը՝ քաջերինը, և ոչ էլ հացը՝ իմաստուններինը, և ոչ էլ հարստությունը՝ հասկացողներինը, և ոչ էլ՝ շնորհքը՝ գիտուններինը, որովհետև ժամանակ և դիպված է պատահում ամենքին»:

Եվ մենք էլ հարցնում ենք. ո՞ւր են մեր վազողները, քաջերն ու իմաստունները, հասկացողներն ու գիտունները. արդյոք ժամանակն ու դիպվա՞ծն է անդամալուծել, բթացրել, լռեցրել ու խլացրել:

Եվ հարցնում ենք նաև. ո՞ւր էին նրանք երեկ, և արդյոք նրա՞նցն էր ընթացքը, հաղթանակը, հացը, հարստությունն ու շնորհքը:

Մոռացա՞նք երեկվա տերերին, որոնք փափուկ բազկաթոռներին բազմած՝ հրամայում էին մեր արթնանալն ու քնելը, ծիծաղելն ու լաց լինելը, ապրելն ու մեռնելը... Ովքե՞ր էին նրանք, մի՞թե ար-

ժանավորներն ու ընտրյալները մեր ժողովրդի, որի անունից հավատարմության ու եղբայրության երդումներ էին տալիս աջ ու ձախ:

Չմոռանանք, որովհետև դարձյալ ժամանակով ու դիպվածով նույն բազկաթոռներին բազմեցին ուրիշները... Եվ եղավ վատից էլ վատը, քանզի մարդիկ դարձան ու երանի տվեցին իրենց անգիտակից ստրկությանը, երբ գոնե չէին քաղցում ու մրսում, և իբրև թե բոլորը հավասար էին ըստ պահանջի...

Այսպես եղավ, որովհետև խաբեցին՝ և խաբվեցինք: Որովհետև աստվածաշնչյան խոսքը շարունակություն էլ ուներ, որ այդպես էլ մնաց չընթերցված.

«Նորա համար, որ մարդս էլ չգիտեր իր ժամանակը, ինչպես որ ձուկերը բռնվում են չար ուռկանով, և ինչպես որ թռչունները բռնվում են ծուղակի մեջ, նորանց նման էլ բռնվում են մարդկանց որդիները որոգայթի մեջ մի չար ժամանակում, երբ որ հանկարծ ընկնում է նորանց վերա»:

Մի տասնամյակ հետո, այսօրվան երանի չտալու համար գիտենանք մեր ժամանակը, և մուրալու վարժվող մեր ձեռքերը մի վերջին ճիգով մեկնենք իրար՝ պատռելու չար որոգայթը:

Թիվ 6, 12-18 փետրվար

ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻՑ ՈՐ ՉՓԱԽՉԵՆՔ ՆՈՐԻՑ ԵՏ

Մի պաշտպանեք մեզ մեզանից... Մեր պետականությունը, մեր եռագույնը, մեր հարատևը...

Ո՞ւմ համար են դրանք ավելի թանկ: Ո՞րն է չափանիշը: Մի՞թե այն, թե ով ավելի բարձր կգոռա իր սիրո ու նվիրումի մասին...

Ոչ մեկին հաճելի չէ ընդդիմանալ սեփական իշխանություններին ու կառավարությանը: Անպարկեշտության ու ամբարիշտության հարց չէ: Ու ոչ էլ, մանավանդ, չարության ու նախանձի: Այս դեպքում անհասկանալի է անգամ պաշտոնանկների թշնամանքը:

Հիմա՞ է, արդյոք, որ պիտի ասվի՝ մի խաբեք ձեզ, մի փորձեք ավելին երևալ, քան կաք իրականում: Հայրենասիրությունը մի շփոթեք իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի հետ:

Հայրենիքը հայրենի իշխանությունները չեն և ոչ էլ ամեն օր փոխվող կառավարությունը:

Ոչ ոք չասաց՝ սա չէ մեր ազատությունն ու անկախությունը, սա չէ մեր Հայաստանը...

Որքան էլ թույլ, նվազ ու տկար՝ մերն է, բոլորինս, կարոտ խնամքի ու գուրգուրանքի: Ոչ ոք չասաց և չի կարող ասել՝ մի օգնեք, սատար ու նեցուկ մի եղեք մեր իշխանություններին ու կառավարությանը:

Ասացինք՝ նայեք ճշմարտությանը բաց աչքերով, ծուռ բաներ մի մտածեք. ահավասիկ, թշվառ մեր հայրենիք՝ տեսեք ինչը մեր մեղքով ու գիտությամբ, ինչը՝ օտարի ու թշնամու: Նայեք հեռացող մեր քարավաններին, ո՞ւր են գնում և ինչո՞ւ... Նայեք սոված ու սառած մեր մանուկներին ու ծերերին, սղոցներով ու կացիններով զինված մեր տղամարդկանց, որոնք մինչև գարուն ոչ մի ծառ ու թուփ չեն թողնի ձեր ու մեր սրբազան հողում, և չզարմանաք, եթե մի օր լսեք, որ գողացել ու սղոցել են Մատենադարանի դռները: Նայեք մեր կանանց, մայրերին ու քույրերին... մեր աղետյալ, փախստական, լքված ու անհույս եղբայրներին: Եվ իմացած եղեք, որ գողանում ու թալանում են ժողովրդի ունեցվածքը, չվախենալով ո՛չ Օրենքից և ո՛չ էլ Աստծուց: Եվ իմացած եղեք, որ սահմանի այս կողմից սահմանի այն կողմ է հոսում ոսկին, պղինձը, անագը, ազնիվ ու անազնիվ այլ մետաղներ, ազնիվ ու անազնիվ անասուններ ու կանայք...

Ահավասիկ՝ մեր հայրենիք:

Ոչ ոք չասաց՝ մերը չէ: Մերն է, բոլորինս է: Բոլորիս սերը, հույսը, հավատը: Բոլորիս հպարտությունն ու ցավը: Նաև ցավը, որովհետև այն, ինչ չասվեց, վաղը կարող ենք տեսնել եռագույնով պատանքված: Որովհետև ահավոր այս անկումը նույնպես բոլորինս է,

և դրա սարսափից է, որ ավելի բարձր գոռում ենք ոչ թե մեր սիրո, այլ ցավի մասին:

Թիվ 7, 19-25 փետրվար

Ո՞ՒՐ ԵՆ ՄԵԶ ՏԱՆՈՒՄ, Ո՞ՒՐ ԵՆՔ ՄԵՆՔ ԳՆՈՒՄ

Թվերը միշտ պերճախոս են: Ահավասիկ, անցած ամսում հանրապետությունում աշխատել է 147 արդյունաբերական ձեռնարկություն, այսինքն՝ մեր ունեցածի մեկ քառորդը: Աշխատել են ընդամենը 12 միլիոն կվտ/ժ ռեժիմի պայմաններում:

Հանրապետության վիճպետվարչությանը չհավատալու հիմքեր չունենք: Իրոք, մեր կառավարությունը, արդյունաբերության մեր հմուտ ու ձեռներեց ղեկավարությունը, տնտեսական շրջափակման, վառելիքաէներգետիկ այսօրինակ ճգնաժամի պայմաններում անգամ կարողացել են աշխատեցնել հանրապետության մոտ 600 արդյունաբերական ձեռնարկություններից 147-ը: Այսինքն՝ կարողացել են ժողովուրդ ու պետություն պահել: Եվ սակայն, իմացած լինենք, որ 147-ի 85 տոկոսը սննդարդյունաբերական ձեռնարկություններ են, և գլխավորապես՝ հացաթխման, այն դեպքում, երբ հացի և հացամթերքների արտադրությունը նվազել է 8,2, ալյուրինը՝ 21,7 տոկոսով: Պերճախոս թվերը թող մեզ ներեն, մենք ասենք մերը. ստացվում է, որ հանրապետության արդյունաբերությունը միայն հաց է թխել: Ինչ կա որ, պատերազմական պայմաններում ժողովրդին գրեթե ցպահանջ կերակրելը, թեկուզ միայն հացով, մի՞թե սխրանք չէ: Սխրա՛նք է... Եթե այդպես է ներկայացնում հանրապետության նախագահը:

Իսկ դուք, հարգելի ընթերցողներ, մի շտապեք ազատախոսել: Այստեղ ազգային, պետական կարևորության խնդիր կա: Այս արդեն «նոր մտածողության երևույթ է, որն ունի իր պատճառները»:

Սա է ամենակարևորը, ինչպես սիրում են ասել նախագահները:

Եվ փույթ չէ, որ ընդդիմությունը, ինչպես միշտ, սիրում է մժղուկներ ծամել և ուղտեր կուլ տալ:

Բայց անցնենք առաջ և հարց տանք ազատ տնտեսական քաղաքականությանը. ի՞նչ ծրագրեր ունեք առաջիկայում հայոց հողում:

Դատելով 1993 թ. սոցիալ-տնտեսական ծրագրի նախագծից, որը, ամենայն հավանականությամբ, նույնությամբ կներկայացվի ԳԽ հաստատմանը, ներկա տնտեսական իրավիճակի հաղթահարումը կախված է արտադրության անընդհատության ապահովումից, պահպանելով առկա կարողություններն ու հիմնական ֆոնդերը:

Շատ լավ: Իսկ կարգավորման համակա՞րգը: Արդյունաբերությունը միայն փոր կշտացնելու համար չէ: Հաց թխելը միշտ էլ ձեռնտու ու շահավետ կլինի՝ քաղաքականությամբ թե առանց քաղաքականության: Այլ հարց է, կպահպանվե՞ն արդյոք հիմնական ֆոնդերը և պահպանելու բան մնացե՞լ է արդյոք: Սխիթարական է գոնե, որ խոստովանում են գույքագրման ու վերահսկողության անհրաժեշտությունը: Իսկ թույլ տված սխալների մասին միայն խոսքի սայթաքումներից ենք իմանում. «Ազատ տնտեսական քաղաքականությունը, որ սկզբից վարվել էր և որոշ իմաստով պարտադրված էր մեզ, անհրաժեշտ էր, բայց այն ժամանակ պետք էր գտնել պահը և վերադառնալ կարգավորման համակարգին»,- ասում է էկոնոմիկայի նախարարը, նախագահի վերջին ելույթներից հետո:

Իսկ հիմա դուք ասեք՝ ո՞ւր են մեզ տանում և ո՞ւր ենք մենք գնում:

Թիվ 9, 5-11 մարտ

ՄԱՄՈՒԼԸ ԻՆՔՆ Է ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ԴԱՐՁՆՈՒՄ ԱՆՏԱՐԲԵՐ

Հանրապետության ընդդիմադիր մամուլը ՀՀ ԳԽ-ի հետ միասին «ազատ ու հպարտ» Հայաստանում ժողովրդավարության վերջին հենարաններն են: Պատահական չէ, որ ներկայիս իշխանությունները պարբերաբար հարձակվում են թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա: Բայց նրանք դեռևս հաջողությունների չեն հասել, և որպեսզի այն երբեք տեղի չունենա, անհրաժեշտ է պահպանել հատկապես մամուլի ներկայիս մարտական ոգին:

Անդրադառնալով մամուլին, հարկ է նշել, որ Հայաստանում հստակ զանազանվում են նրա պաշտոնական և ընդդիմադիր թևերը: Եթե պաշտոնական մամուլը երկու ոտքից կաղում է իր էջերում քննադատական ընդդիմադիր մտքի իսպառ բացակայությունից, ապա ընդդիմադիր մամուլն էլ, հիանալի կատարելով առաջին պլանի քայլերը, այսինքն՝ քննադատելով իշխանություններին և մերկացնելով նրանց կեղծ ժողովրդավարությունը, իր հերթին չի խուսափում մի մեծ բացից: Հաճախ քննադատությունը գերազանցում է այլընտրանքային ելքերի ու լուծումների լուսաբանմանը կամ պարզաբանմանը: Ընթերցողը հստակ պետք է տեսնի, թե ինչ է լինելու, երբ վերջապես քաղաքական ասպարեզից հեռանա կամ հեռացվի ներկայի իշխանությունը: Գալիքի հստակությունը ընդդիմադիր մամուլը կդարձնի անխոցելի և վերջ կտա այն անհեթեթ, ծիծաղելի մեղադրանքին, թե ընդդիմությունն ընդհանրապես թուլացնում է հայոց պետականության հիմքերը: Մամուլի էջերում հստակ պետք է երևա ներկա կառավարման այլընտրանքը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ ընկերային կյանքում:

Մյուս կարևորագույն հարցադրումը. եթե կառավարական մամուլը պարզապես վախենում է ժողովրդի անմխիթար կյանքին անդրադառնալուց, ապա հասկանալի պատճառով ընդդիմադիր մամուլը հիմնականը դիտում է քաղաքական կյանքի պարզաբանումը: Հասկանալի է նաև, որ, տապալելով ներկա վարչակարգը,

հնարավոր կլինի արմատապես վերափոխել մեր ազգային-հանրային կյանքը: Բայց դա ժամանակ է պահանջում: Ուստի, ընդդիմադիր մամուլը պետք է արդեն այժմ լայն տեղ հատկացնի ժողովրդի կյանքի լուսաբանմանը: Ժողովուրդն է վերջին հաշվով պատմության կերտողը, և նրա ջանքերով պետք է պատմության աղբարկղը նետվի ամեն մի իշխանություն, որը հստակ ու նպատակադիր չի ծառայում ազգի արմատական շահերին:

Հակառակ դեպքում, երբ ընդդիմադիր մամուլը տարվում է քաղաքականությամբ, հասարակ ժողովուրդը լրագրերում իրեն չի տեսնում և դառնում է անտարբեր ընթերցող, մարսում է լուրերը և վերջ: Դրանով նա չի զինվորագրվում պայքարին: Բայց չմոռանանք, որ ոչ մի ուժ չի կարող քաղաքական հաջողության հասնել առանց ժողովրդի աջակցության:

Չէ՞ որ ասված է. ժողովրդից, ժողովրդով, ժողովրդին:

Թիվ 10, 12-18 մարտ

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ԱՐՑԱԽԸ

Ճիշտ է, որ հանրապետությունում իրավիճակը մնում է ծայրաստիճան լարված, անգամ՝ պայթյունալի: Սակայն չահաբեկենք հանգիստ ու ապահով կյանքի սովոր մեր հայրենակիցներին. պայթյուն հազիվ թե տեղի ունենա: Դա ծրագրված չէ: Ծրագրված է թույլատրելի աստիճանի շիկացում. հեղափոխական մը կասեր ռուսական մուրճի ու թուրքական սալի արանքում կռելու ազգային ազատագրական պայքարի երկաթյա դագաղը: Եվ վաղը ստիպելու ժողովրդին սեփական ձեռքերով փորելու գերեզմանը: Այն ժողովրդի, որը կանգ չառավ ոչ մի զոհաբերության առջև հանուն Արցախի ազատագրման, որից կախված է նաև իր լինել-չլինելու հարցը: Կստիպեն, որովհետև նրան հասցրել են այնպիսի վիճակի, որ նա այլևս անընդունակ է պայքարելու: Որովհետև քաղցած, անօթևան, մուրացիկ, հուսալքված ու բարոյալքված մարդկանց համար միևնույն է, թե ինչ է լինելու այսուհետև, իսկ մյուսները, ովքեր

լիուլի օգտվում են այս կյանքի բարիքներից ու ճարպակալում, թքել են ամեն ինչի վրա... Եվ մնացածն էլ ուրիշ մարդիկ չեն. իրենք են ու իրենցները՝ դերակատար ու դեսպան, դրամատեր ու դրամաշորթ...

Հատկապես քաղաքագետ պետք չէ լինել հասկանալու համար, թե ինչ նպատակ էր հետապնդում Հայաստանի Հանրապետության իշխանությունների խաղաղասեր-խաղաղարար քաղաքականությունը. ժողովրդին ահաբեկել սովով ու սառնամանիքով, շարունակական շրջափակումներով ու պատերազմով...

Եվ ահա եկել է հուղարկավորության ժամը:

Կարծես թե վախ չկա նաև ընդդիմությունից: Ի՞նչ կարող է անել ընդդիմությունը, եթե չի ստանալու ժողովրդի աջակցությունը: Իսկ ժողովուրդը, ինչպես ասացինք, բավականաչափ «մշակված» է:

Մնում է «նվաճումը» ստորագրել տալ: Այո, Ադրբեջանի Հանրապետության կազմում Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը կփորձեն ներկայացնել որպես նվաճում՝ ընդգծելով միջազգային չափանիշներով ընդունված լայն ինքնավարության հանգամանքը: Ինչո՞վ «նվաճում» չէ:

Սակայն վերջին խոսքը մնում է Լեռնային Ղարաբաղի իշխանություններին: Ո՞վ է ստորագրելու կամ ո՞վ չի ստորագրելու փաստաթուղթը: Թվում է, այստեղ էլ առանձնապես գլխացավանք չի լինելու: Համենայն դեպս, դրանում ՀՀ նախագահը տարակույս չունի... «Ծնորհիվ Ռոբերտ Քոչարյանի, որ Ղարաբաղի փաստացի ղեկավարն է, մենք կազատագրենք Արցախը»: Իսկ փաստացի ղեկավարները, մենք լավ գիտենք, ինչի են ընդունակ: Դրանում մի անգամ ևս կհամոզվենք առաջիկա օրերին՝ ուշադիր հետևելով ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքներին:

ՀՀ իշխանությունները, ինչպես ասում են, ձեռքերը լվանում են: Ղարաբաղի հարցը Ղարաբաղն է լուծելու: Այնպես որ հաշվարկները վերից վար ճիշտ են արված: Թերևս մի բան մոռացել են մեր հանճարեղ ճարտարապետները, մի «աննշան» հանգամանք. իսկ ի՞նչ կասի Արցախի ժողովուրդը: Ի՞նչ կասեն Արցախի որդեկորույս

հայրերն ու մայրերը, մինչև վերջին շունչը պայքարի ելած ազատամարտիկները...

Ա՞յդ էր Արցախի ազատագրումը:

Թիվ 11, 19-25 մարտ

ՇՐՋԱՊՏՈՒՅՏ

Երես առ երես, կամ դեմ առ դեմ, դեմ հանդիման: Իմաստը՝ միմյանց դիմաց, իրար հանդեպ, դեմուդեմ: Այսինքն՝ քիչ ավելի, քան սովորական խոսք ու զրույցը, «ոտի վրա» հարց ու պատասխանը: Այսինքն՝ եկեք խոսենք ըստ էության, իրար աչքերի մեջ նայելով, չվախենալով ճշմարտությունից, որքան էլ այն դառն ու անոթոք լինի: Մենք ակնկալում ենք ոչ միայն անկեղծ ու շահագրգիռ խոսակցություն, այլև, եթե կուզեք՝ առերեսում, որպեսզի առանց պատճառի մեզ չդատեն և առանց դատի չխաչեն լրագրերի պարապ էջերում ու Թատերական հրապարակներում, քաղաքական միջանցքներում ու մշակութային խոհանոցներում: Իրար հասկանալու, հանդուրժելու, էլ չասած՝ սիրելու համար պատճառներ չկան չարանալու ու նեղսրտվելու... Սակայն, ցավոք, հաճախ դա լինում է անհասկացողության ու թյուրիմացության արգասիք: Անշուշտ, հակառակն էլ է պատահում, երբ փարիսեցիությամբ, կեղծավորությամբ ու խաբեությամբ են դափնիներ, սրտեր ու աթոռներ նվաճում: Ուրեմն, նա, ով երես առ երես խոսելուց խուսափելու պատճառներ չունի, ուրախ պիտի լինի հյուրընկալվել «Ազատամարտ»-ում: Համենայն դեպս, մենք խտրություն չենք դնի: Մեր գործը դատելը չէ, այլ ճշմարտությունն ասելը:

Մուշեղ Միքայելյան.- Մեր զրույցն սկսեմ մի հարցով, որից հետո շարունակելն իմաստ կունենա. Կարո՞ղ ենք մինչև վերջ անկեղծ լինել, անշուշտ, չհասնելով այսպես կոչված փիլիսոփայական «վերջին»:

Արմեն Հովհաննիսյան.- Հայտնի պատճառներով ընդհանրապես խորշում եմ «մինչև վերջ» ձևակերպումից, բայց հասկանում եմ, որ անկեղծ ու շիտակ լինելու պահանջը հիմնականում ինձ է վերաբերելու. հարց տվողը դու ես, պատասխանողն եմ ես: Գրավոր, թե բանավոր, միշտ եմ ջանացել անկեղծ լինել, գոնե ինքս իմ առաջ: Մի վերապահում. ամեն ինչ չասելը, «անատոմիա»-ից խուսափելը, միտքը բառային հանդուրժելի հանդերձով ներկայացնելը դեռևս կեղծության կամ հարմարվողականության արտահայտություն չէ, այլ ավելի շուտ՝ նպատակահարմարության թելադրանք: Այնինչ առաջին իսկ հարցիդ լարքը ենթադրում է անողոքություն (այն էլ հենց իմ հանդեպ), և ես ընդունում եմ դա...

Մ.Մ.- Չեմ էլ ուզում թաքցնել, մանավանդ որ հիմնականում անձիդ շուրջ է գնալու խոսակցությունը: Բայց շիտակ լինելու պահանջը նաև ինձ է վերաբերում: Ուրեմն, սկսեմ. դու նույնպես եղել ես «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ու տպավորությունս այն է, որ այնքան էլ հաճելի չէ քեզ այդ հիշեցնելը: Կարելի է ենթադրել, որ «կոմիտեական» քո գործունեությունը չստացվեց ոչ քո մեղքով: «Մշակման» կամ «հատուկ մոտեցման» փորձեր եղե՞լ են քո նկատմամբ, և ի՞նչը քեզ հեռացրեց Թատերական հրապարակի կամ հրապարակային թատրոնի բեմահարթակից:

Ա.Հ.- Հինգ տարի առաջ, փետրվարյան այն օրերին, ես համոզված էի, որ իմ ներկայությունն անհրաժեշտ է, հրապարակում թե խոսափողների մոտ՝ էական չէ: Այդպես էին համոզված բյուր հազարավորներ, ինչպես քանիցս զրուցել ենք, այդ թվում և դու: Պարզապես, խառնվածքիս առանձնահատկությունն ինձ ավելի ակտիվ դերի մղեց: Եվ... երջանիկ օրեր էին: Համոզված եմ նաև, որ այն օրերին թե՛ Աշոտը, թե՛ Վանոն, թե՛ Սամսոնը, թե՛ Համբարձումը և այլք, էլ չեմ ասում Իգորի մասին, հաստատապես հաղթահարել էին շատ նվաստացուցիչ մի զգացում՝ վախի զգացումը խորհրդային պատժիչ ահարկու մեքենայի հանդեպ: Վազգեն Մանուկյանը, վարչապետ եղած ժամանակ, ինձ հիշեցրեց, ինչ եմ ասել փետրվարի 27-ին, երբ հաստատ լուրեր տարածվեցին, թե «...այս գիշեր կո-

միտեն հավաքելու են»: Չշարունակեմ, որովհետև ինձ է վերաբերում: Իսկ թե հետո ինչ «մետամորֆոզներ» եղան, մեր զրույցի նյութը չէ: «Կոմիտեական» իմ գործունեությունը (որ շատ կարճ տևեց՝ մեկ-մեկուկես ամիս) ինքս եմ դադարեցրել, հատկապես անժամկետ, աննպատակ, անիմաստ գործադուլների հարցի քննարկումից հետո: Գերադասեցի զբաղվել իմ գործով, և ազերբայջանական մամուլի երեք տեսությունները կազմելուց հետո (որոնցից կառավարական հանձնաժողովներն էլ էին օգտվում), արել ու անում եմ այն, ինչ կարող եմ անել լավագույնս՝ հնարավորություններիս սահմաններում. զբաղվել եմ ժուռնալիստիկայով, հրապարակախոսությամբ, թարգմանությամբ:

Կարո՞ղ էի շարունակել: Անշուշտ: Եթե ոչ կոմիտեի կազմում, ապա հարակից կառուցվածքներում, հետագայում՝ ՀՀԾ-ում... Բայց այդ պարագային ես այլևս ես չէի լինի, հայացքս կփախցնեի, ինչպես ներկայումս շատերը: Հարցդ սպառեցի՞:

Մ.Մ.- Ոչ: «Մշակման» կամ «հատուկ մոտեցման» մասին...

Ա.Հ.- Հիշեցնելու համար շնորհակալ եմ: Չէ, իմ նկատմամբ «մոտեցում» չի եղել: Թեև հիմա, երեք-չորս տարի անց, հատկանշական է թվում մի հանգամանք. 1988-89 թթ. օտարերկրյա թղթակիցների (կամ՝ թղթակից կոչեցյալների), այդ թվում և սփյուռքահայերի ուշադրությունն ընդգծված էր ու, պարբերական, նվաստիս հանդեպ, օրական 4-5 զանգահարություն ամենատարբեր մայրաքաղաքներից պարտադիր էր, ու թեև ներկայումս ավելի շատ եմ հանդես գալիս, ավելի շատ տպագրվում, ինչպես ասում են՝ ավելի սուր հարցերի շուրջ, քար լռություն է... Եվ եթե հարցիդ քողարկված իմաստն այն էր՝ «հավաքագրվա՞ծ» եմ արդյոք, թե՝ ոչ, մի պատասխան ունեմ՝ չեմ: Ո՛չ ՊԱԿ-ի, ո՛չ օտարերկրյա գործակալությունների կողմից:

Մ.Մ.- Այդ դեպքում միջանկյալ հարց. Քեզ հատկապես ովքե՞ր չեն սիրում և հատկապես ինչո՞ւ:

Ա.Հ.- Մասնագիտությունս է «անդուր», թեև հարցդ պիտի ուղղեիր չսիրողներին, նրանցից էլ պատասխանն իմանայիր: Ու ամե-

նից քիչ դա է ինձ անհանգստացնում: Ինձ սիրում, գնահատում են զավակներս, մերձավորներս, մտերիմներս՝ լիուլի բավական է: Համընդհանուր սեր կարող է ակնկալել Մայքլ Ջեքսոնը: Եվ եթե շատ ուղղակի ասեմ, առանձնապես մի սիրելու բան էլ չեմ, հատկապես եթե նկատի առնենք մի ամբողջ շարք հարցերում պատանեկան առավելապաշտության՝ դեռևս պահպանած սկզբունքները, չհարմարվելու, հարկավոր պահին ժպտալ չկարողանալու, լեզվի ծայրին ու տակին եղածը կուլ տալու «անհարմարությունները» և այլն:

Մի հանգամանք էլ կա. այսպես թե այնպես, 60-ական թվականներից սկսած, միշտ կարողացել եմ ինչ-որ բան անել, հնարավորություններիս սահմաններում սկսած գործը միշտ որոշակի արդյունքով ավարտել եմ, իսկ դա չի կարող եռք (չասեմ՝ նախանձ) չհարուցել: Բացի դրանից, ինքդ էլ լավ գիտես, որ մարդկանց մի որոշակի տեսակ կա, որոնք մեռելատանը նույնիսկ կգերադասեին որոշ ժամանակով հանգուցյալի տեղը գրավել, միայն թե ուշադրության կենտրոնում լինեն, ա՛յ, հենց այդ տեսակի մարդկանցից էլ կարելի է պատասխան ստանալ:

Մ.Մ.- Ենթադրենք, թե վաղը քեզ 50000 դոլար առաջարկեն՝ տանը նստած սուսուփուս թարգմանություններ անելու պետական հանձնարարությամբ, ի՞նչ կանես կամ կասես: Ռուբլով չեմ ասում, որ հետո չչարչարվես դոլարի վերածել:

Ա.Հ.- Այլ կերպ ասած, զբաղվեմ իմ երկրորդ՝ ավելի «անշառ» մասնագիտությամբ ու «ձենս կտրե՞մ»:

Մ.Մ.- Նաև:

Ա.Հ.- Պետությունը, եթե այդ գումարն ունի, թող ավելի խոշոր ու կարևոր ճեղքեր փակի, իսկ քո հիպոթետիկ առաջարկությունը հիմքից է անիմաստ, որովհետև առանց դրա էլ տանը հենց «սուսուփուս» նստած, երրորդ տարին է հենց թարգմանություն եմ անում. Սոլժենիցինի «Արխիպելագ ԳՈՒԼԱԳ»-ն եմ ավարտում, շուրջ 100 մամուլ ծավալով: Իմ կարծիքով շատ կարևոր գործ եմ արել, քանզի «ԳՈՒԼԱԳ»-ը ոչ միայն բոլշևիկյան պատժական մեքենայի դեմ ուղղված, մարդու և ժողովուրդների իրավունքների մասին հանրա-

գիտական երկ է, այլ նաև անփոխարինելի ձեռնարկ (այո, ձեռնարկ) բոլոր նրանց համար, ովքեր գերադասում են ազատ, մարդավայել կյանքը, արժանապատիվ գոյությունը ճորտությունից, ճորտական մտածողությունից և հոգեբանությունից: Կյանքի մեծ դասագիրք է, որն, ավաղ, այսօր որևէ մեկին պետք չէ, չի հետաքրքրքրում: Սակայն վստահ եմ, մի օր լույս է տեսնելու, ճիշտ այնպես, ինչպես, ի վերջո, լույս տեսավ «Վարպետը և Մարգարիտան» վեպը՝ ութ տարի շարունակ Երևանում ու Մոսկվայում զանազան դռներ բախելուց, տասնյակ որոգայթ ու խոչընդոտ հաղթահարելուց հետո: Իսկ եթե գլխացավանքից ենք խոսում, մի՞թե միայն իրենց գլուխն է ցավում: Հապա մե՞ր գլուխները... Ուշ թե շուտ գալու է համընդհանուր հեմիկրանիայի (սուր գլխացավ) ժամանակը, և եթե ավելի շուտ եմ խոսում այդ մասին, արդյո՞ք հետամուտ եմ անձնական (ի՜նչ ողորմելի բան) նպատակների:

Մ.Մ.- Ի՞նչ ես կարծում, բաց նամակի ժանրում Արմեն Հովհաննիսյանի արհեստավարժությունը զարգացման տեղ ունի՞ այլևս, թեև կարծիք կա, որ քո բաց նամակներն այնքան էլ «բաց» չեն, ո՛չ ամեն ինչ ասելու և նույնիսկ մինչև վերջ ասելու առումով: Ավելի հստակ՝ դրանք անձնական խնդիրներ են հետապնդում, մի դեպքում ահա ես ով եմ, մեկ այլ դեպքում՝ որևէ պաշտոն առաջարկելով ինչու չեք ուզում գլխացավանքից ազատվել: Ներող կլինես, բայց շատերն են այսպես մտածում, անգամ քո վաղեմի ընկերներից ու գաղափարակիցներից ոմանք:

Ա.Հ.- Ընդամենը մի բաց նամակ եմ գրել, տա Աստված՝ վերջինն էլ լինի: Եթե նկատի ունես նաև 87-ին «սամիզդատով» տարածված դիմումս ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին, ապա դա բաց նամակ չէր:

Այն, որ տվյալ ժանրով ասելիքը սպառված է, գիտեմ ու գրել եմ այդ մասին: Մանավանդ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումից հետո, իսկապես, ամեն ինչ ասված է, շարունակելն անիմաստ է:

Եվ ամեն մի արհեստավարժ դրսևորվում է իր մասնագիտության ասպարեզում, ու եթե իմ բնագավառում որևէ բան կարողացել եմ անել, այո՛, ոչնչով չեմ տարբերվել ո՛չ իսկական ճարտարապետից, ո՛չ իսկական բժշկից, ո՛չ իսկական խառատից՝ ես կարող եմ սա՛ անել: Քո ասած «ահա ես ով եմ»-ն է, ու դրա մեջ խոցելի ու խոտելի ոչինչ չեմ տեսնում: Եթե անհատականություններն առանձնանում են այդպես, և ոչ հնարովի կամ հորինովի «դատարկ տակառների» դխկդխկոցով, առաջին հերթին շահում է հանրությունը: Լա՞վ եմ արել իմ գործը, թե՝ ոչ, սա՛ կարող է քննարկվել: Նույն տրամաբանությամբ գեղեցիկ շենքի հեղինակ ճարտարապետին խլուրդավարի կարելի է մեղադրել, թե տեսե՞ք է, շան որդին շենքը լավ է նախագծել, որ ցույց տա, թե ինքն ով է: Անհեթեթություն, որը կխլրտա միայն միաբջիջ օրգանիզմի մեջ:

Իսկ անձնական խնդիրներ հետապնդելու կամ պաշտոնահայցության վայրահաչությունը հին է, ճանճրացրած, կնիկային «զրից»-ից դենը չանցնող: Թռուցիկ ասել եմ այդ մասին երկու տարի առաջ, կրկնեմ. խոսքը հեռուստառադիոպետկոմի նախագահ դառնալու իմ «հավակնությունների» մասի՞ն է:

Մ.Մ.- Նաև:

Ա.Հ.- Եթե ուզեի, կդառնայի, հեշտ ու հանգիստ: Նախկին վարչակարգի օրոք էլ, ներկա իշխանությունների հովանու տակ էլ: Պաշտոնամոլները լավ գիտեն եղանակները. հարկավոր էր ընդամենը հնազանդ լինել, դռներ բացել-փակել, աչք մտնել, այլ անցքեր որոնել ու գտնել... Քսանինը տարեկան՝ արդեն գլխավոր խմբագիր էի համակարգում՝ «ծավալվելու» ծո՞վ հնարավորություններ: Ես հակառակ ուղղությամբ ծավալվեցի: Ու բոլոր նրանք, ովքեր աշխատել են ինձ հետ տարբեր բնագավառներում, եթե խիղճը չեն կորցրել վերջնականապես, կվկայեն, թե որքա՞ն «անշրջահայաց» եմ գործել: Իսկ ինքս շատ գոհ եմ, որ այդպես եմ ապրել:

Կներես, երկար պատասխանեցի հարցիդ, ուղղակի ինձ զզվեցրել է իմ փոխարեն մտածելու այդ տենդը: Էլ չեմ ասում, որ Ս. Գևորգյանից հետո այդ պաշտոնը զբաղեցնելն ուղղակի վիրավո-

րական պիտի լինի ցանկացած մասնագետի համար: Ես էլ հարց ունեմ՝ անկյուններում փսփսացող այդ «վաղեմիներին». մեկնումեկիդ մտքով հապա ինչո՞ւ չի անցնում գոնե հպանցիկ հետաքրքրվել, թե ինչպես է ապրում ձեր գործընկերը, ձեր սերնդակիցը, երեք տարի գործազուրկ է, ոչ աշխատավարձ է ստանում, ոչ թոշակ: Թեև... ինքս եմ ընտրել իմ ապրելակերպը, ոչ մեկից ոչինչ չեմ հայցում ու որևէ մեկին հաշվետու չեմ:

Մ.Մ.- Դու տարբեր պաշտոններ ես զբաղեցրել, կարո՞ղ ես ասել, հատկապես ե՞րբ ես քեզ զգացել քո տեղում՝ գոհացած, բավարարված, նախ՝ դրսևորվելու հնարավորությամբ, ապա իրագործումով: Եվ այսօր ո՞ր տեղն ես քեզ հարմար տեսնում:

Ա.Հ.- Հենց ա՛յն, որ զբաղեցնում եմ՝ ազատ, անկախ հրապարակախոսի տեղը «ազատ, անկախ» Հանրապետությունում: Իսկ ինձ գոհացած եմ զգացել ամենուր, ուր աշխատել եմ: Նախ, սիրում եմ աշխատել, կարողանում եմ, ապա՝ միշտ որևէ արդյունքի հասել եմ (մեծ, թե փոքր): Համաձայնիր, երբ տասնյակ տարիներ անց, տասնյակ-տասնյակ անծանոթ մարդիկ քեզ խոստովանում են, որ իրենց ճաշակի ձևավորման խնդրում որոշող դեր ես խաղացել, դրանից մեծ բավարարություն չի կարող ունենալ մարդը: Գոհ ու երջանիկ եմ եղել յուրաքանչյուր գրքի լույս ընծայումից հետո: Երեսուն անգամ, քիչ չէ...

Մ.Մ.- Ի՞նչն է քեզ ամենից շատ խանգարում այս աշխարհում:

Ա.Հ.- Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» շարքը դնենք ու նորից ծայրից ծայր կարդանք: Այնտեղ էլ կգտնենք, թե ինչն է ինձ օգնում ապրել այս աշխարհում: Ավելի լավ ու զորավոր ասել չեմ կարող ինքս: Նաև Պիղատոս-Քրիստոս հանդիպադրման բուլգակովյան մեկնությամբ, Պիղատոսը՝ իշխանության իր համակ զորությամբ, տանջվում ու վախենում է Քրիստոսի մահառաջի մի հատիկ խոսքից, թե «մարդկային արատներից ամենագլխավորը վախկոտությունն է»: Ի՜նչ փառավոր բան կլիներ, եթե հետևեինք մեր այս մայր-վարդապետությանը:

Մ.Մ.- Շատ կարևոր մի զրույցում իմ տեսակետն եմ ուզում քեզ հայտնել «Երկիր» օրաթերթում տպագրված քո դիմումի՝ ՀՀ նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Ես դա չէի տպագրի:

Ա.Հ.- Իսկ ես չեմ հարցնում, թե ինչո՞ւ... Ուսուցիչներս ինձ սովորեցրել են հարգել այլոց կարծիքը: Բայց պե՞տք է հիմնավորեմ...

Մ.Մ.- Անտարակույս:

Ա.Հ.- Եթե ի մի բերելու լինենք վերջին երկու-երեք տարիների ընթացքում միայն ընդդիմադիր մամուլի էջերում տպագրված (ու պաշտոնապես չհերքված, չժխտված) մերկացումները, փաստերով հագեցած, իրական ու հավաստի հանցագործությունների մասին հոդվածները, քրեական հաստափոր գործերն արդեն կազմված կլինեն: Մենք հիմա բոլորս քայլում ենք հանցանքի միջով, կողքով, հանցանքը քսվում է մեզ, հանցանքը սավառնում է օդում, մասնակցությունը հանցանքին մեր բջիջների մեջ է, մեր ուղեղներում... Եվ բոլոր նրանք, ովքեր անվնաս մնացած ծառերն են համարակալում՝ ապագայի կախաղանների համար, կամ Թատերական հրապարակում դատաստանի միզանսցեենները մշակում, ուղղակի գոհ պիտի լինեին, որ օրինական, քաղաքակիրթ եղանակ եմ առաջարկել: Սակայն կուսակցությունների, կազմակերպությունների, ընդդիմադիր ուժերի որոշ լիդերների վերապահ ու զգուշավոր վերաբերմունքը քաղաքացիական այդ, այո՛, ծայրահեղ ակցիայի հանդեպ, միջկուսակցական ու ներկուսակցական «իմաստո՞ւն» խաղերի հեռահար հաշվարկումներն ապացույց են, որ ընդդիմադիր ուժերի մեջ էլ քիչ չեն այն օղակները, ում շատ է ձեռնտու իրերի այս վիճակը: Դու էլ քո հերթին ներող կլինես, եթե կուսակցական պատվախնդրությանդ դիպա: Եվ թերթիր հենց քո խմբագրած շաբաթաթերթը, ու համոզվիր, թե քանի՞-քանի քրեական գործ է ամփոփված միայն «Ազատամարտ»-ում: Ա-ն ասելուց հետո, Բ-ն էլ պիտի ասել: Ես այդ Ա-ն ու Բ-ն ասել եմ: Ուրիշ ուժ և հնարավորություն չունեմ, թիկունքիս կանգնած պատնեշ չունեմ: Ունեցողներն էլ ձեռնպահ են

մնում: Սա շատ ավելի կարևոր է ու ցավալի, քան այդ ճղճիմ «ահա ես ով եմ»-ը...

Մ.Մ.- Իսկ ի՞նչ կասես մտավորականների այս վերջին դիմումի մասին: Հավատո՞ւմ ես, արդյոք, ազգային պետականության գաղափարի շուրջ համախմբման նրանց կոչի անկեղծությանը: Անունները միշտ չէ, որ ամեն ինչ ասում են, ու միշտ չէ, որ մարդիկ իրենց անվան տերն են մնում: Մեղք է մտածելն անգամ, որ այդ «փաղանգում» կարող էին լինել մարդիկ, որոնց անշահախնդրությունը կասկածի ենթակա չէր: Ինչ է ուրեմն տեղի ունենում: Մի՞թե այդքան հեշտ է դավաճանել սեփական խղճին, կոչմանը, նպատակին, գուցե զորավոր մի բա՞ն կա, որը սպառնում է ամենքիս, երեսուն արծաթից էլ զորավոր, ինչը, հարկավ, ունի իր «վարդապետությունը»:

Ա.Հ.- Դու գնացիր փիլիսոփայելու, ես այդ կողմերը գործ չունեմ: Ընդամենը կասեմ, որ շատ հետաքրքիր ու բնորոշական փաստաթուղթ է այդ Խոսքը: Ստորագրողների թվում են մեկ փայլուն, մեկ կիսափայլուն արձակագիր, մեկ իսկական, մեկ բնազդական, մեկ հարկադրական բանաստեղծ, սակայն գրասենյակային ցցուն ոճն ու «կացնային» շարադրանքը միանգամից հաստատում են, որ ուրիշ գրիչ է շարժվել թղթի վրա: Ես խոսել եմ Ա. Տերտերյանի, Տ. Լևոնյանի (ասել է թե նաև Գ. Գասպարյանի) հետ, քանի որ նրանց վերջին հրապարակումները միանգամայն «...ուրիշ օպերայից» էին: Ու նրանք պատասխանել են, որ տեքստին ամբողջությամբ ծանոթ չեն եղել: Պարզապես մշակույթի փոխնախարար Ստ. Լուսիկյանը հեռախոսով մեկ-երկու պարբերություն է ընթերցել և ասել, որ խոսքը հանրապետությունում քառասային վիճակի դեմն առնելու մասին է: Ու զարմանալի է, որ ընդդիմադիր մամուլը մինչև հիմա չի խորացել, թե ինչպես է «թխվել» այդ խոսքը: Բայց եթե ստորագրել են՝ ստորագրել են, արտահայտել են քաղաքացիական իրենց ուրույն կեցվածքը: Հատկապես Աղասի Այվազյանը և Շահեն Խաչատրյանը:

Ու գրում են. «Քննադատել պետք է և շատ խիստ, բայց ինչպե՞ս»: Իրոք, ինչպե՞ս: Ահա՛, նրանց մեջ վարպետ ու նահապետ

մարդիկ կան, գոնե մի եզակի անգամ, որևէ վարչակարգի օրոք, որևէ առիթով «շատ խիստ» քննադատելու օրինակ տար մեկնումեկը, մենք էլ հետևեինք այդ նմուշին: Առանձնապես Աղասի Այվազյանը և Շահեն Խաչատրյանը:

Նաև՝ առնվազն գոնե պիտի խուսափեին իրենց կոչումներն ու տիտղոսները «փայլեցնելուց»: Դրանք ձեռք են բերել նզովյալ բռնատիրության օրոք, հատկապես ակադեմիկոսներն ու դոկտորները, որոնց «փայլը» հաստատել է մոսկովյան ԲՈՀ-ը (ВАК):

Ես ինձ փնտրեցի «պիտակավորման» նրանց սանդղակում. «պառակտման քարոզիչ», «նորօրյա փանջունի», «այսպես կոչված մտավորական», «փոքրոգի», «շուրջն աղտոտող», «քաղքենի», «փառատենչ եսամոլ» և այլն: Այո, իրենց ասածով այդ ամենն ինձ էլ է վերաբերում: Ու... չվիրավորվեցի: Որովհետև սույն բառամթերքն ի սկզբանե օտարված է մտավորականի մտքից ու գրչից, և միաժամանակ շատ ու անկեղծորեն հավատալ եմ ուզում, որ նրանցից մի քանիսն անփութությամբ թույլ են տվել օգտագործել իրենց հեղինակությունն ու անունը: Այդ դեպքում, իրենք պիտի հանդես գան՝ պարզաբանմամբ:

Այլապես, ազգային պետականության շուրջ համախմբվելու գաղափարը նախագահական կառույցների ստորոտներում ամրագրելու նկրտումով նենգափոխելու, հենց մշակույթի, գիտության, դպրության հիմնահատակ ավերմունքին ականատես՝ «քաղաքական պայքարի հորիզոններում» շողացող արևներ խոստանալու գինը շատ շուտով կպարզվի, 17-ի շարքից նոր պաշտոնյաներ ու տիտղոսակիրներ առանձնանալու պարագային:

Հրանտ Մաթևոսյանը «ՀՀ» օրաթերթում գրել էր, թե սիրենք, սիրենք, սիրենք միմյանց, մեր... այլանդակներին, փոքրերին, բարձրներին և այլն: Թե ինքն ինչպե՞ս կարող է սիրել «շուրջն աղտոտողին» ու «փանջունուն», չեմ կարողանում ըմբռնել: Չեմ էլ կարողանում ըմբռնել, թե ինչպես կարելի է սիրել այնպիսի մեկին, ինչպիսին, ասենք, Խ. Ստամբոլցյանն է: Որովհետև ազգային պետականության գաղափարին ու գործին և ոչ մի ընդդիմություն, ոչ մի

թշնամի չէր կարող այն հուժկու հարվածները հասցնել պարբերաբար (երկիր ու պետականություն ներկայացնելով, պետական կարևորության հարցեր վճռելով), հրաժարականով ու «ինքնաբացահայտմամբ» էլ քարը քարի վրա չթողնել, ինչպես արեց հայոց նոր պետականության այդ «կարկառուն սյուներից» մեկը: Սակայն ո՞ւմ թողտվությամբ ու հովանավորությամբ...

Եվ հենց Հ. Մաթևոսյանի անկրկնելի «Մեծամոր»-ի տողերով էլ ավարտեմ պատասխանս. «Դու և քո խիղճը (կոչականը բաց եմ թողնում), դու և քո խիղճը, ուրիշ ոչ ոք քեզ ոչինչ չի կարող ասել»:

Մ.Մ.- Եվ, ի վերջո, ի՞նչ է ուզում Արմեն Հովհաննիսյանը:

Ա.Հ.- ...Երգել: Ուրիշ ոչինչ: Ելնեի փողոց, տեսնեի՝ մարդիկ գործի են շտապում, երեխաներն ու ջահելները՝ դպրոց ու համալսարան, հայերը ժպտում են, ծիծաղում ու կատակում, գործերս ավարտեի՝ տուն գայի, լողանայի, հետո զանգահարեի մտերիմ ու սրտակից մարդկանց, գային, նստեինք մի սիրո՜ւն ու սահո՜ւն սեղանի շուրջ, դերասան Անդրանիկ Հարությունյանը երգեր, հետո մի քիչ գինովցած՝ միանայինք բոլորով, Շերամ ու Ջիվանի ձգեինք, ու հերթը հասներ «Հայաստան, երկիր դրախտավայր» օրհնված ու օծված երգին: Լիաթոք ու լիիրավ երգեի (հերն էլ անիծած, թե բաղաձայն եմ), հետո մեռնելը ոչ մեղք կլիներ, ոչ էլ ափսոս...

Մ.Մ.- Իսկ եթե համոզվես, որ այդ օրը երբեք չի գալու, հնարավո՞ր է, որ երգել սկսես «Օտար, ամայի ճամփեքի վրա...»:

Ա.Հ.- Օրհնված ու օծված երգն ինձ համար միայն «Հայաստան, երկիր դրախտավայրն է», և Հայրենիքում տարագիր լինելը հազարապատիկ գերադասելի է օտար ու իսկապես ամայի ճամփեքից, օտար ու հիրավի ամայի պալատներից նույնիսկ...

Թիվ 11, 19-25 մարտ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Անչափելի է երիտասարդների դերը ազգային կյանքի բոլոր ասպարեզներում: Երիտասարդների ուսերին է ընկած ինչպես հայ-

ռենիքի պաշտպանության, այնպես էլ հոգևոր ու տնտեսական ոլորտների հիմնական ծանրությունը: Երիտասարդ սերնդի այսպիսի դերակատարությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի նա կարողանա դառնալ մշակույթի կրողն ու ենթական, այսինքն՝ յուրացնի, վերարտադրի և նորովի ստեղծի ազգային կյանքի արժեքները, տիրապետի հիմնարար գիտելիքներին, հմտություններին, հասնի ինքնաճանաչման և իր առաքելության գիտակցմանը: Երիտասարդությունը, շնորհիվ տարիքային և ընկերային իր յուրահատուկ վիճակին ի զորու է ստեղծագործական ներգործուն, արարչական ու հեղափոխական գործունեության, ամենամեծ զոհողությունների ու սխրանքների, որոնք հիմք են դառնում ազգի հարատևմանն ու բնականոն կյանքին: Սակայն այս ամենի համար անհրաժեշտ է նրա համար ապահովել ապրելու, սովորելու, աշխատելու գոնե նվազագույն պայմաններ: Եթե երիտասարդությունը փաղանգ առ փաղանգ իր մատաղ կյանքն է զոհաբերում հանուն Հայրենիքի, ապա Հայրենիքն էլ պետք է կարողանա կրթել, դաստիարակել և դժվար կյանքին նախապատրաստել երիտասարդությանը: Սա է ամեն մի ազգային պետության, կուսակցությունների և ազգային ինքնագիտակցություն ունեցող մարդկանց սրբազան պարտականությունը:

Այսօր ինչպե՞ս է իրականացվում այդ գործը, բավարարո՞ւմ ենք արդյոք երիտասարդ մարդկանց պահանջները, պայմաններ ստեղծո՞ւմ ենք նրանց համար: Լա՞վ օրինակ ենք ծառայում, լա՞վ ծնող ենք, դաստիարակ, ուսուցիչ, դասախոս, ընկեր: Ի՞նչ ենք արել վերջին տարիներին, ապահովե՞լ ենք պետական հոգատար վերաբերմունք, տե՞ր ենք կանգնել մեր պարտքին, թե լքել ենք մեր զավակներին, թողել նրանց բախտի քմահաճույքին...

Չտեսնված-չլսված բան է, որ հանրության ուժեղ և առողջ մասը կտրվի ուսումից ու աշխատանքից: Կարելի է պատճառաբանել, որ գազ չկա, ուժանյութ չկա, ջերմություն չկա: Իսկ մի՞թե դրանք բոլոր դարերում եղել են: Գուցե սրտացավությո՞ւն չկա, խի՞ղճ չկա, ցանկությո՞ւն չկա: Կամ էլ նպատակադրվածությո՞ւն չկա: Վիճակը

բարդանում է մեր ինքնարդարացման ճիգով, մեղքերը չխոստովանելու խիզախության բացակայությամբ: Համենայն դեպս այսօր հանցագործություն է պետականություն ունեցող ազգի համար հրաժարվելը իր արժեքների համակարգից, միտվածությունը որևէ մի նորասիրության, այլասիրության կամ ինքնությունը խաթարող մի այլ այլանդակության, եթե դու դրածո չես, եթե դու պատահաբար չես հայտնվել պետական վարչակազմում, եթե դու դիպվածով չես դարձել ծնող, կուսակցությունը չես ընտրել անհատ ու խղճուկ շահիդ համար: Այսօր, թվում է, թե մի չարագործ ուժ խափանում է մեր Հույս ու Ապավեն, մեր վաղվա Երաշխիք Երիտասարդության ազգային ոգով դաստիարակելու և բարեկրթելու գործը: Երիտասարդությունը մնացել է մեր ուշադրությունից դուրս և արագորեն ծերանում և իր վիճակից դուրս է գալիս: Ովքե՞ր են պատասխանատուները և դրանից խուսափողները: Հենց ինքը՝ երիտասարդությունը, որը կորցնելու համեմատաբար քիչ բան ունի, և կարող է ցանկացած պահի վճռաբար գործել, չի ներելու իրեն անտեսողներին ու արհամարհողներին: Բոլոր դեպքերում տուժողը լինելու է ազգը:

Թիվ 12, 26 մարտ - 1 ապրիլ

ԱՅԴՈՒՀԱՆԴԵՐՁ... ՆԱԽԱԳԱՀԸ ՇԱՀՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿ

Օրերս ՀՀ նախագահը Սահմանադրական խորհրդի ընդլայնված նիստում առաջարկեց նոր Սահմանադրություն ընդունելու այսպիսի մի տարբերակ. իր խմբի մշակած նախագիծը (ասենք՝ նախագահի նախագիծը) ներկայացվելու է խորհրդարանի քննարկմանը, ապա դրվելու է համաժողովրդական քվեարկման, եթե, իհարկե, արժանանա խորհրդարանի հավանությանը:

Կարելի՞ է խորհրդարանին ներկայացնել այլընտրանքային նախագիծ: Անհրաժեշտության դեպքում՝ այո՛: Եթե խորհրդարանը մերժի նախագահի նախագիծը, ընդդիմությունը կարող է քննարկ-

ման դնել իրենը: Բայց քանի որ այլընտրանքային այդպիսի մեկ նախագիծ կա, յուրաքանչյուրը կներկայացնի իր տարբերակը: Այլ խոսքով, քննարկման կդրվի 4-5 տարբերակ: Պատկերացրեք, թե ինչ կստացվի դրանից...

Ուրեմն, ավելի հավանական է, որ անցնի նախագահի տարբերակը, անկարևոր փոփոխություններով, որը ժողովրդի համար կնշանակի նաև ընդդիմության հավանություն: Ասել է՝ գրեթե ապահովվում է նաև հանրաքվեի «այո»-ն:

Նախագահի՝ ընդդիմությանը ընձեռած «երեք շանսերն» էլ՝

ա. եթե հանրաքվեի արդյունքները բացասական լինեն, ապա նախագահը հրաժարական կտա,

բ. եթե արդյունքները դրական լինեն, կկայանան նախագահի և խորհրդարանի նոր ընտրություններ,

գ. հարկ եղած դեպքում խորհրդարանի քննարկմանը կդրվեն այլընտրանքային նախագծեր,

լավագույնս հաշվարկված են, և հազիվ թե ընդդիմությանը հաջողվի խառնել նախագահի հաշիվները: Բոլոր դեպքերում շահում է նախագահը: Այնպես որ, ոչ մի շանս էլ չի ընձեռվում ընդդիմությանը: Ընդհակառակը, ընդդիմությունը ներքաշվում է վտանգավոր խաղի մեջ...

Նախագահը նախ դրանով կփորձի վերականգնել ժողովրդի վստահությունը, իսկ մյուս կողմից՝ ընդդիմության «օգնությամբ» ապահովել Սահմանադրության նախագծի սեփական տարբերակի ընդունումը, ինչը կվճռի նաև նախագահի պաշտոնում իր վերընտրման հարցը: Հակառակ դեպքում, օգտագործելով ընդդիմության միջև առկա հակասությունները, խորհրդարանին, պատկերավոր ասած, հասցնել ինքնասպանության, ինչը առանձնապես ցավ չի պատճառի ո՛չ ընտրվածներին և ո՛չ էլ մանավանդ ընտրողներին:

Այսպես թե այնպես, նախագահի առաջարկը արդեն իսկ աշխատում է իր օգտին: Քաղաքական պայքարի նրբություններին անտեղյակ մարդկանց շատ է հուզել նախագահի արխիդեմոկրատական առաջարկը: «Դրանից ավելի լավ շանսեր ով կարող էր

տալ ընդդիմությանը». ցավոք, այսպես մտածողներ էլ կան, թեև խոստովանում են, որ ինչ-որ բան, համենայն դեպս, անհասկանալի է... Բայց, մի բան ստույգ է. այսուհանդերձ և այդուհանդերձ նախագահը շահում է... ժամանակ: Սահմանադիր ժողովի մասին էլ ինքներդ մտածեք...

Թիվ 13, ապրիլ

Մուշեղ Միքայելյան.
«ԵԿԵԼ ԵՄ ՊԱՐՏՔԴ ՀԻՇԵՑՆԵԼՈՒ...»
Հրանտ Մաթևոսյան.
«ՄՆՈՒՄ ԵՆՔ ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ՊԵՅԶԱԺԻ ՄԵՋ...»

Մուշեղ Միքայելյան.- Եկել եմ պարտքդ հիշեցնելու: Էրիկ մարդու զրից եմ ուզում՝ ճշմարիտ, ազատ, հավաստի: Նախ՝ Հրանտ Մաթևոսյանի մասին, հետո՝ ինչի մասին որ Հրանտ Մաթևոսյանը կուզենա:

Չեմ թաքցնում, լեզվիս ծերին փուշ կա... Փույթ չէ, որ Հրանտ Մաթևոսյանը համաշխարհային մակարդակի գրող է: Ինձ համար մեծագույն գրող է:

Մեր հանդիպումը կապ չունի մտավորականների նամակի հետ, որի տակ կար նաև քո ստորագրությունը, որն ինձ համար անսպասելի չէր: Վաղուց էի ուզում քեզ տեսնել, դեռ նախագահական ընտրապայքարի օրերին, հարցնելու՝ ինչո՞ւ քեզ չես խնայում, եթե ոչ մեծ գրականության, ապա գոնե քո ընթերցողների համար:

Հրանտ Մաթևոսյան.- Մնում ենք դարձյալ նույն պեյզաժի մեջ, դեմներս դարձյալ Մասիսն է, Արագածը, Արարատյան դաշտը, հայոց հին հողն է: Ժամանակները փոխվել են, իսկ ժամանակը Հայրենիք հասկացության բաղադրիչ է, և թվում է՝ Հայրենիքն է փոխվել: Թվում է, այլևս ապրում ենք այլ երկրում, չնայած բնապատկերը նույնն է, նորից եմ ասում՝ չնայած բնապատկերը նույնն է: Հի-

մա հաճախ եմ դառնում անցյալ ժամանակներին: Չեմ ուզում անդրադառնալ, բայց զորավոր մի ուժ իմ հայացքը անընդհատ հետ է դարձնում, իսկ դա արդեն վերջի նշան է: Գրողական և անձնական կյանքի վերջի նշան է: Դիմադրում եմ, բայց այդուհանդերձ, հանձնվելու պես մի բան անկասեցնելիորեն լինում է: Հետ եմ նայում, թե ինչ կար, ինչն էր ահա պատճառը, որ այս փլուզումը այսպես անակնկալ, այսպես անկասեցնելի եղավ: Դեռ անցած ժամանակներում մի խոր ափսոսանք ու թերահավատություն կար մինչև ինձ ու իմ սերունդը արված գրականության նկատմամբ: Թվում էր, թե դա գրականություն է, և թվում էր, թե, այդուհանդերձ, գրականություն չէ: Թվում էր, թե ահա քիչ էլ, մի քիչ էլ՝ և կստեղծվի այն տեքստը, որ հավերժի մի մասը կկազմի և ժողովրդի հետ կգնա դեպի ապագա: Բայց ահա, այն փոքր պակասը, այն փոքր թերին, որ կար այդ գրականության մեջ, շատ էական թերի էր, և ունենում էր գրականության մեջ է՛ն դերը, որ ահա, որպես կենդանի մարմին, որպես ամբողջական, դիմացկուն, կայուն մարմին, գրականությունը չէր կայանում: Սա օրենք է, որ գրեթե կամ ոչ մի բացառություն չէր ընդունում: Ներառյալ նույնիսկ մեր անվանիները, մեր անցած ժամանակների, այս 70-ամյա ժամանակների դասականները, թերևս բացառելով Չարենցին: Թերևս միայն Չարենցին: Հանրությունը, փոխանակ տրամադրելու, ստեղծելու այն միջավայրը, որի մեջ արվում է աշխարհի ամենադժվար գործերից մեկը, թերևս ամենաքմայքոտ գործը՝ գրականությունը, խանգարում էր իր պետությամբ, իր կուսակցությամբ, գրաքննությամբ և ընթերցողով. և այնպես էր լինում, որ մեզ համար, շատ թե քիչ քիմքներս նրբացրած ընթերցողի համար, սնուցիչ աղբյուր էր դառնում Արևմուտքի գրականությունը, և մեր անցյալի գրականությունը, որոնք շատ թե քիչ ազատ ժամանակներում ստեղծվել էին: Փորձում էինք, նրանց օրինակով, մեծ գրականության չափանիշը չկորցնել և՝ ծանր մաքառումով մեր միջավայրի դեմ, ստեղծելուց մինչև հրապարակման դժվարությունը: Մաքառումով: Ահա, այս է, որ այսօր իմ մեջ բացակայում է. վտարվել է ինձնից հարգանքը առ ինձ և չեմ կարողանում

գրիչը ձեռքս առնել և չանսալով շրջապատիս աղմուկին, քաղաքական պայքար ասված այս գեշ թատրոնին, անել իմ գործը՝ որպես թե ապագա և այսօրվա սերունդների համար. այնպես որ, շոյված եմ քո շոյիչ բառերի համար, բայց քո վերաբերմունքը ես չեմ բաժանում: Ադրբեջանցի մի գրչակից ավելի կտրուկ է արտահայտվել. «Այրեցեք իմ գրքերը, այս պատուհասից իմ ժողովրդին նրանք ետ չպահեցին»: Ո՞վ գիտի, մեր տերը՝ Աստված: Պիտի հուսալ, որ խոսքի ազատությունը, արևմուտք-արևելք, հարավ-հյուսիս միասնական այս կյանքը, երևի թե գրականության համար ստեղծեն լայն աշխարհայացքի նոր մարդիկ, որոնք կարողանան ստեղծել գրականություն առանց նախապաշարումների, ազատ խոսքի գրականություն՝ առանց կռապաշտության, որ ընդունելի լինի և՛ արաբի համար, և՛ պարսիկի, և՛ ռուսի ու ֆրանսիացու:

Մ.Մ.- Շարունակեմ իմ հարցը, չվախենալով կրկնվելուց, որ այո, ինձ համար համաշխարհային գրականության մակարդակ է Հրանտ Մաթևոսյանի գրականությունը, բայց քո պատճառաբանությունները, չասեմ՝ լռելու, ասեմ՝ ստեղծագործական ճգնաժամի, ինձ չհամոզեցին: Չե՞ս կարծում, արդյոք, որ Աստված որքան շռայլ է տալու մեջ, երևի այդքան էլ դաժան է լռեցնելու մեջ: Ես չեմ ասում պատիժ բառը, որովհետև, ճիշտն ասած, չգիտեմ, հիմա սպիտակ թղթի առջև քո տառապանքի բեղմնավորությունը, համենայն դեպս, թեև դու ասացիր, որ քաղաքականությունն է խանգարում, ես վախենում եմ, որ էդ քաղաքականության մեջ կաս նաև դու:

Հ.Մ.- Ես էլ կարծում եմ, որ իմ ճգնաժամը ձեր ճգնաժամն է: Չգիտեմ, ինչ ջղերի և ինչ տարիքի էի լինելու, որպեսզի հաշտվեի, թե ահա այս այսպես էլ պիտի լիներ, խլանայի էս որոտի, էս գազամուղի, էս ցրտի, էս սովի, էս գազազածության դեմ, ես նստեի ու տեքստ անեի: Ձեր ճգնաժամն անցնելու հետ, Հայրենիքի ճգնաժամն անցնելու հետ կանցնի նաև իմ ճգնաժամը: Ես միջավայրի մի մասն եմ, իմ դաշտի մի խոտն եմ, փոթորիկը անցնի՝ բազմաթիվ շտկվողների հետ ես էլ կշտկվեմ: Գուցե ես չշտկվեմ, ինչպես որ ծերերը չեն շտկվի, տարիքավորները չեն շտկվի, նուրբ հոգիները չեն

շտկվի: Ձեր երթը կշարունակեք թերևս առանց ինձ: Չգիտեմ, չեմ ուզում կորչողիս հետ ուրիշ անուններ տալ: Ուրիշ անգամ ասել եմ. եղեռնի տարիները Թումանյանին տարան, 50-ամյա Թումանյանին տարան, 20-ամյա Չարենցին կոփեցին:

Մ.Մ.- Դու, կարծում եմ, ասացիր քաղաքացիական պարտքի մասին, իմ հարցրածը այլ էր, քաղաքականությանը մասնակից լինելը: Դու ԳԽ պատգամավոր ես, և ես նաև պիտի հարցնեմ, թե ինչի՞ դ էր էդ պատգամավոր լինելը: Ես նկատի ունեմ ակտիվ քաղաքականության մեջ լինելուդ հանգամանքը: Ես նկատի ունեմ նաև նախագահի լիազորված անձ լինելուդ հանգամանքը, ես նկատի ունեմ նաև քո հեղինակությունը քաղաքական որոշակի ուժերին ծառայեցնելու պատրաստակամությունդ... Ես այդ նկատի ունեմ քաղաքականությանը մասնակից ասելով:

Հ.Մ.- Գուցե կարողանամ իմ պատասխանի մեջ այնքան ստույգ լինել, որ ուղղակի գրավոր տեքստ լինի: Երբ դեռ էն անցած խաղաղ ժամանակներում գուշակում էին իմպերիայի անկումը, ես երևի թե եզակի տխրողներից էի, որովհետև գիտեի, որ իմպերիայի կործանումը առաջին հերթին Հայաստանի կործանում է: Ով ուրախանար-ուրախանար, ես՝ հայ մարդս, չպետք է ուրախանայի, որովհետև գիտեի, թե ինչ փոթորիկներ էին անցնելու մեր վրայով, մտաղրությունների ինչ ոստայնի մեջ և ինչ չար հողմեր էին բացարձակվում էս երկրի վրա: Ես գիտեի նաև, որ այդուհանդերձ, փրկության ամենաանկորուստ ճանապարհը պետականությունը ամրապնդելն է և հայ պետականությունը դավանելը: Անկախ նրանից, թե այդ պետականությունը ով կմարմնավորեր, կոմկուսը կմարմնավորեր, որևէ դիկտատոր, ԿԳԲ-ն, թե որևէ նույնիսկ վերջին գող: Որովհետև սարսափելիից սարսափելին անիշխանությունն է:

Պետականությունն է եղել իմ դավանանքը՝ երբ կոմկուսն էր, պետականությունն է դարձյալ իմ դավանանքը էսօր՝ երբ թերևս ոչ համազոր ուժի մի նախագահ է, և ըստ այդմ եմ դատում. և եթե վաղը Դաշնակցությունը լինի պետության գլուխ, թե մի այլ կուսակ-

ցություն, ես դարձյալ հանուն պետականության, հանուն քիչ ցնցումների, հանուն ոչ-անիշխանության կդավանեմ այդ պետականությունը: Այս մասին է խոսքը: Թե ինչու եմ եղել նախագահի լիազորված անձերից, դրա համար պետք է ետ նայենք, թե ովքեր էին առաջադրված մյուս թեկնածուները: Ես պաշտպանել եմ առաջադրվածների մեջ այդ ժամանակ լավագույնին: Իր մեջ եմ տեսել, իր կուսակցության մեջ եմ տեսել է՛ն անկուսակցականին, որը քաղաքական պայքարը սրացումների չէր տանի, ինչը մեր շատ դժբախտությունների պատճառն է դառնում: Վրիպել եմ թե չեմ վրիպել, դա այլ հարց է, բայց ես այն ժամանակ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հարցումին գրավոր պատասխանել եմ, ես իմ գրավոր բոլոր տեքստերի պատասխանատուն եմ: Ինքը ինձ թվացել է անկուսակցական, բոլոր կողմերից բաց և նոր ժամանակների հովերին ունկնդիր (ոչ թե կաղապարված որևէ կուսակցության անդամ կամ առաջնորդ), ով իր կուսակցությունը և քաղաքականությունը կոփելու է նոր ժամանակների մեջ, նոր ձև է առաջացնելու: Ինքը ինձ թվացել է և՛ արևմտահայ, և՛ արևելահայ, և՛ ռուսահայ, և՛ սովետական երկրի քաղաքացի, և՛ արևմտյան հովերի մարդ, աշխարհի չորս ծագերի վրա բաց մարդ, ով կարողանալու է տանել հանրապետության քաղաքականությունը:

Մ.Մ.- Համարյա տիեզերական մարդ, հա՞:

Հ.Մ.- Չէ, համարյա տիեզերական մարդ չէ՝ այլ մի մարդ, որ հասկանում է, որ հին նորմերն ու ֆորմերը անցած են, բայց կարող են հառնել որպես ատավիզմ, որպես անցյալի թախիծ, անցյալի կարոտ, ինչը վանելը, իր մեջ խեղդելը, ինձ թվում է յուրաքանչյուր քաղաքական այրի պարտականությունը պետք է լինի և յուրաքանչյուր կուսակցականի պարտականությունը պետք է լինի: Անընդհատ հեղափոխվել ժամանակների հետ, անընդհատ փոփոխվել, որպեսզի վաղը դու, որպես կարծրացած կրիա, պատյանի մեջ կարծրացած գոյ, ճանապարհից դուրս չնետվես: Անընդհատ հեղափոխվել: Անընդհատ չհեղափոխվելն էր, դոգմաներին գերի լինելն էր, որ ահա այս երկիրը վթարեց, սովետական կոչված աշխարհի

ամենազորեղ պետությունը, երկիրը վթարեց: Դոգմաները... Մեռյալները կառավարեցին ողջերին, մեռյալների կամքը կառավարեց ողջերին, և երկիրը վթարվեց: Իսկ անընդհատ հեղափոխությունը կյանքի առաջացրած անտեսանելի հոսանքները իր մեջ առնելն ու առաջանալն է: Ահա այդպիսի մի մարդ էր ինքը ինձ թվում, և իր կուսակիցները՝ նույնպես, որովհետև, կարծես թե, ստույգ-որոշակի ծրագիր չուներ:

Ես կարծում եմ, էդ մոլորությունը բոլորդ կամ բոլորս ունեցած կլինենք, թե չի կարող պատահել, որ որևէ հայ մարդ այնուամենայնիվ դաշնակցական չլինի, այո՞...

Մ.Մ.- Պարզվում է, որ կարող է: Շատերը դաշնակցական չեն... Հենց ինքը՝ Լ. Տեր-Պետրոսյանը, դաշնակցական չէ:

Հ.Մ.- Դու դաշնակցություն ասելով հենց կուսակցությո՞ւնն ես հասկանում...

Մ.Մ.- Ես հասկանում եմ գաղափարակիրը: Լ. Տեր-Պետրոսյանը Դաշնակցության գաղափարակիր չի՛ կարող լինել: Ես հիմա պիտի կասկածեմ Հրանտ Մաթևոսյանի դաշնակցական գաղափարակիր լինելուն էլ…

Հ.Մ.- Շնորհակալություն:

Մ.Մ.- Եվ պիտի խնդրեմ, որ դու չմոռանաս ասել մի շատ կարևոր բան. անընդհատ կրկնում ես՝ թվում էր, թվում էր... Կարծիքդ փոխե՞լ ես:

Հ.Մ.- Իրենից առաջ ես շատ ավելի մտածում եմ բոլորի մասին, ողջի մասին:

Մ.Մ.- Եթե չես մոռացել, խնդրում եմ չանտեսես, դեպուտատ լինելուդ մասին հարցս, ինչի՞դ էր պետք դեպուտատ լինելը, քանի՞ նիստի ես մասնակցել, ո՞ր հարցին ես դեմ քվեարկել, և հատկապես ո՞ր հարցին ես կողմ քվեարկել:

Հ.Մ.- Երկար ժամանակ է, որ չեմ մասնակցում Խորհրդի աշխատանքին: Հետո, մի ուրիշ բան կա, որ դու անտեսում ես: Կարծես թե մենք նույն օդում ենք կանգնած եղել և նույն օրվա մեջ ենք կանգնած եղել, երբ կայացել են ընտրությունները, և երեք տարի չի

անցել: Աչքներիս առաջ է այդ հիմնավոր փոփոխությունը առաջացել, և հիմա կարող են բոլորովին այլ մոտիվներ լինել, և եթե նոր ընտրություններ նշանակվեն, բոլորովին այլ վիճակ կլինի: Եվ այդ ժամանակ կարող ես հարցնել՝ քո ինչի՞ն է պետք, որ գնում ես ընտրվելու:

Մ.Մ.- Ճիշտ է, բայց հրաժարվելու իրավունքը քո ձեռքն է: Ցանկացած պահի կարող ես հրաժարվել:

Հ.Մ.- Հիմա՛, երբ պառլամենտի ֆունկցիաները փոխված են: Աչքներիս առաջ են փոփոխվել՝ անակնկալ բոլորիս համար: Հանրապետության նույն ղեկավար այրերի համար, ովքեր չգիտեին, թե ինչ է լինելու իրենց հետ: Չենք խոսում ինձ նման միամիտների մասին, որ երեք տարի հետո էին հասկանալու, թե ինչ եղավ: Դու և շատ ուրիշներն էլ անընդհատ մոռանում եք, որ նրանք կատարվող են եղել և ոչ թե կատարող: Ընդգծում եմ՝ լինող են եղել և ոչ անող: Որ մենք դրածոներ ենք, որ մենք խաղալիքներ ենք ուրիշների խաղի մեջ: Դու հիմա եկել ես մեղադրանքով իմ դեմ նստել և մեղադրում ես, թե էս ամբողջը ես եմ արել, գիտեի սումգայիթ է լինելու, սումգայիթին իմ պատասխանը գիտեի, թե ինչ է լինելու: Ամբողջը մեծ ուժերի կողմից կազմակերպված է եղել, և քո վերաբերմունքը լինողի, կատարվողի, գործիքի ֆունկցիա է եղել:

Ընդամենը:

Մ.Մ.- Այդ դեպքում, Դաշնակցությունից բացի, չկա՞ արդյոք ազգային այն ուժը, որը կարողանա իսկապես իր ժողովրդին տեր կանգնել, և իսկապես այնքան ուժեղ լինել, որ որոշ չափով խառնի այդ հաշիվները... Համենայն դեպս՝ ոչ այսպես կոչված «հայ մասոն»-ը...

Հ.Մ.- Մասոնն էլ ես կարգին չգիտեմ, թե ինչ է, հայ մասոնն էլ: Չգիտեմ ինչ շառլատանություն է կամ փրկություն է: Բայց էդ ռոմանտիկական երազները նաև իմ մեջ են եղել: Եթե Սումգայիթում իմ հեռավոր ազգականուհուն կամ ռուսախոս որևէ հայ աղջկա նեղում են, որևէ հայ ընտանիքի ջախջախում են՝ էստեղ իմ մարմինն է ցավում: Կարելի է իսկապես արթնացնել, արծարծել համաշխար-

հային հայության գաղափարը, մենք միմյանց ենք պատկանում: Դա եղել է, բայց ցավում եմ, որ դա երևի թե ռոմանտիկական երազ լինի: Ես ցանկություն ունեի նույնիսկ, որ նստեմ և հռչակագրի տեքստ գրեմ: Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի նկարագրությունից եմ սկսում, որ ես հայ եմ, կեսս՝ ռուսախոս, կեսս՝ Արգենտինայում, մի մասս՝ Սիրիայում, իմ մեղքը չէ... Մենք պատկանում ենք միմյանց: Ելակետս այս էր լինելու: Սա բոլորիս երկիրն է, մեկիս կորուստը բոլորինս է, փրկության ելքը միասին պիտի գտնենք: Բայց՝ ինչպե՞ս: Բայց հիմա, եթե քեզ հետ նստենք և այս հրաշքին տրվենք, ինչը արդեն պետք է կոնկրետ գործողություններ պահանջի, մեր հրաշքից ինչ կմնա:

Մ.Մ.- Ասացիր, որ դու ոչ թե ինչ-որ ուժի, կուսակցության, խմբավորման կողմն ես, այլ՝ պետականության, եթե նույնիսկ այն բոլշևիկյան լինի, որ էր: Ինձ համար մի քիչ անհասկանալի է, թե այդ պետականություն ասվածը ինչ է քեզ համար:

Հ.Մ.- Ձև, ձև է... Դու հայոց 20 թվական մտար, ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում 1,5 միլիոն հայություն, և մեկ միլիոն հայություն Ադրբեջանում ու Վրաստանում: Ադրբեջանում և Վրաստանում այդ հայությունից ոչինչ չի մնացել կամ գրեթե ոչինչ չի մնացել, իսկ Հայաստանի հայությունը եռապատկվել է այս ողորմելի, այս խեղճ ֆորմայի մեջ, որ էր՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Ավելին, Ադրբեջանում մնացել է միայն Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, զուտ մարզի ինքնավարության շնորհիվ, սա է պետականությունը: Սա էր քո պետականությունը, որի դեմ թուրքը կռվում է: Երբ հոգևոր ավտոնոմիայի սահմաններն էին էնտեղ մեր պատրիարքները զորեղացնում, նրանք խփում էին նաև նրան: Երբ էնտեղի պատրիարքները հայ մարդուն, որի հոգևոր տերն էին, խարանում էին որևէ հանցանքի համար, սուլթանն ասում էր՝ ոչ, մարմինը քոնը չի: Թուրքի կռիվը քո պետականության հնարավորության դեմ էր, եղեռնը քո պետականությունը բացառելու էր կոչված: Թե չէ կարող էիր թուրք քաղաքական որևէ ցինիկի հետ կրկնել. ինչ է եղել, երկ-

րից դուրս եմ արել, Հալեպի մանածագործարաններում աշխատում են, թուշիկները՝ կարմիր, աշխատավարձերը՝ սովորական, Ֆրանսիայում են, Ամերիկայում... հայերին ոչ մի բան էլ չի պատահել: Որովհետև նա գիտի, թե ինչի է խփել, նա խփել է քո հնարավորությանը՝ որպես պետականություն կայանալու, որպես ազգ պետականության մեջ հարատևելու: Այստեղ ինձ համար իսկապես սուրբ է, հենց այս գիտակցությունից ելնելով, սրբատեղի է ինձ համար հենց Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը:

Մ.Մ.- Այսօրվա մեր ունեցածը կփոխեի՞ր նախկինով:

Հ.Մ.- Չպիտի բորբոքվել: Եվ այս դեպքում հարկավոր է ամբողջ նախկինը համայնապատկերի բերել, և թե ինչի դեմ էինք խոսում, և ինչն էր, որ ահա այսպիսի կործանման, արագ փլուզման պատճառ դարձավ:

Մ.Մ.- Ցավը քո մեջ էր փլուզման նկատմամբ, որ դու ասացիր... Չգիտեմ, տարբեր ենք, տարբեր կերպ ենք մտածում...

Հ.Մ.- Շատ ցավում եմ, բայց տարբեր... Հենց էդպես էլ պիտի լիներ, տարբեր կերպ պիտի մտածեինք: Եվ մի քանի խոսակցությունների ժամանակ ես տեսել եմ, որ ստուգապես այլ բան են մտածում նրանք, ովքեր, ճիշտ է, էսինչ հնարավորությունները էս երկրում եղել են, բայց իրենք հիմա են արդեն որևէ բան: Շատ եմ ցավում, բայց էդ հարցը այդպես կա: Անընդհատ, անընդհատ և իսկապես բարձր մտավորական, թվում է նաև զգայուն այրերի հետ է խոսակցությունը եղել, ես տեսել եմ, որ ափսոսանքի ամենայն զգացողություն չունեն, որովհետև իրենք երեկ համարյա թե ոչ ոք էին, իսկ էսօր որևէ բան են:

Մ.Մ.- Այո: Բայց երևի դրա մեջ նաև խորը հասկանալու բան կա:

Համենայն դեպս, ես տեսնում եմ: Այդ չպիտի դարձնենք մեզ համար խռովելու կամ նեղսրտելու պատճառ: Այն, ինչ որ դու թվարկեցիր, անցած 70 տարիների համար որպես առավելություն, իմ կարծիքով, քննելի է: Ես կարող եմ տասնապատիկ ավելի օրի-

նակներ բերել, թե ինչ տարավ մեզնից էդ 70 տարին: Թեև այդ ընթացքում բնականաբար ստեղծվել էին արժեքներ, որոնց վրա չի կարելի խաչ քաշել: Ճիշտ չէր այսպես ամեն ինչը քանդելը, դա վերաբերում է նաև մեր նյութական, մշակութային արժեքներին...

Հ.Մ.- Ինտելեկտուալ, ինտելեկտուալ հնարավորությունների առարկայացմանն ու ծավալմանը:

Մ.Մ.- Այո, բայց Հրանտ Մաթևոսյանը նախ և առաջ իրեն պիտի այդ հարցը տար, և ոչ միայն իրեն, այլև Հրանտ Մաթևոսյանի իրավունքով՝ ուր որ անկ է: Որովհետև, դու այդ իրավունքը ունեիր: Չէ՞ որ իրենք էին քանդում, ինչո՞ւ էին քանդում: Երբևէ այդ հարցը տվեցի՞ր:

Հ.Մ.- Երբ քանդողները հրճվանքով քանդում են և քանդվողները հաճույքով քանդվում՝ դու նրանց արանքում ոչ ոք ես: Էլի ասեմ, որ եղել ենք խաղալիքներ ուրիշի ձեռքին...

Մ.Մ.- Հիմա էլ ենք:

Հ.Մ.- Դա անկախություն չի եղել, դա եղել է Ռուսաստանի քայքայումը, Սովետական Միության քայքայում է եղել: Դրա անունը կարող էին դնել անկախություն, ժողովուրդների ինքնիշխանություն, արծարծեին իսկապես ժողովուրդների ինքնիշխանության սուրբ գաղափարը, բայց դրա տեքստը եղել է Սովետմիության քայքայում, բաժանում:

Մ.Մ.- Ես նկատի ունեմ այսօրվա իշխանություններին, 70 տարվանը հասկանալի է:

Հ.Մ.- Մինչև հիմա էլ ինձ համար չի պարզվել, դա զարգացող դեպքերի առաջն առնելու անկարողությո՞ւնն է, թե՞ դիտումնավորություն: Շատ ավելի՝ անզորություն: Ինձ թվում է, թե պատահականորեն իրադարձությունների կատարին են հայտնվել: ...Իսկ մեկ անգամ արդեն իշխանության համն առնելուց հետո այլևս ամեն կերպ կառչելու, չզիջելու... Երկու բառով ասեմ. ողորմելիությո՞ւն է թե չարություն: Ինձ թվում է՝ անզորություն է, ոչ թե չարություն: Չարության մեջ դիտավորություն կա, ողորմելիության մեջ՝ անզորու-

թյուն: Գուցե սխալվում եմ, իրենց «նվաճումները» գուցե ատամնե-
րով պաշտպանեն:

Մ.Մ.- Ի՞նչ են ասում քեզ պահանջատիրությունը, Հայ դատը: Եվ դո՞ւ ինչ ես ասում:

Հ.Մ.- Առաջին անգամ լինելով մենք դաժանորեն բախվեցինք այն իրականությանը, որ անհնար է Անատոլիայի, Կովկասի մասին ճշմարտությունը ասել հայ-թուրք միասնական հրապարակում: 70 տարիների ընթացքում կարծես թե գուրգուրում էինք այդպիսի հնարավորություն: Դու՝ Սովետական Հայաստանի քաղաքացիդ, քո պատմաբանը, քո բանաստեղծը կարծես թե գուրգուրում էին: Մի որոշ ագրեսիայի շրջանում, պատերազմից հետո, խփելով խլելու միտքն էինք գուրգուրում: Ուրիշ դեպքերում, դեմոկրատիայի, ես ինչ գիտեմ ինչ աշխարհի վերլուծության պայմաններում գուրգուրում էիր մի ուրիշ միտք, թե իսկապես, ճշմարտությունը ժողովուրդների փոխհանդուրժման, միասնական կյանքի, առանց սահմանների հայրենիք ունենալու մեջ է, ինչպես միասնական Եվրոպայի գաղափարը կա, այնպես էլ միասնական Մերձավոր Արևելքի գաղափար կլինի... Բայց, ահա պարզվում է, որ դրանք Սովետական Միության հայ քաղաքացուդ տվայտանքներն են եղել: Հենց որ Սովետական Միություն կոչվածի կոնտեքստից պոկվեցիր՝ դու այլևս բախվեցիր էն իրականությանը, որը երբեք թույլ չի տալու քեզ այդպիսի միտք անգամ հանդուրժել: Եվ դարձյալ գլխիդ ծանրորեն կախվեց այն զարհուրանքը, թե ուժեղը պետք է խլի, ուժեղը պետք է տրորի, թույլերը պետք է ոչնչանան: Սա է ընդամենը: Եվ, ցավոք, թե խղճալով, թե չարությամբ եմ մտածում էն պետական գործչի մասին, որի ականջը բռնած տանելու են Քեմալ Աթաթուրքի գերեզմանին ծաղիկ դնելու: Նողկալի է: Ասենք, այսօր պետության գլխին Դաշնակցությունն է... Քեզ, որ պետական այր ես լինելու, գնացել ես այնտեղ, քեզ տանելու են: Քո վիճակը... Ես ցավակցելու եմ քեզ, իսկ դու ստիպվա՛ծ ես այդ անելու, թե՞...

Մ.Մ.- Ինձ հա՞ղց ես տալիս:

Հ.Մ.- Այո՛:

Մ.Մ.- Կուսակցությունը՝ այլ է, իշխանությունը՝ այլ: Դիվանագիտություն բանեցնում են: Ազգային արժանապատվությունն է չափանիշը:

Հ.Մ.- Ճանր իրավիճակներն իրենք են տալիս պատասխանը, ինչը կտար յուրաքանչյուր հայ, էդ պատասխանատվությունը կրող յուրաքանչյուր հայ: Ամերիկայի հեռուներից չէ...

Մ.Մ.- Իմ նպատակը չէ իշխանությունների մասին խոսելը, ինձ հետաքրքրում է Հրանտ Մաթևոսյանը, և ես ուզում եմ հարցնել նաև, թե արդյոք քիչ առաջ ներկայացրած քո պահանջատիրության պատուհանի՞ց ես նայում նաև Արցախյան պատերազմին, և ի՞նչ է քեզ համար Արցախի պատերազմը...

Հ.Մ.- Արցախը իմ մարմնի մասն է, Արցախը իմ մասն է: Արցախ չկա ինձ համար: Արցախը Հայաստանն է: Ասել եմ, Արցախը արցախցիներինն է: Իսկ թուրքը Արցախին նայում է որպես անտեր բաղի կամ ոչխարի հոտի, որ կարող է իմը լինել կամ քոնը լինել: Արցախը Արցախինն է:

Մ.Մ.- Ի՞նչ ունի այսօր ազգդ, որպեսզի ես հարցնեմ՝ իսկ ի՞նչ չունի...

Հ.Մ.- Ես կասեմ՝ ուրիշ երկինքներ չունի: Էս է իմ երկինքը: Եվ գիտակցություն ունի, որ երբ այստեղից պոկվեց, հավիտյանս վերջացավ իր ազգության հարցը, իր գոյության հարցը:

Մ.Մ.- Ուրեմն ունի ազգը իր աշխարհատարածքի ու ազգային պատկանելության գիտակցությունը, ունի երկինք ու էս կտոր հողը: Չունի այն պետականությունը, որը ես ու դու երազում ենք...

Հ.Մ.- Այո, աչքիս առաջ փլուզեցին, աչքիս առաջ հիմարաբար փլուզեցին...

Մ.Մ.- ...ազգը չունի մեր ցանկացած անկախությունը, չխաբենք իրար, ազգը չունի մեր ցանկացած պետականությունը, չունի...

Հ.Մ.- Երկիրը, ազգը և պետությունը անկապտելի են միմյանցից: Ազգդ երկիր չունի: Որպես ազգ՝ կա, պետականություն էլ, ենթադրենք, ունի, բայց երկիր չունի: Յուրաքանչյուր երեք բնակչից

երկուսը եկվոր են, ռեզերվացիա է սա... քշել են ուղղակի քեզ սարերը՝ ոչնչացնում են...

Մ.Մ.- ...ուրեմն՝ հետևությունը. ունենք ճշմարիտ ազգ լինելու և պետություն ունենալու գերխնդիրը: Ունենք դա...

Հ.Մ.- Երկիր ունենալու գերխնդիր, երկիր ունենալու գերխնդիր:

Մ.Մ.- ...հետևաբար՝ յուրաքանչյուրիցս մեր չափով, ինչքան Աստված մեզ տվել է: Դրան է, որ պիտի անմնացորդ լծվենք: Ո՞նց է հնարավոր, որ պետություն և ազգ չունեցող ժողովրդի զավակը լինի կոսմոպոլիտ, պացիֆիստ, լինի կոմունիստ, մասոն, լինի ես ինչ գիտեմ ինչ: Ո՞նց է հնարավոր, իրավունք ունի՞:

Հ.Մ.- Բարդ հարց է, որի առջև մեր բառամթերքով տկար ենք: Կոմունիստ ենք եղել երկու-երեք տարի: Հետո, յուրաքանչյուր հայ մարդ լցվել է իրական բովանդակությամբ, դոգմաները չեն կարողացել երկիրը կառավարել, կյանքը իրականում գնացել է իր ընթացքով, կոմունիստներն էլ ահա մնացել են որպես սոսկական իշխանություն: Իրականում երկիրը առաջնորդել են ուրիշ բաներով: Եթե երկիրը անոմալ վիճակի առաջ կանգնեց ու կործանվեց՝ դրա պատճառը ռազմական ծախսերն էին, ուղղակի չափից ավելի՝ 70 տոկոս ռազմական ծախսերն էին պատճառը: Հիմա, երևի մասոններն էլ, երևի մյուսներն էլ, երևի մնացած-մնացած բոլոր հասկացություններն էլ, այդուհանդերձ, կաղապարներ են, որոնց իրական բովանդակությունը մենք չգիտենք: Կամ իրենց հանճարեղ առաջնորդներին, կամ իրենց երբևէ իրականությունը անպայման սթափեցնող ապտակներ կտա: Հնարավոր է, որ նրանք հեղափոխվում են, կարողանում են ահա անընդհատ փոփոխվել: Ուրեմն, կարելի է, որ իրականության առաջ, իրականության ճնշման տակ, իրականությունն իրենց մեջ առնելով, կազմավորվեն այն մարդիկ ու խմբակցությունները, որոնց անունը բառերի մեր աշխարհում մասոն է, կոմունիստ է, կամ դաշնակցական, բայց նրանք իրականում միայն իրենց վաղվա սերնդի հոգսը իրապես կրող, իրենց ու մեր գոյության հոգսը կրող հայ մարդիկ են, ազգության ներկայացուցիչներ են և տանում են ազգի քաղաքականությունը:

Մ.Մ.- Դու այդպե՞ս ես կարծում:

Հ.Մ.- Մենք նրանց հացն ենք, նրանց գոյության հիմքն ենք, չի կարող պատահել, որ նրանք իրենց հիմքերը քանդեն;

Մ.Մ.- Այդ հարցը տվեցի, որպեսզի հասնենք ճիշտ այստեղ, և ես հարցնեմ՝ քեզ աշխարհը ճանաչո՞ւմ է:

Հ.Մ.- Չէ, չի ճանաչում:

Մ.Մ.- Ես դա պիտի կապեմ հենց նրա հետ, որ մենք ազգ ու պետություն չենք:

Հ.Մ.- Դե հիմա... ես էլ մի ուրիշ բանի մասին հարցնեմ: Խրուշչովը երբ Ամերիկա գնաց՝ իր հետ տարավ Սովետմիության մեծագույն գրողին, որը ստեղծել է 20-րդ դարի մեծագույն վեպը՝ «Տիխի Դոն»-ը: Ամերիկայում ոչ ոք նրան չէր ճանաչում: Բայց ռուս պետականությունը կա՞ր: Կա՛ր: Չէին ճանաչում, ուրեմն պետականության հետ ինչ կապ ուներ:

Մ.Մ.- Ես ուզում եմ ասել, որ ազգիդ պիտի ճանաչեն, որ ազգիդ գրողին ճանաչեն: Ամերիկացի Սարոյանին են ճանաչում, ոչ թե հայ Սարոյանին, ռուս Այվազովսկուն են ճանաչում, ֆրանսիացի Ազնավուրին և, որ ավելի դաժան լինենք՝ թուրք Չուխաջյանին: Ուզում եմ ասել, նախ ազգ ու պետություն դառնալու գերխնդիրն ունենք... թե չէ՝ հա՛յ քաղաքակիրթ, հա՛յ Եվրոպա, հայ աշխարհ, հայ կնիկն էլ՝ քեզ փեշքեշ... Ուզում եմ ասել՝ ինչ էլ անենք, ուր էլ գնանք, վերջը դառնալու ենք ազգայինին:

Այո, աշխարհը «Կլոր է... Չին եթե արևի հետ քշենք արևմուտք, կգնա՞նք, դուրս կգանք արևի հետ դարձող արևելքի անապատը»: Ինչո՞ւ ես դու այդ քաղաքակրթություն կոչվածը, այդ Եվրոպա կոչվածը դարձրել մի տեսակ տեսլական: Ես դա պատահական չեմ ասում, որովհետև հիշում եմ, ցավով եմ հիշում քո մի հեռուստաելույթը, երբ դու մոտավորապես ասացիր՝ ի՞նչ եք կպել ազգայինից, հայացքներս ուղղենք դեպի քաղաքակիրթ Եվրոպա... Նաև ասացիր՝ ի՞նչ ազգային բանակ: Այդ ժամանակ դեռ Եվրոպան խաղաղ էր, ո՛չ Հարավսլավիայի հարց կար, ո՛չ Գերմանիայի, ո՛չ Չեխոսլովակիայի... Բայց այսօր կա սերբական պատերազմ, հար ու նման

մերինին, կա միացյալ Գերմանիա: Կա առանձին Չեխիա և առանձին Սլովակիա՝ ըստ ազգային պատկանելության: Տեսա՞ր քո քաղաքակիրթ Եվրոպայում ինչպես է «քաղաքակրթորեն» վերածվում քարտեզը...

Հ.Մ.- Ճիշտն ասած, ես այդպիսի ելույթ չեմ հիշում... Մի գիտակցություն ունենալով, մի ստույգ գիտակցություն, որ չի կարելի օտար կուռքերին ամեն անգամ ուխտագնացության գնալ, նրանք ովքեր էլ ուզում է լինեն,- հնարավո՞ր է, որ ես այդպիսի ելույթ ունեցած լինեմ, հենց այդպես՝ «ի՜նչ եք կպել ազգայինից...»: Դրսեցիների համար հարցազրույցներում իրենց հայտնի անուններ տվել եմ: Եվրոպացի կամ ռուս: Տվել եմ, որպեսզի իրենց անծանոթ հայերի էությունը իրենց համար գոնե մոտավորապես հասկանալի լինի:

Մ.Մ.- Ես իմ տեսածն ու լսածն եմ ասում... Համենայն դեպս, մտահոգությունս կարողացա հասկացնել, չէ՞: Որ վերջիվերջո... թող էդ քաղաքակիրթ աշխարհը լինի, թող էդ քաղաքակրթությունը լինի, բայց մենք իրավունք չունենք թաածելու էդ սիրուն ու հրաշալի երկինքներում մեր ցեխոտ, մեր ջարդված թևերով:

Հ.Մ.- Շատ ճշգրիտ է:

Մ.Մ.- Եվ ինձ տանջող մի հարց. բայց նախ ասեմ, վերջերս կարդացի Մահարուն գրած քո երկու նամակը, որոնք պահվում են Գրականության և արվեստի թանգարանում: Հիշո՞ւմ ես այդ նամակները...

Հ.Մ.- Հիշում եմ, որ գրել եմ:

Մ.Մ.- Դրանցից մեկում դու ասում ես, որ՝ «Այսօր անհրաժեշտություն կա Դաշնակցությունը վերանայելու»: Թեև համատեքստում կարելի է հասկանալ, թե ինչ ես ուզում ասել, բայց և այնպես, շատ կուզենայի ասես, թե ինչ նկատի ունեիր:

Հ.Մ.- Քսանհինգ տարի առաջ է եղել, չեմ կարող հիշել, իմ աչքի առաջ միայն ուղղակի խեղդվող Մահարին է, թունավոր խպիպից խեղդվող Մահարին է, որի շատ արժեքավոր գիրքը այրում էին իր դռների տակ:

Մ.Մ.- «Այրվող այգեստաննե՞ը»:

Հ.Մ.- Այո, «Այրվող այգեստանները»: Անցած ձմեռ նորից կարդացի: Ուղղակի հրաշալիորեն կարդացվող գիրք է: Ես ուզում եմ գնահատած լինել նաև գործի բերած վերքաղաքական, արտակուսակցական, իրական արժեքը: Վանի կարոտի արծարծումը, ազգային հարցի արծարծումը Մահարունն է, ինքը բերեց: Որովհետև գեղարվեստորեն դա կայացած գործ է: Համոզումներով շատ ավելի կայուն մարդը կարող է քաղաքական վեպ գրել, քաղաքական ոչ մի վրիպակ չտալ, բայց հենց գործը վրիպակ կլինի, որովհետև գեղարվեստորեն չի կայանա, որպես մարմին մեռած ծնունդ կլինի:

Ճի՞շտ է, թե ոչ: Մահարին ինձ համար, կենդանի, մեռնող Մահարին, այնպիսի արժեք էր, ինչքան որ մեռած, անցած Արամ Մանուկյանը: Հանուն Արամ Մանուկյանի, նրա ոտքերի տակ այս մեռնող մարդուն մորթելը ինձ անբարոյականություն էր թվում: Ես պիտի որ Մահարու կողքին կանգնած լինեի և պաշտպանեի նրան:

Մ.Մ.- Խոսակցություն կա, որ վերահրատարակության է պատրաստվում «Այրվող այգեստանների» սկզբնական տարբերակը: Ի՞նչ եք կարծում, այսօր դա ինչպե՞ս կընդունվի:

Հ.Մ.- Թող վերահրատարակվի: Ուժեղ պիտի լինի այն ազգը, ուժեղ պիտի լինի այն կուսակցությունը, որը կկարողանար այս բազմաձայնությունը հանդուրժել և ընդունել: Թե չէ ի՞նչ կստացվի, եթե այդպես վտարեն ապազգային թվացող ամեն բան... Հետո, ասենք՝ Մարտիրոս Սարյան: Ազգային արժեք է, քո ազգն է ներկայացնում, բայց որովհետև դաշնակցական չի եղել, վերցնես վտարե՞ս:

Մ.Մ.- Շատ տարբեր են:

Հ.Մ.- Տարբեր չեն: Ազգային մշակույթ է, իսկ դու ազգային կուսակցություն ես: Այն եզակի կուսակցությունը, որ վաղը շատ հնարավոր է, որ պետության գլուխ լինի:

Մ.Մ.- Ես խնդիր չունեմ Դաշնակցությանը պաշտպանելու Մահարուց...

Հ.Մ.- Ի՞նչ կարծիքի ես, երբ Ֆրանկոն ասում է, թե Լորկան իմն է: Երեկ մորթել է Լորկային, ասում է՝ Լորկան մերն է:

Մ.Մ.- Շատ ճիշտ է ասում: Բայց Մահարու կռիվը որքան Դաշնակցության դեմ էր, ավելին՝ մեր պատմության դեմ էր... Ես հասկանում եմ, ինչն ես դու գնահատում Մահարու գրքում: Դու գնահատում ես գեղարվեստը, գրականությունը: Ես չեմ հասկանում, թե ինչ օձի խելք պետք է ունենալ Մահարուն այն խորհուրդները տալու, որ դու ես տալիս քո նամակներում: Այդ խորհուրդներով եթե նա գար Հայաստան, ուրեմն դու էլ նրա հետ էիր գալու, Մահարու «զենքերով»: Ո՞ւմ դեմ կռվելու, ինչո՞ւ: Մահարու զենքերով գալու էիր և ասելու, որ Մահարին ճիշտ է: Դաշնակցությունը այս է արել, այն է արել...

Հ.Մ.- Օհո, Մահարու մոխիրը հողմացրիվ անող ու իմ գլխին էլ հավատաքննիչ եղար: Դե, ուրեմն, ընկեր խմբագրապետ, ասեմ. «Անլռելի զանգակատան» մեջ կուսակցության մասին ասված թեկուզև ոչ այնքան վիրավորական արտահայտությունից մինչև հոգու խորքը վիրավորված մարդը (ես) չէր կարող «այս է արել, այն է արել» ասել: Այդպիսի մի արտահայտություն կա՞ր «Զանգակատան» մեջ:

Մ.Մ.- Կա՛ր:

Հ.Մ.- Ահա:

Մ.Մ.- Բայց Պարույր Սևակն էլ Մահարու գրքի մասին իմ տեսակետին էր, ճի՞շտ է: Եթե դու կարծում ես, որ այդ գրքի վերահրատարակումը իր նախնական տարբերակով ճիշտ է, ուրեմն ինչ քսանհինգ տարվա մասին է խոսքը:

Հ.Մ.- Ո՛չ Մահարու վերախմբագրումն էր անհրաժեշտ, ո՛չ էլ այդ առաջին տարբերակով վերահրատարակվելը, ո՛չ էլ քո այս փոթորիկը մի բաժակ ջրի մեջ:

Մ.Մ.- Փոթորիկը կտեսնես վերահրատարակվելուց հետո, իմ ու քո մտահոգությունը պետք է այն կանխելը լինի: Հուսով եմ՝ Մահարու եղբոր կարծիքը քեզ հայտնի է:

Հ.Մ.- Ո՛չ: Չգիտեմ ով է Մահարու եղբայրը:

Մ.Մ.- Բարձր մտավորական մեկը, որը Մոսկվայից, պարզվում է, ավելի լավ էր տեսնում Հայաստանը, քան մենք՝ Հայաստանում:

Նա էլ անխնա քննադատում էր Մահարուն... Սակայն այդ չէ էականը:

Հ.Մ.- Այնտեղ ինձ համար արժեքավորը քաղաքագետ Մահարին չէ, այնտեղ ինձ համար մեծարժեքը Վանը վերածնող Մահարին է:

Մ.Մ.- Լավ, այդ գնահատումների աշխարհայացքային քո գնահատումը ո՞րն է:

Հ.Մ.- Չթույլատրվող ժամանակներում, չխրախուսվող պայմաններում նրանք Հայրենիքի գաղափարն են արծարծել: Սա ինչքան էլ միամիտ համարենք, այնուհանդերձ մի Հակոբ Մնձուրի, մի Վահան Թոթովենց՝ ասենք թե իր Խարբերդի նկարագրությամբ, մի Գուրգեն Մահարի իր «Այրվող այգեստաններ»-ով՝ Վանի, բերել են ժողովրդի նիստ ու կաց, կյանք... Հայրենիքի գաղափար են արծարծել: Հայրենիքի գաղափար են բորբոքել: Սա նրանց վաստակն է: Իսկ մենք իրենց այդ փռած գետնի վրա, իրենց բերած հիմքի վրա կանգնել՝ իրենց խփել ենք: Վանը որպես հայրենի եզերք մինչև Մահարին՝ չկար, փաստորեն որպես այդպիսին չկար հայ ընթերցողի, հայ մարդու համար: Ցնցվելու նամակներ են, մայրը երբ ճանապարհ է ընկնում Հայոց ձոր, Վարագա վանքի տակ տղաների ժողովը, Մուշեղ Բալդոշյանի կերպարը, մյուս կերպարները, ծափ ու ծիծաղը, հումորը, կատակը, խոհանոցը, համ ու հոտը, այս է ամբողջը... սա Հայրենիք է: Սա արժեք է: Սա է իրական արժեքը: Ուրիշ ձևով՝ սա հայրենաստեղծություն է:

Մ.Մ.- Դու գրեթե այսպես ուզեցիր ասել՝ ամեն մի կարգին հայ մարդ չի կարող Դաշնակցությունից բան չունենալ իր մեջ: Ճի՞շտ է: Ես ուզում եմ շեշտել դա:

Հ.Մ.- Եվ հակառակը, Դաշնակցությունը պարտավոր է որպես հայոց համազգային կուսակցություն բոլոր կարգին հայերից իր մեջ մի բան ունենալ:

Մ.Մ.- Ինձ տանջող մի հարց էլ կա, որի պատասխանը երևի մասամբ ստացա: Ես եղա Կանադայում, որտեղից դու նոր էիր վերադարձել: Եղա դաշնակցական մի ընկերոջ տանը, ուր դու էլ էիր

եղել, կարծեմ Ռազմիկ Դավոյանի հետ: Ինձ հարցրին. Հրանտ Մաթևոսյանը դաշնակցակա՞ն է: Իմ բացասական պատասխանը տարակուսանքով ընդունեցին: Բայց երբ մի լուսանկար ցույց տվեցին, դու երևի հիշում ես, կանգնած ես Քրիստափորի կիսանդրու կողքին, Դաշնակցության կարմիր դրոշով փաթաթված, ձեռքդ Քրիստափորի ուսին... Հիշում ես, չէ՞:

Հ.Մ.- Այո, 1989-ին, երբ Հայրենիքի առաքյալները կարմիր դրոշի տակ չէին նստում, Քրիստափորին չէին ողջունում և դաշնակցականի հետ հաց չէին կիսում:

Մ.Մ.- ...Ուրեմն, երբ լուսանկարը տեսա, տարակուսանքը հասկացա: Հարցս այս է. ինչո՞ւ էիր այդ անում, ինչի՞դ էր պետք:

Հ.Մ.- Այ քեզ բա՜ն, անում էի, որովհետև անելու էի: Կարծեմ թյուրիմացության մեջ չեմ, եթե ասեմ՝ Հայրենիքում և Սփյուռքում Դաշնակցությունը, կուսակցությունը, թեկուզև մեկ և նույն անունն են կրում, տարբեր առաքելություններ ունեն: Սփյուռքում Դաշնակցությունը ինձ համար մարմնավորում է պետականությունը:

Մ.Մ.- Եթե անգամ տարբեր են, նույն կուսակցությունն է: Այսօր Դաշնակցությունն ունի եթե ոչ միայն Հայաստանին, ապա նախ և առաջ Հայաստանին ծառայելու առաքելությունը: Դաշնակցությունը, դա լինի Սփյուռքում, դա լինի որտեղ ուզեք, ունի մեկ և նույն Հայրենիքը՝ Հայաստանը: Եվ մեկ և նույն բաղձանքը՝ Հայրենիքում ստեղծել Հայոց պետականություն: Եթե դու դարձյալ պետականությանն ես փարվել, հարց չունեմ:

Հ.Մ.- Շնորհակալություն, լուսավորչական աշխատանքիդ համար...

Մ.Մ.- Ի դեպ, Դաշնակցությունից դուրս եկած, այդպես ասենք, կամ Դաշնակցությունից վտարված անունները, որոնք, գոնե մտավորականներինը, դու լավ գիտես, ինչո՞ւ են այստեղ այդքան պարզունակ, երբեմն՝ տմարդի ձևով շահարկում...

Հ.Մ.- Չհասկացա, ո՞ւմ մասին է խոսքը...

Մ.Մ.- Օրինակ, ասենք, «Հայաստանի Հանրապետություն» թերթը, օրինակ, ասենք, ինքը՝ նախագահը, հատկապես իր հեռուստատեսային հայտնի ելույթով:

Հ.Մ.- Դա ինձ սաստիկ դուր չի եկել: Ա՛յ, հենց այդպես բացեիբաց կգրես, խոշոր տառերով՝ ԴԱ ԻՆՁ ՍԱՍՏԻԿ ԴՈՒՐ ՉԻ ԵԿԵԼ, ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴՈՒՐ ՉԻ ԵԿԵԼ: Ես դրա շարժառիթները չեմ հասկացել, բացարձակապես չեմ ըմբռնել: Դա ինձ համար անընկալելի է եղել, ինչպես որ հիմա քո որպես թե ուղղափառ կուսակցականությունն է ինձ համար անընկալելի: Եվ դա ուղիղ հակադրված է եղել իմ գրած ու «Հայաստանի Հանրապետություն»-ում չհրապարակված իմ այն հույսին, թե ինքը ինձ թվում է բոլոր կողմերի առաջ բաց մարդ: Ովքեր որ Հայաստանի վերաբերմամբ որևէ միտք կբերեն, հայրենանպաստ որևէ ծեղ կբերեն, ինքը, մերժելով իր կուսակցականությունը և բոլորի կուսակցականությունը, բոլոր կողմերի վրա բաց կլիներ և կզորանար համայն հայության զորությամբ: Համայն հայությունն է, որ ինքը ինձ համար պիտի մարմնավորեր: Եվ շատ ծանր է եղել ինձ համար իր այդպիսի կտրուկ արտահայտված կուսակցականությունը: Դա երևի խոր քաղաքագիտություն է, որ ես չեմ հասկանում, երևի թե կուսակցականներիդ գաղտնիքն է:

Մ.Մ.- Ես կարծում եմ, որ նույն կերպ ես դու դատում նաև Հրայր Մարուխյանի վտարման հարցի վերաբերմամբ:

Հ.Մ.- Բախման առիթով «Երկիր»-ին ես հեռախոսով ասացի, մոտավորապես. Հրայր Մարուխյանը պետք է Հանրապետության նախագահից յոթ օր ժամանակ խնդրի, յոթ օր առանձին խորհի և ասի, թե Դաշնակցությունը ինչ կաներ, եթե պետության գլուխ ինքը լիներ: Եվ ինչ կաներ ինքը՝ Հրայր Մարուխյանը, եթե Դաշնակցությունը լիներ պետության գլուխ:

Մ.Մ.- Գուցե մի քիչ ավելի հասկանալի ինձ բացատրես դա:

Հ.Մ.- Ես Հրայր Մարուխյանից պետական այրի մոտեցում էի ուզում:

Մ.Մ.- Որը չեղա՞վ:

Հ.Մ.- Պետական այրի մոտեցում էի ուզում: Էլ մանրամասները չգիտեմ: Դա ինձ համար շատ անակնկալ էր: Շատ բան չգիտեմ մինչև հիմա էլ... Իսկ կուսակցությունը ինչո՞ւ չէր կառավարությունից մարդ հրավիրում իր ժողովին:

Մ.Մ.- Ընդհանուր ժողովը գաղտնի չէր: Հրավիրված էին և՛ Հանրապետության նախագահը, և՛ վարչապետը, և՛ ԳԽ նախագահը, և՛ ՀՀՇ-ն, և՛ ՍԻՄ-ն ու ԱԻՄ-ը... Տարօրինակ է, որ դու այդ չգիտես: Պարզապես նախագահը չէր ուզում, որ ժողովը տեղի ունենա: Դա ոչ միայն Հրայր Մարուխյանի վտարումն էր Հայաստանից, այլ ամբողջ ժողովականների, իսկ խորքում՝ գուցե և ամբողջ Դաշնակցության: Անձի հարց չկար:

Հ.Մ.- Կարծում եմ՝ որպես հայ ազգի երկու նշանավոր մարդիկ, նրանք պետք է ընդհանուր լեզու գտնեն և հասկանան, թե ինչ է ուզում ժողովուրդը, ժողովուրդը ինչ է պահանջում իրենցից: Ուրիշ անգամ ասել եմ՝ կուսակցականությունը առաջին Հանրապետությունը կործանեց, կուսակցականությունը ծվատում է նաև այս Հանրապետությունը: Սարսափելի կլինի: Նրանք պետք է երկուսով միասին մտածեն, որպես... նահապետներ մտածեն: Դա նրանց պարտականությունն է: Առաջընթացի այլ կերպեր չկան: Կուսակցական բախումներ պետք է լինեն՝ միմյանց միտք թարմացնելու, միմյանց խելք սովորեցնելու, միմյանց պատժելու, միմյանց տեր կանգնելու այս պետական կառույցի մեջ: Բայց նաև պետք է, ես ինչ գիտեմ, թուրքի խելք ունենալ անհրաժեշտ պահին լռելու, անձնական, կուսակցական և թայֆայական էգոիզմը քո մեջ խեղդելու և կանգնելու որպես Հայրենիքի շարքային մարտիկ: Հայրենիքի, առանց որի, ուղղակի, ո՛չ դու, ո՛չ էլ քո գերեզմանը տեղ չեն ունենալու այս արևի տակ:

Մ.Մ.- Եվ մի հարց էլ. քեզ համարում են նոմենկլատուրային մտավորական: Դա քեզ պետք է որ հայտնի լինի: Եթե պիտի ժխտես, դա քո գործն է: Իմը երեսիդ ասելն է ու բացատրությունն պահանջելը: Միայն չասես, ինչ իրավունքով...

Հ.Մ.- Կուզենայի լինել նոմենկլատուրայի մեջ, այսինքն՝ ասե՛լ և իմ խոսքը օրենք դառնար քո և քո լրագրի մասին, բայց, ցավոք, չեմ, չեմ կարողանում նոմենկլատուրա ընկնել:

Մ.Մ.- Դա էլ ենք տեսել: Անուններ չտամ: Կարոտախտդ էլ է հասկանալի... Իսկ եթե նոմենկլատուրայինը քեզ շատ վիրավորեց, ասեմ՝ պալատական:

Հ.Մ.- Շնորհակալություն, որ առաջին մեծարման խոսքերից հետո պիտի խոսքդ բերեիր հասցնեիր դրան:

Մ.Մ.- Ես իմ պարտքն եմ համարում ճշմարտությունն ասել: Եվ եթե դա քեզ հայտնի չէ, ուրեմն քեզ վատ ծառայություն են մատուցում քո բարեկամները՝ միայն քեզ գովելով ու փառաբանելով: Ես ինձ համարում եմ քո և քո գրականության բարեկամը, դրա համար էլ ասում եմ:

Հ.Մ. – Ես իմ հույսը չեմ կորցրել, ես գրող եմ և մանավանդ՝ որ դառնալու եմ գրող, որ գործողություններ է բացում, գործողություններ է ծավալում, որոնցում գուցե և լինեն և՛ նախագահներ, և՛ լիդերներ, և՛ խմբագիրներ ու խոսքի չարչիներ... նրանք իմ ամբողջ մասերը կլինեն, և ես իրենց մասը:

Մ.Մ.- Դարձիր, Աստված տա: Ես գրողի ու ստեղծողի դատավորը չեմ: Դու քո ազգի ու գրողի քո խղճի առջև ես հաշվետու: Ես չեկա քեզ դատելու: Ես եկա հիշեցնելու պարտքդ: Մնացածը քո գործն է...

Հ.Մ.- Մտահոգիչ մի ուրիշ բան. ուրիշ անգամներ էլ ես հարցազրույցներ ունեցել եմ, և մեր այս «էրիկ մարդի զրիցը» լավագույններից չեղավ իր «էս ու էն»-ով... Լավ չէ: Վայ մեզ, եթե այս ժողովրդի քաղաքական մտքի ձևավորողները մենք ու մեզպեսներն են:

Մ.Մ.- Թողնենք ընթերցողին:

Թիվ 13, ապրիլ

ՈՏՔԵՐԻՍ ՏԱԿ ՆԱՅԵԼՈՎ ԱՌԱՋ ԳՆԱՆՔ, ԲԱՅՑ ՀԵՌՈՒՆ ՏԵՄՆԵՆՔ

Անցյալ տարի գյուղատնտեսական արտադրության մեջ արձանագրվեց դրական միայն մեկ ցուցանիշ՝ բուսաբուծության 2,1 տոկոսի աճ 91-ի համեմատությամբ:

Այս տարի դա էլ չի լինի: Ցավալի է, բայց այդ են ասում հանրապետության գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը, առկա և սպասվելիք դժգոհությունները, որոնց հաղթահարման համար որոշումներից ու խոստումներից զատ առայժմ գյուղացուն ոչինչ չի տրվել:

Կան առարկայական բազմաթիվ պատճառներ, և դեռ կլինեն: Այս ամենը մեզ պարտադրված է վաղուց:

Գյուղի քանդումը սկսվեց ավելի շուտ, քան կարելի էր ենթադրել:

Հողի, գյուղատնտեսական մեքենաների, անասունների հապշտապ, չվերահսկվող սեփականաշնորհումը թերևս միայն արագացրեց քանդման գործընթացը: Ուրիշ հանրապետություններում դեռևս կան կոլտնտեսություններ ու պետական տնտեսություններ, բայց դարձյալ արտադրությունը քայքայվում է:

Ճիշտ չէ ստեղծված իրավիճակի մեղքը բարդել միայն սեփականաշնորհման վրա: Արմատները շատ ավելի հեռուն են գնում և շատ ավելի խորն են, քան մեզ թվում է: Ուստի մասնակի բարեփոխումներով, կարկատանային մեր այս հոգածությամբ հիմնահարցերը չեն լուծվի:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված 1993 թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և իրականացման միջոցառումների ցանկից դժվար է առանձնացնել ամենակարևորը. բոլորն էլ անհրաժեշտ են, անհետաձգելի:

Պետք է ապահովել անհրաժեշտ քանակության վառելանյութ, քսայուղեր, սերմացու, տնկիներ ու տնկանյութ, պահեստամասեր, թունաքիմիկատներ, պարարտանյութ...

Այլ հարց է, որ արդեն իսկ ուշացած է միջոցառումների ամբողջ համակարգը: Ուշացած է նաև այնքան անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ու սերմացուների հատկացման և բաշխման կտրոնային համակարգի վերաբերյալ որոշումը:

Հանրապետության կառավարության հատուկ ուշադրությունը գյուղի հանդեպ, ղեկավարության այցելությունները շրջաններ, հանդիպումները աշխատավորության հետ և այլն, անշուշտ, ուրախացնում են:

Եվ սակայն չխաբենք ու չխաբվենք դրանով:

Գյուղատնտեսական արտադրությունը կարկատանային քաղաքականությամբ անհնար է հզորացնել: Եթե անգամ մեզ հաջողվի լուծել խիստ էական այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են տնտեսական քաղաքականության և տնտեսական բարեփոխումների փոխկապակցվածության, ինվեստիցիոն ռեսուրսների սահմանափակության, հաղորդակցության, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և նույնիսկ կառավարման և կարգավորման համակարգի հիմնահարցերը, միևնույն է, վաղը կանգնելու ենք այնպիսի կացության առջև, որ ստիպված ենք լինելու սկսել սկզբից: Այլ խոսքով՝ ոտքերիս տակ նայելով առաջ գնանք, բայց հեռուն տեսնենք: Իմանանք՝ ուր ենք գնում և ինչու:

Թիվ 14, ապրիլ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ, ԲԱՅՑ ԴԻՐՔԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

Սկսենք Քելբաջարից, որտեղ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հաջողությունները անհանգստություն են պատճառել Թուրքիային ու Իրանին: Քելբաջարի հենակետերի վնասազերծումը միայն նպատակ ուներ անվտանգ դարձնել Լաչինի միջանցքի հյուսիսային պաշտպանական դիրքերը: Իսկ Մարտունու շրջանի հարավային սահմանների ուղղությամբ ԼՂՀ ինքնապաշտպանական

ուժերի գործողությունները՝ կասեցնելու Քելբաջարի վրա ճնշումները թուլացնելու նպատակով թշնամու հակահարձակումները:

Մեծ Հայաստանի մասին ինչ-որ հեքիաթներ, ղարաբաղյան շարժման սկզբներին գծված քարտեզներ են մեջտեղ բերվում, որպեսզի Օզալը հիմք ունենա ասելու. «Թուրքիան պետք է իր ատամները ցույց տա»: Սակայն դա՝ միայն հանրային կարծիքի համար: Ատամները ցույց տալու պատճառներ ու մանավանդ ցանկություն օզալներին երբեք չի պակասել: Հայաստանին՝ ատամներ, իսկ «Ադրբեջանին Թուրքիան ցույց կտա ամեն տեսակի օգնություն»,- Բաքվում իր արյունակից եղբայրներին վստահեցրեց Թուրքիայի նախագահը: Եվ ՀՀ արտգործնախարարը խոստացված ատամները առաջինը տեսավ՝ չկարողանալով Սիրիայից ժամանակին Հայաստան վերադառնալ, Թուրքիայի կողմից Հայաստան եկող ճանապարհների արգելափակման պատճառով:

Իսկ Իրանում կրքերը չեն հանդարտվում: Ադրբեջանցի ուսանող ցուցարարների հարձակումը ՀՀ դեսպանատան վրա պատահական չէր... Ադրբեջանի պետքարտուղար Փանահ Հուսեյնովը ըստ երևույթին նաև լավ հեքիաթասաց է. ըստ նրա, հայկական ուժերը կստիպեն բոլոր ադրբեջանցիներին տեղափոխվել Իրան:

Իսկ թե ինչ հեքիաթներ է հորինում Ադրբեջանի արտգործնախարարը ԱՄՆ-ում, պարզ կդառնա առաջիկայում, եթե ԱՄՆ-ը ցուցաբերի ավելի վճռական կեցվածք և քայլեր անի ԵԱՀԽ շրջանակներից դուրս:

Ակնհայտ է, որ Քելբաջարի շրջանի հենակետերի վնասազերծումը հարկադրված գործողություն էր և ամենևին հակամարտության խաղաղ կարգավորման դեմ չէր: Թերևս այն խառնեց որոշ հաշիվներ: Բայց ոչ ավելին: Խաղաղարարական դատարկ կոչերը չէ, որ ստիպում են հակամարտ կողմերին նստել բանակցության սեղանի շուրջ: Եվ հակառակ նրան, որ Ադրբեջանը ձգտում է լայնացնել հակամարտության շրջանակները և պատերազմի մեջ ներքաշել Թուրքիային ու Իրանին, թերևս երբեք այնքան շահագրգռ-

ված չի եղել հաշտությամբ, ինչպես այժմ, թեև գործնական ու իրապաշտ քայլեր առայժմ չի արել...

ԼՂՀ-ն Ադրբեջանից տարածքներ գրավելու ոչ ցանկություն և ոչ էլ, մանավանդ, հնարավորություն ունի: Այս էլ քաջ հայտնի է բոլորին:

Ինչ նոր հայտնագործություն է անելու ԵԱՀԽ-ի Մինսկյան գործընթացի շրջանակներում գործող դիտորդների խումբը, որը պատրաստվում է Երևանից մեկնել հակամարտության գոտի: ԵԱՀԽ-ին ու ՄԱԿ-ին հակամարտության քաղաքական լուծման Հայաստանի դիրքորոշումը հայտնի է: Հայտնի է նաև ԱՄՆ-ին ու ՌԴ-ին: ՀՀ իշխանությունները քանիցս նշեցին, որ Հայաստանի դիրքորոշումը մնում է անփոփոխ, իսկ թե այդ ինչ դիրքորոշում է, այդ որ դիրքորոշումն է, չգիտենք:

Դիրքորոշումը չի փոխվում, բայց դիրքերը հայտնի չեն:

Թիվ 15, ապրիլ

ՊԱՏՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

Տասնամյակներ սուտ ու կեղծիքի, պետական-պաշտոնական տաբուների, գաղափարա-քարոզչական վայրագությունների արգելաշերտերը ոտնատակ տալով, ճշմարտությունը հրապարակ իջավ վերջապես, և 65-ին առաջին անգամ կոչնակ հնչեց բուն Հայաստանում՝ պարտք ու բեռի պես հիշեցնելով կեսդարյա գոյությունը պատմության սև էջի, կեսդարյա մոռացումը Իմաստի և Ուխտի:

Այն օրերի տասնհինգամյա պատանիներն ու աղջիկները հիմա քառասունն անց հասուն մարդիկ են՝ պատմության և ժամանակի իրենց ընկալումներով, պատմության և ժամանակի շրջադարձերի իրենց գնահատումներով:

Եվ, ինչպես քսան ու տասը տարի առաջ, ինչպես 65-ին ու դրանից էլ առաջ, մեր տարեգրության ամենասև էջի սոսկ զգացմունքային մեկնության, լոկ հռետորական հարցադրումների, բանաստեղծական վերարտադրման տերն ենք, կրողն ու պարտապանը: Ինչ-

պես ճնշող մեծամասնությունը մեր ավագների, ինչպես մեծագույն մասը մեր կրտսերների:

Խոշոր-խոշոր մի բաց և վիհ ազգային մտածողության, ազգային գիտակցության բաբախուն ոլորտներում, ինչի համար պատասխանատու ենք նաև լրագրային գործի մշակներս, մեր միակողմանի ու մակերեսային, մեր անքննական և անընդգրկուն հրապարակումներով:

Տկար, թերարժեք, այլևայլոց կարեկցանքը, ըմբռնումը և աջակցությունն ակնկալող, ուստիև՝ հայեցողական-հայցողական մեկնակետով, նկարագրական ուղղվածությամբ, միայն հետևանքների և կորուստների արտասվաթոր սփռումներով... Դատաստանի կամ պատասխանատվության նետ ու սլաքները բացառապես ուղղված օտարին և ում ասես, բայց չանդրադառնալով, որ աղեղը պրկող բազուկը քոնը պետք է լինի, և միայն քոնը:

Ավազակը բաց դուռ է փնտրում և թույլը՝ փակ, տմարդին լկտիանում է երկչոտի առաջ: Ճնճղուկի սրտով, պարտեզային սիրամարգի փետուրներով անտառ չեն մտնում: Եթե ավազակն ու տմարդին հանցավոր են իրենց էությամբ, մղումներով, հանցանքի զոհը, եթե մեղավոր է, ապա՝ իր կարճամտությամբ, անզորությամբ: Իսկ աշխարհն, ավաղ, եղել և մնալու է դարանակալ անտառ, լի գիշատիչներով, թակարդ ու որոգայթով:

Հայ ժողովրդի դեմ գործած անլուր հանցագործություններն անցյալ դարավերջին ու դարասկզբին, որոնցից առանձնանում է 1915-ի ցեղասպանությունը՝ իր չափերով և առավել անմարդկային եղանակներով, դեռևս բազմակողմանի լուսաբանումների, ճշգրիտ հասցեագրումների, պարզորոշ մեկնությունների կարիքը և անհրաժեշտությունը պահանջող իրողություն են: Սթափ, մասնագիտորեն լիարժեք, հույզն ու ողբը բացառած, նպատակամետ:

Անտեր ու անպաշտպան ժողովուրդը և հողը միշտ են ենթակա անսպասելի ու հանկարծակի, տմարդի լկումների, անվերադարձ կորուստների, ախորժալի պատառ են բոլոր կարգի ու բնույթի ավազակների համար: Պատմությունն ուսուցանում է, միաժամանակ

պատժում, ըստ որում՝ անողոք ու դաժան: Իսպառ բնաջնջումով սպառնացող վտանգից մեր մի բուռ ժողովուրդը և պատմական հայրենիքի մի պատառիկը փրկվեց՝ իր առաջին Հանրապետության ջանքերով, ապա՝ պատսպարվելով զորեղ տիրակալի թիկունքում: Նորանոր զոհերի, զրկանքների գնով իր պետականության նմանակը ստեղծեց, ապահովելով հպատակների ու տարածքի անվտանգ գոյությունը: Ներկայումս արդեն ոտք դնելով ինքնուրույն, ինքնիշխան գոյության, անկախ պետականության ասպարեզ, վերստին հայտնվել է դարանակալ անտառում:

Ու եթե չի լռում և չի լռելու Զանգը՝ հիշեցնելով գոյությունը Պատմության սև էջի, Իմաստի և Ուխտի, հետայսու պետք է հնչի անցյալի պատգամով և ապագային աչալուրջ նայելու խորհրդով:

Պատմական յուրօրինակ մի կամարի վրա, որի հեռավոր ծայրը թաղված է բյուր, հազարավոր անմեղ ու անպաշտպան զոհերի աճյունների և կորուստների թավուտում, մյուսն առայժմ հենարան է փնտրում ազգային գիտակցության և գործունեության ոլորտներում, բացառելու համար նոր նախճիր, նոր փորձություն, որ կարող է վերջինը լինել:

Ամուր, հուսալի հենարան ստեղծելու առաքելության մեջ բաժին ունենք մենք՝ լրագրային գործի մշակներս:

Թիվ 16, ապրիլ

ԼՂՀ-ԻՆ ԿՍՏԻՊԵՆ ՁԻՋԵԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Արցախյան ինքնապաշտպանական ուժերի վերջին հաջողություններին հետևած քարոզչական ու դիվանագիտական աղմուկը կարծես թե սկսել է հանդարտվել, ինչը նշանակում է գերապատվությունը տրված է Ռուսաստանի նախաձեռնությանը: Բնական է, որ Ռուսաստանը չէր կարող վտանգել իր ավանդական շահերը Անդրկովկասում և համաձայնել, որ արցախյան հարցի լուծումը որոշվի ԵԱՀԽ-ի շրջանակներում, այսինքն՝ ԱՄՆ-ի ու Թուրքիայի

օգտին: Քելբաջարի ազատագրման գործողություններին միջամուխ չլինելը դրա ապացույցն էր:

Դժվար չէ ենթադրել, որ Ռուսաստանը և ԱՄՆ-ը ունեն որոշ փոխզիջման պայմանավորվածություններ: Դժվար թե Ռուսաստանին ձեռնտու է Արցախի մշակութային ինքնավարության կարգավիճակը: Հարցի այդպիսի լուծումը արդեն իսկ նախատեսված էր ԵԱՀԽ շրջանակներում: Դա ըստ էության կնշանակի կորցնել Ադրբեջանի վրա ներգործելու լծակը: Իսկ, մյուս կողմից, լիակատար անկախությունը կհակասի ԱՄՆ-ի և Թուրքիայի շահերին:

Հետևաբար, մնում է փոխզիջման միակ տարբերակը՝ ԼՂՀ-ի վարչական ինքնավարությունը Ադրբեջանի կազմում: Այս դեպքում՝ Ադրբեջանը դարձնել ֆեդերացիա: ԱՄՆ-ին, հավանաբար Թուրքիայի միջոցով, արդեն իսկ հաջողվել է ստանալ Ադրբեջանի համաձայնությունը և բանը չի հասել Ռուսաստանի կողմից լեգգինական գործոնի օգտագործմանը:

Ելցինի միջնորդական առաջարկությունը իրագործվում է փակ բանակցությունների միջոցով, որոնց ընթացքում քննարկվում է առաջարկված ծրագիրը: Փաստորեն, ԱԽ-ն առայժմ որևէ գործողություն չի ձեռնարկելու ԼՂՀ-ի առնչությամբ:

Ելցինի միջնորդության շրջանակներում նախատեսվում է.

ա. հայկական ուժերի դուրս բերումը Քելբաջարից և այլ վայրերից, որոնք ինքնապաշտպանական ուժերը ազատագրել են մարտի 27-ից հետո,

բ. հրադադարի հաստատում,

գ. թշնամական գործողությունների, այդ թվում և՝ շրջափակման վերացում:

Նոր քայլ է Արցախի գործադիր իշխանության կողմից լիազորված ներկայացուցչի մասնակցությունը այդ բանակցություններին, որի դիմաց և՛ Հայաստանի, և՛ Մոսկվայի իշխանությունները կպահանջեն «բացարձակ» հնազանդություն:

Մի խոսքով, մինչև մայիսի 3-ը պարզ կդառնա, թե ինչով կավարտվի այս ամենը: Մոսկվայի միջնորդական հաջողությունից է

կախված Թուրքիայի նոր դերակատարության թույլտվությունը, որը, հասկանալի է, ոչ մի լավ բան չի խոստանում:

Ադրբեջանա-թուրքական ալյանսը կհանգեցնի Ադրբեջանի ռազմական գործողությունների ծավալմանը Հայաստանի հարավային սահմանամերձ շրջաններում, Նախիջևանի տարածքից, որպես Գոբլի ծրագրի հաջորդ քայլ:

Դա բավարար և գերադասելի փոխհատուցում կարող է ապահովել Ադրբեջանին և՛ ռազմական, և՛ քաղաքական իմաստով:

Իսկ ի՞նչ կտա այն Արցախին և կհամապատասխանի՞ արդյոք հայության պայքարի ու ձգտումների տրամաբանությանը:

Թիվ 17, ապրիլ-մայիս

ՆՈՒՅՆ ՈԳՈՎ, ՆՈՒՅՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ, ՆՈՒՅՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ

Իր աշխատանքները ավարտեց ՀՅԴ Հայաստանի կազմակերպության բարձրագույն օրգանը՝ Շրջանային ժողովը՝ ընդունելով սկզբունքային ամենատարբեր որոշումներ, ամենատարբեր բնագավառների մասին, որոնք ձևավորում են նրա ապագա ծրագրերը, սահմանում գործունեության դաշտը, ուղենշում նրա գործունեության ընթացքը առաջիկայում:

Որոշումները, որոնք պարտադիր են Դաշնակցության Հայաստանի կազմակերպության բոլոր անդամների համար և որպես անառարկելի ճշմարտություններ պիտի որդեգրվեն նրանց կողմից:

Շրջանային ժողովի որոշումների մասին ըստ էության մեր ժողովուրդը իրազեկ դարձավ մայիսի 3-ին, երբ ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն հանդես եկավ առանձին լրատվությամբ և նրա անդամները պատասխանեցին զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերին:

Մամուլի որոշ օրգաններ այդ հաղորդագրությունների մեջ տեսան միայն իրենց շահագրգռող տողեր, ուրիշները հանգեցին այն տեսակետներին, որոնց իրենք ձգտում էին: Դժբախտաբար ոչ ոք

ուշադրություն չդարձրեց հաղորդագրության այն տողերին, ըստ որոնց Շրջանային ժողովը հաստատում էր, որ ժամանակի քննությունը բռնեց Դաշնակցության ցայդ որդեգրած քաղաքականությունը Հայաստանի դրացի և Հայաստանով շահագրգռված երկրների նկատմամբ: Ոչ ոք, դժբախտաբար, ուշադրություն չդարձրեց այն հայտարարությանը, ըստ որի Դաշնակցության համար Արցախի ազատամարտը շարունակում է մնալ «Հայ դատի» առաջնահերթ խնդիրը:

Ցանկալին տեսնելու մղումով իշխանությունների նկատմամբ քննադատական կեցվածք չնշմարելու ձգտումը, եթե խորամանկություն չէ, ապա չափից ավելի լավատեսություն է ոմանց կողմից: Զերծ լինելով ինքնանպատակ քննադատության մոլուցքից, այնուամենայնիվ Դաշնակցությունը մեկնելով հայ ժողովրդի գերագույն շահերից միշտ էլ իրեն վերապահել է իրավունքը քննադատելու այն բոլոր երևույթներն ու անձերին, որոնք բռնել են այդ շահերը ոտնահարելու ընթացք:

Կենտրոնական կոմիտեի կազմի փոփոխությունը Դաշնակցության մեջ շատ բնականոն երևույթ է: Կարևորը որոշումներն են, որոնք պիտի գործադրվեն անկախ անհատից: Մարդիկ կհաջորդեն մեկը մյուսին, բայց Դաշնակցության գործը կմնա նույն ոգով, նույն սկզբունքներով և նույն գաղափարներով:

Թիվ 18, մայիս

ԻՆՔԴ՝ ՔՈ ՀԱՄԱՐ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ

Ստեղծագործական միությունների շուրջ ու վերաբերյալ հոռետեսական ու քամահրական բոլոր կարծիք-կանխագուշակումներն, ավաղ, հաստատվեցին ու կայացան, և այսօր մնացել են միայն անունները, շենքերը՝ հիմնականում վարձով տրված և օտարված հատվածներով, «ապարատները» քարտուղար-քարտուղարուհիներով, անդամատոմսերը՝ այլևս գոյություն չունեցող պետության կնիք ու դաջվածքներով: Ստեղծագործական միությունները, եթե

շատ կոշտ ենք ասում՝ վերածվեցին ծիծաղաշարժ նպաստների և... հումանիտար լոբու բաշխման գրասենյակների: Մեղադրանք չէ, առավել ևս՝ չարախնդություն, այլ դառը իրողություն, ցավ և հոգս: Սի՞թե ամեն-ամեն ինչ պիտի աղճատվի, փուլ գա, անէանա՝ հանուն «նոր» կոչված չշոշափվող պատրանքի: Եվ մի՞թե այդ միություններից սոսկ «մերկանտիլ» ակնկալություններ ունեինք նախկինում՝ բնակարան, ավտոմեքենա, ամառանոց, ուղեգիր կամ կոչում, հիմա էլ... ինչ, որ վերը նշվե՞ց: Վիրավորական չէ՞ արժանապատիվ մարդու համար:

Միություն, միաբանություն, միևնույն արվեստին կամ արհեստին նվիրաբերված անհատների մեկտեղություն, նույն գործի ծառաների համքարություն՝ առանց սարքովի քրմերի, առանց առաջին, երկրորդ ու վերջին ջութակների, առանց «հիմնարկային տաղտուկի»: Այլ ստեղծագործական՝ բառիս բուն և կատարյալ իմաստով:

Վերևներից, աջուձախի շահագրգիռներից օգնություն, աջակցություն չմուրացող, այլ բազմանդամ գերդաստանի լավագույն ու արդար ավանդույթով քո հացն ու համբավն ինքդ վաստակիր սեփական քրտինքով: Եվ օգնիր քեզ նմանին: Միության մեջ խմբվելու, թիկունք և բազկի զգացողությամբ ապրելու և գործելու լավագույն եղանակ հորինելու հարկ չկա: Փորձված, ստուգված օջախները ակումբներն են՝ վաղուց ի վեր, ամենուրեք: Ակումբ, որ քոնն է, դու ես տերը, որ քեզ նմաններինն է ու բոլորով եք պատասխանատու. կանչող, ձգող հավաքատեղի՞ կդառնա, թե՝ խծբծանքի, նախանձի և խարդավանքի բույն: Անմոռաց, օգտավետ երեկոների, արվեստի իսկական վայելքի, մասնագիտական լուրջ բանավեճերի, հաճելի և մտերմիկ ժամանցի հանգրվա՞ն կլինի, թե՝ շարքային ու ժանտահոտ գարեջրատուն կդառնա, ժուռնալիստների ակումբ, ժուռնալիստի տուն, ժուռնալիստների սրճարան: Ինքներս՝ մեզ համար, մեր ընտանիքների, մտերիմների համար:

Բարդ ու ծանր է մեր կյանքը: Միասին ու մեկտեղ՝ կօգնենք մեզ ու միմյանց: Խմբագրատան շենքի նորոգումից հետո այդպիսի մի

օջախ հիմնելու ենք մեր ուժերով, սրտաբաց հրավեր հղելով բոլորին: Եվ եթե դա կլինի առաջին ակումբը, ամենևին էլ միակը մնալու, մինուճարության արատներով տառապելու հեռանկարը չէ մեր նպատակը: Այլ նույն գործի ծառաներին մի հարկի տակ խմբելու, նրանց միմյանց ծանոթացնելու, մարդավայել փոխշփումների մթնոլորտ և հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունը: Հաջողություն բոլորիս:

Թիվ 19, մայիս

ԶԻՋՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ Է ՊԱՐՏՈՒԹՅԱՆ

Արցախի շուրջ ծավալվող դիվանագիտական գործընթացները հանգեցրին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ ԼՂՀ շահերն ու ապահովությունը խիստ վտանգող թիվ 822 հակահայ բանաձևին:

ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Թուրքիան այնուհետև հանդես եկան այս բանաձևի ոգուց բխող միջնորդական նախաձեռնությամբ, որին մայիսի 14-15-ին միացավ նաև ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելին:

Փաստաթղթին թռուցիկ ծանոթացումն էլ բավական է նկատելու համար հակադիր կողմերից մեկի՝ Ադրբեջանի շահերի պաշտպանության և ԼՂՀ-ին միակողմանի զիջումներ պարտադրելու միտումը:

Սա այն դեպքում, երբ մինչ այդ Քելբաջարի շրջանում տեղադրված ռազմական հենակետերից Ադրբեջանը պարբերաբար թիկունքից հարվածում էր Արցախին: Ինչն էլ իր հերթին օգնեց Ադրբեջանի զինված ուժերի կողմից Շահումյանի և Մարտակերտի շրջանների զավթմանը: 80 հազար մարդ բռնագաղթի ենթարկվեց, բազմաթիվ զոհեր եղան, թալանվեց ու ավերվեց 30 հազար տուն: Խաղաղ բնակչությանը հասցված վնասը միլիարդավոր դոլարներով է չափվում: Հենց Քելբաջարի ռազմականացումով ադրբեջանական իշխանությունները պարտադրեցին ԼՂՀ-ին վնասազերծելու հզոր հենակետը՝ հաստատ համոզված լինելով, որ հայկական

կողմը չի կարողանա դիմագրավել այդ ուժին: Միջնորդների «գրաֆիկով» Քելբաջարի շուտափույթ զիջման պարտադրանքը Ադրբեջանին հնարավորություն կտա արագորեն վերականգնելու ռազմական այս հենակետը և վտանգելու բուն Արցախի գոյությունը: Իսկ որ հակառակորդը չի հրաժարվել այդ մտքից՝ վկայում է թեկուզև ադրբեջանական հեռուստատեսությամբ, ռադիոյով և լրատվության մյուս միջոցներով հայության դեմ պատերազմի կոչող չդադարող քարոզչությունը, հակամարտության գոտում տեխնիկայի և կենդանի զինուժի անընդհատ կուտակումները: «Խաղաղասիրական» նախաձեռնության խախուտ հիմքի և հայավնաս հետևանքներով հղի լինելու մեկ ապացույցն էլ անաչառության դիմակով հակամարտությանը մասնակից և նրանում անմիջական շահեր հետապնդող «անաչառ» Թուրքիայի որպես միջնորդական կողմ հանդես գալու փաստն է: Միաժամանակ դավադիր գործարքի հղացման փաստում իր մեղքի բաժինն ունի Հայաստանի իշխանությունը, որի վզին այսօր փաթաթվում է հակամարտող կողմի կարգավիճակը: Նա նաև անհետևողական, երկչոտ և օտարի կամքից ամբողջական կախման մեջ եղավ և մնաց ազգային ամենաճակատագրական հարցերը քաղաքական-դիվանագիտական բեմերում ներկայացնելիս: Շարունակվող պատերազմի ընթացքում ազատագրված տարածքների զիջումը ոչ միայն զանգվածային բարոյալքում կծնի ժողովրդի մոտ, ԼՂՀ-ն խոցելի կդարձնի թիկունքից, այլև կուժեղացնի քաղաքական ճնշումը՝ ռազմաբեմում ձախողված Ադրբեջանին դիվանագիտական ճակատում նորանոր հաջողություններ ապահովելու նպատակով: Փորձության ժամ է հայ դիվանագետի, հայ իշխանավորի, հայ զինվորի՝ հայ ժողովրդի համար, և զիջումը հավասարազոր է պարտության:

Թիվ 20, մայիս

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հայոց ինքնության հաստատման ամենաուշագրավ ու արժանահիշատակ դրսևորումներից է 1918 թ. Մայիս 28-ի անկախության հռչակման փաստը: Արարատի արևելյան փեշերին ընկած պատմական հայրենիքի մի փոքրիկ հատվածի վրա, երկրի վեցհարյուրամյա կորուսյալ պետականության վերականգնումն արդյունք էր արտաքին ու ներքին մի շարք ազդակների. անդրկովկասյան արհեստականորեն ստեղծված եռապետության՝ Սեյմի քայքայումը, Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակման ձգտումը հայ ազգային գործիչներին կանգնեցրել էին ճակատագրական վճիռ կայացնելու պարտադրանքի առաջ: Մի կողմից՝ ազգային դարավոր երազը բախում էր դուռը, մյուս կողմից՝ անկախության հռչակման բնավ ոչ դեկլարատիվ հայտարարությունը՝ այս հողի ու նրա վրա ապրող ժողովրդի ապագան իրենց ծրագրերում միանգամայն այլ կերպ նախանշած հարևաններին ու ոչ հարևաններին նետված քաղաքական մարտահրավեր էր նշանակելու: Բայց և այնպես, հայոց անկախության գալուստը պայմանավորվեց ոչ թե մեր կամքի հետ հաշվի չնստող քաղաքական արտաքին հասունացումներով, այլ օրինաչափ արդյունքը եղավ նախորդ տասնամյակների ազգային-ազատագրական պայքարի և մասնավորապես այդ պայքարի գագաթնակետը կազմող Մայիս 28-ին նախորդած Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի ճակատամարտերի: Եթե անկախության հռչակման փաստը անմիջականորեն պայմանավորվեց նախորդած վճռական հաղթանակներով, ապա ազգային պետականության վերստեղծումն ու գոյությունը ամրագրվեցին ու արժևորվեցին հետագա երկուսուկես՝ թեկուզև կարճատև տարիների քաղաքական, ռազմական, տնտեսական ձեռքբերումներով, ընդհանրապես պետական շինարարության ասպարեզի կայացումկայունացումներում: Իր հերթին անկախության հռչակման և հայկական առաջին հանրապետության ստեղծման ամենակարևոր արդյունքն ու նշանակությունն էլ այն իրողությունն է, որ զավթիչ

գերտերությունների կողմից Հայաստանի անկախության կործանումից և երկրի կեսից ավելին նրանից խլելուց հետո անգամ, անհնարին եղավ ժխտել ու մերժել հանրապետության գոյության փաստը և թեկուզ կիսանկախ վիճակում Հայկական պետությունը կարողացավ գոյատևել բոլշևիկյան դաժան բռնապետության հետագա տասնամյակների ընթացքում: Առաջին հանրապետության հռչակումը հետագա սերունդների ու հատկապես նմանատիպ ժամանակի մեջ հայտնված այսօրվա ապրողներիս համար արժեք է ոչ միայն պատմական ժառանգության առումով, այլ նախ և առաջ, որպես դաս: Ազգային գործին, սեփական պատմության դասերին հավատարմությունն ու անհողդողդ կամքն է, որ մեր ու գալիք սերունդների համար սոսկական գաղափարից իրականության կարող է վերածել փորձությունների բովով անցած, չարչրկված, բայց առողջ ու կենսահարույց Ազատ, Անկախ և նաև Միացյալ հայրենիքի գաղափարը:

Թիվ 21, մայիս-հունիս

«ԸՄԲՌՆՈՒՄՈՎ ՄՈՏԵՑՈՒՄԸ»՝ ԴԱԺԱՆ ՀՈՒՄՈՐ

«Աչքը տեսածից է վախենում»,- ասում է ժողովրդական խոսքը: Այս իմաստով մեր ժողովուրդը երկրորդ դաժան ձմեռը չի ապրի, չի կարողանա ապրել: Իսկ ի՞նչ է փոխվել, միայն ցրտահարության վտանգն է վերացել, և աճել ու աճում են գները... Իշխանությունների որոշումը՝ արտադրությունը աշխատեցնելու, ճիշտ է ու հուսադրիչ, սակայն հնարավորն ու ցանկալին դեռևս անհամատեղելի են: Աշխատում է հանրապետության ձեռնարկությունների դեռևս մոտ 70 տոկոսը, արտադրանքի ծավալը կազմում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ընդամենը 30-40 տոկոսը: Վարկային էմիսիան, որը նպատակ ունի լրացնելու ձեռնարկությունների շրջանառու միջոցների պակասը, բաշխման ընթացքի մեջ է, և արդյունքների մասին դեռևս շուտ է խոսելը: Շրջափակումների և գազատա-

րի փակման «գործընթացներում» ոչ միայն կանխման միտումներ չեն նկատվում, այլև հարստանում է դրանց օգտագործման «տեսականին»՝ փլվածքներ գազատարի ճանապարհին, որոշ երկրների կողմից իրենց օդային տարածքները օգտագործելու դժվարությունների հարուցում և այլն: Հակառակ դրան, շրջափակումները մեղմացնելու կամ դրանք շրջանցելու մեր իշխանությունների հնարավորություններն ու փորձերը խիստ սահմանափակ են: Շրջափակումները խիստ ընդգծված քաղաքական երանգավորում ունեն, և հնարավոր լուծումն էլ հիմնականում քաղաքական կարող է լինել, այսինքն՝ հիմնականում պայմանավորված է արտաքին գործոններով:

Հանրապետության ձեռնարկությունների աշխատելու՝ հումք ձեռք բերելու և արտադրանքը իրացնելու հնարավորությունը պայմանավորված է Ռուսաստանով, հաշվի առնելով ավանդական տնտեսական կապերը և վերջինիս շուկայի հնարավորությունները: Այս առումով ճիշտ է վարկային էմիսիայից միջոցների տրամադրրման սկզբունքը, ըստ որի միջոցները հատկացվում են այն ձեռնարկություններին, որոնք պայմանագրեր ունեն (պարզ է, հիմնականում ռուսաստանյան ձեռնարկությունների հետ):

Ինչ վերաբերում է հանրապետության ներքին կյանքին, որտեղ արտաքին գործոնների դերը համեմատաբար թույլ է, ապա այստեղ մեր իշխանությունների անելիքները շատ են. անկում է ապրում գործարար կյանքը, արտերկրի հետ տնտեսական կապերի ձևավորումը տեղապտույտ է տալիս, ժողովրդին «թևաթափ» է անում աճող ընկերային լարվածությունն ու անպաշտպանվածության զգացումը, համատարած «ճամպրուկային» տրամադրությունը, «ըմբռնումով մոտեցումն» էլ այսօր արդեն ընկալվում է որպես դաժան հումոր:

Թիվ 22, հունիս

«...ԱՅՍՊԵՍ ԱՊՐԵԼ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ»

Համալսարանում ժուռնալիստի մասնագիտություն սովորողներից մեկը խորհրդածում է որպես սկսնակ ժուռնալիստ, նաև որպես նախանձախնդիր ընթերցող: Մեջբերենք հատվածաբար. «...Չարենցը դա կոչել է «ուղեղի մորմոք»: Երբ սևեռուն մի գաղափար, գերիշխող միտք, բոլորին տանջող և մտահոգող մի իրավիճակ այնպես է պաշարում բյուր հազարներին, որ թվում է, թե աշխարհում այլևս ոչինչ գոյություն չունի: Մարդը հիվանդանում է, մարդիկ խորթանում, իրարից հեռանում են, թեև կարծես այդ ընդհանրությունը պիտի միավորեր, միացներ... Անհնար, աներևակայելի է, տարիներ շարունակ ապրել տագնապներով, հոգսերով, հանապազօրյա հացի խնդրով, աչքիդ առաջ կատարվող ապօրինություններից նողկալով, ապա դրանց վարժվելով: Տասնչորս տարեկանից այդպես եմ ապրում՝ զայրանալով, բողոքելով, տանջվելով, հուսալքվելով, ոգևորվելով, հանրային կյանքի բոլոր տեսակի տաք և սառը ցնցուղներն ընդունելով... ու հիմա՝ տասնինը տարեկան, սարսափով եմ զգում, որ կոպտացել եմ, վայրենացել, հայացքս գետնից չեմ կտրում՝ աստղերին նայելու, ականջս ահավոր լուրերից չի «անջատվում»՝ թռչնի դայլայլ, երաժշտություն կամ մեղմ ու բարի խոսք լսելու համար...

Կամաց-կամաց ու անդառնալիորեն մենք մոտենում ենք մի սահմանագծի, որից այն կողմ սկսելու ենք արդեն զարմանալ, որ պաշտոնատար անձը խաբեբա չէ, ուսուցողը մասնագետ է, հասակակիցդ մաստակից և սնիքերզից զատ ուրիշ արժեք էլ է ճանաչում, որ դիմացից եկողը չի հայհոյելու կամ երեկոյան ինչ-որ տեղ պիտի գնաս ու հաճույք ստանաս... Որ աշխարհում ու քո շուրջը լավն էլ կա, չեն մեռել բարությունն ու կարեկցանքը, բարեկրթությունն ու քեզ նմանին սիրել-հարգելու վայելքը: Որ ինչ էլ լինի, ՄԱՐԴ ենք կոչվում:

...Տարակուսում ու վրդովվում եմ՝ ինձնից ավելի փորձառու, շնորհալի, ավելի բանիմաց մասնագետները, թերթերի էջերում հա-

ճախակի հանդես եկող ժուռնալիստները մի՞թե չեն գիտակցում, որ այս սոդոմ-գոմորի մեջ բարության, ազնվության բազմաթիվ կղզյակներ են մնացել, որոնց մասին պետք է, պարտադիր է գրել, մի՞թե չեն տեսնում, որ վեհանձն, անկաշառ ու անկոտրում բազմաթիվ մարդիկ կան, որոնց կյանքն ու գործը, հատկապես հենց այս խառնափնթոր տարիներին, լավագույն օրինակն են հատկապես մեզ՝ դալար, սակայն կոպտացող հոգիներիս համար: Մի՞թե հենց մեր շուրջը երևույթներ և իրողություններ չկան, որոնցով կարելի է ոգեշնչվել, ընդօրինակելու հիմք ու ելք ունենալ: Սովետական տարիներին, հիշում եմ, լավ մարդկանց, արդար դատավորների, բարոյական վսեմ նկարագրի, հայրենանվեր ապրելակերպի տասնյակ-տասնյակ օրինակներ մեզ էին մատուցվում հեռուստատեսությամբ, կինոժապավեններով, գրքերով, դասախոսություններով, և եթե ընդհանրացնենք, ապա՝ պաշտոնական գաղափարախոսությամբ: Թեև պարտադրվում էր դա, թեպետ հեռու էր իրականությունից, սակայն ձգտումը կար: Այդ ամենը հիմա սրբվել է, անհետացել: Փոխարինվել է Արևմուտքի ցածրակարգ «ստանդարտի» այլանդակ կապկումներով, սանձարձակ ու հոռի բարքերի սերմանումով, անբարո ապրելակերպի պաշտամունքով: Ու թվում է, թե անթափանց է խավարը, լույս չի երևում թունելի ծայրին... Հետո՞: Ես այսպես ապրել չեմ կարող: Ես այսպես ապրել չեմ ուզում»:

Թեթևակի խմբագրումով կարող ենք ասել՝ այո, պատանու շրթները ճշմարտություն են բարբառում: Եվ մեր կրտսեր, սկսնակ գործընկերոջ ալեկոծումը արդյոք չի՞ մտրակում և զսպանակում մեզ...

Թիվ 22, հունիս

ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ՍԱՍՈՒԼԻՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՎԵՐԸՆԹԱՑԻՆ

Անթագակիր չորրորդ իշխանությունը մուտք է գործել Հայաստան ու հիմա դանդաղորեն իր տեղն ու դերն է հաստատում հայ ի-

ռականության մեջ: Ինքնակայացման այս ընթացքը իր խնդիրները, խոչ ու խութերն ունի, քանզի առկա են ենթակայական ու նաև առարկայական մի շարք դժվարություններ: Մյուս կողմից՝ օր առ օր, զարգացման հանգրվան առ հանգրվան մերձենալով՝ հայրենի իրականության տագնապների, հիմնախնդիրների, ուրախությունների ու ցավերի մթնոլորտի մեջ օրինաչափորեն ներառվում է մեր հայ էության երկրորդ կես արտերկիրը ու բնականաբար նրա ամբողջության մեջ՝ սփյուռքահայ մամուլը: Հայ ու հայաստանյան կյանքի վրա ազատորեն թևածելու իրավունքով հրապարակ մտած մեր մամուլը ինչպե՞ս դրսևորեց իրեն հայրենիքի անկախության կերտման և ազատագրական պայքարի այս կարճ, բայց հակասական իրադարձություններով հարուստ ու բովանդակալից հանգրվանում: Եղա՞վ մամուլն իր ժողովրդի հույզերի հետ, ավելի շատ առկա խնդիրների՞ն ծառայեց, թե՞ հենց ինքն իրեն: Քաղաքական, գաղափարական հասունացումներն ու ձեռքբերումները ի վերջո ուր են մեզ հասցրել և ինչպես ենք առաջ շարժվելու այսուհետ: Ահա այս ու բազմաթիվ այլ հարցեր մեջտեղ բերելու և միասնական պատասխաններ որոնելու նպատակով հունիսի 12-ին Ծաղկաձորում կգումարվի Դաշնակցության մամլո չորրորդ խորհրդաժողովը: Իր տարողության իմաստով համահայկական այս միջոցառման անցկացման անհրաժեշտությունը բխում է նրանից, որ Դաշնակցության մամուլը ֆիզիկական ու բարոյական իմաստով հայ քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքի մեջ ունեցած իր զգալի տեղով ու դերակատարությամբ ապրում է այդ նույն դերակատարության հոգսերով:

Խորհրդաժողովը նաև կլսի ու մտքեր կփոխանակի ընդհանրապես հայաստանյան մամուլի խայտաբղետ ու բազմազան աշխարհը ներկայացնող մարդկանց հետ, ինչը, անշուշտ, նոր ասելիք կբերի ու, բնականաբար, իր ազդեցությունը կթողնի այս համաժողովի հետագա աշխատանքների և արվելիք եզրահանգումների վրա: Խորհրդաժողովը կլսի ու կփոխհարստացնի թե՛ արտերկրի, թե՛ հայաստանյան մամուլի ներկայացուցիչների փորձը: Իսկ որ առավել

ակնկալելի է, կարվի մի նոր քայլ հայրենիքի և արտերկրի մերձեցման, ուժերի ու գաղափարների համատեղման, հայրենիքի քաղաքական ռազմավարության մշակման ուղղությամբ: Եվ շատ կարևոր ու ցանկալի է այս ամենը, քանզի վերջնական արդյունքում ծառայելու է անթագակիր չորրորդ իշխանության՝ հայ մամուլի կայացմանը, գործին ու նաև հայ իրականության և հայոց ապագայի վերընթացին:

Թիվ 23, հունիս

ԱՂԱԹԹՈՒՆ ԵՐԿԱԹԵ ԱՄԱՆԻ ՄԵՋ ՉԻ ՊԱՀՎԻ

Սկսած 1988 թ. փետրվարի 20-ից վերջապես Դաշնակցությանը հրաշալի հնարավորություն է ընձեռվում ապացուցելու, որ մասնակիցն է Հայաստանի անկախության ձեռք բերմանը, Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարին և հայոց պետականության կայացմանը, ասաց հանրապետության նախագահը ՀՅԴ Բյուրոյի և ԿԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որը ցուցադրվեց հեռուստատեսությամբ: Բայց ինչը ապացուցել: Ապացուցել, որ ի սկզբանե էր բա՞նը... Ոչ, նախագահը դրա համար չէր հրավիրել Դաշնակցության ներկայացուցիչներին իր «հեռուստապոմպային»: Ընկեր Դաշնակցությանը վերջապես, թե՞ վերջին անգամ մեծահոգաբար հնարավորություն էր ընձեռվում այո՛ ասելու նախագահի քաղաքականությանն ու ծրագրերին: Անտարակույս՝ այո, անկասկած՝ այո, հավիտյանս հավիտենից՝ այո, քանզի է ճշմարտությունը, միակ ճշմարտությունը, անքննելի ճշմարտությունը:

Ահա թե ինչպես պիտի ապացուցվեր մասնակցությունը անկախության ձեռք բերմանը, ազատագրական պայքարին, պետականության կայացմանը: Եվ այդ դեպքում ո՛չ Դաշնակցությունը կկրեր նախագահի հաջողությունները տապալել փորձողի, ոչ էլ դաշնակցական մամուլը «մեղմ ասած անբարոյականի» խարանը:

Ահա թե ինչպես է հասկանում համագործակցությունը պարոն նախագահը: «Դուք բազմիցս հայտարարել եք, որ ՀՀ նախագահը

անհանդուրժողական է, չի ընդունում մեր համագործակցության առաջարկները, մեր մեկնած ձեռքը օդում է մնում: Ես իսկապես չեմ ընդունում ձեր համագործակցությունը, որովհետև այդ առաջարկներն անկեղծ չեն եղել»:

Ո՞վ քննեց, ո՞վ դատեց, ի՞նչ չափանիշներով, ի՞նչ բարոյական իրավունքով... Եվ վերջապես, ի՞նչ է նշանակում «համագործակցելու առաջարկների անկեղծություն»: Եթե համաձայն, համամիտ, համակարծիք համագործակցությունը նկատի ունի պարոն նախագահը, միշտ ու բոլոր հարցերում, ուրեմն ընդդիմությունն այստեղ գործ չունի, ուրեմն ոչ թե կուսակցության մասին է խոսքը, այլ՝ համքարության, որը պատրաստ է ուզածդ համագործակցության: Փաստորեն, նա պահանջելով հստակ դիրքորոշում ու տեսակետ, պահանջում է իր դիրքորոշումն ու տեսակետը: Եթե Դաշնակցությունը համաձայն չէ նախագահի հետ, ուրեմն անկեղծ չէ: Ահա անկեղծության չափանիշը:

Ի՞նչ տեսավ, ի՞նչ լսեց և ի՞նչ հասկացավ հեռուստադիտողը: Հենց այն, ինչ նախատեսված էր, այն, ինչ ցույց տվեց նախագահի «անկեղծաչափը» հեռուստաէկրանից: Իսկ Դաշնակցության ներկայացուցչի խոսքը պատասխան չէր նախագահի «պոմպա»-ին և չընկալվեց ըստ էության: Բայց այդ չէ խնդիրը:

Հանդիպումը Դաշնակցության հետ փոխըմբռնման համագործակցության եզրեր ճշտելու նպատակ չէր հետապնդում, ինչը շատ լավ հասկացան հանդիպման մասնակիցները և մեղմ ասած պատասխանեցին նախագահի մեղմ ասածներին:

Բայց աղաթքուն երկաթե ամանի մեջ չի պահվի:

Թիվ 24, հունիս-հուլիս

ՅԱՂԱԳՍ, ԹԵ ՉԻՆՉ Է ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՀՀՇ 5-րդ համագումարում Լ. Տեր-Պետրոսյանի ելույթը ըստ էության նախագահի և իր կազմակերպության գործունեության հաշվետվությունն էր, ինչը նա փորձեց անել «պատասխանելով»

ՀՀԾ-ին և Հայաստանի ներկա իշխանություններին ներկայացվող մեղադրանքներին: Մոռանանք ընդդիմության հասցեին ասված դառը խոսքերը, համարենք, որ նախագահը արդարորեն է քննադատում, դա նրա իրավունքն է, «բայց նաև բարոյականության չափանիշը», իր բառերով ասած: Համարենք նաև, որ ընդդիմությունը, իմա՝ ընկեր Դաշնակցությունը, «հայհոյանքից ու զազրախոսությունից» (դարձյալ իր բառերն են) զատ ոչինչ չի արել այս չորս տարիների ընթացքում: Լավ, իսկ ո՞րն է ՀՀԾ-ի և հանրապետության նախագահի արածը: Ո՞ր նվաճման մասին է լռում դաշնակցական մամուլը: Ո՞ր հաջողությունն ու ձեռքբերումն է շլացրել ու կուրացրել ընդդիմադիր մեր աչքերը: Ի՞նչը չենք կարողանում ու ուզում տեսնել: ՀՀԾ-ի մեր արյունակից հպարտ եղբայրներ ու քույրեր, մի՞թե հանցանք է թանկագին կյանքերի գնով ազատագրված հողը թշնամուն հանձնելուն դեմ լինելը: Կամ այդ ո՞ր խաղաղությունն է, որ ընդդիմության սրտով չէ: Կամ այդ ե՞րբ, ինչպե՞ս խանգարեց ընդդիմությունը հայոց պետականության կայացմանը...

Ցույց տվեք ձեր ու հարգարժան մեր նախագահի արյունքրտինքով նվաճածը, և մենք, ազգի ծառաներս, որ հռչակել ենք մեզ, ենթագիտակցաբար թե գիտակցաբար, մեզ վեր չդասելով ժողովրդից, հպարտանանք ձեզ հետ, ձեզնով: Ընդունենք, որ ոչ ոք, նախագահից ավելի լավ, այդ անել չի կարող: Նրա ելույթը ոչ այնքան ընդդիմության ներկայացրած մեղադրանքների պատասխան էր, որքան մեղքը ընդդիմության վրա բարդելու, արդարանալու և մեղադրանքները, այսինքն՝ չարվածն ու թույլ տված սխալները իբրև նվաճում ու հաղթանակ հրամցնելու փորձ: Եթե նախագահը իրոք միայն ճշմարտությունն է ասում, ապա այդ ճշմարտությամբ կերտված անկախությունը, որքան էլ այն միջազգայնորեն ճանաչված լինի, ճշմարիտ չէ:

Թիվ 25, հուլիս

ԳԼԽԱՎՈՐԸ ՆՊԱՏԱԿՆ Է

Հայաստանից հեռանում են, Հայաստանը լքում են, Հայաստանից փախչում են մեր հայրենակիցները՝ ընտանիքներով, գերդաստաններով, արհեստակցական մեծ ու փոքր միություններով, խմբակցություններով, ամուսիններով, սիրուհիներով ու սիրեկաններով, մի խոսքով, հեռանում են...

Ուրիշ բան չասենք, այդ էլ բավական է հասկանալու համար, թե ինչպիսին է իրավիճակը հանրապետությունում: Ե՞րբ են մարդիկ թողնում հայրենի օջախները, ե՞րբ է հայ մարդը լքում հայրենի տունը, հայրենիքը: Ինչի՞ց են փախչում, ումի՞ց... Գուցե թուրքի՞ց, համաճարակի՞ց, խորշակի՞ց, սովի՞ց... Ոչ, փախչում են անորոշությունից ու անհայտությունից, չհավատալով ու չվստահելով ոչ իշխանություններին, ոչ էլ ընդդիմությանը: Ընկերաբանական ի՞նչ ուսումնասիրություններ են արվել, ո՞վ է հաշվել, թե քանի մարդ է վերջին երկու տարում հեռացել հանրապետությունից, ո՞վ է պարզել պատճառները, և այլն, և այլն...

Կար ժամանակ, երբ փորձում էինք հասկանալ արտագաղթող մեր հայրենակիցներին, Խորհրդային Հայաստանից փախած մեր արվեստագետներին, գործարար մարդկանց, որոնք չդիմանալով ընկերային անարդարությանը, մարդկային իրավունքների ոտնահարմանը, ստորացումներին, ճնշումներին ու պարտադրանքներին, ստիպված էին լինում հեռանալ: Իսկ հիմա՞: Ճիշտ չէ միայն ընկերային և տնտեսական պատճառներով բացատրել աղետալի չափերի հասած արտագաղթը:

Մի ուրվական է շրջում Հայաստանում, որից սարսափում ու փախչում են ռամիկ թե արհեստավոր, գիտնական թե արվեստագետ, ունևոր թե աղքատ:

Ոչ, դա պատերազմի ուրվականն էլ չէ, որքան էլ փորձեն դրանով վախեցնել մեզ... Ազատագրական պայքարի ելած ժողովուրդն իր ազատ ու անկախ գոյության, իր զավակների, իր ապագայի հա-

մար մարտնչելու պատրաստ ժողովուրդը չի ընկճվի նաև քաղցից ու ցրտից, եթե հավատ ու հույս ունի, նպատակ ու տեսլական:

Կարող են հակառակվել՝ ո՞ւմ մասին է խոսքը, մի քանի մտավորականների՞, առանձին անձա՞նց, ընտանիքների՞ (թեև ճշգրիտ թիվ չկա՝ հարյուր հազա՞ր, մեկ միլիո՞ն), թե՞ ժողովրդի: Մի ամբողջ ողբերգական թերթ՝ «Ազատամարտը», որպիսին մեզ տեսնում է ՀՀԾ-ն (որ է իշխանությունը), համարձակություն ունի ասելու՝ **ժողովուրդը**: Այո՛, խոսքը հայաստանաբնակ ժողովրդի մասին է... Չխաբենք մեզ, խոսքը անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասին է: Խոսքը բոլորին համակել, վարակել, նվաճել ձգտող վտանգի մասին է, որի դեմ պետք է պայքարել ազգովին: Կարելի է չվստահել խմբակցություններին և առաջնորդներին, բայց չի կարելի ապրել աննպատակ, անհավատ, անհույս: Հանրապետության ռազմաքաղաքական, ընկերային, տնտեսական իրավիճակի արդյունք չէ միայն այս ամենը, այլև փոխադարձ անհասկացողության ու անվստահության, որի գլխավոր մեղավորը եղել և մնում է ՀՀԾ-ն, որը հիասթափեցրեց և հուսախաբ արեց ժողովրդին:

Նախ՝ իր արցախյան պահանջատիրությամբ, ապա՝ ժողովրդավարական նկրտումներով ու գեղեցիկ ապագայի խոստումներով: Չկա ավելի սարսափելի բան, քան հիասթափությունն ու հուսախաբությունը՝ անընդհատ ազդեցության ու ներգործության, միասնության ոգին, պայքարի կամքը թուլացնելու և ջլատելու իմաստով: Ահա՛, ինչի առջև է կանգնած այսօր մեր ժողովուրդը, ահա՛, թե ինչպիսի կարևորագույն խնդիրներ ունի լուծելու ընդդիմությունը, որը նույնպես, ինչպես ասվեց, դեռևս վստահություն չի ներշնչում իր լրջախոհ, հետևողական, ինչ-որ տեղ նույնիսկ զգուշավոր քաղաքականությամբ հանդերձ, ինչում մեղադրում են այսօր մեզ և՛ իշխանությունները, և՛, չթաքցնենք, մեր դաշնակցական ընկերներից ոմանք: Գուցե, իրոք, մեր ժողովրդի համար եկել է ամենաճակատագրական պահը, իրական, թե ուրվական բոլոր կարգի թշնամիների դեմ բացահայտ կռվի պահը: Գուցե: Սակայն խնդիրը

միայն այդ չէ: Եվ այդ գիտակցումով է, որ ՀՅԴ-ն շարունակում է հավատարիմ մնալ պետականությունն ամրապնդելու, հանրապետության ներքին կյանքը չապակայունացնելու իր որոշմանը, անկախ նրանից, թե ինչպես այդ կընկալվի...

Գլխավորը նպատակից չշեղվելն է, ինչպիսի ուրվականներ էլ որ մեզ այսօր շրջապատեն:

Թիվ 26, հուլիս

«ԱԶԱՏՈՒԹՅՈ՞Ւ ԷԻՆ ԵՐԱԶՈՒՄ»

Հայ ժողովուրդը ոչ միայն հացիվ, այլև ոգեղենով ու մտոք կեցիվ նաև այն բոլոր ժամանակաշրջաններում, երբ չկար պետականություն: Եկեղեցի էր կառուցում, գիրք ստեղծում, մանրանկարչություն զարգացնում ու տիեզերագիտության մեջ խորանում, և որևէ արհավիրք չէր կասեցնում միտք ու մշակույթի զարգացման վերընթացը: Չէ՛ր կարող կասեցնել, քանի որ պետություն չկար, բայց կար եկեղեցի, որը կատարում էր պետության գործառույթները՝ նաև գիտությանը, արվեստին ու գրականությանը սատար կանգնելու, ոգեղենի ու մտքի հանդեպ հակում ունեցողներին ուսման տալու, այնուհետ նրանց պատվերներով ապահովելու և ստեղծածին տեր կանգնելու պարտականությունը. կային մեկենասներ, ովքեր չէին խնայում իրենց միջոցները, և ազգային կուսակցություններ, որոնք առաջին հերթին մշակույթի ուժով սփյուռքը հայ պահեցին:

Միայն այդպե՛ս: Հակառակ պարագայում չէինք ունենա Դավիթ Անհաղթ ու Նարեկացի, Կոմիտաս ու Շիրակացի, Մխիթար Գոշ ու Տաթևացի. չէինք ունենա Մշո Սուրբ Կարապետ ու Մակարավանք, Զվարթնոց ու Մատենադարան: Հակառակ պարագայում՝ չէր լինի ուսում ու դպրոց, չէինք ճանաչի մեր գիրն ու պատմությունը, ինքներս՝ մեզ, կվերածվեինք անհավատ ու անիմաստասեր գորշ զանգվածի և այլևս մեր երկիրը տիրած օտարներին խնդիր չէր լինի երկրի տիրոջն ուծացնելը: Հակառակ պարագայում՝ այ-

սօր չէինք լինի, այսինքն կգոյատևեինք՝ հայի հոգին կորցրած, ազգի դիմագիծը թողած դարերի մեջ, որպես այլացեղ ու այլադավան, որպես հույն ու պարսիկ, թուրք ու թաթար: Հային հա՛յ պահել օտարի ազդեցություններից, ազգը պահպանել՝ Հայ Առաքելոց եկեղեցին, բարեգործներն ու կազմակերպությունները հարյուրամյակներով պետության բացակայության պայմաններում, օտարի լծի տակ և գաղթօջախներում կարողացան կատարել այս պարտքը զփայլունս: Այնքան մեծ էր դարերից առկայծող լույսը, որ համայնավարները ի զորու չեղան կասեցնել այն և տեղի տվեցին հայ ժողովրդի ստեղծարար ոգուն ու մտքին, շատ դեպքերում պետականորեն աջակցելով նաև ազգային հողի վրա ծնված գործերն ու համույթները:

Այսօր ունենք պետություն, նախարարություններ, պետական տարբեր կառույցներ, սակայն կանգ է առել մշակույթի ու գիտության զարգացումը, ավելին՝ եղածի քայքայման գործընթացն է սկսված:

Ո՞ւր են ազգային համույթները, Պարի պետականը, որոնցից հայրենասիրության դասեր էինք քաղում, ի՞նչ է կատարվում տասնամյակներով ձևավորված, սարքավորված գիտական լաբորատորիաներում, Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, որը ժամանակին ճանաչում ուներ նաև Արևմուտքում, ինչո՞ւ են զանգվածաբար արտագաղթում մեր լավագույն ստեղծագործողները, ինչո՞ւ են լռում մեր մուսաները, երբ ժողովրդի այսօրվա ապրած ցավից ու վիրավորանքից պիտի ճչային:

Մի առիթով մշակույթի ներկայիս նախարարն ասել է. «Ազատությո՞ւն էին երազում, այն կա, էլ ի՞նչ է պետք»:

Պետական մոտեցո՛ւմ: Մշակույթին ու գիտությանը տեր կանգնող իշխանություն: Իսկ ընձեռած ազատությունը, ինչը՝ «ինքդ գլուխդ պահիր» է նշանակում, ձեռնտու է համամարդկային արժեքների դրոշի ներքո հայ ժողովրդին իր ազգային արմատներից կտրող «մշակույթի» գործարարներին միայն:

Թիվ 27, հուլիս

ԱՅՍ Է ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Հանրապետության ներքին իրավիճակի մասին խոսելիս սկսել են ավելի հաճախ համեմատել հետխորհրդային հանրապետությունների և Արևելյան Եվրոպայի սոցիամակարգի երկրների հետ: Այո, Հայաստանում բանը սուրաթիուսեյնովներին չի հասել, բայց ինչի՞ և ո՞ւմ շնորհիվ: Հանրապետական ներքին կայունությունը ներկայացվում է որպես իշխանությունների նվաճում, անտեսելով դրանում ընդդիմության դերը, բարոյական ազգային գործոնները, որոնք բաղդատելի չեն ուրիշների հետ:

Թե ինչի արդյունք է այդ ներքին կայունություն կոչվածը, նախ պետք է հարցնել ժողովրդին և ընդդիմությանը: Թող որ դա իշխանությունների նվաճում համարվի, եթե նվաճում է: Խնդիրը այդ չէ: Խնդիրը ինքը կայունությունն է, որն ինչպես ասում են, դրսից ուրիշի աչքն է հանում, ներսից՝ տիրոջ: Ի՞նչ են ասում հանրապետության գլխավոր դատախազի և ՆԳ նախարարի վերջերս հրապարակած թվերը: Ահա դրանցից մի քանիսը. հանրապետությունում ծանր հանցագործությունների թիվը 92-ի համեմատ աճել է 33,1 տոկոսով: Չորս ամսվա ընթացքում միայն Երևանում գրանցվել է 1892 ծանր հանցագործություն: Հետախուզման մեջ գտնվող 1597 անձերից 1139-ը չեն հայտնաբերված: Իսկ թե ինչ չափերի են հասել անձնական ունեցվածքի հափշտակումները, կարող եք դատել ձեր կորուստներով:

Ահա ինչպիսին է պետական վարչակազմի ծառայությունը ազգին, ինչպիսին է ազգային պետականության նվաճումը: Իրական կայունությունը հիմնական պայմանն ու երաշխիքն է մարդկանց բնական ու անօտարելի իրավունքների պաշտպանման, կենսամիջոցների ապահովման, երկրի տնտեսական, ընկերային և հոգևոր կյանքի բնական ընթացքի պահպանման: Ո՞վ կարող է հաշվել, թե որքան մարդ է զոհ գնացել ձմեռվա ցրտին ու սովահարությանը,

որքան մարդ է գաղթել, որքան մուրացկաններ ունենք, որքան թափառականներ, քրեական հանցագործներ, թմրամոլներ:

Ինչպե՞ս է կանխվելու սկիզբ առած և աստիճանաբար մեծ ծավալ ստացող ահաբեկչությունը, որը բացի մարդկային կյանքեր կլանելուց, սպառնում է արդ հասարակական կառույցներին ու մաֆիային դուր չեկող մամուլին:

Անցած ժամանակաշրջանը ցույց է տալիս, որ պետական վարչակազմը ոչ միայն չի ձգտում կայունացման, այլև ընդհակառակը՝ նպաստում է ապակայունացմանը:

Ո՞ւմ դրդմամբ է սադրանքի ենթարկվում ընդդիմությունը, որը մի օր, Աստված մի արասցե, կարող է ափերից դուրս գալ և իշխանությունը նպատակ չհամարող իր շարքերին ակամա մասնակից դարձնել իրավիճակի էլ ավելի բարդացմանը:

Ո՞ւմ դրդմամբ և ո՞ւմ ձեռքով այրվեց «Ուրբաթ» շաբաթաթերթի խմբագրատունը: Կամ ի՞նչ նպատակ էր հետապնդում ՊԱԿ-ի նախկին նախագահի սպանությունը: Ահա, թե ինչպես են փորձում հավասարակշռությունից հանել ընդդիմությանը: Դժվար չէ գուշակել հաջորդ քայլերը: Դժվարը կանխելն է:

Թիվ 28, հուլիս

ԲԱՆԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՏՎԱԽՆԴՐՈՒԹՅԱՄԲ

Պետք էր տեսնել, թե ինչպիսի ակնածանքով, հրճվանքով ու հպարտությամբ էին հայ մարդիկ նայում շքերթի ելած հայ զինվորներին: Պետք էր զգալ, թե ինչպիսի բերկրությամբ ու գորովանքով էր բաբախում շքերթը դիտելու ելած նրանց մայրերի, քույրերի ու կանանց սրտերը: Զինվորների երթը՝ վստահ, հավաստի ու պաշտելի: Եվ եռագույնի քաղցր ծփանքը՝ հայոց հոգիներում: Եվ «Մեր հայրենիք»-ի արձագանքը հայոց սրտերի խորունկ խորքերից:

Հայ զինվոր: Հայաստանի Հանրապետության բանակ:

Ո՞վ չհպարտացավ, ո՞վ չերջանկացավ քո հայերեն երդումով ու քայլերգով, քո պետական երթով ու շքերթով:

Բառերով չես արտահայտի այն ուրախությունը, որ ապրեց ազգի ու հայրենիքի սիրով արբշիռ Սփյուռքը հայ զինվորի ամեն մի հաղթանակով, լիներ դա մոռացված Գետաշենի ազատագրումը, թե Շուշիի մեծ վերադարձը: Ասվածը սոսկ զգացում չէ: Եթե անգամ զգացում էլ է, ապա այնքան զորեղ, որ կարող է համախմբել նույնիսկ հակառակորդ քաղաքական ուժերին, մեկտեղել համազգային ներդրումները՝ ի խնդիր Հայաստանի անկախության ամրապնդման: Ամենավեհ գաղափարն անգամ կարող է մեռնել, եթե չի սնվում ազգային զգացումներից: Շուշիի ազատագրումը նաև ազգային զգացումների հաղթանակն էր, որոնք էլ իրենց հերթին սնվում են ազգային գաղափարով և ապրում հանուն գաղափարի: Պետք է կարողանալ զգացումները ծառայեցնել գաղափարի իրականացմանը, արդյունավորել ու նյութականացնել՝ իբրև գաղափարի ուժանակ, որով բանտի պարիսպներն են պայթեցնում ու թշնամու ամրոցները:

Կան ազգային արժեքներ, ազգային սրբություններ, որոնցով ապրել ու գոյատևել է մեր ժողովուրդը, ի հայրենիք թե ի սփյուռս աշխարհի: Դա նաև հայ ազատամարտիկի ու զինվորի, հայոց զենքի խորհուրդն է, որի մետաղը, ինչպես բանաստեղծը կասեր՝ ՎՐԵԺԻ ճոխ հանքերից են պեղել և ջրդեղել արդարության լույսի մեջ:

Վերջապես ունեցանք պետական բանակ, որով հպարտ ու երջանիկ ենք ազգովին: Բայց չունեցանք այն արժանապատվորեն պահելու պատվախնդրություն: Չունեցանք զինվորի երդման խորհրդով նորոգվելու ձգտում ու կամք, մեր որդիներին հայոց ազատամարտի ավազանում մկրտելու բաղձանք ու քաջություն: Այն, ինչ այսօր տեղի է ունենում մեր բանակում, չի կարող չմտահոգել և ոչ մի հայ մարդու:

Թիվ 29, հուլիս-օգոստոս

ԹՎԱԽԱՂ. ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ

Հուլիսի 31-ի ՀՀ կառավարության անդամների, տեղական խորհուրդների գործկոմների նախագահների, ՀՀ ԳԽ պատգամավորների, նախարարությունների, գերատեսչությունների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը: Ելույթի նյութը ՀՀ ընկերային և տնտեսական զարգացման 1993 թ. առաջին կիսամյակի արդյունքները և այդ ասպարեզում հետագա անելիքների հարցերն էին: Ելույթի տեսագրությունն ամբողջությամբ ցուցադրվեց հեռուստատեսությամբ: Վարչապետի ճառի հաշվետվությունը գերհագեցած էր թվական տվյալներով: Ճիշտ է ասված, որ թվերով տնտեսությունը չեն կառավարում, բայց թվերը ցույց են տալիս, թե այն ինչպես է կառավարվում: Սակայն այս դեպքում հակառակ տպավորություն թողեց. թվական տվյալները խճողեցին ընդհանուր պատկերը, այն պատելով մի յուրահատուկ «ծխածածկույթով», որից մասնագետ վիճակագիրներն էլ գլուխ չհանեցին, էլ չենք խոսում անպատրաստ լսարանի մասին:

Առարկայորեն գնահատած, 1993 թ. առաջին կիսամյակում հանրապետության տնտեսության գործունեությունը այնքան ջղաձգորեն է ընթացել, որ նրանում զարգացման միտումներ (դրական, թե բացասական) բացահայտել գործնականում անհնար է: «1993 թ. հունվար-հունիսին, չնայած առանձին ամիսներին նկատված դրական տեղաշարժերին և ձեռնարկվող միջոցներին, շարունակվում է հանրապետության տնտեսության անկումը»: Սա է իրողությունը: Պետք է գնահատել վարչապետի բացախոսությունը, երբ նա կարևորում է արտասահմանյան վարկերի և հումանիտար օգնության նշանակությունը հանրապետության տնտեսական կյանքում: Ըստ ելույթի՝ «արդեն առաջին կիսամյակում գերակատարվել են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով խոստացված արտասահմանյան պետական վարկերի, ինվեստիցիաների ընդհանուր ծավալները»: Այո, կարողացել ենք պարտքեր անել և

գուցե թե՝ մի բան էլ պահանջվածից ավելի: Սակայն երբ մտածում ես, որ դրանք չեն օգտագործվելու որպես հեռանկարային նշանակության ներդրումների աղբյուր, այլ միայն հոգալու են մեր ընթացիկ պահանջները և վաղը վերադարձվելու են ոչ թե օգտագործումից գոյացած եկամուտների, այլ հայտնի չէ, թե մեր որ միջոցների հաշվին, լավատեսական տրամադրության տեղ չի մնում: Ինչ վերաբերում է մարդասիրական օգնությանը, ապա ինչպես հավաստիացվեց. «Նախապատրաստված է և մոտ օրերս կառավարության քննարկման կներկայացվի մարդասիրական օգնության կենտրոնական պետական հանձնաժողովի մասին որոշման նախագիծը»: Հանրապետությունը 1988 թ. սկսած տարաբնույթ օգնություններ է ստանում և, պարզվում է, դեռևս չի գտնվել բաշխման և օգտագործման կազմակերպական արդյունավետ ձևը...

Ինչպես հայտնի է, սեպտեմբերին ՀՀ կառավարությունը Գերագույն խորհրդում պետք է հանդես գա 1993 թ. ընկերային-տնտեսական զարգացման ծրագրի կատարման մասին հաշվետվությամբ: Փաստորեն այն, ինչ ներկայացվեց հուլիսի 31-ին: Այս դեպքում անհասկանալի է կրկնությունը: Ճիշտն ասած, ցանկալի էր վարչապետի այս ելույթում լսել սկզբունքորեն նոր, արդյունավետ, գործուն միջոցառումների, մոտեցումների մասին, որոնք պետք է դուրս բերեն հանրապետությունը տնտեսական, ընկերային, կազմակերպական «մեռյալ կետից»: Իհարկե, խնդիրը ժողովրդին խոստումներով հանգստացնելը չէ: Ինչ արժեն դատարկ խոստումները, երբ այլևս, ինչպես ասում են՝ դանակը հասել է ոսկորին: Գնալով ավելի ու ավելի անտանելի է դառնում ժողովրդի վիճակը: Խնդիրը ելք գտնելն է, որը չպետք է վտանգի հանրապետության տնտեսական զարգացման հեռանկարը:

Թիվ 30, օգոստոս

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐԻՔ

Դժվար չէր կանխատեսել, թե ինչպիսի հետևանքներ կարող էր ունենալ հանրապետության տնտեսության անկումը, ինչպիսի հիմնահարցերի առջև կարող էր այն կանգնեցնել նորանկախ հանրապետությանը, որը դեռ երկար շարունակելու էր մնալ տնտեսական կախվածության, եթե չասենք՝ գերության մեջ: Դժվար չէր նաև հասկանալ, թե ինչ կարող էր ենթադրել այդ գերությունը կամ ինչի կարող էր հանգեցնել դրամատիրական այս օյինբազությունն ու շուկայական հարաբերություններ կոչվող այս սոդոմ-գոմորը: Հանրապետության ընկերային և տնտեսական քաղաքականությունն առաջիկայում էական առաջընթաց չի խոստանում, եթե անգամ դատենք վարչապետի վերջին հաշվետվությունից: Ավելին, ոչ մի երաշխիք չկա, որ տնտեսական, ընկերային վիճակն էլ ավելի չի սրվի՝ սպառնալով հանրապետության ներքին կայունությանը և դրանով իսկ՝ մեր ազգային պետության կայացման ամրապնդմանը: Հույսը վարկային էմիսիաների և օգնությունների վրա դնելով՝ մեր ուզած անկախությունը չենք նվաճի: Չկա որևէ արդարացում հանրապետության իշխանություններին ընկերային այն չարիքների համար, որոնց պատճառով խաթարվում է ազգային մեր նկարագիրը, վտանգվում են արժեքները, եղծվում հայրենասիրության, ազգասիրության, մարդկային առաքինության, պարտքի ու պատասխանատվության չափանիշները: Եթե հայ մարդը ոչ մի աշխատանք չունի, ուրեմն նրա արժանապատվությունն ու պատվախնդրությունը շպրտված են փողոց: Մի՛ պահանջեք նրանից այն, ինչ այլևս նա չունի: Մի՛ պահանջեք նաև համբերություն ու ըմբռնում: Գործազրկությունը մեր պարագայում դառնում է ազգային չարիք, որի դեմ պետք է պայքարել ազգովին՝ անկախ մեր քաղաքական հայացքներից ու ընկերային վիճակից:

Այս տարվա անցած ամիսներին, ըստ պաշտոնական տեղեկությունների, աշխատանքի տեղավորման հարցերով զբաղվածության կենտրոններ է դիմել և հաշվառման վերցվել 98,6 հազար

մարդ, որոնցից 87,6 հազարը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Ըստ նույն աղբյուրների՝ տարեսկզբից գործազուրկների թիվն ավելացել է 29,5 հազարով: Նույն ժամանակահատվածում հանրապետության տնտեսության մեջ զբաղվածների թիվն ավելացել է 0,9 տոկոսով: Ճի՞շտ թվեր են արդյոք սրանք, եթե անգամ չհաշվենք մասնավոր սեկտորում աշխատանքով զբաղվածներին: Ո՛չ ամենևին: Հասկանալով հայ մարդու հոգեբանությունը, հայ տղամարդուն Աստծո խնայած արժանապատվությունը՝ պատկերացնենք, թե քանի-քանիսն էլ ատամները կրճտացնելով դեռ դիմանում են՝ սև օրվա համար ետ գցած կոպեկներով թե ռուբլիներով: Քանի-քանիսն էլ զբաղվածության կենտրոն կոչվածի մասին լսած իսկ չկան: Քանի-քանիսն էլ գործազուրկի կարգավիճակի համար ավելի շուտ թաղման բյուրո կդիմեն, քան զբաղվածության կենտրոն:

Այն, ինչ կարելի է, կամ այն, ինչ հեշտությամբ կարող է անել Պյոտրը, չի կարող հայ Պետրոսը:

Նորից ասենք. նայենք մեր շուրջը, հասկանանք դժվար ու հրաշալի մեր տեսակը և քաղաքակրթության ու ժողովրդավարության թևերով անգամ մնանք մեր ճախրանքի ծիրի մեջ: Գործազրկությունը կունենա ազգակործան հետևանքներ, եթե դրա դեմ չպայքարենք ազգովին: Թող որ մի որոշ ժամանակ, մի որոշ չափով նյութապես վնասվի «Ազատամարտի» խմբագրությունը և ձեր ֆիրմաներն ու համատեղ ձեռնարկությունները, թող որ աշխատանքի տեղավորման կենտրոններ դիմողների թիվը չավելանա, էլ չասած՝ գործազուրկի կարգավիճակ հայցողներինը:

Թիվ 31, օգոստոս

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՎԵ՞Ր, ԹԵ ԻՆՔՆԱԲՈՒԽ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնության պետական պաշտոնական ամենաբարձր շրջանակներում օրեցօր ավելի է խորանում տարբեր հոսանքների միջև եղած հակասությունը, սպառնալով առաջիկա մեկ-

երկու ամսում վերածվելու սուր առճակատման: Սեփական ազդեցության գերակայության ապահովման համար մղվող պայքարի մեկ մարտավարական ուղղությունն էլ հակադիր բևեռներից յուրաքանչյուրի համար իր սահմանադրության նախագծի տարբերակի պարտադրումն է և հակառակորդ կողմի ներկայացրած տարբերակի ժխտումը: Նման սկզբից հետո, եթե ասենք, որ ներկայացվող նյութով ցանկանում ենք անդրադառնալ Հայաստանի քաղաքական ներքին կյանքին, ապա բնական հարց կծագի, թե այդ ամենի հետ ի՞նչ առնչություն ունի Ռուսաստանին վերաբերող նախաբանը: Իսկ առնչվում է այնքանով, որ Հայաստանի պաշտոնական շրջանակների կողմից Ռուսաստանի նախագահական թիմի ներկայացրած սահմանադրության տարբերակի մեխանիկական պատճենումից մինչև Ռուսաաստանի ներքին քաղաքական կրքերը զուգահեռաբար և արհեստականորեն Հայաստան ներմուծելու ճիգերը, փորձ է արվում շարունակելու Հայաստանն օտար պայքարների ու հաշիվների փորձադաշտ ծառայեցնելու վերջին տարիներին հաստատված վտանգավոր ավանդույթը: Այս տեսանկյունից դիտարկելիս բոլորովին պատահական չի հնչում հանրապետության կառավարական ամենաբարձր պաշտոնյաներից մեկի՝ արտաքին գործոց նախարարի չգիտես զարմանքը, թե ափսոսանքը այն բանից, որ Հայաստանում եղած քաղաքական ընդդիմությունը նման չէ Վրաստանի և Ադրբեջանի ընդդիմություններին: Կարելի է, անշուշտ, ընդհանուրի մեջ տեսնել նաև Հայաստանի իշխանությունների սեփական ցավը: Հանրապետության գլխով անցած դաժան տարվանից և առավել դաժան ձմեռվանից հետո վարչապետահնար շինծու ցուցանիշների հեռապատկերի վրա 1993 թ. անկասելիորեն խորանում է համապարփակ ճգնաժամը: Արդեն իսկ կարծում ենք, քչերի համար է գաղտնիք, որ փառավորապես տապալված է նաև 93-94-ի «Ձմեռ» ծրագիրը, ժողովրդի հոգեվիճակում ու խուճապային ձեռնարկումների ասպարեզում ծնած համապատասխան արձագանքներով հանդերձ: Եվ այս ձախավերության դիմաց պետական այրերի ողջ իմաստնությունը չի հերիքում ավե-

լիին, քան հանրապետության ներքին զարգացումներին արհեստական ուղղվածություններ հաղորդելու փորձը, հասարակության ուշադրությունը հիմնական թիրախից շեղելը, քավության նոխազների փնտրտուքը: Եվ անշուշտ շատ կարևոր է հնարավոր ցնցումների հետևանքներից ապահովագրվելու նպատակով, ի դեմս բռնատիրական սահմանադրության ընդունման, իշխանական կամայականության իրավական ամրակայման ճիգը: Եվ ուրեմն, զարմանալի թող չթվա, որ մեր «ազգընտիր» իշխանությունների հետևողականորեն իրականացվող միակ «առաքելությունը» եղավ ու մնաց մենիշխանական դիրքերից ազգի տարբեր հատվածների մեջ ներքին թշնամիների գործնական փնտրտուքը: Առկա իրականությունից բխող հաջորդ անուրախ հետևությունն էլ այն է, որ հանրապետությունը որպես օտար պայքարների ու հաշիվների փորձադաշտ ծառայեցնելը ինքնին որոշում է Հայաստանի և նրա իշխանությունների քաղաքական անկախության չափը:

Թիվ 32, օգոստոս

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ

Վերջին ամիսներին հանրապետության ազգաբնակչության մի փոքրիկ մասը միայն բուռն հետաքրքրություն է ցուցաբերում այն կարևորագույն իրադարձությանը, որին մենք ազգովին սպասել ենք գուցե թե շատ երկար: Սահմանադրության ընդունումը բախտորոշ նշանակություն կունենա և ցանկալի է, որ այն արտահայտի ողջ ժողովրդի կամքը, քանզի այն բոլորի համար է: Իրականում ժողովուրդը հնարավորություն չունի իր կամքն արտահայտելու, իր առաջարկություններն ու շտկումները մտցնելու, քանզի հայտնի է, որ ազգաբնակչության մեծ մասը գերագույն ջանքեր է գործադրում պահպանելու իր ֆիզիկական գոյությունը: Այդ փաստի գիտակցումը կարևոր է, որովհետև գուցե, Աստված մի արասցե, ընդունվի սահմանադրության նախագծի նախագահական տարբերակը, և վաղը մեզ հավատացնեն, որ այն ժողովրդական քննարկման է ներ-

կայացված եղել: Իրականում, ինչպես նշեցինք, ժողովուրդը չի ընկալում, թե ինչ է կատարվում:

Միայն ժողովրդի ծայրահեղ կրավորականությամբ կարելի է բացատրել այն իրողությունը, որ համարձակվել են ազգին ներկայացնելու սահմանադրության այսպես կոչված իշխանական մի տարբերակ, որը թյուրիմացություն է ներկայիս քաղաքագիտական, իրավական մտքի զարգացման մակարդակի, ժողովրդավարության հաստատման գործընթացի և ազգային-ազատագրական պայքարում կրած այնքան զրկանքների ու զոհերի պայմաններում: Այս ամբողջ զոհողությունները, պարզվում է, նրա համար են, որ ժողովուրդը կրկին հայտնվի բռնակալության վաղմիջնադարյան շրջանում: Որովհետև, ըստ այդ նախագծի, սահմանադրորեն ողջ իշխանությունը պատկանելու է մի մարդու, որը բարձր է բոլոր երեք իշխանություններից, Ազգից ու Հայրենիքից: Եվ նման փաստաթուղթը ընդունելու բոլոր հնարավորությունները կան, եթե ընդդիմադիր կուսակցությունները, քանի դեռ ժամանակ կա, հանդես չգան ազգային շահն արտահայտող և դրանից բխող այլընտրանքով:

Ընդդիմադիր կուսակցությունները առայժմ ներկայացրել են Քաղաքացիական համաձայնության միացյալ Սահմանադրության նախագծի մշակման սկզբունքները, մի փաստաթուղթ, որը մեծ հույսեր է ներշնչում: Հինգ քաղաքական կուսակցություններ՝ ՀԴԿ, ՀՀԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ, ՍԻՄ, ներկայացնելու են միասնական նախագիծ, որում արտահայտված են լինելու հայ ժողովրդի ոչ միայն այսպահային ձգտումները, այլև Հայրենիք ունենալու պատմական իրավունքը, ազգային առանձնահատկությունները և, մի խոսքով, առկա է լինելու այն ամենը, ինչը սահմանադրությունը կարող է բնութագրել իրոք ազգային: Լիակատար արտացոլում է ստանալու նաև ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները ներկայացնող ու պաշտպանող վարչական համակարգն ու կառուցակարգը:

Բուն Սահմանադրությունն է լինելու Հանրապետությունում անվտանգության, իրավունքների և օրենքների պաշտպանության երաշխավորը, այլ ոչ թե Հանրապետության նախագահը, եթե նման

պաշտոն առհասարակ լինելու է: Ապահովվելու է նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը, որպեսզի վերջիններս իրար հակակշռեն, տեղական և համապետական իշխանությունների ներդաշնակ գործունեությամբ:

Այնուամենայնիվ, առկա է վտանգը, որ մենք կրկին կարող ենք հայտնվել անազատության մեջ: Ինչքան էլ դժվար լինի պատկերացնել՝ գործնականում ժողովուրդը պետք է հասկանա, որ ինքն է իշխանության աղբյուրն ու կրողը, և իշխանությունը միայն միջոց պետք է լինի արտահայտելու և իրականացնելու հենց ի՛ր կամքը:

Թիվ 33, օգոստոս

ՆՈՐԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՐ ՀՈԳՍԵՐ

Նորից եկավ սեպտեմբերը, նոր հոգսեր ավելացնելով առանց այն էլ հոգսերի ծանրության տակ կքած ժողովրդի ուսերին: Նույնիսկ անիծյալ անցյալում տոնական շուքով սկսվող տարեսկիզբը այս անգամ անցանկալի իրադարձություն է շատերի համար: Ուսումնական շինությունները այդպես էլ չվերանորոգվեցին (տեխնիկական ու նյութական օժանդակությունների, բարելավումների մասին ավելորդ է նույնիսկ խոսելը): «Կատաղի» գներով դասագրքերի, գրենական պիտույքների հայթայթման գործը թողնված է ամեն ծնողի ու սովորողի շնորհքին և ավելորդ է այս դեպքում նույնիսկ խոսելը դրանց պակասի, հին դասագրքերը նորերով փոխարինելու անհրաժեշտության, համազգեստների չլինելու մասին: Դեռ հայտնի էլ չէ, թե նույնիսկ այս պայմաններում որքանով է հնարավոր լինելու ապահովել ուսումնական գործընթացը, երբ առաջիկա ձմեռը իր հետ կբերի մի շարք նոր հիմնահարցեր: Սակայն նույնիսկ այս ամենից առավել բարդ խնդիր է դիմագրավելու նոր ուսումնական տարին: Ի՞նչ ընթացք կարող է ունենալ այն, երբ ուսուցչական ու դասախոսական անձնակազմերը աշխատանքային շրջանը սկսում են գործադուլային տրամադրություններով: Երբ տարին սկսվում է սովորողների և այդ պատվին չարժանացածների բողոքի դրսևո-

ռումներով: Առանց նորի ստեղծման խճողվել ու քայքայվել է ուսումնական եղած համակարգը: Դպրոցական ու բուհական եղած համակարգերի կողքին և նրանց փոխարեն ի հայտ են եկել ինքնակոչ համալսարաններ, քոլեջներ ու վարժարաններ: Ո՞վ է արտոնել, որ ասպարեզի յուրաքանչյուր ներկայացուցիչ ըստ իր ճաշակի տնօրինի եղած գուցե և ոչ կատարյալ ուսումնական համակարգերն ու առանձին հաստատությունները: Ո՞վ է ստուգել ու գործունեության արտոնագիր տվել ի հայտ եկած մասնագետների նոր բանակին և ուսումնական նոր հաստատություններին: Ի վերջո, չէ՞ որ սովորողների ստույգ քանակի հիմքում միշտ ընկած էր վաղվա համապատասխան քանակի համապատասխան մասնագետների պահանջարկը: Ինչո՞վ են զբաղվելու վաղվա բուհ ավարտողները՝ մրցակցային նոր հարաբերությունների, եղած տեղերի կրճատումների պայմաններում, կասկածելի հնարավորությունների տեր բուհ-քոլեջներում ստացած իրենց գիտելիքներով: Եվ ցավն այն չէ, երբ անպատասխանատու, երբեմն էլ արկածախնդիր մարդիկ պղտոր ջրում որս կանեն, այլ այն, որ համատարած անտերության ու ինքնագործունեության մթնոլորտում մի ամբողջ սերնդի ապագայի հարցն է կանխորոշվում:

Այո, ուսումնական միջավայրը փակ համակարգ չէ և նրա ներկայացուցիչներն ապրում են ընդհանուր հոգսերով: Իսկ փոխադրամիջոցների վատ աշխատանքից մինչև խղճուկ աշխատավարձերը, ուսումնական շենքերից դուրս գտնվող բարոյալքման ու չարչիական մթնոլորտը չեն կարող չանդրադառնալ ուսուցանողի և ուսանողի տրամադրությունների ու հոգեբանության վրա: Չեն կարող վերարժևորման չենթարկել նրանց իսկ աչքին սեփական կարևորությունն ու կոչման իմաստը: Կարելի է մտածել, թե այսքան դժվարությունների մեջ արժե՞ արդյոք սովորականից ավելի ցավագին ընդունել կյանքի այս մի ասպարեզում ևս առկա վիճակը: Ամեն ինչ նոր ժամանակների ձևին ու ոգուն է համապատասխան, բայց չմոռանանք, որ այս դեպքում խոսքը ոչ միայն վաղվա սերնդին է վերաբերում, այլ հանձինս այդ սերնդի՝ երկրի ապագային: Իսկ ա-

պագայի նկատմամբ մտահոգությունը նախ և առաջ ներկայի արժևորման չափանիշն է: Դժգոհողների շուրջ խոստումների, ինչ-ինչ բացատրություն-մեկնաբանությունների ծխածածկույթ սարքելը ոչ հարցի լուծում է, ոչ էլ թնջուկի վերացում: Վաղվա սերնդի ուսման ու դաստիարակության գործը որևէ պետության համար հիմնական պարտականություն է, այն պետք է կազմակերպվի ու կարգավորվի պետականորեն: Ինչևէ, մենք ևս շնորհավորենք մեր կյանքի կարևորագույն ոլորտում գործող մարդկանց, հավաստիացնելով, որ գոնե մեր շնորհավորանքների մեջ որևէ ծուռ միտք չկա:

Թիվ 34, սեպտեմբեր

ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Արցախյան ազատագրական հնգամյա պայքարը մոտեցել է մի որոշակի եզրագծի: Ոմանք ձգտում են այդ եզրագիծը ավարտական համարելու՝ ընդհանրապես հայ-ադրբեջանական հակամարտության իմաստով: Նույնիսկ, կարծիք կա, թե իր որոշակի նպատակներն իրականացնելով՝ Ռուսաստանն ընդհանրապես ցանկանում է «սառեցնել» նախկին ԽՍՀՄ տարածքներում տեղի ունեցող ազգամիջյան բախումները: Այդպես է, թե ոչ, հարցն այլ քննարկման նյութ է, սակայն և ակնհայտ է, որ գոնե մեզ համար հանրագումարի բերվեց պայքարի մի փուլ, ինչը թույլ է տալիս ամփոփումներ կատարելու: Առկա է այն իրողությունը, որ 20-ականներին հեռահար նպատակայնությամբ վերաձևված Հայաստանի քարտեզը անցնող շրջանի պայքարի շնորհիվ կրեց հայության համար բարենպաստ շտկումներ: Հետ են նվաճված որոշակի ռազմական և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ ու բնագրեր, ամրապնդված է Հայաստանի Հանրապետության թիկունքը, վերադարձված է բնական պաշարների, գյուղատնտեսական արտադրանքի մի մեծ շտեմարան և վերջապես կարևոր կենսատարածք, որ նոր հեռանկարներ է բացում ազգի առաջ բարգավաճ-

ման, քանակական զորացման (ինչպես բնական աճի, նույնպես և ներգաղթերի ճանապարհով) համար: Եթե այսօրվա իրականությունը նման պատկեր է գծագրում, ապա վաղվա անելիքները պարտադրում են նորանոր, գուցե ավելի բարդ անելիքներ ու պատասխանատվություններ: Այժմյան հանրագումարների և ամփոփումների ժամանակ պետք է չմոռանալ, որ դեռևս անորոշ է ԼՂՀ - կարգավիճակի հարցը և դեռևս խոսվում է այս կամ այն կարգավիճակով Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու հնարավոր լուծման տարբերակի մասին: Ասելը նույնիսկ ավելորդ է, որ հայության և հատկապես արցախահայության համար միանշանակորեն մերժելի է նման հեռանկարը, և հետևաբար պայքարը շարունակվելու է, եթե նույնիսկ ոչ ռազմադաշտերում, ապա բոլոր դեպքերում քաղաքական-դիվանագիտական մակարդակներում, ըստ որում նոր մակարդակներով:

Հայաստանի իշխանությունները հինգ տարի ամբիոնների մոտ անկախություն խաղալուց և ժողովրդին բազում փորձությունների մատնելուց հետո, այսօր ռուս-հայկական «նոր բնույթի» փոխհարաբերությունների հաստատման գործընթացներում մեկիկ-մեկիկ զիջում են հարաբերական անկախության լծակները: Եվ ժողովուրդը չի ըմբոստանում, հաշիվ չի պահանջում, որովհետև այդ «անկախականները» այնպիսի փորձանքի հասցրին իրեն, որ ատելի անցյալը վերածվեց փնտրված երազի: Ինչևէ, հարաբերությունների, նաև ձեռքբերումների նոր մակարդակը քաղաքական-տնտեսական և այլ առումներով ընձեռում է դրական հեռանկարների, կայունության երաշխիքներ: Բայց ոչ երբեք քաղաքական մեկուսացվածության ու քաղաքական ոչ դերակատար վիճակի, ինչպես որ էր մեզ համար խորհրդային շրջանում: Եվ եթե անգամ ուրիշները «բարեհոգաբար» ստանձնեն մեր փոխարեն մտածելու ու գործելու աշխատանքը, մենք մեր ակտիվ գործելակերպով պիտի ընդդիմանանք դրան, քանզի ուրիշների շահերը որքան էլ պահի մեջ համընկնեն մերի հետ, դրանք դեռևս մերը չեն: Եվ որքան էլ կյանքի ծանր հարվածների տակ կքած ժողովուրդը ժամանակավորապես

ընկրկի, նա իր ազգային ձգտումներից չի հրաժարվի: Եթե նույնիսկ շատ բան հարկավոր լինի նորից ու նորից սկսել: Պարզապես պետք է վերարժևորել թե ձեռք բերված փորձն ու դասը և թե ճանապարհի ու առաջնորդողների անսխալությունը: Եվ կամք է պետք սեփական ճակատագիրը տնօրինելու, այն օտար քմահաճույքներից զերծ պահելու համար:

Թիվ 35, սեպտեմբեր

ՉԻ ՉԻՉԻ ԱՆՉԻՉԵԼԻՆ

Ի վերջո, հակամարտող կողմերի՝ ԼՂՀ և Ադրբեջանի ներկայացուցիչները բանակցությունների նստեցին և արդյունքում ստորագրեցին կոմյունիկե: Ադրբեջանի ու Թուրքիայի քարոզչական միջոցների ու դիվանագետների՝ Հայաստանը առճակատող կողմ ճանաչելու մի քանի տարի տևած համառ աշխատանքը անհաջողության մատնվեց: ՄԱԿ-ում և ԵԱՀԽ-ում նրանց թափած ջանքերը իզուր անցան: Երկար ժամանակ այս կազմակերպությունները անտեսելով իրականությունը՝ «արհամարհելով» ԼՂՀ-ին, հակառակորդ կողմին ձեռնտու բանաձևեր, որոշումներ էին ընդունում, շատ դեպքերում վստահ լինելով, որ դրանք չեն իրականանա, որովհետև իրականությունից չեն բխում: Հավանաբար, այդ կազմակերպություններն էլ վերջապես հասկացան, որ պատերազմող երկու կողմերն էլ՝ թե ԼՂՀ-ն, որ պաշտպանում է իր ժողովրդի գոյատևման իրավունքը, և թե Ադրբեջանը, որը 70 տարի է, ինչ բռնանում է ազգային փոքրամասնության կամքին, բանակցելու հավասար իրավունք ունեն: Սակայն Ադրբեջանին, դաժան պարտություններից հետո, օդ ու ջրի պես անհրաժեշտ էր հրադադարի երկարաձգումը: Իր պարտադրած պատերազմն է, իսկ ահա հիմա ամեն ինչ հակառակն է ստացվել: Արցախցի ազատամարտիկներին հաջողվել է բնակչության անվտանգության ապահովության նպատակով պատերազմը հակառակորդի տարածք տեղափոխել: Այսօր Ադրբեջա-

նում հաճախ են լսվում մեղադրանքներ Թուրքիայի հասցեին, որը հրահրել, պատերազմի երախն է նետել Ադրբեջանին:

Իսկ ինչպե՞ս կօգտագործի Ադրբեջանը այս զինադադարը: Իզուր չէ, որ այս առիթով բանակցություններում մտահոգություն է արտահայտել ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, հայտարարելով, որ երկարաժամկետ զինադադարի կնքման համար Ղարաբաղը լուրջ երաշխիքների կարիք ունի, հակառակ դեպքում Ադրբեջանը ռազմական գործողությունների դադարեցումը կարող է օգտագործել հաջորդ հարձակմանը նախապատրաստվելու համար: Նման երաշխիք կարող է լինել ԼՂՀ անկախության ճանաչումը, ինչը թույլ կտա նրան, որպես անկախ պետության, իր վրա հարձակվելու դեպքում օգնության խնդրանքով դիմել միջազգային կազմակերպությունների ու այլ երկրների օգնությանը:

Ցավոք, Ադրբեջանը համառորեն շարունակում է ԼՂՀ-ն չճանաչելու քաղաքականությունը: Ադրբեջանի ներկայացուցիչ Ջալիլովը ի պատասխան դրա նշել է, որ բանակցությունների ընթացքում ԼՂՀ կարգավիճակի հարցը չի քննարկվելու:

Այժմ Ադրբեջանի նոր ղեկավարները իբր թե փորձում են սրբագրել իրենց նախորդների սխալները, ցուցաբերելով ավելի ճկուն դիվանագիտություն:

Բայց նաև փաստ է, որ առայժմ չեն կարողանում վերահսկել բանակը: Զորահրամանատարները հիմնականում ինքնագլուխ են դարձել ու հանրապետության քաղաքական ղեկավարությանը չեն ենթարկվում: Սուրաթ Հուսեյնովի բոլոր ուժերը իր ձեռքում կենտրոնացնելու փորձերը անհաջողության են մատնվել ու նա հեղինակազրկվել է: Ադրբեջանում այժմ շատերը միակ ելքը տեսնում են առճակատումը ընդլայնելու մեջ, միևնույն ժամանակ փորձելով ժամանակավորապես ԱՊՀ-ին անդամագրվելու միջոցով Ռուսաստանից ակնկալել նպաստավոր միջամտություն:

Սակայն երկկողմ հանդիպումները առճակատող կողմերի միջև չեն ընդհատվել, ընդհակառակը հասունացել է բարձր մակարդակի հանդիպման անհրաժեշտություն: Այլ հարց է, թե ինչպես կկազմա-

կերպվի և ինչպես կընթանա այն: Բոլոր դեպքերում, Արցախը չի զիջի անզիջելին, որը նվաճել է իր որդիների արյամբ:

Թիվ 36, սեպտեմբեր

ՃՇՄԱՐԻՏ Է ՄԵՐ ՀԱՎԱՏԸ ԵՎ ՄԵՐ ՍԵՐԸ՝ ԼՈՒՍԱՎՈՐ

Անկախության իր կամքը մեր ժողովուրդն արտահայտեց հանրաքվեով: Մեր Այո-ն հայության դարավոր երազանքի, ձգտումների, տևական պայքարի ու մաքառման, անթիվ զոհողությունների ու թանկագին զոհերի բյուրեղացված ու զորավոր արտահայտությունն է: Հանրաքվեն ցույց տվեց մեր ժողովրդի ազատաբաղձության չափը, միաբանության ոգին, ուխտյալի հավատարմությունը: Հայ ժողովուրդը ինչո՞վ կարող էր փոխարինել իր լուսատենչ էությունը, ի՞նչ նյութապաշտություն կարող էր նրան գայթակղել ու շեղել՝ որպես հակակշիռ ազատ հայրենիքին: Մենք Այո ասացինք անկախությանը, թեև մինչ այդ երկիրը սասանվել էր մեր ոտքերի տակ և ավերել մեր տները: Թեև մենք շրջապատված չենք միայն բարեկամներով: Անկախության նախընտրումից հետո ծանր ժամանակներ ենք ապրում, դառնաշունչ ձմեռներ ենք անցկացրել: Հենց այդ պայմաններում ենք հաստատել անկախ ապրելու մեր իրավունքը և, փառք Աստծո, ունենք հաջողություններ և ձեռքբերումներ: Այսօր ունենք մեր բանակը, որը պաշտպանում է մեր սահմանները, ունենք ներքին զորքեր և պետականության այլ ստորոգելիներ, որոնք կայանում են կամ կկայանան մոտ ապագայում: Ունենք նաև ներքին դժվարություններ, օրվա խնդիրներ, բայց ո՞ր քաղաքական ուժն է, ո՞ր կուսակցությունն է դեմ հայոց պետականությանը: Հրաշամանուկը ծնվել է: Տևական հղացմամբ է ծնունդ առել և Դավթի նման զորանում է օրավուր: Մեր ցանկությունն այն է, որ ինչպես զուլալ են նրան կյանքի կոչած ակունքները, նույնպես մաքուր լինի նրա սնունդը, մեր ազգային գաղափարաբանությունը լինի կենսահաստատ ու ճշմարիտ, և նրա դայակները՝ քաղաքա-

կան ուժերը լինեն անախտակիր: Այսօր լուսավոր է մեր ուրախությունը և առարկայական, մենք ունենք ուրախանալու հիմք: Գիտենք մեր սկիզբը, տեսնում ենք ընթացքը և մեզ համար պարզ է մեր վաղվա օրը: Այս ամենին երաշխիք կարող է լինել, եթե պետական մարմինները, իշխանությունները, քաղաքական կուսակցությունները, մտավորականությունը գտնվեն իրենց կոչման բարձրության վրա, այսինքն՝ ծառա ամեն մի հերոսագործության ընդունակ մեր ժողովրդին: Այդպիսի պետությունը կլինի ուժեղ և հարահաստատ: Մեր հույսը տկար չէ, որովհետև անկախ է Հայաստանը: Մենք ենք այն զորացնողը: Մեր հույսը մեծ է, ինչպես մեր Աստվածը, որովհետև ճշմարիտ է մեր հավատը: Եվ մեր Սերն է լուսավոր:

Թիվ 37, սեպտեմբեր

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԵՂԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարծես ավելորդ է կրկնելը, որ ռուսական քաղաքական եղանակի՝ մանավանդ կտրուկ փոփոխությունները չեն կարող այս հզոր երկրի կողմը չհառել ինչպես մոտ, այնպես էլ հեռավոր հարևանների ուշադրությունը: Թվում է, ավելորդ է նաև ապացուցելը, որ Հայաստանն ու ընդհանրապես Անդրկովկասը եղել և մնում են որպես ռուսական ազդեցության գոտի: Հետևաբար հասկանալի ու բնական պիտի լինի մեր սևեռուն հետաքրքրությունը ռուսաստանյան իրադարձությունների նկատմամբ, եթե նույնիսկ պիտի կրկնենք քաղաքական վարվելակերպի անհրաժեշտ բաղադրիչի վերածված, բայց իրեն չսպառած այն դարձվածքը, թե Ռուսաստանում կատարվողը այդ երկրի ներքին գործն է: Որ մեր մասնավոր շահը Ռուսաստանի օրենսդրական և օրինական հիմքերի վրա հիմնված կայունությունն է:

Նախագահ Ելցինի կողմից ՌԴ խորհրդարանի ցրման և ֆեդերալ նոր ժողովի հրավիրման մասին որոշումները միանշանակ արձագանք չունեցան ինչպես բուն Ռուսաստանում, այնպես էլ՝ աշ-

խարհում: Ելցինամետ ուժերը կատարվածը համարեցին միանգամայն անհրաժեշտ և նույնիսկ ուշացած միջոցառում, իսկ հակառակ կողմը նույնիսկ չխորշեց տեղի ունեցածը հեղաշրջում որակել: Ազդեցության լծակներից զրկված խորհրդարանականներն ու արմատական ընդդիմությունը հակված են պայքարելու մինչև վերջ, նախագահն ու կառավարությունը մերժում են փոխզիջումների առաջարկները, իսկ առճակատման մրցաբեմից դուրս գտնվող կենտրոնի ուժերն առաջարկում են հանգել զրոյական տարբերակի, այսինքն միաժամանակյա ընտրություններ թե օրենսդիր իշխանությունների և թե նախագահի պաշտոնի համար:

Միանշանակ չեն մեծ երկրի իշխանությունների և նրանց առանձին թևերի դիրքորոշումները, բայց կարծես թե մեկ հարցում նրանք բոլորը միակամ են: Ոչ մի հոսանք կամ թև չի ընդունում և չի խրախուսում ուժային մեթոդների կիրառումը, ինչը ոչ միայն մի հսկայածավալ ու անկանխատեսելի քաոսի կվերածի տերությունը, այլև կարող է վերջինիս քայքայման պատճառ դառնալ: Մյուս կողմից, ինչպես ապացուցում են Ռուսաստանի շահերի գոտում տեղի ունեցող վերջին օրերի իրադարձությունները, երկիրն իր քաղաքական ռազմավարության մեջ կայուն է և հետևողական: Դրսևորվում է ուժեղ երկրի թե պետական ամուր կառույցների, թե պետական մտածողության առկայությունը: Անցումային շրջանի իր գուցե թե օրինաչափ ցնցումների մեջ անգամ, ռուսական դերժավան մնում է որպես այդպիսին և դրանով ապացուցում է, թե դիմագրավելիքը հաղթահարելի է: Միաժամանակ կարծես այլոց ցուցանում է, որ իրենց կեցվածքներում ու գործողություններում նկատի ունենան ռուսական տեղատվությունների ու մակընթացությունների օրինաչափությունները:

Թիվ 38, հոկտեմբեր

ՄԵՆՔ «ՇՌԱՅԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԹՈՒՅԼ ՉԵՆՔ ՏԱ

Անկախ նրանից, թե ինչ ընթացք կստանային և ինչպես կզարգանային իրադարձությունները Ռուսաստանում, անկախ նրանից, թե ովքեր կհաղթեին և ովքեր կպարտվեին, պետք էր կանխել արյունահեղությունը: Ինչ նպատակներ էլ որ հետապնդեին հակամարտ կողմերը, այն, ինչ տեղի էր ունենում Մոսկվայում, մեզ չէր կարող մարդկայնորեն չմտահոգել: Ու թեև ստացվող տեղեկությունները միշտ չէ, որ անկողմնակալ էին ու ճշմարտացի, դժվար չէր կռահել «զինված խռովության ու հաշվեհարդարի» տրամաբանական զարգացումը: Դեռ կքննվեն ու կվերլուծվեն արյունահեղ այդ իրադարձությունները, սակայն ոչ ոք չի վերադարձնի այն կյանքերը, որոնք զոհ գնացին գուցե թե միայն հանուն քաղաքական հաշիվների: Չի վերադարձվի բարոյական այն վնասը, որ հասցվեց Ռուսաստանին և ռուս ժողովրդին:

Դեռ վաղ է ասել, որ ամեն ինչ վերջացած է, ամեն ինչ ետևում է մնացել: Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի օջախը, եթե անգամ հանգցված է, ինչպես վստահեցնում է Ռուսաստանի Դաշնության նախագահը, ապա երկրով մեկ թռած կայծերը կարող են նոր հրդեհ բռնկեցնել: Արդյո՞ք տեղի ունեցածը հետևանք էր գործադիր և օրենսդիր իշխանությունների հակամարտության, ի՞նչ դեր խաղաց սվաստիկայի և մուրճ ու մանգաղի միությունը, ո՞ւմ նպատակն էր Ռուսաստանում արյունոտ ֆաշիստական կոմունայի դիկտատուրայի հաստատումը, և արդյո՞ք կար այդպիսի նպատակ, իսկ գուցե այդ ամենը արվեց որպեսզի ընդդիմությանը ցույց տրվեր իր եկած ճանապա՞րհը:

Այսպես, թե այնպես, մեզ համար կարևորը Ռուսաստանի ներքին կայունությունն է, Ռուսաստանում ժողովրդավարության հաղթանակը:

Հուսանք, որ այս անգամ էլ մեր բարեկամ ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի հաղթահարելու այս դժվար օրերը, դուրս գալու այս

մղձավանջից, հոկտեմբերյան այս նոր փորձությունից: Այո, մեզ համար առավել քան կարևոր է, թե ինչպիսին կլինի նոր Ռուսաստանը, ինչ գաղափարներով կառաջնորդվեն նոր Ռուսաստանի իշխանությունները: Կարևոր է թե՛ համատեղ անվտանգության, թե՛ տարածաշրջանում հարաբերությունների համակարգման, թե՛ քաղաքական ու տնտեսական համագործակցության առումով: Արդեն ասվել ու գրվել է Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններից դասեր քաղելու մասին: Իր անկախությունը և իր պետականությունը ամրապնդող Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնություն չէ և չի կարող իրեն թույլ տալ նման շռայլություններ: Դա հրաշալի է հասկանում ընդդիմությունը, որի համար ավելի քան թանկ են հայոց պետականությունն ու հայ ժողովրդի անվտանգությունը... Ու նույնիսկ՝ մեկ հայ մարդու կյանքը:

Թիվ 39, հոկտեմբեր

ԱՅՍ ՈՒ ԱՅՆ ԱՓԵՐԻՆ

Խորհրդային կայսրության և ընդհանրապես համայնավարական ճամբարի քայքայումը աշխարհի քաղաքական քարտեզը դարձրին հեղհեղուկ՝ պետություններին ու ժողովուրդներին պարտադրելով յուրօրինակ մի նոր տաք ու սառը հակամարտությունների մրցապայքար, հանուն աշխարհի նոր խճապատկերի: Եվ քանի որ նախորդ վիճակը ձևավորվել էր ավելի շատ բռնի ուժի, համեմատաբար թույլ ազգերի, ազգությունների ու էթնիկ խմբերի բնական իրավունքների կոպիտ ոտնահարման արդյունքում, ուստի և նոր ժայթքումն առավել ևս պայմանավորված էր վերջիններիս մոտ կուտակված ներքին ներուժի բռնկմամբ և ուղղված էր սեփական իրավունքների վերականգնման նպատակին:

Բնականորեն խմորվող ներքին գործընթացները նախ կանխելու, ապա կառավարելի և ուղղորդելի դարձնելու նպատակով գերուժերի կողմից ի սկզբանե մշակվեցին համապատասխան գաղափարական դոկտրիններ, գործադրության դրվեցին այլևայլ մեխա-

նիզմներ ու լծակներ: Հալածված ու բռնադատված ժողովուրդների կողմից արդարության վերականգնման մասին բարալիկ դիմումնագրերի կողքին, միջազգային ամբիոններին դրվեցին համընդհանուր, համամարդկային, վերազգային արժեքների մասին տեսությունների, որոշումների, համաձայնագրերի, պայմանագրերի ու հռչակագրերի հաստափոր ու փոշոտ թղթապանակները:

Այս հակադրության խորացման սկզբնական փուլի արդյունքում, երբ առաջինները նույնիսկ արյունալի զոհողությունների գնով հրաժարվեցին կրկին (և ոմանց համար գուցե վերջին անգամ) զիջել դիրքերը, առնվազն սպառված դուրս եկան ավանդական մոտեցումները, միջազգային, իրավարար, միջնորդ ու հաշտարար ատյանները, ցուցադրեցին հին մեխանիզմներով նոր հիմնախնդիրներ լուծելու իրենց անկարողությունը: Բայց գաղափարների ու շահերի պայքարը շարունակվում է՝ խորացնելով մտածողության երկու բևեռների միջև եղած անդունդը: Ավելորդ է թվում մանրամասնել, որ անդունդը մեզանից ոչ միայն հեռու չէ, այլ կարծես ճեղք է տվել հենց մեր ոտքերի տակ, մեր մի ոտքը թողնելով անդունդի այս, ու մյուս ոտքը՝ անդունդի այն ափին: Վիճակն այնքան էլ անծանոթ չէ, այսպես աշխարհն իր զարգացման նախորդ փուլն ավարտեց դարասկզբին՝ հայտնի է, թե իր որ ափը մեզ նետելով:

Ասել, թե հայությունը ներփակ, եսակենտրոն-այլամերժ, էթնիկական զանգված է, կնշանակի ժխտել այն փաստը, որ դեռևս հայ առաջին ուսումնականները՝ Մաշտոցի ու Սահակ Պարթևի աշակերտները, մեկնեցին ժամանակի քաղաքակրթության կենտրոններ՝ տեր դառնալու համաշխարհային ամենաառաջավոր գաղափարներին ու արժեքներին: Կնշանակի ընդհանրապես սև անվանել այն ամենը, որ սպիտակ է և տվյալ դեպքում կոչվում է հայ ժողովրդի պատմական կենսագրություն:

Ուրեմն, ո՛չ գեղջկական բարդույթով տառապելու խնդիր ունենք և ոչ էլ ամեն շողշողուն բանով տարվելու երեխայական գայթակղություն: Այո, Եգիպտոսն էլ Անգլիայից ավազ է ներմուծում, բայց իր ավազի որակը բարձրացնելու և դրանով իր տունը կառուցելու

համար և ոչ հակառակը: Մեր տունը մեր տունն է և մեր շահը միջին թվաբանականի չի կարող բերվել եգիպտացու և անգլոսաքսոնի շահի հետ: Այս է սկզբունքը, եթե նույնիսկ շատ մոդայիկ, շատ համահունչ ու դյուրամարս չպիտի թվանք նախագծված խորապատկերի վրա: Ի վերջո մեր ո՞ր ոտքը պիտի կտրվի անդունդից և հակառակ ափ տանի մեր մարմինը: Չմոռանանք, որ նույն անդունդից կախված է մեր ու մեր հայրենիքի ճակատագիրը:

Թիվ 40, հոկտեմբեր

ԶԲԱՂՎԵՆՔ ՄԵՐ ՏԱՆ ՀՈԳՍԵՐՈՎ

Հանդարտվե՞լ է արդյոք Մոսկվան... Հոկտեմբերյան փոթորկի ավերածությունները հնարավո՞ր է արդյոք այսպիսի նախանձախնդիր հապճեպությամբ «վերականգնել»: Դեռ որքա՞ն է տևելու «ժողովրդավարական» և «հակա» այս հիստերիան: Եվ վերջապես, ի՞նչ է սպասվում առաջիկայում... Պատասխաններն այնքան հակասական են ու իրարամերժ, որ ամենալրջամիտ ու իրատես գնահատումներն անգամ ծիծաղ են հարուցում: Նույն այն հարցին, թե ինչ է սպասվում առաջիկայում, ՌԴ ղեկավարներից մեկը, չկարողանալով թաքցնել զայրույթը, պատասխանեց այսպես. «Դա հարց չէ, դա պրովոկացիա է...»: Թերևս պատասխանողի համար միևնույնը չէր, թե ով է հարց տվողը, մի պարզ լրագրո՞ղ, թե՞ արևմտյան գործակալ, սակայն, մեզ համար, նորանկախ կախյալներիս համար, կարևոր էր պատասխանը, որը, ցավոք, չտրվեց: Իսկ մենք շարունակում ենք մեր թեթև ձեռքով ու մտքով ռեմարկյան հաղթական կամարներ ու էյֆելներ կառուցել մեր անկախության լուսարձակներով:

Մոսկվան չի հանդուրժում «անվստահելի» հարավցիներին: Գուցե վաղը չհանդուրժեն նաև Սանկտ Պետերբուրգն ու Սոլիկամսկը, Կրասնոդարն ու Տոլյատին: Մի կասկածեք, որ այդ «անվստահելիների» մեջ են նաև մեր հայրենակիցները... Նրանցից ոմանք և նույնիսկ շատերը Երևանի «Զվարթնոց» օդակայանում

են, և ոմանք էլ իրենց իրերն են կապկպում՝ շուտափույթ մեկնելու ով որտեղ կարող է, միայն թե օր առաջ ազատվի տնտեսական, ընկերային, քաղաքական, դրամատիկ այս մղձավանջից: Չմոռանանք պատմությունը. չհանդուրժելը կարող է այլ կերպ դրսևորվել ու անգամ չդրսևորվել, սակայն պատճառել նյութական ու բարոյական այնպիսի վնասներ, որոնք սուտ է, թե երբևէ վերականգնվում են...

Ժողովրդավարական մեծ վերափոխումների պայքարում մենք մեր ներդրումը արդեն փաստել ենք և պետք չունենք ավելին երևալու, քան կանք: Ժամանակն է զբաղվելու մեր տան գործերով: Իսկ մեր տան գործերը ավելի քան մտահոգիչ են:

1993 թ. առաջին կիսամյակում և ութ ամիսների ընթացքում, ըստ ՀՀ վարչապետի, Հայաստանը ամեն օր մեռնում ու հարություն է առնում: Փաստերն ու հիմնավորումները, եթե հարկ եք համարում, փնտրեք ՀՀ Գերագույն խորհրդի սեպտեմբերի 20-ի արտահերթ նիստում: «ՀՀ 1993 թ. պետական բյուջեի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կատարման ընթացքի մասին» հանրապետության վարչապետի ելույթում, որն ամբողջությամբ հրապարակվել է ԳԽ պաշտոնաթերթում: Այո, եթե հարկ եք համարում, որովհետև հազիվ թե դրա անհրաժեշտությունը լինի: Որովհետև վարչապետից ու նախագահից չէ, որ պետք է իմանանք, թե ինչ դարդ ու ցավ ունենք, ոնց ենք ապրում ու մեռնում... Եվ եթե անգամ լավատեսորեն, մեծահոգաբար լայնախոհորեն նայենք ոչ թե նախագահին ու վարչապետին, այլ նախագահի ու վարչապետի հետ նույն ուղղությամբ, դարձյալ անհնարին է ավելի համբերատար, ըմբռնող, ներողամիտ, հանդուրժող ու զոհաբերող լինել, քան ենք: Էլ չասած, հանուն ինչի՞... Հանուն ո՞ր պետական հեռատես քաղաքականության, հանուն ո՞ր ազգային գաղափարի, որ իրականացնում են մեր պետական այրերը:

Ո՞ւր է հասցնելու մեզ խարխափումի այս քաղաքականությունը, և ի՞նչ երաշխիք ունենք, որ վաղը ինչ-որ մեկը մասնակի և հատուկ լիազորություններով Երևան չի ուղարկի մի նոր Ալ. Մյասնիկ-

յան, փոխարինելու վարկաբեկված մեր «հեղկոմին», որն իր հետ կբերի ժողովրդավար, թե բոլշևիկ իր վարիչների հերթական նամակը՝ հայոց ապրել-մեռնելու պատգամով:

Թիվ 41, հոկտեմբեր

ՏԵՂՈՒՄ ԴՈՓԵԼՈՎ ԱՌԱՋ ՉԵՆ ԳՆՈՒՄ

Շա՞տ բան է փոխվել կամ արդյոք որևէ բան փոխվե՞լ է ՀՀՇ-ի ըմբռնումներում ու գործելակերպում՝ քաղաքական իշխող «կուսակցություն» դառնալուց ի վեր: Հարցի պատասխանը շատ սպառիչ ձևով տվեց ԳԽ ՀՀՇ խմբակցության օրերս արած հայտարարությունը, որը ինչպես ասում են, դեռ թանաքը չչորացած հնչեց եթերում և հրապարակվեց մամուլում: Պարզվում է, որ դաշնակցական և կոմունիստ խորհրդարանական ներկայացուցիչները՝ ՀՅԴ և ՀԿԿ խմբակցությունները, դավադիր պայմանավորվածությամբ պայքարում են աշխատավոր մարդկանց ընկերային վիճակը բարելավելու դեմ:

«Ժողովրդի անունից ճամարտակող ընդդիմության այս թևը,- ասված է հայտարարության մեջ,- ոտնահարելով նույն այդ ժողովրդի իրական շահերը՝ Հայաստանի պետականության հաստատման չորրորդ տարում դեռևս շարունակում է կառչել կոմունիստական գաղափարախոսությունից, սոցիալական արդարության շղարշի տակ երկրպագելով իրենց սպառած կոմունիստական սկզբունքները»: Շտապենք ասել, որ կոմունիստական գաղափարախոսությունն ու սոցիալիստական սկզբունքներն այստեղ գործ չունեն: Պարզապես ամեն ինչ սեփականաշնորհող ՀՀՇ-ական գավազանն այս անգամ «հրաշք» չգործեց և աշխատավորության 20-տոկոսանոց անհատույց երջանկությունը չհորդեց պետական ձեռնարկությունների հաշվեկշռային արժեքից: Այլ խոսքով՝ ինչի՞ համար էր այդ փոթորիկը մի բաժակ ջրում: Կարծում ենք՝ հետին մի մտադրությամբ միայն. վերջապես հարմար առիթ էր հնչեցնելու հին ձայնապնակը, որը վաղուց ձեռքի տակ էր, դեռ մոսկովյան ի-

ռադարձությունների օրերից, բայց ընդդիմությունը հուսախաբ արեց՝ առիթ չտալով միացնելու նվագարկիչը: Հոկտեմբերյան դեպքերի երևանյան «արձագանքները» հավանաբար խոր հիասթափություն պատճառեցին ոչ միայն ՀՀՇ-ին: Ուրիշներն էլ սրտատրոփ սպասում էին պղտոր ջրում ձուկ որսալու՝ իրենց հաշիվներն ունենալով ոչ միայն իշխանությունների, այլև ՀՅԴ հետ: Այնպես որ, խնդիրը միայն ընկերային և տնտեսական բարեփոխումները չեն, որոնցով հանկարծ այդքան մտահոգ դարձավ ՀՀՇ-ն և սկսեց ժողովրդավարության ու տնտեսության ազատականացման գաղափարներին իրենց նվիրվածությունը հաստատող նոր համախոհներ փնտրել: Խնդիրը նույնն էր, ժառանգած կամ նմանակած սովորությամբ ձախողումների մեղքը ուրիշների վրա բարդելը: Այս դեպքում՝ Դաշնակցության, որի խորհրդարանական ներկայացուցիչները հենց կոմունիստների հետ դեմ եղան ՀՀՇ քաղաքական ու տնտեսական բարեփոխումների քաղաքականությանը: Ավելի լավ առի՞թ՝ հին երգը երգելու:

Լավ, երգեցիք, իսկ հետո՞... Ի՞նչ փոխվեց, պարոն ՀՀՇ: Քաղաքական իշխող «կուսակցությունը» մի՞թե այնքան է իրեն սպառել, որ իր գոյությունը պահելուց զատ այլ նպատակ չունի և հանուն դրա չի խորշի հայոց ականջները բռնաբարել ապազգային, օտար երգերով: Եվ վերջապես, տեղում դոփելով երբեք առաջ չեն գնում, մանավանդ երբ առաջ գնալու հրաման չեն ստացել:

Թիվ 42, հոկտեմբեր-նոյեմբեր

ԱՊԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՊՈԿՐԻՖ ԿԱՄ ՈՒՄ ԱՉՔՆ ԵՆ ՀԱՆՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարելի է սկսել 88-ի սիրատոչոր օրերից, երբ բոլորս միասին՝ միաձույլ, միաձայն, միակամ ու միամիտ, բռունցքներս ու հայացքներս վեր պարզած Ղարաբաղ ու միացում էինք գոռում: Ոչ ՀՀՇ, ոչ ՀՅԴ, ոչ ՀՌԱԿ... Կար մի կոմկուս ու մի «Ղարաբաղ» կոմիտե:

Կարելի է սկսել նաև անկախացած Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին օրենքում փոփոխություններ մտցնելու ԳԽ վերջին որոշումից, որն ընդունվեց ՀՀԾ պատգամավորական խմբակցության համառ ջանքերով: Այսինքն, ԳԽ նստաշրջանում տեղի ունեցավ լուրջ պայքար, որն ավարտվեց ՀՀԾ խմբակցության հաղթանակով:

Այս դեպքում մեր նպատակը չէ քննել, թե ում դիրքորոշումն է ավելի ճիշտ. ինչու ԳԽ-ն գերապատվությունը տվեց ՀՀԾ խմբակցության առաջարկին: Տա Աստված, որ դրանից, ինչպես վստահեցնում են հեղինակները, մեր ժողովրդի ընկերային վիճակը բարելավվի: 88-ի ամբոխային միաձայնություններից մինչև 93-ի կուսակցական այս բազմաձայնությունները անցել է շուրջ հինգ տարի: Բարեբախտաբար միասնության էժան հորդորներն ու կոչերը այլևս արձագանք չեն գտնում ժողովրդի մեջ, որը վաղուց հասկացել է, որ միասնություն ու համախմբություն կարող է լինել միայն գաղափարի շուրջ: Եվ սակայն շարունակվում է միտք ու հոգի պղտորող ապաքաղաքական, ապակուսակցական քարոզչությունը, որի նախաձեռնողները դժվար չէ հասկանալ, թե ինչ նպատակ են հետապնդում: Ո՞ւմ համար պարզ չէ, թե ինչի համար է և ովքեր են ապակուսակցական այս ապոկրիֆի հեղինակները և ինչպես է նրանց հաջողվում մոլորեցնել նույնիսկ մտավորական մարդկանց՝ իրենց ձախողումների մեղքը բարդելով կուսակցությունների վրա: Դարձյալ մե՞նք ապացուցենք անապացուցելին. եթե իրոք կուսակցությունները քաղաքական կյանքը կազմակերպելու դերակատարությունը չունեն, եթե ազգի ընկերային կյանքում լծորդներ չեն, եթե կեցցե միայն մեկ գաղափարն ու ծրագիրը, տեսակետն ու դիրքորոշումը, ռազմավարությունն ու մարտավարությունը, ապա կեցցե ՀՀԾ-ն, միակ ու անփոխարինելի կուսակցությունը, որի հզոր թևերի տակ ապրում ենք ու բարգավաճում:

Ուրեմն, այսքան երջանիկ կյանք ո՞վ է մեզ տվել, եթե ոչ ՀՀԾ-ն: Ուրեմն, ո՞վ է միակ ճիշտն ու ճշմարիտը, եթե ոչ ՀՀԾ-ն: Ուրեմն,

դառնանք փառաբանենք մեր մինուճարին, որն է հայոց միտքը, խիղճը, հավատը... Եվ չզարմանանք, եթե մի լեզվաբան պրոֆեսոր, անշուշտ ազգի ցավ ու հոգսով մտահոգ, հանկարծ հարցնի՝ ինչո՞ւ այսքան կուսակցություններ, եթե ԳԽ-ում, միևնույն է, հաղթելու է ՀՀԾ-ն: Չզարմանանք նաև, եթե նույն այդ հարգարժանը մի օր ՀՅԴ-ին կամ ՀՌԱԿ-ին մեղադրի ՀՀԾ-ի բոլոր ձախողումների համար... որ կնշանակի՝ ի՞նչ իրավունք ունենք գոյություն ունենալ, մանավանդ սեփական տեսակետով ու դիրքորոշմամբ: Որ կնշանակի՝ ով մեզ հետ չէ, մեր թշնամին է: Ով մեզ հետ է, մենք ենք: Ոչ գլուխ, ոչ գլխացավանք: Երկուսից էլ կարելի է ազատվել, եթե նորից միասին, միաձայն ու միակամ լինենք, սիրելի հայ ժողովուրդ...

Ահա այսպիսի ապոկրիֆ...

Թիվ 43, նոյեմբեր

Ո՞ՐՆ Է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿԸ

Մի անգամ ևս չկրկնելու համար, թե ում է պետք պղտորել ու փոթորկել մեր առանց այն էլ անուրախ կյանքը՝ հանրության ուշադրությունը շեղելու ընկերային խնդիրներից, թունավորելու հանրային կարծիքը, ատելություն սերմանելու Դաշնակցության նկատմամբ, պառակտելու հայ ժողովրդի ընդհանրական ապահովությամբ ու պատմական իրավունքների պաշտպանությամբ մտահոգ ուժերը, ասենք՝ կարդացեք «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը, դիտեք և ունկնդրեք ռադիո-հեռուստատեսային հաղորդումները... Իսկ հատկապես ընթերցասերներին չէր խանգարի կարդալ արբանյակ մի քանի թերթեր էլ, որոնք եսավյան իրենց քաղաքականության մեջ այնքան են առաջադիմել, որ արդեն դուրս են եկել իրենց ուղեծրից:

Այդ էլ է հասկանալի, բոլոր ժամանակներում էլ եղել են փշրանքի ասպետներ ու փառատենչ միջակություններ, որոնք օճառվելու և ուրիշների պատվիրած նվագների տակ պարելու բացառիկ օժտ-

վածություն ունեն: Հասկանալի չէ, սակայն, ԳԽ պաշտոնաթերթի գերագույն նպատակ դարձրած հակադաշնակցականությունը, որ ՀՀՇ պաշտոնաթերթի պարագայում թերևս այդքան սրտխառնուք չառաջացներ: Տպավորությունն այնպիսին է, որ թերթը կաշվից դուրս է գալիս իր հավատարմությունն ապացուցելու հանրապետության նախագահին, որի սիրտը տանող ճանապարհը, պարզ է, թե որտեղով է անցնում: Կամ գուցե պարզապես ասելիք չունի ԳԽ պաշտոնաթերթը: Լայնածավալ ութ էջ միայն ԳԽ օրենքներով, նախագահի հրամանագրերով, վարչապետի շնորհավորական հեռագրերով ու հեռախոսազրույցներով չես լցնի: Ուրիշ ինչո՞վ բացատրել թերթի առանձնահատուկ ուշադրությունը Դաշնակցության նկատմամբ հենց թեկուզ միայն ամբողջական էջեր տրամադրելու առումով:

Գուցե քննության արժանի ոչ մի հարց ու խնդիր չկա հանրապետությունում, իսկ ազդերով ու «զանազանքներով» լուրջ ընթերցող չես նվաճի: Արհեստավարժ մի քանի հնարքներից զատ, ուրիշ ի՞նչ է մնում ուշադրության արժանանալու համար, եթե ոչ ծամածռություններ անել, հայհոյել, լեզու ցույց տալ, կամ էլ ուղղակի բուրել հոտած հավկիթի սաստկությամբ, մանավանդ որ տակներինը հենց հոտած հավկիթներ են, որոնցից ընթերցող-չընթերցողն էլ գիտի, որ ճուտեր դուրս չեն գալիս:

Իսկ հուսալ, որ ծամածռություններ անելով ու թույն թքելով կարելի է Դաշնակցությանը վարկաբեկել, առնվազն տղայամտություն է և վայել չէ անգամ ձեր բուլվարային «ուղեկիցներին», ուր մնաց հանրապետության ԳԽ պաշտոնաթերթին:

Թիվ 44, նոյեմբեր

ԳՈՒԼԱԳ ԱՌԱՆՑ ՓՇԱԼԱՐԵՐԻ

Սահման ունի՞ արդյոք թշվառությունը: Անտարակույս ունի, եթե կան ապրելու, մարդ կոչվելու արժանապատվություն ու պատասխանատվություն: Թշվառությունն էլ, խեղճությունն էլ, մեղ-

քությունն էլ, հուսահատությունն ու բարոյալքությունն էլ սահման ունեն, եթե կա ապրելու, գոյատևելու կամք ու ձգտում, հայրենիքի ու ազգի համար նվիրումի ու ինքնազոհության պատրաստակամություն: Կա, եթե քաղցկեղը դեռ չի լափել մեր սիրտն ու հոգին, մեր միտքն ու ոգին, եթե դեռ չի մթագնել մեր բանականությունը: Իսկ եթե կարողացել են մեզ մանկուրտ դարձնել, կարողացել են սպանել մեր ազատությունը, ապա գետնաքարշ մեր գոյությամբ ոչինչ ունենք ապացուցելու աշխարհին ու մարդկությանը:

Մի ավելորդ անգամ չկրկնելու համար, որ այլևս անհանդուրժելի է մեր այս վիճակը, որ իշխանությունն ու կառավարությունը անկարող են ու անընդունակ, եթե չասենք՝ որ չեն ուզում հանրապետությունը դուրս բերել ճգնաժամից, ուղղակի հարցնենք. իսկ ի՞նչ ենք անում մենք, Հայաստանի քաղաքացիներս: Ամեն մեկս միայն մեր մասին մտածելով ոչինչ չենք կարող փոխել: Վառելափայտի, լուցկու, օճառի, շաքարավազի մասին մեր սրտակեզ մուղամները այլոց մոտ վաղուց արդեն զզվանք են հարուցում: Մուրացկանի ու ճորտի հոգեբանությամբ մենք չենք կարող պաշտպանել մարդկային մեր ամենատարրական իրավունքներն անգամ: Այլևս վերջ պետք է տալ աղետալի այս աղերսանք-պաղատանքներին և ըմբըռնումի այս սեմինիզմին, որով թմրեցնում են մեր զգայարանները:

Փողոց ու հրապարակ դուրս գալու կոչ չէ այս, ոչ էլ հույսներս մեզ վրա դնելու, չընկճվելու, դժվարություններին դիմանալու ու չհուսահատվելու հորդոր: Թե մեկը և թե մյուսը մենք արդեն փորձել ենք: Դուրս եկանք փողոց ու հրապարակ և փողոցի ու հրապարակի իշխանություն ու կառավարություն «նվաճեցինք», խաբեցինք մեզ դիմացկունության ու անընկճելիության հեքիաթներով և մեր երկիրը դարձրինք ամենահսկական գուլագ՝ անփշալար ու անպարիսպ, որպեսզի ով կարող է՝ փախչի ավելի հնազանդ ու կառավարելի դարձնելու տանջանքավայրն այս:

Հանրապետությունում ու տարածաշրջանում առկա այս իրավիճակը ընդդիմությանը թույլ չի տալիս սրելու քաղաքական պայ-

քարը, որը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Դրանից օգտվելով իշխանությունը և պատկան կուսակցությունը կամ հակառակը, ամեն կերպ հրահրում են ընդդիմության սուր գործողությունների դիմելու, որպեսզի իրավիճակի ամբողջ մեղքը բարդեն, պարզ է, թե ում վրա:

Հիմա պատկերացրեք ժողովրդին կազմակերպելու, ժողովրդին առաջնորդելու, ժողովրդին սույն ընկերային-տնտեսական, բարոյական ճգնաժամից դուրս բերելու կուսակցության դերն ու խնդիրը, որին մղում են մեր իշխանություններն ու իշխանական ուժերը՝ շատ լավ հասկանալով, թե ժողովուրդը ինչ հույսեր է կապել Դաշնակցության հետ: Պատկերացրեք նաև, թե ինչպիսի հրդեհ կբռնկվի ամենափոքրիկ կայծից անգամ, հրդեհ, որի վրա իրենց մատները կայրեն իշխանությունները, իսկ մյուսներն էլ չեն խորշի տաքացնել իրենց կեղտոտ ձեռքերը:

Իսկ ժողովո՞ւրդը:

Իսկ ժողովուրդը նախ պետք է ինքն իր իրավունքները պաշտպանի՝ պահանջելով առնվազն նախագահի և կառավարության հրաժարականը:

Շատ պարզ ու հստակ. աններելի է այլևս այս պերմանենտ տեղատվությունը:

Թիվ 45, նոյեմբեր

ԴՐԱՄԻ ԴԺՎԱՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետությունն ունեցավ իր ազգային դրամը: Երևույթ, որ ցանկացած պետության համար ունի դեպի անկախություն ևս մեկ քայլով առաջ գնալու նշանակությունը: Կուզենայինք մեզ համար էլ այն ունենար նույն իմաստն ու արժեքը, և երևի մեզանից յուրաքանչյուրն ուրախ կլիներ, եթե վաղն իսկ պարզվեր, որ տվյալ հարցում եղած իր մտավախությունների մեջ սխալվել է: Եթե հայկական դրամը հայաստանյան իրականության մեջ բնականոն կերպով հաստատեր իրեն և խորհրդանշեր երկրի տնտե-

սության ու կենսամակարդակի կայունությունն ու բարգավաճ մակարդակը: Երազելը երազել, սակայն առկա իրականությունը մտավախությունների տեղիք իսկապես տալիս է, և այն չի կարող վերանալ, եթե մենք նույնիսկ չմտածենք այդ մասին և կամ նրա դիմաց հերոսական կեցվածք ընդունենք: Խոսքն այս դեպքում հանրապետության ներքին ֆինանսատնտեսական վիճակի, համապատասխան ներուժի, արտաքին գործոնների դեմ վերջիններիս դիմակայության ընդունակության և այլ նմանատիպ համակարգերի հետ ինքնուրույն հարաբերվելու վիճակի և հետագա հնարավորությունների մասին է:

Կարծես թե պարզ է, որ ցանկալին իրականություն դարձնելու համար քիչ են լինելու թե վարչական մեթոդների կիրառումը և թե ոստիկանական ռետինե մահակների զորությունը: Ինչպես այլ պարագաներում, տվյալ դեպքում ևս այլոց փորձը հուշում է, որ կարգավորման բնական մեխանիզմների բացակայությամբ խնդրի լուծումը երևույթը մղում է սուզվելու ընդհատակ՝ դրանով իսկ դառնալով ավելի վտանգավոր և աճ տալու, այլակերպ ձևերով տարածվելու ընդունակ: Ներկա դեպքում հանուն հայկական ֆինանսա-դրամական և դրանից բխող իրողությունների ձևավորման ու հաստատման, անհրաժեշտ կլինի համալիր միջոցառումների կիրառում՝ սկսած համապատասխան իրավական դաշտի հստակեցումից մինչև տնտեսական-ֆինանսական համակարգի առողջացումը, նրա ազատագրումը մաֆիական կառույցների ու նման վարքի տեր իշխանավորների ճիրաններից, արտաքին առևտրական փոխհարաբերությունների հստակեցումն ու կանոնավորումը:

Հայկական դրամը դեռ չծնված իր վրա կրում է կասկածի, թերահավատության կնիքը և դժվար զարգացման հետևանք է լինելու դրանից ձերբազատումը: Սրա համար ժողովրդի բարի կամքն ու ցանկությունը (որոնց գոյությունը կասկածից վեր է) քիչ են լինելու, շատ բան պայմանավորված է կառավարողներով, այս մի փորձության առաջ իրենք իրենց հաղթահարել կարողանալու նրանց կարողությամբ: Այլապես մեր ոտքի տակ հողը կշարունակի փլուզ-

վել, իսկ մեր շուրջը կշարունակեն պղպջակներ տալ փքուն ճառերը:

Թիվ 46, նոյեմբեր

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՌԻ ԲՈՒՆ ԻՄԱՍՏՈՎ

Մեծապետական «սոցիալիզմի» դարաշրջանից հետո ներկա Հայաստանի սերունդներին կրկին բախտ է վիճակվել ոչ միայն հոլովելու բարեգործություն հասկացությունը, այլև իր առայժմ երկչոտ փորձերն անելու այս ասպարեզում: Ստեղծվել են մի շարք բարեգործական կազմակերպություններ, որոնք ձգտում են լինել գաղափարի բարձրության վրա: Եվ որպեսզի կրկին չհուսախաբվենք, ընկնենք մոլորության մեջ, անհրաժեշտություն է զգացվում որոշակիացնելու մեր պատկերացումները բարեգործության վերաբերյալ:

Մակերեսային դիտումներն անգամ ցույց են տալիս, որ բարեգործության երևույթն ունի բավական քմահաճ բնույթ: Սկսած սովորական ինքնախաբեությունից մինչև մեծավարպետական նենգամտությունները և շահարկությունները կարող են տեղ գտնել նաև այստեղ: Ուստի շատ կարևոր է պարզաբանել բարեգործության, այսինքն՝ գործի բովանդակությունը, գործելու շարժառիթները և գործողության հետևանքները: Սովորական ողջախոհությունը մեզ հուշում է, որ գործի բովանդակությունը պետք է շահավետ լինի առավել մեծ թվով մարդկանց և առաջին հերթին կարիքավորների համար: Գործելու շարժառիթները պետք է լինեն անշահախնդիր, իսկ գործողության հետևանքները՝ անվնաս և արդյունավոր:

Բարեգործությունը ոգու հաղթանակն է նյութի նկատմամբ, հավաքական շահի գիտակցման բարձրագույն նպատակը, այլոց մեջ իրեն տեսնելու կարողությունը, և նրանց ապրելն ու բարգավաճելը, իր ինքնահաստատումը դիտելու բարեկրթությունը: Բարեգործությունը բարեսիրության և բարեպաշտության բարձր մակարդակն է, դրանց իրականացման կամ առարկայացման ստույգ հնարավո-

ությունը: Բարության կենսագործումը միաժամանակ մարդու ենթակայական վիճակների քննության փորձաքարն է, որովհետև այլ բան է խոսքով բարություն քարոզելն ու պաշտպանելը, և այլ է նրա իրագործումը, երբ անմիջականորեն առնչվում ես շոշափելի իրերի, առարկաների աշխարհի հետ, առարկաներ, որոնք ունեն գույն, համ, հոտ, որակ և կարող են իրենց մեջ պարունակել գայթակղիչ ինքնաձիգ ուժ և դրդել մարդու զգացմունքները, ներգործել նրա ճաշակելիքի, վայելելու հակումի, ենթակայական այլ զգացողությունների վրա, շոշափել նրա կամքը, սառնասրտությունը, ազնվությունն ու անձնական այլ հատկանիշներ: Ով ոչինչ չունի հակադրելու առարկայական այս գունագեղ աշխարհին, նա կարող է երբեք մոտ չգալ բարեգործության զոհասեղանին: Ով իր անձը չի կրթել և ոչ էլ բախտ է ունեցել անցնելու կյանքի փորձաշրջանների բովով, նրա բարեգործությունը կարող է և չարիք դառնալ:

Նույնն է, երբ չտված գոռում են այդ մասին կամ պահանջում են ուրիշներից ու պարտադրում ուրիշներին՝ իրենք ոչինչ չտալով և իրենց դերն ու կոչումը միայն պահանջելն ու հրամայելը համարելով: Մինչդեռ բարեգործությունը, մարդկանց օգնելն ու աջակցելը ճշմարիտ են ու ազգահաճո, երբ ինքնաբուխ են ու անթելադրելի: Որովհետև «Քո պարտքդ է, զոր պիտի հատուցանես, ինչպես պիտի ընեիր ծոցածին զավկիդ՝ օտարության մեջ աղետակոծ, կամ մեկ ազգականիդ՝ բախտեն ուժգին ապտակված: Եվ ազգական ու ազգային՝ մեկ բառ, մեկ արմատ չե՞ն միթե»:

Թիվ 47, դեկտեմբեր

ՇՌԱՅԼՎՈՂ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՏԱԿՎՈՂ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Մարմին դաղող ցրտի մեջ հանկարծ նաև ուղեղդ է շամփրվում սառույցի պես բյուրեղացող մտքից. «Դժվար է պատկերացնել մեկ այլ իշխանություն, որն իր անձեռնհասության հետևանքով ծնունդ առած իրողությունների պայմաններում այսքան ինքնահավան,

այսքան ինքնասեր ու ստախոս գտնվեր»: Խաբված ժողովրդի համբերության և սահման չճանաչող ըմբռնման հանդիման չգիտես՝ զարմանա՞ս, թե ծնկի իջնես: Ընդամենը օրեր առաջ հանրապետության իշխանությունը ստիպված եղավ դիմելու իր պահեստային՝ ըստ էության ճարահատ քայլերից մեկին՝ շրջանառության մեջ դրեց ազգային դրամը: Վերջին տարիներին հաստատված ավանդույթի ուժով անկախության թեմայով ամբոխավարական զգայացունց տեսարաններ, համապատասխան մակարդակի ինքնամոռացման կոչեր եղան և շատ լուրջ մարդկանց բերանից հնչած շատ լուրջ հավաստիացումներ: Ու թեև կարծես թե ակնառու էր պատճառա-հետևանքային կապերի ողջ խճողված շղթան, կարծես թե պարզ էր, որ որոշակի օրինաչափությամբ դանդաղորեն սահող արժեզրկման կորը վերջին շաբաթներին և հատկապես օրերին նման կտրուկ թռիչքներ չպիտի կատարեր առանց որոշ անձանց, որոշակի շահագրգիռ միջամտության...

Թեև պարզ էր, որ նոր դրամի ապագան դեռևս նույնիսկ գաղափարի ոչ նյութական ձևի մեջ արդեն իսկ վտանգված է համապատասխան պաշտպանական մեխանիզմների բացակայությամբ, և այնուամենայնիվ մնում էր հուսալ, մանավանդ որ ուրիշ ոչինչ կարծես թե չէր մնում:

Մնում էր հավատալ, թե գոնե հանրապետության առաջին դեմքի և մյուս առաջին դեմքերի հավաստիացումներն առ այն, որ դրամը պաշտպանելու համապատասխան քայլեր են նախատեսված, որ կուտակված ապրանք է այս նպատակով շուկա բաց թողնվելու: Այնուամենայնիվ, մնացած բոլորի պես այս խոստումներն էլ ավելին չէին, քան հանդիման ցցված իրողություններից գոնե մի պահ խուսանավելու ճարպիկ հնարք: Իսկ մեր ասածի վկայությունն ու արդյունքը օրեցօր անկում և արժեզրկում ապրող դրամի վիճակն է, որին ի հետևանք նույնիսկ իշխանություններին հայտնի չէ, թե էլ ինչ քայլեր կարելի է հնարել: Դաժան ձմռան շեմին կատարյալ խուճապի ու հուսահատության տրամադրություն է տիրում ձեռքին ունեցած դրամով ահռելի գների առաջ կանգնած ժողովրդի մոտ: Ե-

ռազած անկախությունը ՀՀՇ-ին վայելելու հանձնած հանրապետությունը լքել են բոլոր նրանք, ովքեր այլևս դիմանալ չէին կարող, ովքեր չէին կարող կողքից անօգնականորեն դիտել իրենց երեխաների սովահարությունն ու ցրտահարությունը, ովքեր այլևս ոչ մի հույս ու պատրանք չունեին ոչ անկախության, ոչ հայրենիքի և ոչ էլ նույնիսկ երեկվա կուռք Լ. Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Ցավալի չէ սա, այլ՝ ողբերգական: Եվ զավեշտական է, որ ըմբռնման կոչ անողները այդպես էլ չեն կարողանում ըմբռնել իրենց ավելորդության փաստը: Վերևներում ճամպրուկային տրամադրությամբ աջ ու ձախ, հյուսիս ու արևմուտք են նայում և համառորեն չեն ուզում վայրկյան առաջ լքել հայրենիքը: Ոչ, Աստծո սիրույն, միայն թե ոչ հայրենիքի ու թշվառ ժողովրդի սիրուց դրդված, այլ՝ որովհետև պարզվում է, որ այս հայրենիք կոչվածում դեռևս թալանելու բան կա:

Թիվ 48, դեկտեմբեր

ՄԻՆՉԵՎ ԴԱԺԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ռուսաստանյան նախընտրական պայքարի օրերին քաղաքական ուժերը շատ մասնավոր ու շատ վերացական մեղադրանքներ էին ներկայացնում նույնպես նախընտրական թև կազմող օրվա կառավարությանը: Խոսելով գլոբալ մասշտաբներով երկրի ակնհայտ թալանի մասին, այնուամենայնիվ նրանք չէին կարողանում որոշակի փաստարկներ ներկայացնել: Եվ զարմանալի ոչինչ չկա: Վերջիններիս պարզապես հասանելի չէր այն մեղադրանքների համար հիմք հանդիսացող տեղեկատվությունը (եթե, իհարկե, այդպիսին կար), որը գտնվում էր հենց մեղադրվողների գզրոցներում: Ուշադրություն դարձնենք, որ սա դեռ Ռուսաստանում, ուր ազատ ու ընդդիմադիր մամուլը ժողովրդավարության ուղիով բավականին առաջ է ընթացել, ընդդիմության ներկայացուցիչները ոչ միայն կշիռ են տարբեր իշխանություններում, այլև կարող են նույնիսկ այս ոլորտում ամենաբարձր պաշտոնները գրավել:

Ուրեմն, նկատի ունենալով գործադիր ու դատական իշխանություններից ոչ յուրայինների լիակատար մեկուսացվածությունը, արժե՞ զարմանալ նախահարձակի ինքնավստահությամբ սևը սպիտակ ներկայացնելու Հայաստանի կառավարության ներկայացուցիչների երեկվա ու այսօրվա պահվածքի համար: Նույն նախընտրական օրերին Ռուսաստանի Ժողովրդավարական կուսակցության թեկնածու, հայտնի իրավաբան և կառավարական աշխատանքի փորձի տեր Ֆյոդորովն ասում էր. «Կա թալանի մի մասշտաբ ու մակարդակ, որն անկարելի է իրականացնել, եթե նրանում մասնակից չեն պետության ներկայացուցիչները»: Սրանից էլ հետևցնելով կատարենք հաջորդ զուգահեռը: Թեև, մյուս կողմից, այս տողերն ընթերցողը երևի թե քմծիծաղ է տալու սևի և սպիտակի բացահայտման այս լուրջ, համարյա թե տեսական ճիգի համար, քանզի ամեն ինչ կարծես թե պարզ ու տեսանելի է, ինչպես սպիտակ կատուն լուսավոր սենյակում: Քանզի Հայաստանում գրեթե յուրաքանչյուր ոք գիտե, թե ասենք ով և ովքեր են իրականացնում հանրապետություն մուտք գործող կենսական նշանակության ապրանքների մաքսային թալանը, ով և ովքեր են իրականացնում բենզինից դոլար քամելու աճպարարությունը, ովքեր և ինչպես են «աժիոտաժային» շուկայի սարքովի վայրիվերումներով սեփական գրպաններն ուղղորդում նախկին ռուբլի-դրամ-ռուսական, ռուբլի-դոլար շրջապտույտը և այլն, և այլն: Եվ ընկեցիկ ու մուրացկան դարձած մի ժողովուրդ, լիակատար փլուզման հասած գիտության, մշակույթի և արդյունաբերության մի ծաղկուն երկիր: Եվ այս խորապատկերի վրա ԽՍՀՄ վերջին բռնապետի կամքով ծնված, իրենից գոհ, ուրիշներից դժգոհ մի նախագահ: Մեկը՝ ապշեցուցիչ չափով անհաղորդ-անտարբեր իրեն հավատացած ու վստահած վերոնշյալ ժողովրդի վիճակին ու ցավին: Այս խորապատկերի վրա խորհրդարանից հավելյալ լիազորություններ կորզելու անվերահսկելի, անհակակշռելի, անհաշվետու կառավարության սարքած արդեն ծիծաղ չհարուցող զավեշտը: Այնինչ բարոյականություն ունեցող այլք, խորհրդարանին տնտեսագիտության ցածրագույն մաթե-

մատիկան ուսուցանելու փոխարեն պիտի հեռանային, քանի դեռ կարելի է վատթարագույն սպասելիքից փրկել թե՛ բարոյական, թե՛ նյութական, թե՛ ֆիզիկական արժեքները: Բայց նրանք հեռացող չեն: Նրանք դեռ լիազորություններ են կորզելու, ժանտախտահար խրախճանք են անելու, երկիրը վերադարձնելու են ցեխակոլոլ, քանդուքար ու տկլոր իր անցյալին, յոթերորդ կաշին են պլոկելու ժողովրդից, հետո...

Հետո լինելու է դատաստանը՝ օրինաչափ, անվրեպ, դաժան դատաստանը:

Թիվ 49, դեկտեմբեր

ԱԶԱՏԱՄԱՐՏ – 1994

ԲԱԶՈՒՄ ԻՆՉՈՒՆԵՐԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՈՒՄ

Միանշանակորեն դժվար է գնահատել անցնող 1993 թվականը: Ո՞վ կարող է, օրինակ, թերագնահատել արժեքն այն նվաճումների, որ հայ զինվորի ամուր բազուկը կերտեց՝ ի շահ արցախահայության և ընդհանրապես՝ հայության ներկայի ու ապագայի: Սակայն, մյուս կողմից, կարելի՞ է խոսել հայրենիքի ամրապնդման, առաջընթացի մասին, եթե փորձենք պարզապես մի պահ հիշել այն իրականությունը, որի մեջ ապրում ենք մենք՝ հայրենաբնակ հայությունը: Էլի ինչքա՞ն կդիմանա հանրապետության հոգեվարք ապրող տնտեսությունը՝ անարդարությունների, անպաշտպանվածության, անապահովության պայմաններում, այնուամենայնիվ, դեռևս իր հողից, տնից, արյունակիցներից չփախչող հայը:

Ինչքա՞ն բան կարելի էր անել անցնող տարում, որ չարվեց՝ մատնելով մեզ առկա անմխիթար վիճակին: Եվ ինչո՞ւ է հանրապետության ամեն մի մեծ ու ավելի մեծ պաշտոնյա իր հիմնական խնդիրը համարում քննադատությանը քննադատությամբ պատասխանելը՝ ամեն կերպ փորձելով ապացուցել իր ու իր թիմակիցների անսխալականությունը: Մի՞թե այսօր հենց դա է ամենակարևոր գործը: Ինչո՞ւ է նա փորձում ծածկել, չտեսնելու տալ, այլ գույներով ներկայացնել իրականությունը և բոլոր ձախողումների պատճառ ներկայացնել շրջափակումն ու պատերազմը: Ինչո՞ւ է փորձում փակ լսարաններում այդ ամենը հակակշռել ճակատի հաղթանակների հետ: Եթե իսկապես այդ գործողություններն ու դրանց արդյունքներն իր ձեռքի գործն են, ապա թող թույլ տրվի հարցնել, իսկ ինչո՞ւ մինչև այժմ ազատագրված չէ Շահումյանը, ինչպե՞ս է պատահել, որ այլ առաջնահերթություններ են անձամբ մեզ համար մղվել առաջին շարք: Ինչքան բան պետք է արվեր, որ չարվեց: Ժողովրդի կենսամակարդակը չբարձրացավ, տնտեսությունը թափ

չառավ, այլ՝ ընդհակառակը, ընկերային-իրավական մթնոլորտը չհստակվեց, այլ՝ ընդհակառակը:

Եվս մեկ տարի աշխատեց Գերագույն խորհուրդը. ո՞րն է, ինչ-պե՞ս, ինչո՞ւմ տեսնենք բազում նիստերի ու նստաշրջանների արդյունքները: Առ այսօր իրավական հիմքի բացակայության պարագայում հայրենիքից մեկուսացվածության մեջ է մնում կյանքի ծանր հարվածների պատճառով իր երկրից գաղթած սփյուռքահայությունը: 1-2 տարվա հաշվով ձևավորված խորհրդարանն աշխատեց 4 տարի և դեռ չունենք սահմանադրություն, այսինքն՝ խոսում ենք մեծ արժեքներից, բայց ապրում ենք խորհրդային օրենքներով ու խորհրդային մարդու անձնագրով: Արտգործնախարարության ներկայացուցիչներն ու անձամբ հանրապետության նախագահը բազմաթիվ երկրներ բազմաթիվ այցելություններ կատարեցին: Ի՞նչ ձեռքբերումներ ի նկատի ունենանք այդ երթևեկի արդյունքները գնահատելու համար: Ինչքա՞ն դեռ պետք է պետությունը շախմատի խաղատախտակի հետ շփոթած համակիր մարդկանց մի խմբի միջև ֆիգուրների տեղափոխություն կատարվի՝ սիրողական մակարդակի վրա մի կողմից եղածը քանդելով և մյուս կողմից, ի դեմս արհամարհված արհեստավարժների մեկուսացվածության, կանխվի, խափանվի առաջընթացի հնարավորությունը:

Յուրաքանչյուր հայ, անշուշտ, թվարկած այս հարցերի կողքին կարող է շարել բազում այլ պատասխան պարտադրող հարցեր: Սեփական աչքով ժողովրդի այս վիճակի նկատմամբ քամահրական, անհաղորդ վերաբերմունքը չտեսնելու պարագայում, այո՛, դժվար էր լինելու շատ բաների հիմնապատճառները հասկանալ: Ինչնէ: Բազում անպատասխան հարցերի լաբիրինթոսում անցավ էլի մեկ տարի: Ասում են՝ սա վերջինն է լինելու:

Շնորհավոր Նոր տարի:

Թիվ 1, հունվար

ՀԻՆ ՀՈԳՍԵՐԻ ԲԵՌԸ ՇԱԼԱԿԻՆ

1993 թ. իր ծանր ժառանգության հետ 94-ին փոխանցեց նաև այդպես էլ լուծում չստացած մի շարք առկախ հարցեր: Եթե խորհրդարանում տեղի ունեցած ալեկոծումը այնուամենայնիվ, ըստ հաստատված ավանդույթի և օրինաչափության, հանդարտեց, կարծես ոչինչ չէր էլ եղել, ապա արժեզրկման անդունդը դրամի գլորվելու վտանգը մնաց որպես կարևորագույն հիմնահարց: Որպես նախաամանորյան հաճելի անակնկալ դեռ չէին մարել դրամի կուրսի հարաբերական կայունացման մասին հուսադրիչ «աչքալուսանքները», երբ հենց նոր տարվա սկզբին սկսվեց անկման մի նոր փուլ, որի ստեղծած կացության առաջ արդեն չափազանց խեղճ ու ամոթխած են հնչում աշխատավարձերի նոր ինդեքսացիայի ենթարկման մասին խոսակցությունները: Վատատեսական կհնչի, իրական, թե որպես չարագուշակ կանխատեսություն, բայց թվում է, որ այս դրամային գործընթացը իր մի ամփոփիչ հանգրվանին կհասնի այն ժամանակ, երբ հանրապետության ղեկավարությունը ոսկու որոշակի քանակի հետ անկախության որոշակի չափը հանձնի Մոսկվային, խնդրելով, շատ խնդրելով ու նույնիսկ դիվանագիտություն բանեցնելով, որպեսզի վերջինս համաձայնի իրեն ներառելու սեփական ռուբլու գոտի: Սա, ինչպես ասացինք, որպես չարագուշակ կանխագուշակում և կամ դառը ճշմարտություն, սակայն մինչ բուն փաստական իրավիճակին հասնելը ի՞նչ է լինելու և ինչպե՞ս է գոյատևելու ժողովուրդը, դժվար է ասել: Եվ արդյո՞ք ի տարբերություն նմանօրինակ բազմաթիվ և նույնիսկ մեզ ծանոթ նախադեպերի հնարավոր է լինելու վարչական մեթոդներով դրամին իր տեղը նստեցնել, դոլարին ու ռուսական ռուբլուն՝ իրենց տեղը, իսկ վերջիններով գայթակղվողներին էլ՝ իրենցը: Այնուամենայնիվ խորհրդարանական ալեկոծման հանդարտումը ամեն ինչ չէ, որ ծածկել էր իր տակ և, օրինակ, հանրապետության նախագահի պահանջով հրավիրված արտահերթ նիստը փոխեց Կենտրոնական բանկի կառավարչին: Սա ոչ միայն հաստատումն էր այն

պնդման, որ այնուամենայնիվ դրամափոխանակության իրականացման ընթացքում տարաձայնություններ են եղել բանկի ղեկավարության և կառավարության միջև:

Եթե դեկտեմբերի վերջին չէր հաջողվել բանկը ենթարկել տալ, ապա բանկի փորձառու կառավարչի՝ այս պատասխանատու և մասնագիտական լուրջ պատրաստություն պահանջող գործում անիրավասու լինելու աստիճան ոչ փորձառու, սակայն ՀՀԾ-ական թևի հավատարիմ գործիչ Բագրատ Ասատրյանով փոխարինումը, ուղղակի ասած, նշանակում է, որ այնուամենայնիվ կառավարությունն իր ձեռքն առավ բանկը: Այս միջոցառումն ում որքանով է ձեռնտու՝ մի կողմ թողնենք և, միանալով անուրանալի լավատեսներին, հուսանք, որ կաղդային այս մեկ փոփոխությունը նպաստելու է ազգային փողի և նրան նայող բնակչության վիճակի բարելավմանը: 94 թվականը Հայաստան մտավ հոգսերի ծանր բեռը շալակին և անակնկալ քամիների հնարավորության մտավախությամբ: Այս ամենին գումարվեց արցախյան հակամարտության նոր թեժացումը: Եվ այս ամենը գալիք տարվա ու տարիների հեռանկարի մասին ոչ մի լավ բան չխոստացող նախագահական «բարեմաղթությունների» խորապատկերի վրա: Բայց պատերազմի ու շրջափակման պատճառաբանությամբ ճակատագրապաշտի ծանր լուծը ժողովրդի վիզը գցելը արդյո՞ք լավագույն լուծումն է բոլոր պարտք ու պահանջների դիմաց: Եվ արդյո՞ք ընդհանրապես պիտի հաշտվել ու համակերպվել ճակատագրապաշտության հետ:

Թիվ 2, հունվար

ՈՒԺԵՂ ԲՌՈՒՆՑՔԻՆ ՈՒԺԵՂ ԹԻԿՈՒՆՔ Է ՊԵՏՔ

Մինչ մենք սերտում ենք դրամի ու դրամաշորթության դասերը, Արցախը մնում է անընկճելի, անխորտակ, հակառակ քանակական անբարենպաստ համեմատության, հակառակ թշնամու շարքերում բազմապիսի վարձկանների և այլ մասնագետների ներկայության,

հակառակ ռազմական գիտությունների հին ու նոր տեսություններին: Անշուշտ ուրախանում ենք ու հպարտանում Արցախի մեր ռազմիկների հաջողությունների լուրերն առնելով: Բայց արդյո՞ք ունենք այդ իրավունքը: Թիկունքում լինելն ամոթ չէ, եթե այն իսկապես արցախյան պողպատյա բռունցքին վայել թիկունք է, հանձնառու ու կազմակերպ: Թշնամին, ինչպես միշտ, մեծաքանակ է, իսկ մենք փաստորեն մենակ: Մենակ ենք մեր լինել-չլինելու դատաստանի առաջ: Մեր հույսն ու ապավենը մեր բազուկն է, այն անընկճելի պողպատյա բռունցքը, որ այսօր հերթական անգամ թշնամուն հասկացնում է, որ հայ ժողովուրդը հայ ժողովուրդ է իր պատմությամբ ու ներկայով, և պատմությունն այդ սովորեցնում է նախ և առաջ ապավինել սեփական ուժերին, որ նշանակում է մի մարդու պես դիմակայել թշնամուն: Թիկունքն ուժեղացնելու զանգը վաղուց է հնչել, մինչդեռ մենք շարունակում ենք քարշ տալ մեր գորշ առօրյան, երևի հուսալով, որ փոթորկի այս ալիքն էլ, ինչպես իր նախորդները, կանցնի ապարդյուն: Ոչ, այս մեկը վճռորոշ է ու ճակատագրական: Այս մեկը Սարդարապատ է, հայ ժողովուրդ:

Թիվ 3, հունվար

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ Է ԵՆԹԱՐԿԵԼ ԻՐ ՇԱՐՔԵՐԸ

Շարունակվում են ադրբեջանական բանակի լայնածավալ հարձակումները ռազմաճակատի բոլոր հատվածներում: Դրանք ուղեկցվում են խաղաղ բնակավայրերի հրթիռակոծմամբ: Թշնամին ձգտում է ներթափանցել Մարտակերտի և Քելբաջարի շրջանների խորքը: Հարձակումներին գործուն մասնակցություն է ցուցաբերում օդուժը՝ խախտելով ԼՂՀ-ի օդային սահմանները և ռմբակոծելով շրջկենտրոններն ու գյուղերը: Արժանին մատուցելով Արցախի պաշտպանական ուժերին, որոնք կարողանում են հետ մղել թշնամու գրոհները՝ պատճառելով մարդկային ու նյութական զգալի կորուստներ, ասենք նաև, որ ադրբեջանական բանակն արագո-

րեն համալրում է իր ուժերը և շարունակում հարձակումները: Ակնհայտ է, որ Ադրբեջանի ներկա բանակն այն չէ, ինչ էր վեց ամիս առաջ: Ադրբեջանի անփորձ զինվորների կողքին կռվող ռուս և ուկրաինացի վարձկանների, աֆղան մոջահեդների և թուրք կամավորների ու հրահանգիչների խնդիրը մտահոգիչ է ոչ այնքան որպես զինուժի, որքան հետևանք ԼՂՀ դեմ գործող միջազգային կոալիցիայի: Եթե դրան ավելացնենք, թե ինչպիսի ֆինանսական ու ռազմական օգնություն է ստանում Ադրբեջանը և ինչպիսի գերարդիական տեխնիկա է գործի դրել ԼՂՀ ինքնապաշտպանական փոքրաթիվ ուժերի դեմ, հասկանալի կլինի, թե ինչ նպատակի է ծառայեցվել զինադադարի վեց ամիսը:

Կես տարին բավարար ժամանակ էր բանակի կազմակերպման համար և այն, ինչ տեսնում ենք, ի տարբերություն մեզ, շատ լավ օգտագործեց հակառակորդը: Անշուշտ, խոսքը միայն կարողական ներուժի գործադրման մասին չէ, այլ առաջին հերթին դրան նպաստող արտաքին այն ազդակների, որոնք մեր պարագայում փաստորեն հակառակ ազդեցություն ունեցան: Ավելորդ է ասել, թե այդ ինչ հետևանք է, և Հայաստանը ինչու հայտնվեց բացարձակ մեկուսացման մեջ, գործնականում չունենալով ոչ մի դաշնակից: Վեց ամիս առաջ էլ դժվար չէր հասկանալ, թե ինչի կարող էր հասցնել այն քաղաքականությունը, որ որդեգրել էին Հայաստանի իշխանությունները և այսօր էլ շարունակում են նույնն անել՝ անտեսելով ստեղծված կացության բուն պատճառները և կամ հետապնդելով այլ նպատակներ... Հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել Հայաստանի արտաքին քաղաքականության ակնհայտ ձախողումները: Մի՞թե պարզ չէ, որ վերջիվերջո Արցախի դեմ հանդես է գալիս մի նոր Ադրբեջան, որը ստեղծվում էր ուղղակի բոլորիս աչքի առաջ՝ փորձառու ու հմուտ ձեռքերով: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը չգիտես ում և ինչի վրա էր հույսը դնում, ում և ինչին էր ապավինում, այն դեպքում, երբ թշնամու հարձակումներն իր իսկ սահմանամերձ շրջանների վրա արդեն այնքան սովորական էին դառնում, որ պաշտոնական մամուլն այլևս չէր կարևորում դրանք

կամ, լավագույն դեպքում, բավարարվում էր մեկ-երկու կցկտուր նախադասությամբ: Փաստորեն ժողովուրդն անտեղյակ է Հայաստանի սահմանամերձ շրջաններում և Արցախում տիրող իրավիճակին:

Տպավորությունն այնպիսին է, կարծես պատերազմը ոչ մի կապ չունի մեզ հետ, կարծես մեր բնակարանները տաքացնելուց ու կերակուր հայթայթելուց զատ ուրիշ հոգս չունենք: Իսկ գուցե հենց այդ էլ ուզում են մեր իշխանությունները:

Այո, Արցախը պայքարում է, Արցախը դիմանում է՝ չխնայելով թանկագին իր որդիների կյանքը: Կբավականացնե՞ն Արցախի մարդկային, նյութական ու բարոյական ուժերը պայքարելու մինչև հաղթական ավարտ: Բայց մի՞թե Արցախի պատերազմը մեր պատերազմը չէ, համայն հայության պատերազմը չէ:

Ստեղծված իրավիճակում այլ կեցվածք չէր կարող դրսևորել Դաշնակցությունը, որը կրկին զորակոչի ենթարկեց իր շարքերը՝ ճակատ ուղարկելով իր բազմաթիվ անդամներին: Այո՛, Արցախի ազատագրական պայքարը բոլորինս է, ողջ հայ ժողովրդինը: Ե՛վ իշխանությունը, և՛ ընդդիմությունը ճակատագրական այս պահին պարտավոր են միասնաբար զորավիգ կանգնել Արցախին:

Թիվ 4, հունվար

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ. ՍՊԱՍՎԵԼԻՔԻՑ ԱՌԱՋ

Արցախյան հակամարտության առթիվ հայությանը շուրջ մեկուկես ամիս լարվածության մեջ պահած շրջանը կարծես թե իր բարեհաջող եզրափակմանն է հանգում: Այս հերթական փորձությունը առավել քան երբևէ պատվաբեր ու փառաբանելի է, քանզի այս անգամ Ադրբեջանը հարձակում է ձեռնարկել մի շարք դաշնակից ուժերի անմիջական զորակցությամբ: Հայկական կողմի անխորտակելի վճռականության առաջ ջախջախիչ և այժմ արդեն երկար ժամանակով անվերականգնելի կորուստ կրեց հակառակոր-

դը, հերթական անգամ սեփական մաշկի վրա փորձարկելով ուժային մեթոդներով արցախյան հարցի լուծման նպատակի սնանկ տարբերակը:

Հակառակորդի պարտությունը և մեր հաղթանակը պայմանավորված էր ոչ միայն առաջինների բարոյական, ի սկզբանե կանխորոշված պարտությամբ, ընտրված ճանապարհի սայթաքունությամբ, հայ զինվորի մարտնչելու անձնազոհ կամքով, հայության բարոյական ու ոգեղեն կորովով, այլև այն բարձր, միակ ու գերակա ազգային շահի գիտակցությամբ, որի պատասխանատվության բեռը նման ճակատագրական պահերին իրենց ուսերին են վերցնում քաղաքական, հասարակական շերտերն ու խմբերը: Մեր կողմից ու հատկապես Դաշնակցության մամուլի ճանապարհով թերևս ավելորդ չէ փաստելը, որ նույն Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որ թե գաղափարապես, թե գործնականորեն կրողն է եղել Հայ դատի արցախյան ներկա պայքարի հանգրվանում իր կարելվույն պատասխանատվության, այս անգամ ևս համայն հայության համար տագնապի զանգ հնչեցնելով, իր շարքերից նորանոր ուժեր կանգնեցրեց կամավորական շարժման դրոշի տակ:

Մյուս կողմից՝ գաղտնիք չէ, որ հիմնահարցի լուծման գործում իրենց դերակատարումն են ունենում արտաքին շահագրգիռ ուժերը: Իրար հաջորդող և վաղօրոք իսկ վիժեցման դատապարտված Արևմուտքի նախագծումներով ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի խաղաղարար նախաձեռնումների կողքին Ռուսաստանի քաղաքական երանգապնակում, ազգայնական գույների ընդգծմանը համապատասխան, այս երկիրն ավելի ու ավելի վճռականորեն է իրեն հաստատում տարածաշրջանում: Այլևս ակնհայտ է, որ Ռուսաստանն այսօր արդեն հակված է իր շահերի անդրկովկասյան գոտում առկա հիմնահարցերի միակ միջնորդը և կարգավորողը լինել: Գաղտնիք չէ նաև, որ հետզհետե կարծրացող իր այս դիրքորոշմանը զուգահեռ առաջիկայում Ռուսաստանը իր անմիջական խոսուն ազդեցությունը կունենա հայ-ադրբեջանական փոխհարաբերություններ-

րի ինչպես դիվանագիտական, նույնպես և ուղղակիորեն ռազմական ճակատի վրա:

Տվյալ նպատակի շրջանակներում, ինչպես արդեն հայտնի է, հակամարտության լուծման ծրագրի փաթեթով հունվարի վերջին և փետրվարի սկզբին տարածաշրջանով դիվանագիտական շրջագայություն կատարեց Ռուսաստանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վլադիմիր Կազիմիրովը: Արդեն հայտնի է դարձել նաև, որ Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը մերժել է այս միջնորդությունը: Ավելին, կարծես բացահայտելով սեփական կողմնորոշումները Հեյդար Ալիևը պատրաստվում է իրադարձությունների հենց այս փոթորկալից օրերին իր առաջին պաշտոնական այցը կատարել Անկարա, որտեղ և կքննարկվի տարածաշրջանում ստեղծված իրավիճակի հարցը: Չնայած որ հակամարտության լուծման ներկայացված տարբերակը չէր բավարարել նաև հայկական կողմին՝ ի դեմս ԼՂՀ ղեկավարության, ակնհայտ է նաև, որ մենք Ադրբեջանի նկատմամբ առաջիկայում կարող ենք լինել շահողի վիճակում:

Հնարավոր կլինի՞ արդյոք խելամտորեն օգտվել ձևավորվող իրողություններից, թե Հայաստանի իշխանությունների չգիտես իրե՞նց, թե՞ այլոց կամքով ձեռնարկվելիք քայլերը կչեզոքացնեն ստեղծված նպաստավոր վիճակները:

Թիվ 5, փետրվար

ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱ ՈՉ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ՈՉ ԷԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչ երկու տարի շարունակ ասում էր ընդդիմությունը Հայաստանի իշխանությունների ու կառավարության, ՀՀՇ-ի ու ՀՀՇական առաջին պարոնների հասցեին, այսօր արդեն ստիպված են իրենք ասել: Անշուշտ, ոչ ազգային ու պետական մղումներով: Տարբեր են և՛ դրդապատճառները, և՛ նպատակները: Սակայն նույնն է

շարժիչ ուժը, որը իրենց իսկ գնահատմամբ «բարենպաստ պահ» է ստեղծել քաղաքականությունը կրկին փողոց հանելու:

«Ստեղծվել են բարենպաստ պայմաններ, որպեսզի ինչ-որ ձևով, ընդ որում մեր ազգային արժանապատվությանը և Ղարաբաղի ժողովրդի նպատակներն ու իղձերը պաշտպանելով, գտնվի մի լուծում, որը բավարար է բոլոր այդ իղձերին ու նպատակներին...»,- վստահեցնում է ազգային անվտանգության հարցերով նախագահի նախկին գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյանը:

«Նշանակում է, ինչ-որ դրական միտումներ կան Հայաստանում, ինչ-որ կայունություն է նկատվում Հայաստան-Ղարաբաղ փոխհարաբերության մեջ: Ռազմական հաջողություններ կան, գալիս է բանակցությունների փուլը և Աշոտը գալիս է դրա դեմ, և ոչ թե՝ համար: ...Անշուշտ, նորից նոր շոու, նոր դեդուկցիա մտցնելու միտում ունի, որ միայն Աշոտի բանը չի, նախաձեռնությունը չի, իր մտահղացումը չի»,- եզրակացնում է ներքին գործոց նախարար Վանո Սիրադեղյանը: Ուրեմն, ո՞ւմ մտահղացմամբ է հերթական այս ներկայացումը, որն այս անգամ սպառնում է արյունոտել բեմահարթակը, դատելով ներկայացման առաջին գործողությունից, որն արդեն իսկ զարգացման իմպրովիզացիոն միտումներ է դրսևորում: Պետք է խոստովանել՝ մենախոսությունները սպասվելիք ներգործությունը չունեցան: Հետաքրքրություն դրսևորեց, ինչպես միշտ, միայն մամուլը: Եվ հուզումնալից պահեր ապրեցին միայն նրանք, ովքեր այս կամ այն կերպ առնչվում էին ներկայացման հետ: Իսկ թե ի՞նչ տեղի ունեցավ վարագույրների հետևում, հայտնի է միայն իրենց: Մի բան սակայն դժվար չէր ենթադրել՝ տղերքի գործերը լավ չեն: Թե՛ Աշոտինը, թե՛ Վանոյինը: Աշոտինը, որովհետև ուղղակի, թե անուղղակի կապ ունի հանրապետության պղնձի պաշարների արտահանման, վայուտային հաշիվների, ադամանդների, խորդենու յուղի, սրբապատկերների, հին գորգերի, հնություն ներկայացնող այլ արժեքների, կարասների, հռոմեական ու հայկական այլ իրերի վաճառքի, բենզինի ու սոլյարայուղի «բիզնեսի», ավտոառևանգումների և այլնի հետ: Վանոյինը, որովհետև

եկամտաբեր գործարանների տնօրեններին ինքն է նշանակում, կապ ունի Ջիլավյանի դեմ մահափորձի և որոշ կուսակցություններ-ի հանդեպ ծավալված հետապնդման հետ: Ազատ տնօրինում է դատախազական սանկցիաների և այլն:

Եվ դա Դաշնակցությունը չի ասում: Ասում են իրենք՝ «Ղարաբաղ» կոմիտեի տղերքը, որոնց կոմիտեի անդամ լինելը, ըստ Աշոտ Ոսկանյանի, պատասխանատվություն է, բայց ոչ պաշտոն: Սակայն ի՞նչ է փոխվում դրանից: Մի՞թե այսօր Հայաստանում նրանց իշխանությունը չէ: Եվ մի՞թե այսօր այդ իշխանությունը չի փնովվում ու վարկաբեկվում: Ինչո՞ւ է լռում հանրապետության նախագահը: Ինչո՞ւ է պապանձվել ՀՀԾ վարչությունը: Գուցե չափազանցո՞ւմ ենք վտանգը:

Համենայն դեպս, այս ամենը ոչ մի լավ բան չի խոստանում: Ճիշտ է, հանդիսատեսը, որը մեր թշվառ ժողովուրդն է, թաղված հոգս ու ցավի մեջ, առայժմ անտարբեր է, բայց կարող է վաղը ձեռքն ընկածը շպրտել բեմ... Եթե այդ է ուզածներդ, եթե այդպես պիտի բեմից հեռանաք, ապա համոզված եղեք, չի՛ հաջողվի: Դա թույլ չի տա ո՛չ ժողովուրդը և ո՛չ էլ ընդդիմությունը:

Թիվ 6, փետրվար

ԵՎ ՔԱՂՑԿԵՂԸ ԲԱՑԱՀԱՅՏԵՑ ԻՐԵՆ

Արցախում ազատամարտիկների հուժկու բազուկը թշնամուն նորից իր ելման դիրքերն է շպրտում: Ռազմաճակատում դիմակայելն ու կորցրածը հետ բերելը թանկ արժե, և այդ գինը քաջարի հայորդիները վճարում են՝ հավատարիմ իրենց ուխտին:

Ի տարբերություն նշված դրական տեղաշարժերի, շաբաթվա ընթացքում ներքաղաքական կյանքում երկինքը մնաց ամպամած, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ավելի մռայլվեց: Նախագահի անվտանգության գծով նախկին խորհրդականի և ՆԳ նախարարի փոխադարձ մերկացումներից հետո դեռևս որևէ մեկը չի տապալվել, սակայն դա չէ կարևորը, այլ ավելի շուտ այն, որ մեզանում

նշված մեղադրանքները բացահայտելու իրական հնարավորություններ են բացակայում: Գերագույն խորհրդում խնդրին իբրև թե ընթացք տալու «ճիգերը» այլևայլ նկատառումների պատճառով նույնպես տապալվեցին, որովհետև սատանան գիտե, թե անօրինությունների և կոռուպցիայի թելերը մինչև ուր են ձգվում: Եվ դա շատ ավելի մեծ աղետ է պետության համար, քան նույնիսկ ցանկացած շրջափակում և պատերազմ:

Դաշնակցական մամուլը ժողովրդի հետ ունեցած իր ամենօրյա խոսք ու զրույցի մեջ, շատ անգամ էլ նեղվելով, ստիպված էր անընդհատ ահազանգել, որ իշխանությունների խոստումները սին են և նրանց երազանքը բնավ էլ պետականություն ձևավորելն ու ամրապնդելը չէ, այլ մեկ ուրիշ՝ պղտոր բան, քանզի նրանց գործերը շատ ավելի խոսուն էին: Եվ քաղցկեղը մատնեց իրեն, բացահայտեց իր գտնվելու ճիշտ տեղը:

Հիմա կարծես էլ կարիք չկա մարդկանց համոզելու, թե մեր կյանքում ո՞ր «ենթակայաններից» էին սնվում ու խրախուսվում չափ ու սահման չունեցող անօրինություններն ու կամայականությունները: Ասես նույնիսկ պարզ է դառնում, թե ինչ բաղադրություն ուներ Հայաստանի իշխանությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Այլևս պետք չէ նոր փաստեր բերել՝ ապացուցելու համար, որ կառավարող վերնախավում, բժշկական տերմինով ասած՝ փտախտ է սկսվել: Այդ փաստերն իրենք են բերելու, որովհետև, ինչպես համոզվեցինք, նրանց բերած փաստերն ավելի «հյութեղ» են ու պերճախոս: Եվ դա դեռ արվելու է միմյանց մրոտելու և ճահճուտից համեմատաբար մաքուր դուրս գալու նկատառումով: Երկրի նախագահը երևի դեմ չի լինի, եթե այս երևույթն էլ անվանենք «հետևողական գործընթաց», իսկ եթե համաձայն չէ, թող տա իր բացատրությունները, մանավանդ որ անկարելի բան է, որ այդ ամենից անմասն լիներ նաև ինքը, և մանավանդ, որ խոսքը իր զինակից և մերձավորագույն ընկեր-ստորադասների մասին է: Իսկ այդ ընթացքում ցրտից, սովից և անարդարություններից տանջահար ժողովուրդը՝ հոգնած իր գլխին սարքած զանազան խաղե-

րից, հետզհետե համոզվում է, որ ելքը մեկն է, գոտին պնդելով ձեռքն առնել ցախավելը... եթե, իհարկե, մինչ այդ իշխանությունը չգիտակցի իր մեղքի չափերը և չհեռանա կամովին:

Թիվ 7, փետրվար

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՅՍ ԵՐԹՆ ԱՆԿԱՍԵԼԻ Է

Լրացավ արցախյան ազգային-ազատագրական պայքարի վեցերորդ տարին: Դիմակայության ժամանակահատվածն ինքնին խոսում է այդ բեռան տակ մտնողների օգտին, քանի որ ժողովուրդների ազատագրական պոռթկումները, թե՛ բարոյահոգեբանական ու թե՛ հատկապես ֆիզիկական սահմանափակ ներուժի պատճառով, արագ մաշում են իրենց, և եթե կարճ ժամանակում հաղթանակի չեն հասցնում, ապա սպառվում և երկար ժամանակով մարում են: Սակայն արցախահայության նորօրյա պոռթկման արժեքը միայն այն կրողների ոգու կորովի մեջ չէր, այլև այն խիզախության, որ անհավասար բախման ասպարեզում պիտի անհավատալի նվաճումներ արձանագրեր:

Դժվար երկունք ապրեց խիզախումի ոգին այն ժամանակ, երբ թվում էր, թե բոլորն ու ամեն ինչ դեմ են, թվաց, թե կոտրվելու է ժողովուրդն ու ամբողջությամբ վերածվելու է փախստական զանգվածի: Թվաց, թե կթուլանա ազատամարտիկի դաստակը, բայց հնարավոր եղավ հաղթահարել ամենամեծ թշնամուն՝ սեփական երկմտանքն ու վախը: Արդեն իսկ փառավոր էջեր է գրել նորօրյա պայքարը, անհավատալի հաղթանակներ են եղել և երեկվա ուսանող, արվեստագետ, ֆիզիկոս, արհեստավոր՝ բազմության մեջ չնշմարվող պարզ տղերքի անկրկնելի հերոսացումներ:

Մեր աչքի առաջ «ձեռքից գնացած» Արցախ կղզյակը վերածնվեց, պետականության դիմագիծ ձեռք բերեց, ծնեց զինվորականի կողքին նաև իր քաղաքական գործիչներին: Որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաքական ու ռազմական գործոնի իր կարգավիճակով այնուհետև նա լինելիության հայտ ներ-

կայացրեց աշխարհին: Այդ նույն աննկուն կամքի հետ բախվելով՝ ձախողվեցին քաղաքական, դիվանագիտական հաշիվները, որոնք իրենց հերթին, որոգայթներ էին նախապատրաստել արցախցիների արդար դատի առաջ:

Եթե փորձենք դեռ իր հաղթական վերջնագծին չհասած պայքարի արդյունքների մասին խոսել, ապա ամենակարևոր գնահատականն այն կլինի, որ այլևս անդառնալի է այն վիճակը, որում գտնվում էր արցախյան աշխարհը մինչ պայքարի սկիզբը: Հեշտ չնվաճվեց այս հաղթությունը, բազում թանկագին զոհեր ու զոհողություններ արժեցավ, որոնք հենց գինը եղան ձեռք բերածի: Պայքարի վեց տարիները թե՛ օտարներին ու թե՛ հենց մեզ ապացուցեցին, թե ինչերի է ընդունակ հայն իր պատիվը, ազատությունն ու իրավունքը պաշտպանելու համար, և դեռ ինչ դաժան փորձություններ էլ ճակատագիրը նախատեսած լինի դժվարին ճանապարհին, հաղթանակի այս երթն անկասելի է:

Թիվ 8, փետրվար

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԳՈՐԾՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Անցնող խորհրդարանական շաբաթվա աշխատանքային օրակարգը նվիրվեց 1994 թ. ընկերային-տնտեսական ծրագրի և բյուջեի քննարկման ու հաստատման հարցին: Ներկայացված ծրագիրը, որն ինքնին, բնականաբար, կառավարության նախորդ տարվա գործունեության յուրատեսակ հաշվետվություն էր, հենց ի սկզբանե բուռն քննարկումների և քննադատությունների տեղիք տվեց: Մի շարք պատգամավորներ ներկայացված փաստերի հիման վրա միանշանակորեն բնորոշեցին 93 թ. համապատասխան արդյունքը որպես ձախողված աշխատանք, դրանով իսկ լուրջ կասկածի տակ դնելով ընթացիկ տարվա թեկուզ և անկատար ծրագրի իրականացման հնարավորությունը:

Ներկայացված թվային տվյալները եկան փաստելու, որ կեղծ է հանրապետության ընկերային-տնտեսական առկա իրավիճակի «մեղքը» շրջափակմամբ արդարացնելը: Հորինվածք է Արցախի և պատերազմի կարիքների բավարարմամբ հանրապետության ունեցած ռեսուրսների սպառումը և դրանով Հայաստանի ներկա ծանր վիճակը պայմանավորելը: Բազմաթիվ ձախողումների, չիրագործված ծրագրերի իրողությանը ավելացնենք նաև այն փաստը, որ ԳԽ անկախ փորձագետները իրենց բացասական կարծիքը հայտնելով կառավարության ներկայացրած ծրագրին, վախենալով հաշվեհարդարից չեն համարձակվել ստորագրություններ դնել սեփական եզրակացությունների տակ: Հիշենք նաև, որ անցած տարվա ընթացքում վարչապետը պնդում էր, թե տվյալ ժամանակահատվածում հանրապետությունում կենսամակարդակի անկում չի եղել, այն դեպքում, երբ կառավարության գործունեության քննարկումները արդեն այժմ այլ հետևություններ են պարտադրում:

Ավելացնենք, որ մի դեպքում կեղծ է ներկայացվել վիճակագրության պետական վարչության տվյալների համադրումը: Մեկ այլ դեպքում հանրապետության կենսագործունեության այլևայլ ոլորտների վիճակի վերաբերյալ տվյալները թաքցվել են ու թաքցվում են: Ողջ ասվածին ավելացնենք նաև այն փաստը, որ մի շարք ոլորտներում, այդ թվում, ի դեպ, նաև արտաքին քաղաքականության իրականացման հարցում, պարզապես հանրապետության իշխանությունները գործում են առաջնորդվելով սեփական նկատառումներով ու քմահաճույքներով: Բացարձակապես բացակայում է ժողովրդի առաջ հաշվետու լինելու պատասխանատվության զգացումը: Այսինքն, գոյություն ունի մի իշխանություն, որն իր գործունեությունը թաքցնում է ժողովրդից: Եվ երևի իրավունք ունենք սրանից էլ անելու հաջորդ հետևություններն այն մասին, թե ի՞նչ պատճառով որևէ իշխանություն կարող է թաքցնել իր գործունեությունը ժողովրդից: Եվ երևի տեղին կլինի այստեղ վկայակոչել նաև այն մեծամասշտաբ չարաշահումների ու թալանի, օտար ուժերի կողմից հավաքագրված լինելու փաստերը, որոնց վերաբերյալ մեղա-

դրանքներով այսօր իրար դեմ են դուրս եկել իշխանության գործող ու ներկայումս արդեն չգործող բարձրագույն պաշտոնյաները: Եվ որպես արդյունք այս ամենի՝ վարչապետը երես առած երեխայի պես շանտաժի է դիմում, թե եթե քննադատում եք, եթե ծրագիրս չեք ընդունում, ապա պահանջում եմ քննել իմ նկատմամբ վստահության հարցը: Երևի պիտի ավելի ընդհանրական արդյունք այս ամենի համարել և այն պտտվող շշուկները, թե հանրապետության նախագահը պատրաստվում է «զոհել» հերթական վարչապետին: Ահա այսպես, ամեն ինչ լավ է, ամեն ինչ հաղթահարելի է, կփոխվի կամ չի փոխվի հերթական վարչապետը, նոր թափ կստանա ընդդիմացողների ու քննադատների վարկաբեկումը և այս պղտոր ջրում կշարունակվի կեղեքվող ժողովրդի թիկունքում գործելու գործընթացը: Եթե ամեն ինչ կշարունակվի ըստ ծրագրվածի:

Թիվ 9, մարտ

ԻԲՐԵՎ ԹԵ ՁԱԽ ՁԵՌՔԸ ՉԳԻՏԻ, ԹԵ ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԱՋԸ, ԲԱՅՑ ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ՁԵՌՔԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՉԵՆ ԼՎԱՑՎՈՒՄ

Աշոտ Մանուչարյանի և Վանո Սիրադեղյանի հրապարակային խոստովանությունների առաջ բերած իրարանցումը կարծես թե սկսել էր հանդարտվել: Այսինքն, ոչ այնքան հանդարտվել, որքան տեղափոխվել մեկ այլ հարթություն, որտեղ ժողովրդական ցասումը տեղ չունի և որտեղ բարձրացված հարցերը խեղդվում են տեղեկանքներից, բանաձևերից, որոշումներից, հարցումներից ու բյուրոկրատական այլ հայտնագործություններից գոյացող թղթի կիտուկներում: Ամենայն հավանականությամբ այստեղ գործում էր այն նույն ձեռքը, որը ղեկավարում էր նաև աղմուկ հանած այդ խայտառակ պատմության հերոսներին: Եվ այս դեպքում, թերևս,

տեղին է հիշել ավետարանական ասույթը ձախ ձեռքի մասին, որը չգիտի, թե ինչ է անում աջը:

Անտեսելով հարցի քաղաքական կողմը, անդրադառնանք դրան այլ տեսանկյունից: Մանուչարյանը, թող որ այս դեպքում որպես մասնավոր անձ, այդուհանդերձ, ներկայացրեց այնպիսի լուրջ մեղադրանքներ, որոնք դատախազական մանրակրկիտ հետախուզության կարիք ունեն: Առավել ևս ծանրակշիռ էին հակամեղադրանքները, որոնք հնչեցին ներքին գործոց նախարարի շուրթերից: Հազիվ թե դրանք անհիմն ու անապացույց լինեին: Այնպես որ, պարոն Սիրադեղյան, ինչպես ասում են շախմատ խաղացողները, ձեռք ես տվել՝ քայլդ արա: Կամ գուցե թույլ չե՞ն տալիս: Թերևս, մենք օգնենք: Պատմենք, օրինակ, կողոպտված մեր հայրենակիցներին այն մասին, որ համաձայն 1991 թ. հունիսի 8-ին կնքված մի պայմանագրի (թիվ 5-ը, չե՞ք հիշում) և նույն թվականի հունիսի 11-ի հրամանի, ինքնիշխան Հայաստանից 225 փաթեթներով դուրս բերվեցին ոչ ավել, ոչ պակաս, 8470 հղկված ադամանդներ, այդ թվում մի քանի տասնյակ քարեր՝ ավելի քան 28 կարատ քաշով, չհաշված հարյուրավոր 18-20 կարատանոցները: Ադամանդի այդ խմբաքանակի ընդհանուր արժեքը անցնում էր 1 միլիոն ամերիկյան դոլարից: Ապրանքն Իսրայելում իրացնելու գործարար տղերքի անհաջող փորձերից հետո, այն վաճառվեց Մոսկվայում: Գուցե մաֆիայի դեմ պայքարող պրն. ներքին գործոց նախարարը տեղյակ պահի մեր ժողովրդին՝ վերոհիշյալ ադամանդների միակ օրինական տիրոջը, թե ո՞ւր անհետացավ այդ գումարը:

Տեղին է ասել, որ հայ ժողովուրդը բազում հարցեր ունի ուղղելու իր իշխանություններին: Զորօրինակ, կարող է հարցնել, թե այդ ի՞նչ գործեր բռնեցին կիսապետական կառույցների ու կոնցեռնների «գործարարները», որ այսօր մեր անունը լսել չի ուզում իրեն հարգող օտարերկրացի և ոչ մեկ գործարար: (Հայրենիքից փախչում են նաև հայ գործարարները, բայց սա, թերևս, այլ հարց է): Գուցե Հայաստանի իշխանությունները պարզապես անտեղյա՞կ են: Թերևս քիչ է հավանական, հատկապես նկատի ունենալով այն

փաստը, որ եվրոպական հայտնի ընկերություններից մեկի ղեկավարը ստիպված էր անձնական նամակ հղել ոչ թե պատահական ինչ-որ մեկի, այլ հենց իրեն՝ Հայաստանի Հանրապետության նախագահին: Տարակուսանք հայտնելով իշխանությունների հովանավորությամբ գործող Հայաստանի ներկայացուցիչների «անլուրջ» վերաբերմունքի առնչությամբ, նամակում ուղղակիորեն դրվում էր 78100 (յոթանասունութ հազար հարյուր) ամերիկյան տույժի վճարման հարցը: Նույն հասցեատիրոջն ուղղված մեկ այլ ձեռնարկության համանման ուղերձում խոսվում է ավելի պատկառազդու գումարի, իսկ ավելի ստույգ՝ 640000 (վեց հարյուր քառասուն հազար) ամերիկյան դոլարի մասին: Օտարերկրացիներին հետաքրքրում է, թե ո՞վ պետք է վճարի այդ գումարը: Եվ թող ներվի մեր անհամեստությունը, այդ հարցը մեզ նույնպես անչափ հետաքրքրում է: Հավատացնում ենք պարոն նախարարին, դա սոսկ պարապ հետաքրքրություն չէ: Բանն այն է, որ եթե վճարելու է մեր երկիրը, ապա ստացվում է, որ ինչ-որ մեկի դիլետանտության, անբարեխղճության կամ պարզապես խարդախության համար վարձահատույց են լինում այդ երկրի քաղաքացիները: Իսկ եթե բնավ չենք վճարելու (ինչն ավելի հավանական է), ապա առհավետ, կամ քանի դեռ կառավարում է այս վարչակազմը, մենք կորցնում ենք լուրջ, հուսալի ընկերոջ մեր վարկը:

Այսպիսով, հարգելի հայրենակիցներ, այսպես կոչված «միջազգային դրամագլուխը» չի շտապում ներհոսել Հայաստան ոչ այնքան շրջափակման կամ էլեկտրականության բացակայության պատճառով, այլ որովհետև աշխարհի երեսին հիմարներ չկան, և երևանյան կազինոներից եվրոպական ազատ աշխարհ ընկած խարդախների ու խաբեբաների հետ ոչ ոք և ոչ մի գնով չի ուզում համագործակցել: Եվ եթե մենք Հայաստանում նոր միայն սկսում ենք գիտակցել, թե ինչ փուչ պղպջակ էր «Հայաստան» հիմնադրամը, ապա պետք չէ զարմանալ, որ Արևմուտքի գործարար մարդկանց համար դա պարզ էր ի սկզբանե: Ուստի և հիմնադրամի ստեղծումը, ինչպես և այն նախաձեռնողների բոլոր մեծ ու փոքր

քաջագործությունները, անդառնալիորեն տապալվում են: Նրանց պարզապես հավատ չեն ընծայում: Եվ այս Հայրենիքը կերտելու մեր իշխանությունների անզորությունից դառնորեն հիասթափված սփյուռքահայության մեջ ամենևին էլ չի մարել Հայրենիքին սատար կանգնելու պատրաստակամությունը: Այնպես որ, հարցը կարելի է այլ կերպ ձևակերպել, ենթադրենք այսպես. ո՞վ և ե՞րբ է պատասխան տալու այս ամենի համար:

Թերևս, դժվար չէ կռահել, որ վերոհիշյալ փաստերը և բազում այլ փաստեր, որոնց այս հրապարակման մեջ անդրադարձանք միայն հպանցիկորեն, հիմնված են առարկայական, խիստ շոշափելի փաստաթղթերի վրա, որոնք ունենք մեր գզրոցում:

Թիվ 10, մարտ

ԱՍԵՔ, ԻՆՉ ԵՔ ԱՍՈՒՄ՝ ԱՍԵՆՔ, ՈՎՔԵՐ ԵՔ

Ասում են՝ հասունացել է նոր գաղափարախոսության անհրաժեշտությունը: Այնպիսի մի գաղափարախոսության, որը կբխի ներսից, եղածների կրկնօրինակումը կամ սինթեզը չի լինի:

Ասում են, անհրաժեշտ են նոր ուժեր, հատկապես 80-ականների սերնդից, որոնք իրենց վրա են կրել շարժման ու պատերազմի հիմնական բեռը և առավել են տեղյակ հասարակության վիճակին, ովքեր նոր գաղափարներ կտան ժողովրդին և ճիշտ հունի և շարժման մեջ կդնեն նրա ձգտումներն ու կարողությունները:

Նոր բան չեն ասում:

Ճիշտ մեկ տարի առաջ հանրապետության ընկերային, քաղաքական, տնտեսական կացությամբ «բանականության ու տրամաբանության շրջանակներում չտեղավորվող մեր վարքագծով» շա՛տ մտահոգ ուրիշներ էլ, ի տարբերություն սրանց, ոչ թե պահանջում էին այդ նոր գաղափարախոսությունը, այլ համարյա պատրաստի հրամցնում՝ ընդհուպ իրականացման մարտավարությամբ: Ավելորդ է ասել, թե ինչ եղավ, ինչ տվեց, ուր հասավ, չգիտես ինչու, հատկապես հեղափոխական մտածելակերպի ու գործելակերպի

արժեքային համակարգից սարսափող տղերքի ազգային շահը մակերեսային ճշմարտություններով չփնտրող միտքը: (Հիշո՞ւմ եք, Բաքվի լավ լուսավորված հյուրանոցի մի պատուհանից բացվող տեսարանի քաղցրերգությունը):

Ակնկալվող բեկումը քաղաքականության մեջ տեղի չունեցավ և չէր կարող ունենալ, որովհետև ազգը պատմություն, հիշողություն ու արժանապատվություն ունի: Որովհետև ազգային արժեքներին ու դրանցով ձևավորված հոգեբանությանը դեմ գնալը դեռ չի նշանակում նոր գաղափարախոսություն կամ նոր ուղի: Եվ առհասարակ, դեմ գնալը երբեք ազգային նպատակ լինել չի կարող: Մի խոսքով, տղերքը «մոլորվեցին» նոր ուղու ոլորաններում... Պետք էր այլ բան մտածել: Եվ մտածեցին. ավելի լավ է ոչ թե տալ, այլ պահանջել, որովհետև կարևորը ընդդիմությանը վարկաբեկելն ու չեզոքացնելն է: Եվ բանաձևեցին՝ անհրաժեշտ է նոր գաղափարախոսություն: «...Անհրաժեշտ են գրքեր, թերթեր... անհրաժեշտ է Կարմիր բանակ...»: Ի՞նչ տարբերություն, եթե հարկ լինի, այդ էլ կանեն: Կարմիր, կապույտ, կանաչ, ցանկացած գույնի, միայն թե՝ ոչ դաշնակցական, որովհետև թութակավարի շարունակում են կրկնել՝ «քաղաքական ուժերը, որոնք «պահվում են դրսից» երբեք չեն կարող լուծել ազգի առջև ծառացած խնդիրները»: Կարելի է կարծել, որ ցանկացած քաղաքական ուժ կարող է լուծել ազգի առջև ծառացած խնդիրները, եթե իր գործունեության համար միջոցներ է հայթայթում հայաստանյան ծանոթ մեթոդներով: Եվ կարևոր չէ, թե քաղաքական այդ ուժը ինչ գաղափարախոսություն, ծրագիր ունի և անգամ՝ ունի, թե ոչ:

Ներնգորեն վարժեցրած թութակը երբեմն-երբեմն իր վարժեցնողին էլ «հիմար» է ասում, որ գլուխը չջարդեն: Օրինակ՝ «Իշխանությունը հայտնվել է խոր ճգնաժամի մեջ...»: Ասում է, բայց հատկապես չի կրկնում, ասում է ի միջի այլոց և անմիջապես ծղրտում գլխավորը, ինչը անընդհատ կրկնելու համար կերակրում ու խնամում են նրան, այս դեպքում՝ կարևոր չէ, դրսից, թե ներսից: Իսկ գլխավորը Դաշնակցությանը հայհոյելն է: Ուղղակի կամ անուղղա-

կի: Այդ արդեն վարժեցնողից է կախված, և անշուշտ՝ թութակից, որոնք տարբեր են լինում: Ինչևէ, երևի վաղը ուրիշ թութակներ էլ անհրաժեշտ կլինեն, 80-ականների, թե 90-ականների սերնդից, այդ արդեն իրենց գործն է: Մեր կարծիքով դա էական չէ, որովհետև հայհոյելու, ցեխոտելու և մրոտելու թութակությունը վերջին հաշվով թութակություն է, անկախ նրանից, թե ինչպես կհամեմվի՝ հիմարության ու մերկության խոստովանությամբ, թե ըմբռնողության ու գաղափարի ուզվորությամբ:

Թիվ 11, մարտ

ԱՐԺԵՁՈՒՐԿ ՏՎԱՅՏԱՆՔՆԵՐ

Մեր թերթի վերջին համարներից մեկում, եթե հիշում է ընթերցողը, Աշոտ Մանուչարյանի և Վանո Սիրադեղյանի փոխադարձ մեղադրանքների վերաբերյալ մի հրապարակում եղավ՝ «Իբրև թե ձախ ձեռքը չգիտի, թե ինչ է անում աջը» վերնագրով, ուր հպանցիկ մի ակնարկ կար «Հայաստան» համահայկական հիմնադրամի մասին, որին հետևեց Հիմնադրամի գործադիր վարչության հայտարարությունը: Այն հիմնականում մեր հրապարակման կապակցությամբ էր, թեև հիշատակվում էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում տպագրված «Եվ դարձյալ Դաշնակցություն» անստորագիր նամակը: Ըստ էության՝ երկու դեպքում էլ, ուղղակի դարձյալ Դաշնակցությունը, որը «չի խորշում անգամ ոտնակոխ անել քաղաքական պայքարի հետ ոչ մի կապ չունեցող, այլ հակառակը՝ հայության ուժերը համախմբող համազգային կառույցի հեղինակությունը»: Շտապենք վստահեցնել Հիմնադրամի գործադիր վարչությանը, որ Դաշնակցությունը և իր մամուլը հայության ուժերը համախմբող որևէ կառույցի համարում են իրե՛նց հեղինակությունը: Եվ այդքանը:

Առաջ անցնելով ասենք, որ մեր մտահոգությունն այն էր, որ կրկին շարժման մեջ են դրվել ամբոխավար մտայնությունը, իրա-

կանության էությունը զանազան նենգահնարներով քողարկելու և այլափոխելու փորձված մեթոդները:

Վարկաբեկվում են ազգային հիմնական արժեքները: Ինչո՞ւ է ժողովուրդը քամահրանքով վերաբերվում ամեն մի ազգի համար սրբազան անկախության գաղափարին: Որովհետև «անկախության» ժողովրդի թշվառության հաշվին պարարտացել է մի փոքրամասնություն, որը հայ ժողովրդի արմատական շահերը ոչ միայն չի պաշտպանում, այլև դրա դեմ է:

Ժողովրդի մեջ մեռնում է հավատն անգամ ազգային պետականության վերստեղծման հնարավորության հանդեպ: Պարարտ «աղաները» իրենց անբարո կեցվածքով ու ձգտումներով ժողովրդին հուսահատության են մատնել. թե երբևիցե հայոց աշխարհում կարող է ձևավորվել ու գոյատևել ազգային արդար պետականություն իր բազմաթիվ ստորոգելիներով:

Խեղվել է ազգային կրթության գաղափարը: Հոգևոր արժեքների ու հաստատությունների նկատմամբ չկա պետական հոգածություն: Պետական մարմինները, տարված ինչ-որ ծրագրերի իրականացմամբ, պարզապես աչքաթող են արել այն հողը, որի վրա պետք է աճեն մեր ապագա զորության հունդերը: Հողն այդ այսօր անմշակ, ամուլ ու անպտուղ մի տարածք է, որին պատրաստվում են տեր դառնալ ուժեր, որոնք ղեկավարվում են դրսից և, անշուշտ, ոչ հայկական, ոչ էլ առավել ևս համահայկական նպատակներ ունեն:

Արժեզրկվել է հայկական դրամը: Արժեզրկվել են պետական ու ազգային այլ արժեքներ: Նպատակը՝ ընդդեմ ազգային պետականության, ընդդեմ ազգային կուսակցությունների և առհասարակ ընդդեմ ազգային տարրական բարոյականության: Եզրակացությունը թողնում ենք ընթերցողին:

Թիվ 12, մարտ

ՀՈՂԸ ՏՆՔՈՒՄ Է ՑԱՎԻՑ

Գաղափարները արժեզրկելու տարբեր ձևեր կան, բայց դրանցից ամենաանենգն այն է, երբ գաղափարը բումերանգի պես շրջվում է ինքն իր դեմ, երբ չեն երևում նրա ծալքերը, չեն փնտրվում այն կյանքի կոչելու իրական ու ճշգրիտ ուղիները: Խոսենք մեր բարձրաստիճան պաշտոնյաների հետ և փորձենք պարզել, թե ինչ են մտածում նրանք հողի սեփականաշնորհման մասին: Պատասխանները միօրինակորեն գրեթե նույնն են. «Դա միակ լավագույն ուղին էր, որով մենք գնացինք: Եթե չսեփականաշնորհեինք, միևնույն է, թալանվելու էր»: Ասել է թե՝ եթե ինքդ հասու չես խնդրին, խնդիրն ես համապատասխանեցնում կարելիությանդ: Թվում է, թե այսօր, երբ գյուղատնտեսության քայքայումը աննախադեպ չափեր ու ծավալներ է ընդունել, երբ վառելիքի, տեխնիկայի, սերմացուի, պարարտանյութի, թունաքիմիկատների պակասությունը, եթե չասենք իսպառ բացակայությունը, գյուղացուն գամել է անելանելիության պատին, պետք է որ մոտեցումները փոխված լինեին, գյուղատնտեսության մեջ վիճակը շտկելու հուսալի ուղիներ փնտրվեին, նրա զարգացումը նախանշող նոր եզրեր ուրվագծվեին: Սակայն չեղավ այդպես և, ինչպես թվում է, համապատասխան մտադրություն էլ չկա: Բայց փոխարենը կա մի ինքնանպատակ ու անհարկի ինքնավստահություն և չգիտես, թե այն ինչ սկզբունքներից է սնվում: Սեփականաշնորհման մասին նույն հարցը հիմա էլ տվեք գյուղացուն և նա ձեզ լավագույնս կներկայացնի «միակ լավագույն ուղու առավելությունները»: Հետո, գուցե զարմանքով իմանաք, թե ինչպես է պատահել, որ 10-11 միլիոն թռչնագլխաքանակից հանրապետությունում մնացել է հազիվ 200 հազարը, իսկ խոզաբուծությունը՝ որպես անասնապահական ճյուղ, ուր որ է կվերանա: Խոշոր և մանր եղջերավոր անասունների մասին խոսելը կարծես ավելորդ է: Դառնացած սրտով նա կպատմի այն մասին, թե ինչպես վարչապետներն ու նախարարները ճառեցին 13,5 միլիոն վարկային էմիսիայի մասին, որը սակայն գյուղ-

վարչություններում մեջ-մեջ էին արել: Հիմա էլ խոսվում է 50 միլիոն դրամի վարկի մասին: Անշուշտ, ներկա արժեզրկման պայմաններում մի մեծ գումար չէ, բայց դա չէ կարևորը: Թվեր սիրող ու դրանք համադրող պաշտոնյաներին շրջանցենք ու խնդրենք գյուղացուն պատմել, թե անցած տարի որքան հող է մշակել և ինչ հույսեր ունի այս տարվա հետ կապված... չէ՞ որ առջևում գարնանացանն է: Թվերի ու հիմնահարցերի ճշմարիտ ներկայացումից հետո այժմ պարզ կդառնա, թե ինչ է տեղի ունենում գյուղում: Պարզ կդառնա, թե ինչպես պատահեց, որ հանրապետության մշակովի հողատարածքների մի զգալի մասը նախորդ տարիներին չմշակվեց ու անտերության մատնվեց: Երեք տարվա դառը փորձը հուշում է, որ առարկայական ու ենթակայական պատճառների գումարը կարող է հայ գյուղը դարձնել անապատ, իսկ գյուղացուն օտարել հողից ու աշխատանքից: Եվ վերջապես, Հայաստանի սակավահող հանրապետությունում հողի սեփականատեր դառնալուց հետո, հազարավոր հեկտարներ ինչո՞ւ են մատնվում անտերության:

Իսկ գարնան շունչը աշխատանքային տարվա սկիզբն է ավետում՝ գյուղին ու գյուղացուն պարտադրելով գարնան օրենքները:

ՍՊԱՍԵՆՔ, ՀՈՒՍԱՆՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՆՔ

Խորհրդարանական քննարկում-բանավեճերից հետո ի վերջո ԳԽ-ն փետրվարի 28-ին կազմեց բազմակուսակցական հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրի բարձրաստիճան ղեկավարների կողմից պաշտոնական դիրքի չարաշահման այն փաստերը, որ հանրությանը ներկայացվեցին Աշոտ Մանուչարյանի և Վանո Սիրադեղյանի մամլո ասուլիսների ժամանակ և դրանցից հետո:

Մարտի 22-ին հիշյալ հանձնաժողովը գործերի ընթացքի և իր անելիքների լուսաբանումների նպատակով անցկացրեց մամլո ասուլիս: Ասուլիսի մասնակիցները տեղեկացան, որ հանձնաժողովի գործունեությունը սահմանափակված է քննության արդյունքում ԳԽ-ին եզրակացություն ներկայացնելու և այս առթիվ համապա-

տասխան առաջարկությամբ հանդես գալու իրավասության շրջանակում: Հանձնաժողովը իրավասու չէ նաև սեփական փորձագետներին ներգրավելու կատարելիք աշխատանքներում: Նույն օրվա երեկոյան հանձնաժողովի առաջին նիստում ՀՀ գլխավոր դատախազ Արտավազդ Գևորգյանը տեղեկացրել էր ըստ մեղադրանքների կատարված քննության արդյունքում ի հայտ եկած մի շարք ընկերակցությունների և այլ կազմակերպությունների կողմից թույլ տրված չարաշահումների փաստերի մասին: Տեղյակ է պահվել, որ հիշյալ գործով դատախազությունում ստեղծված 2 քննչական խմբերը ոչ միայն կզբաղվեն մեղադրանքների քննությամբ, այլև կուսումնասիրեն տվյալ գործերի առնչությամբ մամուլում տպագրված նյութերը:

Ըստ ԳԽ-ի կողմից ստեղծված հանձնաժողովի նախագահ Աղասի Արշակյանի, իրենց հանձնաժողովն արդեն իսկ կազմել է համապատասխան ծրագիր և սկսել է իր աշխատանքները: Հանձնաժողովը պետք է փորձի ապահովել գործի ընթացքի հրապարակայնությունը և դատախազության խմբերին սատար կանգնելով՝ փորձի կանխել ամեն մի անակնկալ, որ կարող է ծառանալ քննչական գործընթացի ճանապարհին:

Անշուշտ, նման ապահովագրության հարցը պատահականորեն չի ծառացել, եթե նկատի ունենանք, թե քննության ենթակա որոշակի անձինք (ի դեպ, որոնք շատ ավելի բարձր կարգավիճակ ունեն նշանառության տակ առնված առևտրական, տնտեսական կազմակերպությունների թիկունքում կանգնած այս կամ այն անձից) ինչ դիրք ու կշիռ ունեն հանրապետությունում: Եթե նկատի ունենանք այն խոչընդոտները, որոնք կարող են հայտնվել իրավապահ մարմինների առաջ, և մի շարք այլ հանգամանքներ: Սկիզբ առած գործընթացի արդյունքը կգա հաստատելու կամ փաստելու շատ մտահոգություններ ու կարծիքներ, որոնցով ընդունված է բնորոշել կացությունը իրավական տեսանկյունից և ընդհանրապես հանրապետության ներքին կյանքը: Սպասենք, հուսանք և հավատանք:

ՏԱՃԱՐԻ ԿԱՆԳՈՒՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ժողովրդի բազմադարյան պատմության մեջ եղել են քաղաքական կյանքի վերուվարումների, տեղատվությունների ու մակընթացությունների ժամանակներ, որոնք ազդել են հայ մշակույթի ընթացքի ու զարգացման վրա, սակայն երբեք չեն կարողացել կասեցնել մեր ոգու վերելքն ու ընթացքը:

Ստեղծագործական միությունները այսօր փաստորեն վերածվել են միայն անվանապես գոյություն ունեցող կազմակերպությունների: Նրանք գտնվում են անդամալույծ ու կաթվածահար վիճակի մեջ՝ զուրկ նյութական ու գործնական հնարավորություններից: Գրողները մնացել են միայն մամուլի սուղ էջերի հույսին: Նկարիչները իրենք են իրենց գլխի ճարը տեսնում, բայց դա էլ իր ծանր հետքն է թողնում փառաբանված հայ կերպարվեստի ընթացքի վրա: Հայ նկարչությունը աստիճանաբար վերածվում է սոսկ վաճառվող իրի՝ քաղքենու ճաշակին կամ վաճառականի ու խանութպանի «գեղանկարչական ըմբռնումներ»-ին համապատասխան: Սրանց կողքին հայտնվել է նոր հաճախորդ՝ անդրկովկասյան պատահական զբոսաշրջիկը՝ արվեստի իր «հասկացողությամբ» ու իր երկրի ընդամենը գրոշներով, և սա էլ իր հերթին է ազդում հայ արվեստի այսօրվա ճաշակի և ըմբռնումների վրա: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հայ կերպարվեստի երիտասարդ սերունդը որոշակիորեն հեռանում է նկարչության հայկական դպրոցից՝ ավելի ու ավելի հակվելով դեպի ապազգային, անդեմ, զուտ տեխնիկական հնարքների և հնարավորությունների նկարչությունը:

Այսօրվա հայ մշակույթի ցավոտ հարցերից մեկն էլ մեր ազգային արժեքների պահպանումն է Հայաստանում: Հանրապետությունից մեծաթիվ մարդկանց հեռանալը եռակի ծանր երևույթ է Հայաստանի համար: Հեռացողներից յուրաքանչյուրը ոչ միայն ինքը Հայաստանի փշրվող մի բեկորն է, որ պոկվում է հայրենիքից, այլև իր հետ տանում է ինչ-որ բան, ազգային հարստություն, ազգային արժեք: Տանում են բոլոր հնարավոր կերպերով ու մեթոդներով, միայն

թե «այնտեղ» վաճառելու բան լինի: Փոխվում են մաքսատան պաշտոնյաները, փոխվում են նրանց ճառերը, բայց ազգային արժեքներն ու հարստությունը շարունակում են հոսել դեպի արտասահման: Գորգերի, արծաթե գոտիների, դասական նկարչության գործերի գներին նայեք: Ի՞նչ է, հարյուր դրամ ստացո՞ղն է առնում դրանք, թե՞ գիտահետազոտական ինստիտուտի գործազուրկը... Դրանք վաճառվում են այդ գներով, որովհետև արտասահմանում վերավաճառվում են ավելի թանկ: Երևույթը կա, դա փաստ է ու ծանր փաստ, որ խոսում է Հայաստանում մշակույթի իրական վիճակի մասին:

Հայաստանը այսօր թվաքանակով ավելի շատ թատրոն ունի, քան, ասենք, յոթ տարի առաջ: Բայց ոչ ոք մատնացույց չի անի, թե այն սակավաթիվ թատրոնները քանի՞ հանդիսատես ունեին ամսական, այս բազմությունները՝ քանի... Չեն ասի, որովհետև պատկերը կլինի զավեշտական...

Ավելի բարվոք չէ հայ երաժիշտների վիճակը...

Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց... Ինչո՞ւ նորաստեղծ պետության գաղափարը, այդքան երկար սպասված ըղձալի պետականության հնարավորությունը չբերեց ստեղծագործական ու գիտական ուժերի աննախադեպ համախմբում ու համազգային ստեղծագործական հրճվանք... Պատճառը պետականությունը ներկայացնողների ապիկարությունն է, նրանց ապազգային գործունեությունը, Հայաստանի կյանքը շահույթի միջոցի վերածելը, ժողովրդի ներքին միասնությունը հանցագործորեն ջլատելը:

«Մենք բոլորս, ի վերջո, նույն տաճարի քարերն ենք»: Եվ ամեն մեկը պետք է լինի իր տեղում, համընդհանուր միասնության մեջ...

Եվ միայն այդ դեպքում է հնարավոր Տաճարի կանգուն գոյությունը, տաճար, որ և՛ Հոգևոր Հայաստան է, և՛ Հայրենիք...

Թիվ 13, ապրիլ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԻԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Այսօր խոսել հայաստանյան իրականության հաղթահարման շուտափույթ անհրաժեշտության մասին՝ նշանակում է ինքնին բնորոշել այդ իրականությունը որպես ճգնաժամային, անհեռանկար, անկումային և այլն:

Եվ ընդհակառակը՝ մերժել կացությունն իր հարթած հունից դուրս բերելու, իրավիճակի հաղթահարման ուղիներ որոնելու առաջարկների ու փորձերի անհրաժեշտությունը՝ նշանակում է ժխտել իրականության վերաբերյալ արվող ոչ լավատեսական գնահատումները, այն իրողություններն ու փաստերը, որոնք շրջապատում պարուրում են մեզ, ու մեր հևիհև քարշ եկող գոյավիճակը: Թե յուրաքանչյուր պետական գործիչ, քաղաքական ասպարեզի այր, մտավորական, կամ պարզապես հասարակական ակտիվությամբ օժտված քաղաքացի ինչ պատճառներով կարող է անհուն ըմբռնողության, սթափ անգործության ու նեղ շահերից վեր կանգնելու խրատներ կարդալ, անշուշտ նույնպես նեղ դիտանցքից ներս սողոսկած շահերի արդյունք է: Եվ իհարկե ոչ երբեք «պետական ու ազգային շահի հարցում ցուցաբերված բարձր գիտակցականության» արգասիք: Այս գնահատականի գնահատականն էլ լակմուսի թղթի զորությունն ունեցող նույն չափանիշն է՝ մեր իրականության վիճակը բարվո՞ք է, թե՞ աղետալի: Ցավոք, հարցերն ու պատասխանները, առաջադրվող տեսակետներն ու դրանց ընդդիմախոսությունները չեն ունենում համարժեք բնույթ, որի դեպքում միայն կարող է ի հայտ գալ և հաղթելու հավակնել ճշմարտությունը: Եթե փորձենք օրինակների ճանապարհով կոնկրետացնել մեր ասելիքը, ապա որևէ մեկը կարո՞ղ է մտաբերել արդյոք որևէ տեսականորեն հիմնավորված հակափաստարկ ընդդեմ ազգային համաձայնության ժամանակավոր կառավարություն կազմելու գաղափարի: Կամ թե հնարավո՞ր է արդյոք «պետական շահերի բարձր գիտակցականության» սկզբունքներից բխող բանավեճ համարել

հանրապետության ապագա Սահմանադրության ընդունման վերաբերյալ հրապարակում եղած նախագծերի շուրջ ընդդիմության նախաձեռնած հրապարակային քննարկումների պաշտոնական արձագանքը: Իրականում առաջադրվող բոլոր լուրջ հիմնահարցերը փորձ է արվում իջեցնել նույնիսկ պարկեշտության մակարդակից ցած ընկած մի աստիճանի, ինչն ընդամենը մեկ խնդիր կլուծի, բոլոր կողմերին կդարձնի հավասար՝ վարկաբեկվածության և լուրջ ասելիք չունենալու իմաստով: Եվ այս անընդհատ պղտորվող ջրապտույտում, երբ առօրյա հիմնահարցերն էլ լուծվում են մեր իրականությունից վեր բացվող ու փակվող վարագույրների հետևում, կյանքը գալիս ու պարտադրում է իրենը՝ հանձինս, օրինակ, ազգային բանակի հրամայականին և ինքնապաշտպանության գործին մասնակցություն ունենալու հարցում բարձր գիտակցականություն ենթադրող պահանջի: Եվ կամա թե ակամա իրար դեմ են դուրս գալիս խոսքն ու գործը, խոսող-թելադրողն ու լսող-կատարողի դերում հայտնվածը: Արանքում լուծվում-կորչում է պետականության շենքի շաղկապող շաղախը՝ հավատը: Եվ դժվար է լինելու որևէ բան շտկելը, քանի դեռ միակ ու վերջնական ճշմարտությունների հարցում մեզանում չեն գոյանա միակ ու վերջնական պատասխաններ:

Թիվ 14, ապրիլ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Ընդամենը երեկ մի ողջ ազգ միաձայն հավաստիացնում էր հանուն ազգային բանակի ստեղծման, հանուն հայրենիքի պաշտպանության ամեն զրկանք և պատասխանատվություն կրելու իր պատրաստակամության մասին: Ուրեմն՝ ի՞նչ պատահեց: Նախ ասենք, որ ՀՀ կառավարության՝ 1994 թ. երկրորդ եռամսյակում պահեստազորի սպաների և զինապարտների զինական հավաքների կազմակերպման մասին որոշումը չի հենվում այս կարևորագույն պե-

տական միջոցառման մասին Հանրապետության օրենսդիր իշխանությունների կողմից սահմանված ամբողջական օրենքների և օրենսդրական ակտերի վրա՝ այդպիսիք դեռ չկան: Միջոցառման անցկացումից առաջ քարոզչական միջոցներով չի տարվել լայն բացատրական աշխատանք: Ի դեպ, այս առիթով կրկին անգամ նշենք, որ ընդհանրապես հանրապետության իշխանությունների ծրագրումներն ու դրանց իրականացումը գնալով ընդունում է ավելի ու ավելի քողարկված բնույթ, և փորձ է արվում յուրատեսակ մեկուսացման վիճակ ստեղծել քարոզչության ոչ պաշտոնական միջոցների համար: Բուն նախաձեռնությունը իրականացվել է հապճեպ, կիսատ-պռատությամբ, բոլոր հավաքագրվածները չէ, որ ստացել են ծանուցագրեր, իրենց առօրյայով ապրող մարդիկ անսպասելիորեն «մարդառոսի» են ենթարկվում սեփական բնակարաններում, փողոցներում, շուկաներում և այլ հասարակական վայրերում: Նույնիսկ տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, որոնք հատկանշական լինելով մեր ոստիկանության համար, նույնիսկ սրբապղծություն կարելի է համարել, երբ պատարագի ժամանակ շուրջկալվել է եկեղեցին և կամ մեռելոցի ժամանակ՝ գերեզմանատունը: Զորակոչից խուսափելու համար դարձյալ լայնորեն շրջանառվել է կաշառքը, և ժողովուրդը նույնիսկ խոսում է այն «տաքսու» մասին, որ սահմանված է, ասենք, զորակոչի կանչվողների տարբեր կատեգորիաների, օդանավակայանում ինքնաթիռ նստելու հնարավորության և այլ դեպքերի համար: Բնական է, որ այս մեթոդները չեն կարող չծնել ժողովրդի վրդովմունքը: Բայց թերևս ժողովրդի մեջ առկա տրամադրությունն ունի ավելի լուրջ դրդապատճառներ: Խոսքը հանրապետությունում ստեղծված բարոյական այն մթնոլորտի մասին է, որը ոչ միայն զանգվածային հիասթափություն ու անվստահություն է ծնել իշխանությունների նկատմամբ, պատճառ է դարձել քաղաքական կրավորականության, այլև ազդակ է հանդիսացել, որ ժողովրդի տարբեր հատվածների ու խավերի խորթացնում է սեփական պայքարից: Ցավոք, հիմքերից զուրկ չէ նաև այն տեսակետը, որ այս ձեռնարկմամբ իշխանու-

թյունները «ձեռքի հետ» փորձում են լուծել նաև ներքին քաղաքական ինչ-ինչ խնդիրներ: Այո, դյուրին չէ հայրենիքի պաշտպանությանն ու ազգային բանակի կազմավորմանը միտված իրադարձությունների մասին քննադատական դիրքերից խոսելը: Սակայն և չխոսելը, կեղծ պաթետիզմը չեն կարող թաքցնել՝ առավել ևս հարթել առկա թնջուկները: Այս ամենով հանդերձ, հարկ է, որ մեր բոլորի մեջ բարձրագույն գիտակցության և պատասխանատվության զգացում դրսևորվի ազգային ու պետական առաջնային հիմնահարցի նկատմամբ: Պարտականության կատարման ճանապարհին խոչընդոտ չդառնա ոչ մի առարկայական ու ենթակայական պատճառ, քանզի խոսքը վերաբերում է այնպիսի կարևոր հարցի, որպիսին է հայրենիքի պաշտպանությունը:

Թիվ 15, ապրիլ

ԳՈՅԱՔԱՐՇՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ԻՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ

Ազգային գաղափարախոսությունը մերժելու գաղափարախոսությունը ո՛չ նոր է, ո՛չ էլ անգամ նորոգված նոր հորջորջվող մտածողությամբ, որը համառորեն փորձում են փաթաթել հայոց վզին...

ՀՀ նախագահը ԳԽ ապրիլի 25-ի նիստի իր ելույթում հայ քաղաքական մտքի ներկա հանգրվանը բնութագրելով ազգային գաղափարախոսության և ազգային «համաձայնության հարաճուն արծարծմամբ» նշեց, որ այդ գաղափարները իրենց վեհությամբ ու խորությամբ հանդերձ կարևոր են թվում միայն առաջին հայացքից: Եվ չվարանեց ազգային համաձայնության հասկացությունը ընդամենը կեղծ քաղաքական կատեգորիա համարել:

Նախ՝ ինչպե՞ս կարող է վեհ ու խոր որևէ գաղափար կեղծ լինել, թեկուզ իբրև քաղաքական կատեգորիա: Խոսքն անշուշտ վեհ ու խոր գաղափարի շահարկման մասին չէ: Ամեն ինչ շատ հստակ է ասված: Փաստորեն նախագահը մերժում է ազգային համաձայնությունը, մերժում է ազգային գաղափարախոսությունը՝ այդ գա-

ղափարների վեհությամբ ու խորությամբ հանդերձ: Եվ կարևորում է ազգի գոյությունը, որն «ինքնին ազգային համաձայնության իրողություն է»: Ի՞նչ նկատի ունի պարոն նախագահը ազգի գոյություն ասելով: Կարծում ենք՝ գոյաքարշությունը, ազգի անդամների առնվազն 90 տոկոսի համաձայնությամբ, առանց խորհրդավորության ու միստիկայի քողի, առանց վեհ ու խոր գաղափարների... Ահավասիկ, տեսե՛ք, սովորե՛ք, ընդօրինակե՛ք...

Եվ սակայն նախագահը չի ժխտում գաղափարախոսությունն ընդհանրապես: Ո՛չ, գոյաքարշությունն էլ պետք է գաղափարախոսություն ունենա, որպեսզի չդադարի այդպիսին լինելուց: Եվ տեսլականներ էլ պետք է ունենա, իղձեր ու բաղձանքներ էլ, բայց անպայման՝ «համամարդկային»: Չի բացառվում, որ այս գաղափարի իրականացման վերջին հանգրվանում ունենանք «ամուր, ապահով, ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, ծաղկող մշակույթ և բարգավաճող տնտեսություն»: Կարևոր չէ՝ Հայաստան կկոչվի այն, Վեհաստան, թե՝ Խորաստան: Կարևոր չէ, թե ինչպիսին կլինեն այդ ապահովությունը, ինքնիշխանությունը և ժողովրդավարությունը, կարևոր չէ, թե ինչ մշակույթ և ում մշակույթը կծաղկի, և ինչպիսի տնտեսություն կբարգավաճի քաղաքացիական այդ հասարակությունում:

Ինչո՞վ պարզ, որոշակի և գործադրելի ծրագիր չէ, որը չի կարող կամ ինչպես ինքն է ասում՝ ի զորու չէ ծառայելու ազգի զարգացման և բարգավաճման խնդրին: Օրինակ, ասենք՝ քուրդ ազգին, եթե իհարկե քրդերը վայր դնեն զենքերը և դադարեցնեն արյունահեղությունը՝ 90 տոկոսանոց համաձայնության գալով թուրքերի հետ: Թե չէ՝ ազգային-ազատագրական պայքա՞ր, Դա՞տ, Պահանջատիրությո՞ւն...

Եթե այս չէ եզրակացությունը նախագահի ելույթից, մի կողմ թողած սահմանադրության հետ կապված հարցերը, և եթե հայ քաղաքական մտքին, հայ մտավորականությանը, հայ մտածողին առհասարակ և հայերեն մտածողին հատկապես չի մտահոգել ման-

կուրտացման իրոք պարզ ու որոշակի այս ծրագիրը, ապա Հայ դատը ծանրանում է նաև մեր խղճին:

Թիվ 17, ապրիլ

ՆԱԽԱԳԱՀԻ ՈՉ-ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միանգամայն ընդունելի է, որ ժողովրդավարական երկրում միևնույն իրողությունը կարող է տարբեր ընկալումներ և բացատրություններ ստանալ, բայց այնքան էլ ընդունելի չէ, երբ, մասնավորապես, ազգային կարևորագույն նշանակության հիմնահարցերին շարքային քաղաքացու ազատությամբ է վերաբերվում հանրապետության նախագահը: Այն էլ՝ Հայաստանի Հանրապետության, ուր և՛ օրենսդրական, և՛ «գործնական» առումներով նախագահն ունի հանրապետության ներքին և արտաքին քաղաքականությունը տնօրինելու բոլոր լիազորությունները: Բացի այն, որ որոշակի շրջանակներում «իմաստուն և հավասարակշռված քաղաքական գործչի» համարում վայելող նախագահը սրանով փաստում է փիլիսոփայական մտքին և քաղաքականության պատմությանն իր լավատեղյակ չլինելը, այլև, հերթական անգամ, չկարողանալով ճշտել իր տեղն ստեղծված իրավիճակում, ռազմավարական նշանակության երևույթը իջեցնում է առօրյա քաղաքական վեճերի ու քննարկումների մակարդակ, փորձելով դրանից բխեցնել խիստ անձնավորված մի եզրահանգում. «Հայ ժողովուրդ, ձգտումներիդ ղեկը շարունակիր վստահել միակ ընտրյալիդ, որովհետև միայն նա է քո անկեղծ բարեկամը»:

«Ազգային համաձայնության» գաղափարախոսությունը փորձում է հերքել այն նախագահը, ով շատ չանցած շնորհավորանքի խոսք պետք է հղի ՌԴ-ի նախագահին՝ «ազգային համաձայնության» ոլորտում ձեռք բերած կարևորագույն նվաճման ու «քաղաքացիական համաձայնության» պայմանագրի կնքման համար: Միայն այս իրողությունը ցույց է տալիս, որ «ազգային համաձայ-

նության» գաղափարի իրագործելիության կամ անիրագործելի երազանք լինելու տեսակետների շուրջ սկզբունքային վեճ վարելը նախագահի հետ՝ անօգուտ զբաղմունք է, որովհետև ակնհայտ է, որ նրան հետաքրքրողը ոչ թե մեկ ազգային գաղափարախոսության շուրջ ժողովրդին, մասնավորապես՝ ժողովրդի կարող ուժերին համախմբելն է, այլ իր նախագահական մականին անվերապահ կերպով հնազանդեցնելը: Որքան էլ չցանկանանք, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ նախագահ լինելու բարոյական կոչումն ու պարտավորությունը այդպես էլ չստիպեցին նրան հաղթահարել հատվածականությունը: Այլապես, որքան էլ անիրագործելի և վերացական թվային «ազգային համաձայնության» հասնելու առաջարկները, դրանց նկատմամբ նախագահի դրական վերաբերմունքը միայն ազգօգուտ նշանակություն կարող էր ունենալ մեր ժողովրդի համար այնքան բախտորոշ այս օրերին:

Հետաքրքրական է, թե «ազգային համաձայնության» գաղափարը պատմական ինչ հիմնավորումներով կհերքեր պատմաբան Լևոն Տեր-Պետրոսյանը: Մի՞թե «ազգային համաձայնության» արդյունք չէր Սարդարապատի հերոսամարտը, առանց որի ո՛չ Հայաստանի երեք իրարահաջորդ հանրապետությունները կլինեին և ո՛չ էլ Հանրապետության կառավարման նախագահական ձևը:

Թիվ 18, մայիս

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ

Խաղաղությունը համամարդկային բարձրագույն արժեք է, ուստի պատահական չէ, որ նույնիսկ պատերազմող ժողովուրդների աչքն ուղղված է դեպի խաղաղություն: Ճշմարտություն կա այն բանում, որ երբեմն որոշ ժողովուրդներ պատերազմում են իրական և մեծ խաղաղություն նվաճելու համար: Ուստի խաղաղությունն ունի իր գինը, որն անպայմանորեն պիտի վճարել, եթե անկեղծ և գերիշխող է նրան հասնելու ձգտումը: Սակայն, ինչպես համամարդկային յուրաքանչյուր արժեք, այնպես էլ խաղաղությունն իր որոշակի

դրսևորումը գտնում է ազգային արժեքների մեջ: Խաղաղասեր է ազգը, թե պատերազմասեր, դա որոշվում է ոչ միայն, իբրև այդպիսին, նրա էությամբ, այլև պատմական իրողությունների այն առարկայական ու ենթակայական դասավորությամբ, որոնք հնարավոր են դարձնում ազգի այս կամ այն կենսակերպը: Բնական է, խաղաղասեր չի կարող լինել այն ազգը, որը զրկված է իր գոյության և շարունակվելու համար անհրաժեշտ նվազագույն կենսադաշտից, որովհետև այդպիսի խաղաղությունը նրա համար հավասարազոր է մահվան:

Ազատագրական պայքարի դուրս եկած ազգի նպատակը ևս խաղաղության հասնելն է, բայց այնպիսի խաղաղության, որը կերաշխավորի նրա ապրելու իրավունքը հողագնդի վրա: Հասկանալի է, որ այդ դեպքում կա առնվազն մեկը, որի շահերին հակառակ է ազատագրական պայքարով նվաճվող խաղաղությունը, ուստի նա էլ պիտի գին վճարի՝ իրեն ձեռնտու խաղաղության հասնելու համար: Հենց այդպիսի իրավիճակներում էլ ընդգծվում է խաղաղության ազգային արժեքի գաղափարը:

Կան ժամանակներ, երբ խաղաղություն տենչում են ոչ միայն դրա համար արյամբ վճարող ժողովուրդները, այլև խաղաղության ու պատերազմի գլխավոր ռեժիսորները՝ քաղաքական գործիչները, բայց նրանցից շատերի համար ավելի հեշտ է պատերազմի տուրքը, քան թե... խաղաղության: Նման դեպքերում խաղաղության հասնելու վճռականությունը տվյալ քաղաքական գործչին ոչ միայն կարող է ցած գլորել իր բարձունքից, այլև խարանել ազգային դավաճանի կնիքով: Իհարկե, վաղ թե ուշ, խաղաղությունը պիտի հաստատվի, իսկ այն հաստատելու չափանիշներից մեկն էլ, հարկ է, որ լինի համամարդկային և ազգային մյուս արժեքը՝ արդարությունը:

...Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծման՝ ռուսական միջնորդական ծրագրով նախատեսվող խաղաղության համար պատրաստ են վճարելու մի կողմից՝ ԼՂՀ-ի և ՀՀ-ի, մյուս կողմից՝ ՌԴ-ի պետական քաղաքական այրերը, որով-

հետև նրանց կարծիքով միայն այդպես է հնարավոր հասնել իրական կայունության, իսկ Ադրբեջանի պետական ներկայացուցիչները, խաղաղություն հաստատելու անհրաժշտությունը գիտակցելով հանդերձ, պատրաստ չեն դրա համար անհրաժեշտ փոխզիջումներին, որովհետև այդ չի բխում խաղաղության՝ իբրև ազգային արժեքի, նրանց բաղձանքներից:

Թիվ 20, մայիս

ԵՐԿԱՐԱՃԻՏ ՀՈԽՈՐՏԱՆՔՆԵՐ

Որևէ պետության մասին դատելիս անհնար է շրջանցել հանրային կարգի պահպանման, բնակչության իրավական ապահովության, մարդու ազատության ու արժանապատվության հարգման չափանիշները: Դա կարևոր պայման է, որովհետև իրավական համակարգը այն գլխավոր սյուներից է, որի վրա հենվում է պետական կառույցը: Հասկանալի է, որքան ամուր ու հուսալի են այդ սյուները, այնքան ուժեղ է վերնաշենքը: Հասկանալի է նաև, թե ինչու ցանկացած պետություն նույնիսկ հնարավորություններից ավելին է անում ուժեղացնելու իր բանակն ու ոստիկանությունը: Եվ պետական ու ազգային շահերի իմաստով ըմբռնելի ու ընդունելի են այդ նպատակի համար միջոցներ հայթայթելու անգամ չափազանցված ջանքերը: ՀՅԴաշնակցությունն էլ է լավ հասկանում դրա կարևորությունը և երբևէ խնդրո առարկա չի դարձրել կամ շահարկել այդ կարգի որևէ հարց: Սակայն այլ է հիմնահարցերի նկատմամբ մեր մտահոգ վերաբերմունքը, որը, մեղմ ասած, միշտ չէ, որ ճիշտ է հասկացվում: Այդ դեռ իր հերթին: Իսկ ինչ անուն տանք ընդդիմության նկատմամբ դրսևորվող հայոց իշխանապետերի այն վերաբերմունքին, որն արդեն էություն է դառնում: Կամ՝ ինչ անուն տալ, երբ ամեն լավ բան, որ վերաբերում է Դաշնակցությանը, արժանանում է անպատճառ ժխտելու ատելավառ այն մոլուցքին, որով վարակվել են գրեթե բոլոր պետական այրերը՝ կարծես իբրև պայման նոր աթոռներ ստանալու, կամ առնվազն ունեցածը պահե-

լու: Գուցե գոյություն ունի մի այդպիսի ներքին օրենք, եթե այդ ամենը սոսկ ստրկամտության ու հաճկատարության արդյունք չէ:

Ո՞վ ազնվություն ու քաջություն ունեցավ մի անգամ գոնե ճշմարտությունն ասելու Դաշնակցության մասին, դույզն իսկ չնահանջելով գաղափարական իր դիրքերից: Շատ պարզ պատճառներով դա ակնկալվում էր մեր ուժային նախարարությունների պատասխանատուներից... Եվ սակայն հակառակը եղավ: Ասվեց այլ բան, ասվեց քսի տալու պես, ինչպես է ժողովրդական առածում: «...Եթե հնարավորություն ունենային այդ կուսակցությունները (հեղափոխական), արդեն արած կլինեին և ոչ մի բանի առաջ կանգ չէին առնի: Իրենք այդ ուժը չունեն: Մենք անպայման այդ հնարավորությունները ունենք, որ կասեցնենք ամենաթեթև, ամենաուժեղ ընդվզումները: Ես կարծում եմ, ի սկզբանե դա բացառված է, որովհետև իրենք շատ լավ են հասկանում, որ պետության հետ գործ ունեն և ուժեղ պետության հետ»: Ահա այսպիսի «քաջություն և ազնվություն» մեզ հրամցրեց ուժեղ պետության ուժեղ նախարարը իր ուժեղ հեռուստաելույթով: Իսկ մեզ մնում է լռելով վստահեցնել, որ Դաշնակցությունը չի անսա երկարաճիտ այդ հոխորտանքին ու մարտահրավերին և հենց հեղափոխականորեն թույլ չի տա, որ այս տարաբախտ հողի վրա հայի արյուն հեղվի:

Թիվ 22, հունիս

ՎՃՌՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

Վերջին մեկ-երկու տարում և՛ մեր, և՛ այլոց համար համոզմունք դարձավ, որ իրավիճակները ղարաբաղյան ճակատներում և Ղարաբաղի շուրջ ծավալվող դիվանագիտությունը սերտորեն փոխկապակցված և փոխպայմանավորված երևույթներ են: Այս տրամաբանությանն էր անշուշտ ենթակա նաև այն «հարաբերական անդորրի» վիճակը, որ տիրապետեց անցնող մի քանի ամիսներին, երբ Ռուսաստանը վճռականորեն ստանձնեց հակամարտության

հանգուցալուծողի դերը: Եվ իհարկե, այս տրամաբանության շրջագծից դուրս չեն հակամարտության գոտում եղած ու զարգացում ապրող այն իրողությունները, որոնց արդյունքում կհաստատվի հետևյալ ըմբռնումներից որևէ մեկը. ա) միայն ռուսական միջնորդական ծրագիրն է ունակ լուծելու հիմնահարցը, բ) միայն ԵԱՀԽ-ի ծրագրերի համադրմամբ է հնարավոր հասնել խաղաղության: Վերջին դեպքում գոյություն ունեն մի շարք գուցե ոչ էական «մանրամասներ», որոնք գործողությունների ժամանակացույցի գործադրման դեպքում ձեռք կբերեն էական նշանակություն: Ի դեպ, նման իրողություններ ծագելու են նաև առաջին երկու տարբերակներից որևէ մեկով խնդրի կարգավորման փորձի դեպքում: Տարբերակների մրցակցության արդյունքում, որ նախաձեռնությունը բախվելով եղած արգելքներին փշուր-փշուր կգա և որը կքանդի պատը, դեռ ճշգրտված չէ, բայց և հստակ է, որ տարբերակների թիկունքում կանգնածներից յուրաքանչյուրը փորձում է ցույց տալ, որ իր առջև եղած խոչընդոտները շատ էլ ծանրակշիռ չեն, քանի որ դրանցից որևէ մեկի անհեռանկարայնության կասկածն իսկ կվարկաբեկի ու մեծապես կարժեզրկի վերջինին: Ակնհայտ է մեկ բան, որ դիվանագիտական արտաքուստ խաղաղ գործընթացների թիկունքում տեղի է ունենում կոշտ պայքար: Պայքար, որ վճռական բախում է ժամանակացույցների, սկզբունքների, ուժերի ու գերակշռությունների: Պայքար, որի ազդեցությունն ու նշանակությունը դուրս է գալիս խնդրի լոկալ շրջանակներից և իր վրա է կրում այլ օջախներում տեղի ունեցող դիմակայությունների արձագանքը: Եվ իրողությունների ու զարգացումների վերը ներկայացված տրամաբանությունը հուշում է, որ այս անգամ ևս փոխկապակցությունների ու փոխպայմանավորվածությունների օրենքով դիվանագիտական ճակատից շիկացած մթնոլորտը հերթական անգամ կարող է քշվել ռազմական գործողությունների ճակատ: Համենայն դեպս, դրա նշաններն առկա են: Եվ սակայն հստակ է, որ պայքարը թևակոխել է հաղթական ավարտի հանգրվան, և մեծագույն զոհողություններով ձեռքբերումը չպետք է վտանգվի դիվանագիտական խաղե-

ռում: Ժամանակն է նաև անդրադառնալու Լեռնային Ղարաբաղի՝ որպես հանրապետություն, գոյության իրողությանը, ինչը մի դեպքում փաստականորեն ճանաչվում է, այլ դեպքերում անհնարին է դարձել ժխտելը:

Թիվ 25, հունիս

ՃԱՆԱՉԵԼ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ՇԱՀԸ

Եթե փորձենք ինքն իր շուրջ պտտվող մեր սեփական եսից քիչ առանձնանալ ու կողքից դիտել մեզանում կատարվողը, գուցե շփոթ առաջանա, թե իրականում որտե՞ղ և ինչպե՞ս է նախանշվում մեր վաղվա օրը և նույնիսկ՝ ապագան: Օրինակ, եթե առանց երևույթների խորքը թափանցելու, պարզ տեղեկատվության դասդասմամբ փորձենք ոլորտ առ ոլորտ գնահատել Ռուսաստանի Դաշնության ռազմական, տնտեսական, գիտական ու գիտաարտադրական, հետևաբար և՝ քաղաքական կշռի ավելացումը հանրապետությունում, ապա արդյունքում չի՞ ստացվի, որ քիչ ավելի այլ պատկերացումներ ունենք հանրապետության և նրան հատկանշող իրողությունների վերաբերյալ, քան դրանք որպես այդպիսիք գոյություն ունեն իրականում:

Հայտնի՞ է արդյոք, թե մեր ու մեզանում զարգացող իրողությունների վրա ինչ չափով են ազդեցություն թողնում օտար ուժերն ու տերությունները քաղաքական և այլ ներթափանցումների շրջանակում: Իսկ տպավորություն չի՞ ստեղծվում սրանից, որ կարծես թե ներքին կյանքում հաստատված միտում կա՝ թաքցնելու ժողովրդից իրողությունները, որոնք արտաքին ու ներքին ազդակների իրական ներգործությամբ են պայմանավորված և ավելի քիչ հրամցվող պաշտոնական և նույնիսկ անպաշտոն քարոզչությամբ: Եվ այս ամենն այն դեպքում, երբ պետականության կերտման բախտորոշ շրջան ենք ապրում, այն դեպքում, երբ ազատագրական պայքարի պատմափուլ ենք թևակոխել:

Ուղղակի ու անուղղակի ձևերով ու միջոցներով, սեփական լծակներով և անուղղակիորեն այդ ազդակներն ու գործոնները յուրատեսակ մագնիսական դաշտեր են փորձում ստեղծել մեր շուրջն ու մեր իրականության մեջ, այն մեթոդներով, որոնք տակավին անհայտ կամ քիչ են հայտնի մեզ, իսկ իրենց հեղինակների համար փորձառության հաջող շրջան են անցել տարիներ և տասնամյակներ առաջ: Կա՛մ մեզ կհաջողվի տնօրինել սեփական «դաշտերը» և կա՛մ այդ նույնը՝ նրանց: Բայց սրանից չի՞ հետևում, թե որևէ դեպքում, երբ այս կամ այն կերպ որևէ անցանկալի տարբերակ կիրականանա, մենք գոնե արդարացուցիչ հանգամանքներ մատնանշելու բարեբախտությունը կունենանք:

Չենք ունենա, քանզի ընդհանրապես որևէ կորուստ, եթե նույնիսկ բացատրելի է, երբեք հանդուրժելի չէ: Հետևաբար պետք է զգոն լինենք, կարողանանք ճանաչել ու պաշտպանել մեր շահը: Ու այդպես միշտ՝ նույնիսկ ամենաանամպ օրերին:

Թիվ 26, հուլիս

ՇԵՂՎԵՆՔ, ԲԱՅՑ ԴԵՊԻ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

Երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը, անկախության կարգավիճակում հայտնված հանրապետությունների առջև ծառացավ հետագա գոյատևման ու զարգացման ուղիների ընտրության խնդիրը: Եվ շատ չանցած պարզ դարձավ, որ տվյալ պարագայում որոշիչ է լինելու տնտեսական խնդիրը, որով էլ այս կամ այն չափով պայմանավորվելու են գուցե թե մնացած բոլոր հիմնահարցերը: Ավելորդ է նշելը, որ, հետևաբար, համապատասխան գիտական լրջությամբ պիտի ուսումնասիրվեին ու նախագծվեին տնտեսական քաղաքականության ռազմավարությունն ու մարտավարությունը: Իսկ ի՞նչ արվեց իրականում մեզանում: Հարցի պատասխանն այս դեպքում չփնտրենք տնտեսագիտական խոր վերլուծությունների մեջ, այլ դատենք՝ հիմք ընդունելով հանրապետության ներկայիս տնտեսական պատկերը: Դատենք, նկատի առնելով մեր և ուրիշների շա-

հագրգռությունները, մեր և ուրիշների կախումները նրանցից և մեզանից:

Մինչ հերթը մեզ հասնելը աշխարհում շատ տնտեսական համակարգեր էին կառուցվել և շատերն էին քանդվել, անկախ նրանից, թե որքան էին մեր գիտելիքներն այդ ասպարեզում, և մեծապես պայմանավորված նրանով, թե որքան էին դրան իրազեկ «ուրիշները»:

Ռուսաստանի մի քանի տարվա տնտեսական դեգերումներից հետո տեղական պահանջներին խորթ ծրագիր իրականացրած «շոկային բարեփոխիչների» հասցեին քննադատության այսօրվա կարկուտ տեղացողները, համարելով իրենց երկրի տնտեսությունը քայքայված, «մեղավորներին» հայտարարում են դիլետանտներ, դավաճաններ, օտար ուժերի կամակատարներ և այլն: Իրենց խնդիրներն են իրենց դատողություններն ու կրքերը: Դատողությունները մի կողմ, բայց կրքերը մեզ ու մեր տնտեսությանը հազիվ թե օգուտ տան: Պարզապես նորից հարց տանք. 70 տարվա ընդմիջումից հետո վրա հասած հերթական «շոկը» նույնիսկ շուկայի ու «լիբերալիզացիայի» գայթակղիչ կարգախոսների ներքո, արդյո՞ք այն էր, ինչը որ հատկապես անհրաժեշտ էր անկախության, պետական շինարարության, տնտեսական մեկ կացութաձևից մեկ ուրիշին անցում կատարող մեր երկրին:

Արդյո՞ք այդ ուղին արտահայտում էր մեր տնտեսական առկա իրողությունները, տեղական առանձնահատկությունները, ժողովրդի աշխատանքային ու կենցաղի, մշակույթի առանձնահատկությունները: Վերջապես՝ արտահայտո՞ւմ էր արցախյան պատերազմի թելադրանքներն ու արտաքին քաղաքականության ձևավորման տրամաբանության հետ ներդաշնակությունը: Դարձյալ չհակվենք գիտական պարզաբանումների կողմը, այլ դատենք եղած արդյունքներով: Բայց սա էլ եթե «հիվանդին» մխիթարություն կարող է լինել, որպես դեղ ու դարման հազիվ թե ծառայի:

Ուրեմն նայենք մեզ, երկրի լայնություններին ու մեր պատմության խորքերը և փորձենք առաջ նայել ու ընթանալ, կողմնորոշվե-

լով մեր կենսափորձի, մեր ձգտումների և մեր «շոկերի» շրջանակում: Քանզի որոշ դեպքերում սխալը կես ճանապարհից ուղղելն էլ փրկություն է:

Թիվ 28, հուլիս

ՀԱՋԱՐ ԵՎ ՄԵԿ ՍՈՒՏ ՈՒ ԿԵՂԾԻՔ

ՀՀ ԳԽ-ն 1994 թ. հուլիսի 6-ին վերջապես հիշեց, որ պաշտոնաթերթ ունի, որի խմբագրին, համաձայն 1990 թ. սեպտեմբերի 6-ի որոշման, ժամանակավորապես է խմբագիր հաստատել և, համաձայն նույն որոշման 6-րդ կետի, ՀՀ մամուլի մասին ընդունվելիք օրենքին համապատասխան, պետք է ճշտի օրաթերթի կարգավիճակը: Երանի չհիշեր: Հայոց խորհրդարանը այդ օրը գերազանցեց ինքն իրեն բոլոր առումներով, ավելի ճիշտ՝ բոլոր չափումներով՝ լայնքով, երկայնքով, բարձրությամբ, խորությամբ և մանավանդ տարողությամբ, թեև ԳԽ մամուլի և լրատվության հարցերի հանձնաժողովի նախագահի փիլիսոփայական «խորիմաստ» ընդհանրացումներից մեկը բոլոր այդ չափումներից դուրս մնաց: «Ոչ մի կերպ չենք կարողանում այդ թերթը համարել մերը և ոչ մի կերպ չենք կարողանում չհամարել մերը»,- սեպեց հանձնաժողովի պարոն նախագահը: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Քննարկումը, որին անդրադարձավ օրաթերթը «փայլուն» մի հրապարակմամբ, նախորդեց «ՀՀ» 1000-րդ համարի լույս ընծայմանը և այդ կապակցությամբ հանրապետության ղեկավարության շատ հուզիչ վերաբերմունքին:

Մի առավոտ կանուխ, օրաթերթի ժամանակավորապես խմբագիրը արթնացավ բոլորովին տարբեր, անտարակույս: Ավելի ճիշտ, քնքշորեն արթնացրին՝ ավետելով սիրելի նախագահի այցելությունը խմբագրատուն՝ թերթի հոբելյանի առիթով: Նաև՝ ԳԽ նախագահի: Նաև՝ վարչապետի: Նաև՝ ԱԳ նախարարի: Եվ մանավանդ՝ ՆԳ նախարարի: Դե արի ու դիմացիր: Խորհրդարանական դա-

տավարությունից հետո պատկերացրեք ինչպիսի՞ պատիվ: Էլ կարգավիճակս որն է: Դրանից էլ բարձր կարգավիճա՞կ:

Բայց ավա՜ղ, այս արևի տակ ամեն ինչ էլ ժամանակավոր է... Ժամանակավորապես խմբագիրը դրանում կրկին համոզվեց, երբ թանկագին հյուրերը մեկնեցին... Եվ սակայն, մեկնելուց առաջ նախագահը սիրելի իր թերթի սիրելի իր խմբագրին պատգամներ թողեց: Իսկ պատմությանը՝ թանկագին մի տող. «Հազար համարն արդեն իսկ պատմություն է. ոչ միայն թերթի, այլ նաև մեր ժողովրդի, մեր պետության պատմությունը»: Ինչով արժանի չէ հավերժանալու թերթի ճակատին, «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»-ի տեղում: Իսկ թե իրականում «ՀՀ» «հազար համարը» ում պատմությունն է և ինչ պատմություն է, թող դատի բարեմիտ ընթերցողը, և նրանց, ովքեր «կուսակցական ծնծղաների բերած «փառքից» արդեն իսկ կուրացած հայրենասերի ու ազգի ճակատագրով մտահոգվածի փողոցային բամբասողի և էլ չգիտենք թե ում և ինչի դիմակներ հագած հսկա մի հանդես են սարքել», ժամանակավոր խմբագրի բառերով ասած, և դեռ «ՀՀ»-ին էլ անուղղակի խորհուրդ ու դաս են տալիս, թող դատի Աստված, եթե կա, և դեռ հանդուրժում է հազար ու մեկ գիշերվա այս մեղսությունը:

Թիվ 29, հուլիս

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ «ԱՆԿԱԽ» ՄԱՄՈՒԼԸ ԿԱՄ ԻՆՉՈՒ Է «ԴՐՈՇԱԿԻ» ԹԱՐՄ ՇՈՒՆՉԸ ՁԳԼԽԵԼ ՀԱՅՐԵՆԻ ԼՐԱԳՐՈՂԻՆ

Խոսքը «Լրագիր» օրաթերթի մի հրապարակման մասին է, որի հեղինակը միամտորեն կարծում է, թե Դաշնակցության պաշտոնաթերթում «նոր մտածողության» որոմ սերմանելու պարարտ հող է գտել:

Իզուր չեն ասում՝ եթե ուզում ես դիմացինիդ հիմարացնել, գովաբանիր: Սակայն, հայրենի մեր լրագրողը, բարեբախտաբար, չգիտի, թե ով է դիմացինը: Հակառակ դեպքում տպավորապաշտա-

կան իր զեղումները կպահեր հանձնատուներին, իսկ Դաշնակցությանը սիրո մի այլ խոստովանություն կաներ և ոչ թե. «Տպավորությունն այնպիսին է, որ ընթերցում ես ազատ, անկուսակցական մամուլի օրգան և ոչ թե գաղափարների ու արժեքների կուռ համակարգ ունեցող կուսակցության պաշտոնաթերթ»:

Եթե անգամ հայրենի հարգարժան լրագրողի տպավորությունն այդպիսին է, ապա ուր մնաց տրամաբանությունը: Այդ դեպքում իրեն ազատ, անկախ, անկուսակցական հորջորջող «Լրագիրը» ինչով Դաշնակցության պաշտոնաթերթը չէ:

Այո, Դաշնակցության սրբություն սրբոց համարվող այս պարբերականում, ինչպես դուք եք ասում, հայտնվել են նոր անուններ և անգամ հեղինակներ, որոնք չունեն կուսակցական պատկանելություն, սակայն մի շտապեք ծափահարել, դրանից «հիմարության» ականջները չեն երկարի, որքան էլ փորձեք շոյել, որովհետև քաշել չեք կարող:

Թե հատկապես ովքեր և ինչու են «նոր մտքեր ու տեսական մշակումներ» ծախել «Դրոշակին», մի կարծեք, թե Աթենքում չգիտեն: Ձեր առանձնահատուկ ուշադրությանն արժանացած հրապարակումները (այդ ցանկում հավանաբար Լ.Ա.-ն, անշուշտ, ավելի ընդարձակ ստորագրությամբ) ոչ թե բազմակարծության հող են ստեղծում, այլ՝ այլակարծության, որը տվյալ պարագայում կոչվում է ապազգայնություն: Ոչ թե հայ ժողովրդի ընդհանրական ապահովության ու պատմական իրավունքների պաշտպանության մտահոգությամբ (անշուշտ մեկ-երկու բացառությամբ), այլ հանրային կարծիքը թունավորող, գաղթաշխարհի հայությանը պառակտող «տեսակետներ» են ներկայացնում, որոնք մատուցվում են «նոր մտածողության» տարազով և որոնք անտարակույս «Դրոշակում» տեղ են գտել professional նկատառումներով: Մնացածը «Դրոշակն» ինքը կասի, պարզապես մենք այստեղ ձեզ հետ միասին Հայաստան ենք և իրար չճանաչելու իրավունք չունենք: Իսկ ինչ վերաբերում է, ինչպես դուք եք ասում, տասնամյակներով մշակված կարգապահական կուռ մեխանիզմներ ունեցող կազմակերպությա-

նը, ապա վստահ եղեք, որ նա գիտի ինչ ուղղությամբ է տանելու իր առագաստները՝ «Դրոշակի՞», թե՞ իր մեկ այլ պարբերականի շնչով: Այնպես որ մի շտապեք ծափահարել երաժշտությունը դեռ չավարտված:

Եվ վերջապես, այո, մեր կազմակերպությանը բացառվում են չհամաձայնեցված և չարտոնված քայլեր, անգամ եթե դրանք արվում են, ինչպես դուք եք ասում, «առանցքային գործիչների կողմից», սակայն բացառվում են ոչ թե կանոնադրորեն, այլ գաղափարական համոզումով ու դաշնակցական էությամբ: ՀՅԴ-աշնակցությունը իր անդամներից և ոչ մեկին չի պարտադրում որևէ հանգերգ: Ամեն ոք ազատ է իր ձայնով երգելու, ասելու և գրելու իր ուզածը, գործելու այնպես, ինչպես ինքն է նպատակահարմար գտնում, վստահ, որ չեն հնչելու կեղծ նոտաներ, և ունկնդիրն ինքը չի հանդուրժելու ֆալշը: Այս դեպքում միայն սուլոցների փոխարեն ծափահարությունը ներելի է:

Բացառվում է նաև կուսակցության ծրագրին, էությանը, սկզբունքին ու դավանանքին հակառակ այն ընթացքը, որը այդպես փայփայում է Հայաստանի «անկախ» մամուլը:

Թիվ 31, օգոստոս

ԱՅՈ՛, ՀԱՅ, ԱՅՈ՛, ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ԱՅՈ՛, ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՉԻ ԾՌՎՈՒՄ ՄԻ ՕՏԱՐ ՈՒԺԻՑ

Կարելի է փոխել հագուկապուստը, մազերի գույնը, անգամ՝ աչքերի գույնը: Կարելի է փոխել անգամ սիրտ, երիկամ, արյուն... Սակայն երբեք՝ էություն, թեև սրանք էլ էության մաս են կազմում: Կարելի է միայն փոխել էության դրսևորման ձևերը, դարձնել քաղաքակիրթ, ժամանակահունչ և այլն: Բայց ոչ ավելին: Ավելին կնշանակի նոր Է, այսինքն մի ուրիշ գոյություն, որն անկախ նրանից՝ որոշ գծեր պահպանել է իր նախորդից, թե՝ ոչ, քաղաքական լեզվով ասած՝ նույն սուբստանցիան չէ: Հետևաբար գոյության այլ

խնդիրներ ու նպատակներ ունի: Ուրեմն փոխեք նաև ծննդյան վկայականը, այս դեպքում գրանցումը փոխեք, անունը, թեկուզ Մասիս դրեք կամ՝ Սիս, ամորձատեք կամ թլփատեք, սովորեցրեք պառլամենտարիզմի խաղի կանոնները և բազմեցրեք խորհրդարանի առաջին աթոռին՝ ի փառս հայոց անկախ պետականության: Եվ դա կլինի ձեր ուզած կուսակցությունը Աստծո գառի պես: Այլապես ստեղծեք մի ուրիշ կուսակցություն: Ձեր իրավունքն է: Մեր իրավունքն էլ մերը պահելն է: Այնպիսին, ինչպիսին եղել է, ինչպիսին կա: Այո՛, Հայ, այո՛, Հեղափոխական, այո՛, Դաշնակցություն, որին ոչ ոք չի կարող իր կամքը թելադրել, ինչը համառորեն փորձում է անել հանրապետության նախագահը՝ չխախտել իր իսկ «պաշտած» ժողովրդավարական սկզբունքները, որով այնպես մագթաղինաբար գլուխներ են յուղում:

Ստեղծեք ձեր կուսակցությունը ձեր ուզած նյութով և մի փորձեք ուրիշի պատերից քարեր հանել... Սա մի կառույց է, որի թե՛ հիմքերը, թե՛ պատերը շատ են ամուր ձեր քլունգների համար: «Սա մի կազմակերպություն է, որ բռնական չէ, սա տիրոջ հարկադրանքը չէ ստրուկի վրա. սա չի ծագում մի օտար ուժից, այլ բխում է սեփական գիտակցությունից ու կամքից: Սա մի ուխտ է, որ ազատ մարդն ազատորեն դնում է ինքն իր համար, իր ազատ կամքով»:

Այո՛, Հայ, այո՛, Հեղափոխական, այո՛, Դաշնակցություն, որը չի ծագում մի օտար ուժից, ում թելադրանքով ստիպված է լինելու մերժել ազգային գաղափարախոսությունը, հայ ժողովրդի պատմական իրավունքները, պատմությունը կեղծ գիտություն համարել, ժողովրդին՝ ամբոխ, ամբոխին՝ ժողովուրդ, նայած երբ, ինչու...

Մի զարմացեք, եթե վերջին ձեռքսեղմումներով ոգևորված լեզվաբանական նոր հայտնագործություններ էլ մեզ հրամցվեն:

Սակայն մտահոգիչն այդ չէ: Նույնիսկ ամենաժխտողական, ամենակարծր հակադրությունն ավելի վտանգավոր չէ (երբեմն անգամ օգտակար է), քան կեղծ գովեստներով ընդդիմության զգոնությունը բթացնելու փորձերը:

Դատելով հանրապետության նախագահի վերջին ելույթից, հակադաշնակցական պայքարի ռազմավարության մեջ կարևոր փոփոխություններ են սպասվում: Համենայն դեպս, սկսել են քաղցրաբլիթներ խոստանալ, բայց անշուշտ՝ պայմանով...

Թիվ 32, օգոստոս

ԻՆՉ Է ԹԵԼԱԴՐՈՒՄ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ

Ռազմական ամփոփագրերի լեզվով արտահայտվելու դեպքում պիտի ասենք, որ Հայաստանի ներքին կյանքում ևս շարունակում է պահպանվել հարաբերական անդորրը: Խորհրդարանը եզերող ճաղերից անդին «արձակուրդային» լռություն է, կառավարական դռների հետևում՝ սովորական՝ մեզ անհայտ գործընթացներ, ինչ-որ տեղ, հեռուներում միջազգայիններն ու անմիջականները նույնպես «սովորական» բանակռիվ-բանակցությունների մեջ են, ԼՂՀ կարգավիճակի և տարածքային ամբողջականության պարադոքսի շրջանակում: Մնացածներս զբաղված ենք դոլարա-դրամային մի պահ հանդարտված լարի վրա, սպասվելիք ձմռան հոգսերը՝ ըստ հնարավորի հոգալու վազվզուքով: Եվ հարաբերական ընդհանուր հանգիստը հարաբերականորեն խախտում է հասցեատեր ու «անկախ» քարոզչությունը, որ չգիտես ավելի շատ օրվա կնճիռնե՞րն է փորձում արդուկել, թե՞ ընթացքի մեջ դնել հանուն վաղվա իշխանության տարվելիք նախընտրական պայքարը: Որոշակի նկատառումներից ելնելով, այս առկա մթնոլորտը ենթարկվում է Հանրապետության նախագահի ամերիկյան շրջագայության հեռուստալրատվական արձագանքի ազդեցությանը, որի գործնական իմաստը քիչ դժվար է տեսնել, իհարկե, շքերթային քողի ետևում, բայց նաև, անշուշտ, դա չէ գլխավորը: Գլխավորն ու մտահոգիչը քիչ դժվար է դարձել ընկալելը մեր օրերի իրական ու որպես իրողություններ կայացվող ենթատեքստ-ենթաշերտերի արանքում, թեև դրանով հանդերձ վերջիններս չեն դադարեցնում իրենց յուրատե-

սակ տրամաբանական զարգացումը: Բայց հենց մեր օրերի հարաբերական կերպը բազմաթիվ հարցականներ է ծնում, որոնք եթե այսօր դեռ ցայտունորեն չեն դրսևորվում, վաղը՝ Աստված տա, ոչ ուշացումով, խոսել են տալու իրենց մասին: Օրինակ, այն մասին, թե որպիսի արդյունքների են հանգեցնելու ներքնապես քողածածկ, արտաքնապես շքերթային գործընթացները: Ընդամենը 1-2 ամսից ձմռան շեմին իրեն զգացող Հայաստանի բնակիչն ի՞նչ հիմնահարցերի առաջ է կանգնելու:

Վերջապես ավարտի են հանգելու հեռուների, բայց ոչ օտար ղարաբաղա-ադրբեջանական դիվանագիտական գործընթացները, որոնց ներկայիս արդյունքներից անթաքույց գոհ են ադրբեջանցիք, մտավախ են ղարաբաղցիք, և ցուցադրականորեն «անմասն» են հայաստանյան իշխանությունները: Իր սովորականության և հարաբերականության մեջ մտահոգության ջիղը թմրեցնող գործընթացները վաղը չե՞ն մատնի մեզ, եթե հանկարծ պարզվի, որ չափազանց անցանկալի, բայց և կատարված իրողությունների առաջ ենք հայտնվել: Պիտի այսօր մտահոգվել այս հարցով, որ սարքովի ընդարմության արդյունքում վաղվա մեր սթափվելը հանկարծ չափից ավելի ուշացած չլինի:

Թիվ 34, օգոստոս-սեպտեմբեր

ԿԻՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՂ ՈՒ ՊԱՀԱՊԱՆ

Ամեն մի ժողովուրդ ժամանակի հոլովույթում ձեռք է բերում իր ինքնատիպ դիմագիծը, իր տարբերիչ հոգեկան կերտվածքը: Այս պարագաների մեջ ոգի է առնում ժողովուրդների աշխարհընկալման ու կենսակերպի ազգային բնույթը:

Ազգային բնույթ՝ զերծ օտար բնազդներից, տոգորված քաղաքակրթության լույսով, չափաբերված՝ որպես տեսակ շարունակվելու, հարատևելու տիեզերական իմաստությանը:

Այս ճշմարտության արարման ու պահպանման մեջ ի սկզբանե մեծ դեր է ունեցել կինը: Կինը, որն ինքը Սերն ու Գեղեցկությունն է, հոգեկան անդորր ներշնչող նվիրական անձը, կինը, որը Հայրենիքի ցոլանքն է նոր աշխարհ եկած զավակի աչքերում: Նայենք մեր պատմությանը՝ մշուշոտ ժամանակներից մինչև մեր օրերը: Երախտիքի ի՜նչ խոսքեր են պետք՝ հատկանշելու նրանց վարքը՝ Հայությունը որպես համամարդկային արժեք կերտելու և փառավորելու խնդրում:

«Կինը տան ներսի պատն է»,- ասում է ժողովրդական իմաստախոսությունը: Սա վկայում է հայ ընտանիքի ամրությունը՝ խարսխված համերաշխության, կարգ ու կանոնի, ավանդապահության վրա: Սակայն ճակատագրի դաժան բերումով քի՞չ է եղել, որ հայ մայրը դառնա նաև «դրսի պատ», կռվի մեր ազատամարտի դաշտերում: Օրինակները շատ են ու հիմա էլ կան՝ թեկուզև Արցախի լեռներում: Օրհնություն ու փառք նրանց:

Քաղաքակիրթ աշխարհում վաղուց ի վեր վերացած է տղամարդու և կնոջ միջև խտրական տարբերությունը: Անգամ ասիական որոշ երկրներում, ուր գեղեցիկ սեռը դարերով դիտվել է սոսկական գոյություն, այսօր պետական ղեկը հայտնվել է կանացի ձեռքերում: Մեր իրականության մեջ ևս հայ կինը ստանձնել է հաստատական դեր: Սակայն իրողությունները վկայում են, որ այդ դերը բավարար չափով ակտիվ և բավարար չափով գնահատված չէ: Պատճառն, անշուշտ, հանրապետության ընկերային-քաղաքական օրավուր խորացող ճգնաժամն է, երբ ժողովրդի վզին դրված անտանելի լուծը տղամարդու հետ միասին ստիպված է տանել նաև կինը:

Իսկ մեր տան ներսի պա՞տը, իսկ մեր ազգային բնույթի ամենօրյա արարումն ու հսկո՞ւմը: Հիշենք, որ ոչ մի ուրիշ էություն չի կարող փոխարինել հայ կնոջը: Ոչ թե նրա համար, որ նա անփոխարինելի է, այլ՝ որ պարզապես հայ կին է:

Թիվ 35, սեպտեմբեր

ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԻՍԿ Ի՞ՆՉ ԳՆՈՎ

Ադրբեջանա-ղարաբաղյան բանակցությունների մեկշաբաթյա ընթացքից հետո բանակցող կողմերին միանալու համար Մեշչերին մեկնեցին Ադրբեջանի, Ղարաբաղի և Հայաստանի բարձրագույն իշխանության ներկայացուցիչները: Դժվար է ասել, մեկնեցին, որովհետև վաղօրոք այդպե՞ս էր որոշված, որովհետև բանակցությունները փակուղի են մտել և գործընթացը փրկելու անհրաժեշտությո՞ւն կա, որովհետև միջնորդ ռուսական կողմը դրանք իրենց հանգրվանային փուլին հասցնելու կտրուկ պահանջնե՞ր է ներկայացրել, թե՞ որևէ այլ պատճառով: Դժվար է ասել նաև, թե բանակցությունների խոհանոցից միտումնավորությամբ կամ ոչ միտումնավոր արտահոսող կցկտուր տեղեկատվությունը դարձյալ որոշակի միտումների արդյունք չէ՞ արդյոք և որոշակի նպատակներ չի՞ հետապնդում: Գուշակելը դժվար է, քանզի, ինչ-ինչ նկատառումներով և հայտնի չէ, մեկ-երկու, թե բոլոր կողմերի շահերից ելնելով, նաև որոշ հասկանալի պատճառներով՝ բանակցությունների ամբողջական ոգին ու ընթացիկ հարցերի մանրամասները նպատակահարմար է նկատվում թաքցնելը:

Սակայն անորոշությունները եթե չեն էլ ավելացնում, ապա չեն ցրում մտավախությունները, որոնք բխում են հակամարտության կարգավորման հարցում եղած նախնական պայմանադրություններից: Պայմաններ, որոնցից ոչ ձեռնտու շեղումների դեպքում ադրբեջանցի պաշտոնյաները «սպառնում են», ասենք, ևս 50 տարի շարունակել պատերազմը: Իսկ մինչ այդ և հենց բանակցություններին զուգահեռ վերսկսվում են բուն Հայաստանի տարածքի ռմբակոծումները, հանրապետության սահմանամերձ տարածքում իրականացվում է մեկ տասնյակից ավելի զոհ խլած ահաբեկչական գործողություն և, որ առավել էական է՝ շարունակվում է հակամարտության սահմանագծով ադրբեջանական ռազմուժի հզորացումը: Ուրեմն դարձյալ ու դարձյալ անհրաժեշտությունը ստիպում է

հարցնելու, թե որո՞նք են բանակցությունների երաշխիքները: Եվ հետևաբար, օր առաջ հակամարտության հաղթական ավարտը կանխագուշակող Հայաստանի իշխանությունների ձեռք թափ տալու ժեստերը ի՞նչ հիմքերից են բխում, երբ հենց նույն այս գործընթացների շրջագծում ադրբեջանական կողմը փորձում է նոր արժեթղթեր շահել՝ առաջիններին հակամարտության կողմի կարգավիճակային ծուղակը գցելով: Առկա բազում հարցերի վերջում բնականորեն ծնվում է էլի մեկ հարց՝ չերաշխավորված խաղաղություն. իսկ ի՞նչ գնով:

Թիվ 36, սեպտեմբեր

ՈՒՄ ՀԵՏ, ՈՒՄ ԴԵՄ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԻՆՉԻ

Ամեն ժամանակ ծնում է իր հերոսներին և ազգային վերազարթոնքի, անկախության, պետականության կերտման աստեղային ժամերն էլ հրապարակ են իջեցնում խմբերի ու անհատ գործիչների, որ կրողներն են դառնում պետականության բարձր գիտակցականության բարոյական զուլալ առաքինությունների և վեհ իդեալների: Արկածախնդիրներն ու ինքնակոչները, ազգային հիմնական գաղափարա-բարոյական արժեքներից օտարվածները չեն կարող պետականություն ստեղծել, ժողովրդի բարեկեցություն ապահովել, ավանդական ու նորօրյա ազգային արժեքները հանրության սեփականությունը դարձնել: Անկախ բացասական ու դրական իրենց հոգեկերտվածքից՝ ժամանակի հերոսները նույնիսկ իշխանություն դառնալով երբեք չեն կարող միաժամանակ պետությունն ու պետականությունը մարմնավորել, քանզի իշխանությունն ու պետությունը երբեք չեն նույնացվում, թեև միշտ էլ կգտնվեն հակառակ տեսակետին հավակնողներ: Հետևաբար պետության կայացմանը ծառայելը չի նշանակում ծառայել այս կամ այն իշխանությանը և, հակառակը, իշխանությանը ծառայելը դեռևս չի նշանակում, թե ծառայում ես քո երկրին ու պետականությանը: Անշուշտ, երկրին ու պետականությանը ծառայելու նախընտրելի ձև է իշխանության

կողքին կամ թիկունքում կանգնելով, գումարել սեփական ջանքերն ու կարողությունները վերջինիս անանձնական, քրտնաթոր ու ազգաշահ աշխատանքին:

Իսկ ինչպե՞ս վարվել, երբ այդ աշխատանքը ոչ թե անանձնական է, այլ ինքնանպատակ, երբ իշխանությունը ոչ թե համախըմբման է ձգտում, այլ պառակտման, երբ նա ոչ թե կառուցում է, այլ քանդում, երբ նա բազմաթիվ մեղքերի պատճառով վարկաբեկված ու նսեմացած է ժողովրդի աչքին: Երբ նա իր շուրջը ստեղծում է անձնական նվիրվածության հիմքի վրա ձևավորված քծնանքի, ստորաքարշության մթնոլորտ և այս հոգեբանությամբ հենվում է ու ծառայության է վերցնում այդ դերի համար փորձառու ու նորելուկ պիտանիներին: Մեզանից յուրաքանչյուրը թե անհատապես ու թե հավաքականորեն ընտրում է իրենը, ընտրում է՝ ում հետ լինել և ում ծառայել: Յուրաքանչյուրն ընտրում և ընտրելու է իր նմանին, իր գաղափարակցին՝ իր նպատակն ու ճանապարհը: Յուրաքանչյուրն ընտրելու է ըստ իր էության ու սովորույթի՝ շաբաթը մեկ անցողիկ տեր ու գաղափար փոխելով և կամ... հավատարիմ մնալով իր հավերժական Աստված ժողովրդին և նրա ակունքից բխած գաղափարին:

Իսկ ժողովուրդը՝ արդար ու մեծ դատավոր, իսկ ժողովուրդը՝ չափանիշ ու ամենատես, որ, հավատացած ենք, հրաշալի տեսնում է, ով ում հետ և ում, ինչի դեմ է, ով ինչ նպատակի, ինչ շահի ու ինչ գաղափարի է ծառայում:

Թիվ 37, սեպտեմբեր

ՕՐ, ՈՐ ՁԳՎՈՒՄ Է ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

Նշվեց Հայոց նորանկախ հանրապետության երեքամյակը, որպես հավաստում ինքնիշխան պետականության կերտման ընթացքի: Նշվեց այս ոչ երկար ժամանակահատվածում մեզանում կատարված փոփոխությունների և հազար ու մի տագնապ-մտահոգությունների խորապատկերի վրա: Յուրաքանչյուրն իր խոհերն

ունեցավ այս առթիվ, որոնք, որքան էլ առաջին հայացքից հակասական թվան, կարող էին որոշ դեպքերում նաև բավականին տարբեր լինել: Տոնի առիթով, իհարկե, խոսում են լավ բաների մասին, մնացածը թողնելով ուրիշ օրերի, բայց և ժամանակի հակասական պատկերն ինքը կամա թե ակամա մղում է որոշակի ընդհանրացումների: Մանավանդ որ երկար ու դժվարին է այն ճանապարհը, որի կեռմանների հաղթահարումը մի օր կարող է մեր նավը խոչ ու խութերի արանքով հասցնել պետականորեն լիարժեք կայացման և իրական անկախության վիճակի: Առաջին Հանրապետության կերտողներն, օրինակ, անթաքույց հուզումով գրում են, թե իրենք ինչպիսի տագնապ էին ապրում անկախության հռչակման նախօրյակին, քանզի նոր իրողությունները թողնելու էին հայրենիքի փոքրիկ ու հյուծված բեկորը բոլորովին միայնակ՝ թշնամական շրջապատման մեջ: Տագնապելու առիթներ մեր օրերում էլ կային և կան: Անկախության կերտման ու պետականության կայացման երաշխիքները դեռևս հռչակագրերը, հայտարարությունները, հանրաքվեներն ու տոները չեն ու նաև վերջնական հաղթահարման սահմանագիծ չունեն, այլ ենթակա են ինքնաարտահայտման, ինքնապաշտպանության մշտական փորձության: 1991-ին հանրաքվեով փաստվածը ըստ էության արդյունքն ու շարունակությունն էր 1988-ի համաժողովրդական ըմբոստացման սխրանքի, որ առաջին դրրսևորմամբ իսկ բազմաթիվ պատնեշներ ու կեղծ արժեքներ խորտակեց: Եվ դա այդպես էր, եթե անգամ պատմական ճշմարտությունները չաղավաղելով պիտի խոստովանենք, որ համընդհանուր հիմնական փոփոխությունները առարկայական գործընթացների արդյունք էին: Ըմբոստացման առաջին իսկ պոռթկումի հետ ժողովուրդն իրենից թոթափեց կապանքների հետ պարտադրված օտար արժեքները, պայքարի նպատակ որդեգրեց սեփական, բայց օտարված արժեքների վերադարձն ու վերահաստատումը: Իհարկե, բացթողում է, անշուշտ, որ դրանց թվում շատ բան հետագա և նույնիսկ արդեն ինքնիշխանության տարիներին կրկին անտեսվեցին և կամ մատնվեցին մոռացության: Ցավ ու տագնապելու լուրջ առիթ

է, որ ժողովրդի տարբեր շերտեր և հսկայական զանգվածներ հետագայում ընկրկեցին, թերահավատ դարձան նույնիսկ ամենակարևոր արժեքների, ամենամեծ նպատակի՝ նույն անկախության և ազգային պետականության կերտման հարցերում: Ցավալի է, որ օրեցօր ձեռք բերվող արժեքների, նախանշվող ձեռքբերումների փոխարեն մենք ավելի շատ ստիպված ենք լինում մեր օրերում խոսելու վտանգավոր, բախտորոշ նշանակության կորուստների մասին: Տագնապահարույց է, որ ամենակուլ աշխարհաքաղաքական ծովում հետևողական ու հստակ չէ մեր պետականության նավի ուղին, և որ այդպես էլ չի կայացել դեռ համազգային համախմբումը: Բայց և այնպես տոնի առիթով հարկ է ավելի շատ մտածել ապագայի, քան նույնիսկ ներկայի մասին, վստահորեն այնտեղ տեսնելով բաց թողածի լրացումը և նպատակների իրականացումը: Նայել ապագային հաստատակամ լինելով, որ այն, ինչ օրինականորեն մեզ է պատկանում, նրա նկատմամբ խորթացում, հիասթափություն և մոռացում չի կարող լինել: Նաև այս խորհուրդն էր պարունակում իր մեջ անկախության տոնը, որովհետև մեր կենսագրությունն ավելի շատ ապագայի մեջ է, քան անցյալի և ներկայի: Եվ ուրեմն թող շնորհավոր լինի բազում խորհուրդներ պարունակող անկախության օրը:

Թիվ 38, սեպտեմբեր

ՈՒՐ ԿՏԱՆԵՆ ՃԱՄՓԱՆԵՐԸ

Բառացիորեն հենց վերջին օրերին միջազգային քաղաքական զարգացումները մի աննախընթաց թափ ստացան, ինչպես բարձունքից պոկված ձնագունդը: Ժամանակային, և իհարկե, ոչ միայն ժամանակային, առումով Բաքվում իրականացված նավթային գործարքին կարծես զուգահեռ սկսվեց փոխշաղկապված միջազգային մասշտաբի և նշանակության իրադարձությունների մի ջրապտույտ, որի կենտրոնում, սխալված չենք լինի ասելու, Կովկասն է և Կովկասի կենտրոնում դարձյալ Ղարաբաղը: Ղարաբաղը, որ որպես արդեն վաղուց միջազգային տարողություն ստացած հիմնահարց, այս դեպքում ներկայանում է հենց ինքն իրենով, ինչպես և հիմնական աղերսներ ունի համաշխարհային մրցակցության առարկա հանդիսացող նավթի՝ Արևելքն ու Արևմուտքն իրար հետ կապող ճանապարհների, անդրկովկասյան տարածաշրջանում գերտերությունների և այլոց ազդեցությունների վերահաստատման ու հաստատման խնդրի հետ: Կրկնություններից թմրող մեր գիտակցության մեջ և նորից առաջին շարք է մղվում ԼՂՀ հիմնահարցը, այն մտավախությամբ, որ բարեբախտ ավանդույթը պիտի ի վերջո մի օր խախտվի և դրվեն ճակատագրական նշանակության ստորագրությունները ճակատագրական ելքը վճռող պայմանագրի տակ: Գայթակղությունը մեծ է, որովհետև մեզ խաղաղություն են խոստանում, հաց են խոստանում...

Ծանոթ պատկեր է, այդպես էլի է պատահել: Մեզ խոստացել են բաներ, որոնց կարիքը շատ ենք ունեցել, թվացել է, առանց դրանց այլևս չենք կարող և գնի համար չենք էլ սակարկել, նույնիսկ չենք մտածել գնի մասին. հետո ենք վճարածի արժեքն իմացել, խաբված, նաև ուշացած հայհոյել մեզ խաբողներին:

Կարհամարհե՞նք, թե՞ հաշվի կնստենք կենսափորձի հետ, փաստն այն է, որ տարիների արյունալի, բայց և հաղթական պայքարի արդյունքում, այսօր պարտվածի հոգեբանությամբ հայկական կողմն օձիքն ազատել ձգտողի հապճեպությամբ շտապում է

կարծես առանց սեփական պայմանների ներկայացման ստորագրել ցանկացած պայմանագրի տակ, այն դեպքում, երբ նախանշվող հեռանկարը ոչ մի երաշխիք չի պարունակում, իսկ երաշխավորողների սկզբունքայնության չափն ընդհանրապես կարող է որոշվել հենց նույն ժամանակ սահմանային չդաղարող սադրանքների և նոր ռազմական գործողությունների բուռն նախապատրաստման առկա հանգամանքով: Եվ կրկին փորձ է արվում թաղի ճարպիկ տղայի մակարդակով շրջանցել առարկայական գործոններն ու հանգամանքները, որոնք իրենց հերթին չեն ուզում շրջանցված ու խաբված լինել, և չար խաղերի, հաշվի չնստելու դիմաց վերջիններս կարող են նույնիսկ և արդեն լրջորեն իրարով անցնել: Բայց երևի փույթ չէ, քանի որ զոհի դերում հայտնվողը բոլոր դեպքերում կրկին Արցախն է լինելու, զինվորն է լինելու, ընդհանրապես հայ ժողովուրդն է լինելու: Խմորվող զարգացումները, որ ճակատում բախման կհանգեցնեն, դժվար է կանխագուշակել, և դժվար է կանխագուշակել, թե ուր կտանեն ճամփաները իր դավանանքի հարցում անսակարկ մնացած հայրենիքի զինվորին:

Թիվ 39, սեպտեմբեր-հոկտեմբեր

ՉԵՐԲԱԶԱՏՎԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Պետականության և այն բնորոշող տարբեր հատկանիշների կայացման մեծադողոդ բնորոշումների արդյունքում, արդեն մի քանի տարի, հանրապետությունը ենթարկվում է ավերումների և կորուստների: Ոմանք ասում են, թե տարվում է թելադրված հետևողական քաղաքականություն՝ դժվար է պնդելը: Բայց և հեշտ չէ բացառելը այն, երբ տարիներ շարունակ մի ողջ պետության ու ժողովրդի ճակատագիրը ենթակա է մեկ ու մի խումբ անձերի ինքնանպատակ ու քմահաճ տնօրինմանը: Եվ իրենց համար բախտավոր, իսկ պետության ու ժողովրդի համար արտաքին ու ներքին իրավիճակների ձախավեր դասավորմամբ հնարավոր եղավ այս հակատրամաբանական ու հակազգային ընթացքը: Բայց, անշուշտ, ամեն մի

հակաշարժում, ի վերջո, պետք է հանդիպի փակուղու, որի դիմաց քիչ է թե պատասխանատվություններից հմուտ խուսանավող լինելը: Որոշակիացող իրավիճակները պարտադրում են որոշակի դիրքորոշում: Դիրքորոշում ասվածն էլ իր հերթին հարմար նկատված պահին մեկ տիրոջից մյուսը նետվելը չէ անշուշտ: Նորից կրկնենք՝ այս ինքնանպատակ և պատեհապաշտ կողմնորոշումների արդյունքում սասանվել է Հայաստանի Հանրապետության կշիռը, նրա իշխանավորների վարկը, որի արդյունքում էլ, ճիշտ է, վերջիններն առանձնապես չեն տուժել, սակայն հանրապետությունը և իհարկե նույն տրամաբանության շրջանակում Արցախը անընդհատ ստացել են չսպասված տեղում չսպասված հարվածներ: Դիվանագետ ու պետական գործիչ պետք չէ լինել տեսնելու համար ակնհայտը՝ այն, որ շատ ու շատ հարցերում հանրապետության իշխանությունների դիրքորոշումները ոչ մի կերպ չեն արտահայտում երկրի ու ժողովրդի շահերը, այլ տվյալ պահին ձեռնտու են այս կամ այն կոնկրետ ուժին կամ ուժերին: Իսկ եթե ժողովրդի կամքը արտահայտելու կոչված իշխանությունը հակադրվում է այդ կամքին, մնում է պարզապես տեսնել, թե ինչ շահեր և կախվածություններ են նրան առաջնորդում: Եվ այս ամենը բնավ ոչ այն պատճառով, որ կարող ես սիրել կամ չսիրել իշխանավորին, ի վերջո ոչ մի հավաքականություն և, մասնավորապես, ոչ մի ընդդիմություն նման տրամադրություններով չի առաջնորդվում համազգային-պետական հարցերում, այլ պարզապես շուրջը կատարվող պատճառահետևանքային կապերը բացահայտելու և ըստ հնարավորի վտանգահարույց ընթացքը կանխելու մտահոգությամբ: Հիմա թե ներքին և թե արտաքին իրավիճակների իմաստով մենք հայտնվել ենք վճռորոշ սահմանագծում, որից այն կողմ արվող քայլերը պիտի բխեն ժողովրդի գերագույն իշխանության գերագույն շահերից: Հակառակ ընթացքը, շարունակելու դեպքում՝ պիտի ընդդիմության հանդիպի և կանխվի: Ձերբազատվել է պետք պետական բնույթի և մասշտաբի արկածախնդրությունից:

Թիվ 40, հոկտեմբեր

ԱՐԴԱՐԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ցայսօր իշխանությունները որդեգրել են ընդդիմությանն առանց փաստարկի ժխտելու կեցվածք, ապա ընդդիմությունն էլ իր հերթին իշխանությունների դեմ շատ դեպքերում պայքարում է ավելի շատ հակահՀՀՇական ու հականախագահական, քան քաղաքական, ընկերային և հատկապես գաղափարախոսական կարգախոսներով: Կարծում ենք, հիմնականում այդ է պատճառը, որ ընդդիմության մինչև այժմ եղած դաշինքները, կարելի է ասել, նշանակալի հաջողության չեն հասել, ավելին՝ փլուզվելով հիասթափություն են առաջացրել և որոշ առումով վարկաբեկել Դաշինքի գաղափարը: Նույնը վերաբերում է նաև առանձին կազմակերպությունների ու անհատների, ովքեր ուրիշ տերերի և ուրիշ նպատակների են ծառայում, և հաճախ չափից ավելի ազատություն տալով իրենց արարքներին, դրանով վարկաբեկում են բուն սահմանադրական պայքարի գաղափարը: Կարելի՞ է արդյոք ասվածն ընդհանրացնել ընդդիմադիր բոլոր ուժերի համար. անշուշտ, ոչ: Սակայն, կուսակցական կամ խմբակցային շահերին հետամուտ լինելիս, անտեսվում ու արհամարհվում է քաղաքական պայքարի հիմնական նպատակը: Այսինքն՝ հանուն այս կամ այն խավի, խմբակցության շահերի, վտանգվում է ազգային շահը, վտանգվում են արժեքներ, որոնց շուրջբոլոր դժվարին ու ճակատագրական պահերին համախմբվել է ազգը հանուն իր ապագայի: Հայ մարդը, ցավոք, սկսել է չհավատալ իր մտավորականին, ազգային գործչին, կուսակցական լիդերին, ազգի խնդիրներով մտահոգ մարդկանց և, վերջապես, այնպիսի ազգային միությունների ու դաշինքների, որոնց խոսնակները վարտիքների պես փոխում են իրենց սկզբունքներն ու համոզմունքները: Անկասկած, խոսքը վերջերս ստեղծված ազգային դաշինքի մասին չէ, որի սկզբունքներն ու գործելակերպը որակապես տարբերվում են նախորդներից, որը կարծես թե ունի իր սեփական կոնցեպցիան և իշխանությունների կողմից տարվող քա-

ղաքականության այլընտրանքը: Եվ դատելով բանաձևերից՝ չի համախմբվել սոսկ խանգարելու իշխանությունների քաղաքական նպատակները, այլ ներկայացնում է այլընտրանք: Առավել ևս, որ Դաշինքի առանցքը հանդիսացող ՀՅԴ-ն ունի Հայաստանի կացության բարեփոխման իր համադրույթը, և ծայրահեղ դեպքում, եթե անգամ Դաշինքը ճեղք տա, ներկա իշխանությունների դեմ պայքարը ինքնուրույն կազմակերպելու և ղեկավարելու բավարար կարողություններ ունի, ինչը խոստովանում են նաև իշխանությունները: Դա շատ լավ հասկանում է նաև առնտրա-վաշխառուական այն խավը, որը ներկա վարչակարգի ընկերային միակ հենարանն է և ընդդիմության դեմ՝ ծայրահեղորեն տրամադրված, ինչը չի կարելի ասել ուժային կառույցների համակարգի մասին, որը, հուսով ենք, ողջամտություն ու քաջություն կունենա չստանձնելու բիրտ հանձնառություններ ժողովրդի օրինական պայքարի դեմ:

Մի խոսքով, ճիշտ ու ճիշտ եկել է այն պահը, երբ ընդդիմությունը պետք է արժևորի իր քաղաքական ներկայությունը՝ ի խնդիր հայոց պետականության ամրապնդման:

Թիվ 43, նոյեմբեր

ԷՍ ՄԵԿԸ ԹԱՏՐՈՆ ՉԷՐ. ԳՅՈՒՄՐԻՆ ԹԱՏՐՈՆԻՑ ԿՈՒՇՏ Է

Ըստ ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության հաղորդագրության՝ ընթացիկ տարում աղետի գոտու վերականգնման ծրագրի գրասենյակը նախատեսված 28612 հազար ամերիկյան դոլար կապիտալ ներդրումների դիմաց հունվար-սեպտեմբեր ամիսներին կատարել է 1443 հազար դոլարի աշխատանքներ, որից 463 հազարը ծախսվել է արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին աղետի գոտում շահագործման է հանձնվել 14,8 հազար քառակուսի մետր բնակելի մակերես, որը կազմել է տարեկան գործարկ-

ման նախատեսվածի 49,3 տոկոսը: Աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման գրասենյակը՝ 8,4 հազար քառ. մետր: Բնակչության միջոցների հաշվին՝ 54,9 հազ. քառ. մետր:

Ճի՞շտ են արդյոք այս թվերը: Եթե՝ այո, ապա ճիշտ է նաև, որ տարվա ընթացքում նախատեսված է շահագործման հանձնել նորանոր բնակելի շենքեր, հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ ու պոլիկլինիկաներ: Այնպես որ, ի՞նչ 56 միլիոն յուրացված դոլարի մասին է խոսքը, կամ ի՞նչ 30 հազար անօթևան ընտանիքների, կամ՝ միջոցների փոշիացման, անտերության, և այլն, և այլն...

Նախ ասենք, որ աղետի գոտում և մանավանդ Գյումրիում թվերին չեն հավատում, ոչ էլ արցունքներին: Եվ առհասարակ, որևէ բանի չեն հավատում, թերևս բացառությամբ հանրապետության վարչապետի հիրավի միջազգային վերջին հայտարարությանը այն մասին, որ «Հայաստանն աշխարհի ամենաազատ տնտեսություններից մեկն է», ինչը Գյումրիում զարգացման նոր փուլ է թևակոխել և նոր հեռանկարներ է խոստանում գործարար գյումրեցիներին: Անշուշտ, դա զարմանալի չէ, որովհետև Գյումրին մնում է Գյումրի, ինքնատիպ ու ինքնակամ, ինքնօրինակ ու ինքնուրույն՝ իր բոլոր օրերին: Թեկուզև երբեմնակի ծայրահեղ դրսևորումներով, որոնք ունեցել են անցանկալի հետևանքներ: Օրինակ, եթե ոչ Մայիսյան ապստամբություն, ապա անդրշիրիմյան լռություն... Ապա այնպիսի մի մռայլ անտարբերություն, որը սպառնում է սպանել քաղաքը: Տպավորությունն այնպիսին էր, որ վաղուց արդեն իր ճակատագրի հետ կարծես թե հաշտվել է աղետյալ գյումրեցին՝ անօթևան, ընչազուրկ ու իրավազուրկ: Բայց ահա եկավ պահը, և նա չվարանեց կրկին բռունցքվել անարդարության դեմ: 88-ից հետո երբեք այդքան մարդաշատ չէր եղել Թատերական հրապարակը: Հազարավոր գյումրեցիներ էին եկել մասնակցելու Դաշինքի հանրահավաքին: Եկել էին ակնկալիքով, և վստահ ենք, հուսախաբ չեղան: Ասել է՝ սառույցը շարժվեց: Ասել է՝ գյումրեցիք այլևս մտադիր չեն հաշտվել իրենց վիճակի հետ և պատրաստ են հետևել նրանց,

ովքեր, իրոք, սեփական ժողովրդի բարօրությունն են ուզում, ովքեր կեղծ կարգախոսներով ու խոստումներով այլևս չեն խաբի իրենց:

Այո՛, էս մեկը թատրոն չէր, ասացին գյումրեցիք, Գյումրին թատրոնից կուշտ է:

Թիվ 44, նոյեմբեր

ՀՐԱԶԴԱՆԸ ՀԱՐՑ ՈՒՆԻ

Ազգային համաձայնության դաշինքի երրորդ հանրահավաքը, ինչպես սպասվում էր, անցկացվեց Հրազդան քաղաքում կամ հանրապետության արդյունաբերական հզոր կենտրոններից մեկում, կամ հզոր արդյունաբերական կենտրոններից մեկում, կամ՝ ինչպես կուզեք:

Անշուշտ, Հրազդանը Գյումրի չէ, ոչ էլ գտնվում է աղետի գոտում: Հրազդանում երկրաշարժ չի եղել, բայց շարժում եղել է: Եվ բավական զորավոր, ինչը վկայում է քաղաքի ներկայիս տնտեսական-ընկերային վիճակը: Բայց ո՞ր շարժումը նկատի ունենք. շարժումները, ինչպես գիտենք, տարբեր են լինում, օրինակ՝ առաջընթաց, օրինակ՝ հետընթաց, օրինակ՝ երկնատարած, օրինակ՝ գետնասող: Որպեսզի սար ու ձոր չընկնենք, և ընթերցողի համար էլ հասկանալի լինի ասելիքը, ավելացնենք ևս երկու բառ, թանկագին երկու բառ՝ Հայոց Համազգային: Եվ ամեն ինչ պարզ ու հասկանալի կդառնա, քանի որ Հրազդանը հանրապետության արդյունաբերական հզոր կենտրոններից մեկը լինելով՝ դարձավ նրա շարժման էպիկենտրոններից մեկը: Իսկ թե ինչով ավարտվեց շարժումը՝ բոլորիս է հայտնի: Համենայն դեպս, մի նվաճումը գոնե **ակնհայտ** է: Ավելին, Հրազդանի պարագայում կարելի է վկայակոչել մարդկային բոլոր օրգանները: Այո, խոսքը բնապահպանական նվաճման մասին է: Եվ որպես դրա վառ ապացույց նշենք Հրազդանի ցեմենտի գործարանի ընթացիկ տարվա մեկ-մեկուկես ամսվա աշխատանքը:

Անտարակույս, ուրիշ բնագավառներում էլ նվաճումներ արձանագրվել են, օրինակ՝ քանդման և փոշիացման բնագավառում, որն այլ բառով կոչվում է սեփականաշնորհում: Հենց թեկուզ կաթնաանասնապահական համալիրի, ջերմոցային տնտեսության քանդումը: Ի դեպ, կարևոր այս նվաճումները ևս Հրազդանում ձեռք են բերվել բարեկամախնամիական «անվարձահատույց» ջանադրությամբ: Նույնը, կասկած չկա, նոր հնարանքներով կկիրարկվի արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացում: Ինչ խոսք, «Հրազդանմեքենա» արտադրական միավորումում մի շատ մեծ քայլ արդեն արվել է. միավորումը գնահատվել է ընդամենը 1,5 միլիոն դոլար, 1990-ի 114 միլիոն ռուբլու փոխարեն: Եվ հանդիպակաց մի քայլ էլ արվել է կառավարության կողմից. ինչպես ասում են լավ տղերքը՝ արդեն հարց չկա: Եթե միավորման նախկին աշխատողների թվաքանակից հանենք ներկա աշխատողներինը, ապա դյուրությամբ կստանանք 6 հազարի մոտ մի բան: Այսինքն՝ 6 հազար գործազուրկ, որոնց համար, անշուշտ, հարց կա:

Հարց կա, հարց ունեն բոլոր նրանք, ովքեր օրերս մասնակցեցին վերոհիշյալ հանրահավաքին, հակառակ տեղի ու անտեղի իշխանությունների հարուցած դժվարություններին: Հարց ունեն բոլոր նրանք, ում համար թանկ է այս հայրենիքը, այս հայրենիքի ազատությունն ու անկախությունը:

Թիվ 45, նոյեմբեր

ՁՄԵՌԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Ի հակառակ, թե համաձայն կառավարության բարձրագույն որոշումների, իր ծրագրերն իրականացնելու է գալիս ձմեռը: Ներդաշնակ, թե ի հեճուկս կառավարության բարձրագույն վիճակագրական և կանխատեսող կենտրոնների, ձմեռը մնում է ձմեռ՝ ձյունաշատ կամ չոր, սառը կամ ավելի սառը, լի կամ դատարկ ամբար-

ներով, զվարթ կամ գետնաքարշ տրամադրությամբ: Եվ բնական ու պետական ծրագրերի անմիջական ենթականերն էլ իրենց փորձի թելադրանքով պատրաստվում են համապատասխան կերպով դիմագրավելու, նաև դիմադրելու «ձմեռային» այս ու այն ծրագրերին: Վառելիք, տաք հագուստ, պահածոներ ու թթու, շաքարավազ ու ալյուր, լուցկի ու մոմ, և նման այլ հասկացությունները՝ լինել թե չլինելու արանքում, մի միջին թվաբանական մակարդակ են որոշում, որ երջանիկների համար հաղթահարված է, առավել երջանիկների համար՝ նվաստացուցիչ ու անհանդուրժելի փոս, և պաշտոնապես վավերացված կամ չվավերացված անպաշտպանների բանակի համար՝ անհասանելի բարձունք: Բայց և բոլոր հնացած գաղափարների ու կատեգորիաների փոխարեն կա մեկ միավորող գաղափար՝ բնական ու պետական ձմեռային ծրագրերից ակնկալիքը: Փոսի բանակն ակնկալում է, որ տանը դեռ մնացած իրերը կկարողանան շուկայական պատերազմում հաղթել հացի ազատականացվելիք գնին և նրանից կախված օդ բարձրացող մյուս գներին: Որ սոցիալական բոլոր ծրագրերի հետ ինքը լինելու է եղբայրական դաշինքի մեջ և որ ամբարված մազութը կբավարարի, գազը տեղ կհասնի, ջեռուցումը կապահովվի, ամերիկյան նավթի անհրաժեշտ քանակը այս անգամ տեղ կհասնի գարնանից մի քիչ շուտ, իսկ ձմեռը կսկսվի աշնանից մի քիչ ուշ: Մակարդակն ապահովածները ակնկալում են, որ կկարողանան թափանցել սոցիալապես անպաշտպանների շրջագծից ներս, որ ամերիկացի քեռին կամ ռուսաստանցի մեծ եղբայրը մի քիչ կայուն փող կուղարկեն: Առավել երջանիկ հպարտներն իրենց հերթին ակնկալում են, որ կտնօրինեն անպաշտպաններին տրվող նպաստների բաշխման գործը, որ ժողովուրդն այնքան ջարդված է, գնային ցնցումների ժամանակ ուժ չի ունենա գոռալու, որ լավ տղերքով մեջք-մեջքի տված իրար կպահեն ու կտաքանան խորհրդարանից մինչև կառավարություն և կառավարությունից մինչև բենզատարների, դոլար-ռուսականի շնորհքով ջահելությունը: Դե, իսկ եթե բոլորը միասնական լինեն, էլ մի խումբ ամենավերևի տղերքին ի՞նչ է եղել որ: Հո իրենց ներկայու-

թյամբ չե՞ն խանգարում, ոչ մեկի գործին չե՞ն խառնվում, լավշնորհքով մարդկանց հավին հո քշա չե՞ն ասում: Մի կերպ էս ձմեռային ծրագրերը որ հորով-մորով անեն, խոտի ծաղկելու հետ կսկսեն բոլոր խավերի հետ զրուցել, քեֆ-հալ հարցնել, ցավակցել, հույս տալ. հա, տեղը որ եկավ, մի քիչ էլ լույս, բրինձ, կարագ տալ, որ թոքերն ու կոկորդները բացվեն, ձայնները դուրս գա ու այս ամենի փոխարեն կուզեն ընդամենը այդ ձայները: Նույն իրենց տված ձայները: Որ այս ծրագիրն էլ հաջողվի, այնուհետև կրկին կհաջորդեն իրար գարնան, ամռան, աշնան, ձմռան և մյուս ծրագրերը: Հետո այս հրաշալի ծրագրերը այս ցուրտ, թշնամաշատ երկրից կտանեն, ռուսաստանցի, հունաստանցի, ամերիկացի կդարձնեն բոլոր խավերին, և միայն իրենք իրենց ազգասեր, պետականակերտ, անկաշառ ու անձնազոհ անձերով կթառեն սույն դաժան ավերակների վրա և երեք հարյուր տարի իրար կպատմեն Քաջ Նազարի հեքիաթը:

Թիվ 46, նոյեմբեր

ԱՄԵՆ ԻՆՉ ՍԱՀՄԱՆ ՈՒՆԻ...

Նոյեմբերի 19-ի ԳԽ արտահերթ նստաշրջանում «բարեփոխիչները» «ջախջախիչ հաղթանակ» տարան ընդդիմության նկատմամբ, որն իբրև թե ամեն ինչ անում էր հանրապետությունը մինչև վերջ կործանելու: Եվ եթե չլիներ նախագահի համոզիչ ու համարձակ ելույթը, ապա «պնդաճակատային ընդդիմությունը» կհասներ իր բաղձալի նպատակին՝ Հայաստանը մեկուսացնելով ազատական-ժողովրդավարական բարեփոխումների գործընթացից:

Կարելի էր կարծել, որ ընդդիմությունը դեմ էր հայոց պետականության ամրապնդմանը, ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը և առհասարակ՝ դեմ էր հայ ժողովրդին... Դեմ էր, որովհետև դեմ էր ՀՀ օրենսգրքում փոփոխություններ մտցնելու միջազգային ֆինանսական կազմակեր-

պությունների պարտադրանքին, դեմ էր հանրապետության անկախությունը չվտանգելուն, կարևորելով հանդերձ ստացվելիք վարկերը, եթե դրանք օգտագործվեն նպատակային ու արդյունավետ, բացահայտ վերահսկողության պայմաններում և ոչ թե ծառայեն իշխանություններին՝ ամրապնդելու իրենց դիրքերը և այսպես ասած՝ կարկատանային բարեփոխումներով թոզ փչելու հանրության աչքերին:

Ստացվում է, որ ընդդիմությունը թշնամի է հայոց կառավարությանը, եթե պահանջում է բազմամիլիոնանոց վարկերի օգտագործման ծրագիր, եթե պահանջում է երաշխիք, որ փոխ առնված վարկերը չեն փոշիացվի, չեն շահագործվի, ինչպես աղետի հետևանքների վերացման նպատակով արված հատկացումները, որոնց մի մասը մինչև օրս դեգերում են օտարերկրյա բանկերում:

Ստացվում է, որ ընդդիմությունը իրավունք չունի կասկածելու տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման արևմտյան ջանքերի անկեղծությանը, որովհետև վարկային հատկացումները, ըստ ՀՀ նախագահի, քաղաքական նպատակներ չեն հետապնդում և հանրապետության բյուջեին հառած աչալուրջ հայացքները հանրապետության իշխանությունների նկատմամբ միայն հավատով և վստահությամբ են տոգորված, էլ չասած այնպիսի մի «հոգածությամբ», որին կնախանձեր գաղութացված ցանկացած երկրիկ:

Ահա թե ինչու չեն հանդուրժում ընդդիմությանը և առիթը բաց չեն թողնում մրոտելու, սևացնելու ընդդիմության կողմից արված այլընտրանքային ամեն մի քայլ, որը նպատակ ունի միտված՝ հանրապետության անկախության ամրապնդումը:

Այն, ինչ տեղի ունեցավ նոյեմբերի 19-ին ԳԽ նստաշրջանում և դրան հաջորդած օրերին քաղաքական հանդիպումների ընթացքում (նկատի ունենք ոչ միայն քվեարկության փորձված հնարանքները, այլև՝ այդ կապակցությամբ հայտարարություններն ընդդիմության և ի մասնավորի՝ Դաշնակցության հասցեին), հիմք է տալիս եզրակացնել, որ ՀՀ իշխանությունները խուճապի մեջ են, ավե-

լի ճիշտ՝ ինքնավստահորեն դեռ փորձ են անում չհաշտվել իրավիճակի հետ, թեև շատ լավ հասկանում են, որ չի կարելի երկարաձգել մի բան, որն ուղղակի ասած չափ ու սահման ունի:

Թիվ 47, նոյեմբեր

ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐ ԵՎ ՈՉ ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐ

Եթե ի պաշտոնե հանրապետության նախագահը պետականության խորհրդանիշն է, ազգի ներկայացուցիչը և բարձրագույն իրավարարը հանրապետությունում, հերթական չարախոսություն չի լինի՝ ասելու դեպքում, որ կամ ՀՀ քաղաքացի Լ. Տեր-Պետրոսյանը նաև ՀՀ նախագահը չէ, կամ էլ վերը նշված շնորհները նախագահի պաշտոնին չեն վերաբերում: Սակայն իրողությունն այն է, որ իսկապես ՀՀ նախագահի պաշտոնն զբաղեցնում է ՀՀԾ թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանը, որ իբրև կանոն, նախագահի անձը հիմնականում համատեղում է հիշված կոչումների հետ, ինչպես նաև իրողություն է, որ Լ. Տեր-Պետրոսյանը զուրկ է այդ կոչումներից: Հերթական փաստը նրա ելույթն է ՀՀԾ 6-րդ համագումարում, որով փորձ է արվում հիմնավորել, որ մինչև 2000 թ. ՀՀԾ-ի իշխանության գլուխ մնալը անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում անշրջելի դառնան ժողովրդավարությունն ու տնտեսական բարեփոխումները: Ավելորդ չէ հարց տալ, թե ո՞ր ժողովրդավարության ջատագովն է հանրապետության նախագահի պաշտոնն զբաղեցնող Տեր-Պետրոսյանը: Նրա՞, որի առկայությամբ մեկը մյուսի ետևից օրը ցերեկով ահաբեկչության զոհ դարձան հանրապետությունում կշիռ ունեցող բազմաթիվ մարդիկ և մինչև օրս հանրապետության դատախազությունը պարզություն չի մտցրել որևէ գործի վարույթում: Նրա՞, որի առկայությամբ Գյումրիում ծեծի ենթարկվեցին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի անդամները և մեղավորները մնացին անպատիժ, ավելին՝ իբրև պարգև՝ նրանցից մեկը վերահաստատվեց նախկին պաշտոնում: Թե՞ նրա, որի պայմաններում խորհրդարա-

նական ընտրություն-քվեարկությունները ուղեկցվում են ոստիկանների աչալուրջ ուղեցույց-հսկողությամբ:

Եթե նախագահը ձգտում է անշրջելի դարձնել այն բարեփոխումների ընթացքը, որոնց արդյունքում բնակչության ճնշող մեծամասնությունն աղքատությունից գլորվում է դեպի թշվառություն, իսկ «ձեռներեց» փոքրամասնությունը (որոնց էլ, ի դեպ, նա համարում է ՀՀՇ-ի սոցիալական բազան) միլիոնների թշվառացման հաշվին բազմապատկում է իր կապիտալը, ապա ժամանակն է ոչ թե ՀՀՇ-ի համագումարին, այլ ժողովրդին հարցնել, թե արդյո՞ք նա ցանկանում է այդպիսի բարեփոխում:

Հերթական անգամ շահարկելով ժողովրդի անտեղյակությունը ներքաղաքական և ընկերային տեղաշարժերին՝ նախագահը փորձում է իր անճարակ քաղաքականության զոհերին ներշնչել իր ներկայացրած կուսակցությանը հանրապետությունում մինչև 2000 թվականը այլընտրանք չլինելու վարկածը: Որ իրականությունը բոլորովին այլ է, փառք Աստծո, գիտե նույնիսկ գլխահակ օրվա հացը փնտրող մուրացկանը:

Բայց տվյալ դեպքում ավելի կարևոր է այն, որ հանրապետության նախագահը ՀՀՇ-ի 6-րդ համագումարում զարմանալի մոռացկոտություն է ցուցաբերում իր զբաղեցրած պաշտոնի նկատմամբ և հանդես գալիս իբրև զուտ կուսակցական ներկայացուցիչ՝ հասարակության մեջ փնտրելով իր կուսակցության ընկերային հենարանին, այսպես կոչված, սեփականատիրոջը: Այսինքն, ստացվում է, որ նա ոչ թե հայ ժողովրդի նախագահն է, այլ՝ նրա որոշակի ընկերային շերտերի: Այլ կերպ՝ նախագահը ժողովրդին ևս բաժանում է յուրայինների, որ նշված խավերն են, և ոչ յուրայինների, որոնց հավանաբար «նվիրում» է քաղաքական ընդդիմությանը: Բայց չէ՞ որ վերջիններն անհամեմատ մեծաթիվ են: Գուցե նախագահի հաշվարկներում տեղ ունի նաև ժողովրդի «չհիմնավորված» անտարբերությո՞ւնը:

Թիվ 48, նոյեմբեր

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ ՊԻՏԻ ԴԱՌՆԱ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐՋԸ

ՀՀ իշխանությունների գործողություններում ավելի ու ավելի մեծ տեղ զբաղեցնող ժողովրդական, ավելին՝ բռնապետական դրրսևորումների առիթով ընդդիմության կողմից հնչող մեղադրանքներին ի պատասխան, իշխող վարչակազմն արդեն իսկ ոչ միայն չի փորձում հերքել հնչող քննադատությունները՝ շարունակելով քողարկվել ժողովրդավարության պատմուճանով, այլև յուրօրինակ ցինիզմով ակնարկում է, օրինակ, որ 1918 թ. մայիսից Հայաստանում հաստատվեց ՀՅԴաշնակցության դիկտատուրան, այնինչ երկրորդ անկախ հանրապետությունը շուրջ չորս տարի շնչել է անկախ ժողովրդավարության կենարար զովը: Պատմության վեճերը թողնելով պատմաբանների (և ոչ թե հասարակությանը և գիտական աշխարհին՝ որպես պատմաբան իրենց պարտադրողների) դատին, բավարարվենք այնքանով, որ հայոց երկրորդ անկախ պետականությունը «կերտող» խմբակն արդեն իսկ մեծ շնորհ է արել՝ Անկախության արժեքը «չգիտակցող» ժողովրդին և մանավանդ՝ ընդդիմությանը թույլ տալով կրկնակի չափով վայելել ժողովրդավարությունը: Վերջ, պարոնայք: Առջևում դարձյալ մայիսն է: Այս անգամ արդեն... հիշական դիկտատուրայի մայիսը: Թող որ այն թելադրրված է ընդամենը իշխող խմբակի աթոռակալական բնազդներով և ոչ թե՝ արյունով նվաճված անկախությունը օտարամուտ դավերից պաշտպանելու սրբազան պարտականությամբ:

Արդյո՞ք Տեր-Պետրոսյանի թիմը շատ չի աճապարում վերջնականապես թաղելու հայոց փխրուն ժողովրդավարությունը: Արդյո՞ք նա չի գերագնահատում բռնապետություն հաստատելու իր կարողությունները: Սի՞թե իսկապես վստահ է, որ մինչև 2000 թ. հայ ժողովուրդը չի արթնանա ստրկության թմբիրից:

Անկախ այն բանից, թե ժողովրդի որ տոկոսն է գիտակցում ժողովրդավարության արժեքը և որ տոկոսն է պատրաստ պայքարելու ընդդեմ բռնապետության հաստատման, ՀՅԴաշնակցությունը

և, կարծում ենք, նաև այս հանգրվանի նրա քաղաքական դաշնակիցները՝ Ազգային համաձայնության դաշինքի (ԱՀԴ-ի) շրջանակներում, վճռական են պաշտպանելու արցախյան զարթոնքով հայոց ափերին հասած ժողովրդավարության ալիքը, բավարար չափով ուժ ունեն կառավարման գնացքն օրինականության ռելսերին վերադարձնելու համար: Իսկ եթե հիշական պատգամախոս «Հայաստանի Հանրապետությունը» հրճվանք է ապրում Դաշնակցության և նրա դաշնակիցների միջև իր կարծիքով սեպ խրելու առիթ «հայտնագործելով», ապա փոքր-ինչ մեղմելով նրա ոգևորությունը, ասենք, որ ՀՅԴ դիրքորոշումները հազիվ թե նորություն են իր քաղաքական դաշնակիցների համար: Ուստի ժամանակավրեպ են թե՛ ոգևորությունը և թե՛, մանավանդ, հույսն այն բանի, իբրև թե որոմն արդեն իսկ նետված է Ազգային համաձայնության դռներից ներս:

Այո՛, ՀՅԴաշնակցությունը բազմիցս զգուշացրել է, որ իշխող խմբակը վաղուց է ուղեփակոցներ կառուցում ժողովրդավարության ճանապարհին, սակայն վերջին խոսքը սկզբից չասելու տրամաբանությամբ չէր շտապում նաև գործնական քայլեր ձեռնարկել դրանց դեմ: Այնուամենայնիվ, վերջնականապես չի սպառվել հույսը, որ իշխող խմբակը կգիտակցի իր գործելակերպի ողջ վտանգավորությունը: Բայց հույսերի հետ դանդաղ ի դերև են ելնում նաև սպասելիքները:

Հուսանք, որ գեթ այս բախտորոշ ժամանակահատվածում ժողովուրդը կհաղթահարի իրեն համակած զանգվածային թմբիրը և ունկնդիր կլինի բանականության ձայնին:

Հուսանք, որ վճռական Ոչ-ով ժողովուրդը կմերժի իր ուսերին բարձրացրած քաջնազարների իշխանությունը և տեր կկանգնի իր ճակատագրին: Դա, իսկապես, պիտի լինի վերջը, բայց ոչ թե՝ ժողովրդավարության, այլ իրենց որպես ժողովրդավար ներկայացնողների:

Թիվ 49, դեկտեմբեր

Ա՞ՅՍ ԷՐ ՈՒԶԱԾՆԵՐԴ

Փոքրիկ, մեծ, դժվար, հրաշալի այս երկրի ազատագրումը. մի՞թե այս էր կամ այսքանն էր: Արցախի ազատագրական պայքարը մի՞թե հաղթականորեն ավարտվեց-վերջացավ: Եթե այո, ապա գուցե իրո՞ք Դաշնակցությունն այլևս անելիք չունի: Այլևս անցանկալի է, անբաղձալի, անվստահելի ու անհուսալի... Եվ եկել է վտարելու, աքսորելու, բանտարկելու, գնդակահարելու, կացնահարելու ժամանակը: Մանավանդ որ նախադեպը կա, ձևերն ու մեթոդներն էլ կարծես թե չեն հնացել: Թե չէ, ինչպե՞ս հասկանանք, ի՞նչ մտածենք, ի՞նչ անուն տանք համատարած այս թմբիրին: Ո՞ւր մնաց մեր արժանապատվությունը: Ի՞նչ պատահեց, ի՞նչ եղավ մեզ այս 3-4 տարում: Մի՞թե կարելի է այսքան միամտությամբ և պարզամտությամբ, եթե չասենք ստրկամտությամբ հաշտվել այս իրավիճակի հետ: Ո՞ւմ համար էր համաժողովրդական ու համազգային շարժումը: Անշուշտ՝ ողջ ժողովրդի ու համայն ազգի: Ի՞նչ տվեց, ի՞նչ շահեց, ի՞նչ ունեցավ ողջ ժողովուրդն ու համայն ազգը: Գլուխներդ հանեք ձեր քրձերի տակից, ձեր դուքաններից ու գրավատներից, ձեր «կուսակցական ու հանրային» փեթակներից և Աստծո լույսով նայեք ձեր շուրջը: Ա՞յս էր ուզածներդ: Եթե այո, ապա ո՞ւր մնաց ազգային ու պետական շահը: Ուրեմն աչքներս մտցրեք ազատն ու անկախը: Ժողովրդավարական արևմտյան արհեստական սնուցումից, շուկայական ազատ խաբեությունից բացի, որո՞նք են մեր նվաճումները: Արցախյան ազատագրակա՞նը...

Բայց այն նույնպես վարկաբեկվում է: Այսինքն՝ հայ ժողովուրդ, հաշտվիր սպասվելիք տեղատվությունների ու նահանջների հետ էլ, որովհետև ազգային ազատագրական պայքարի քո նվիրյալները եթե չեն նահատակվել, իրավունք չունեն իրենք իրենք լինելու: Ուրեմն ապօրինի զենք են կրում, կեղծ անձնագրեր ունեն, զբաղվում են զենքի առևտրով, թմրաբիզնեսով ու միջազգային ահաբեկչությամբ: Իսկ թե ովքեր են այդ նվիրյալները, դժվար չէ ենթադրել: Փնտրեք Դաշնակցության մեջ: Ահավասիկ, Հրանտ Մար-

գարյանը: Ահավասիկ, ևս երեք, հինգ, ութ (սրտներիդ ուզածի չափ) դաշնակցականներ, որոնք ի հիշատակ, ասենք, Շուշիի ազատագրման, իրենց տներում պարկուճներ ու արկերի բեկորներ են պահում կամ ավար վերցված զենք: Իսկ եթե չեն պահում, կարելի է «պահել տալ»: Ինչ վերաբերում է թմրաբիզնեսին, ահաբեկչությանը, տնտեսական ապօրինի գործունեությանը՝ հարց չկա կամ no problem, ավելի ստույգ՝ есть: Եթե այսքանից հետո մեկն ու մեկը կհանդգնի կամ միամտություն կունենա հարցնել՝ ո՞ւր է Հրանտ Մարգարյանը, ինչո՞ւ են ձերբակալել յոթ, ութ, թե յոթանասունութ (մենք չգիտենք) դաշնակցականների, ուրեմն քիչ է ասել՝ ինչ-որ բան ինչ-որ տեղ սխալ է:

Թիվ 50, դեկտեմբեր

Կազմեց Սոնա Երանոսյանը
Խմբագիր՝ Ռուբեն Հովսեփյան
Սրբագրիչ՝ Սամվել Խաչատրյան

Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում
312 էջ, 1/16, 19.5 տպագրական մամուլ

Հասցե՝ Ք. Երևան, Ուլնեցու 68, հեռ.՝ 094 81-80-10, 010 20-80-85
E-mail:bavigh@mail.ru